ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՇԻՐԱԿԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ԵՐԵՎԱՆ - ԳՅՈՒՄՐԻ 2014

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ШИРАКСКИЙ ЦЕНТР АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ И ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ ШИРАКА

2

ARCHAEOLOGICAL AND HISTORICO – ETHNOGRAPHICAL STUDIES IN SHIRAK

SHIRAK CENTRE OF ARMENOLOGICAL STUDIES
NATIONAL ACADEMY OF SCIENCES RA

Ереван-Гюмри 2014 Yerevan-Gyumri

Издательство "Гитутюн" НАН РА "Gitutyun" Publishers NAS RA

ԿԱՐԻՆԵ ԲԱԶԵՅԱՆ, ԳՐԻԳՈՐ ԱՂԱՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ

(պատմազգագրական ուսումնասիրություն)

КАРИНЕ БАЗЕЯН, ГРИГОР АГАНЯН

АЛЕКСАНДРАПОЛЬ: ЭТНОГРАФИЧЕСКИЕ ЭСКИЗЫ

(историко-этнографические исследования)

KARINE BAZEYAN, GRIGOR AGHANYAN

ALEKSANDRAPOL: ETHNOGRAPHIC AL SKETCHES

(historio-ethnographic study)

ԼԱՈՒՐԱ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ. Կյանքն ու գործը

ЛАУРА АТАНЕСЯН

ГЕВОРГ БРУТЯН: Жизнь и творчество

LAURA ATHANESYAN

GEVORG BRUTYAN: **Life and work**

ՀՏԴ 391/395=919.81
ԳՄԴ 63.5 (2 Հ)
Շ 642

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Գլխավոր խմբագիր՝ Ս. Ա. Հայրապետյան

Հատորի պատասխանատու խմբագիր՝ Հ. Հ. Հարությունյան

Շ 642 Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ /Խմբագրական խորհուրդ՝ Ս. Հայրապետյան, Ս. Պետրոսյան, Կ. Բազեյան, Լ. Եգանյան, Կ. Սահակյան, Հ. Հարությունյան - Եր.: Գիտություն, 2015.

Պ. 2. Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ (պատմազգագրական ուսումնասիրություն)/ Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան; Գիտ. խմբ.՝ Ս. Վարդանյան.- 2015. - 117 էջ + ներդիր:

2. Գևորգ Բրուտյան. Կյանքն ու գործը (1888-1952)/ Լաուրա Աթանեսյան; Գիտ. խմբ.՝ Լ. Ներսիսյան, 2015, 41 էջ+ ներդիր

ՀՏԴ 391/395 = 919.81
ԳՄԴ 63.5 (2 Հ)

ISBN 978 - 5 - 8080 – 1135 - 9

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015
© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2015

ԿԱՐԻՆԵ ԲԱԶԵՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՂԱՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ

(պատմազգագրական ուսումնասիրություն)

Գիտ. խմբագիր՝ բ. գ. թ. Սվետլանա Վարդանյան

Մենագրությունը նվիրված է Ալեքսանդրապոլ քաղաքի ազգագրական պատկերի վերլուծությանը, որն ընդգրկում է XIXդ. 30-ական թթ. մինչև XXդ. առաջին քառորդն ընկած ժամանակաշրջանը: Աշխատության մեջ օգտագործվել են քաղաքի ազգագրությանը վերաբերող բազմաթիվ նոր՝ արխիվային և պարբերական մամուլում հրապարակված, ինչպես նաև հեղինակների կողմից հավաքած դաշտային ազգագրական նյութեր, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Ներկայացված մի շարք երևույթների ու իրողությունների վերաբերյալ հեղինակների գիտական հետազոտությունները տարբեր տարիներին հրատարակվել են առանձին գիտական հոդվածների ձևով: Աշխատանքն ուղղված է պատմաբան-ազգագրագետներին, մշակութաբաններին և հասարակության ամենալայն շրջանակներին:

Նվիրում ենք մեր ուսուցիչ
Յուրի Մկրտումյանի հիշատակին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասական ազգագրության մեջ ժողովրդական մշակույթի կրողը համարվել է գյուղական բնակչությունը, իսկ քաղաքայինը դիտվում էր արտաքին ազդեցության երևույթ: Ըստ այդմ քաղաքային մշակույթն ընդունվում էր որպես քաղաքակրթության բաղկացուցիչ, որը համահարթում է էթնիկական մշակույթի ավանդական առանձնահատկությունները: Այդ է պատճառը, որ քաղաքային բնակչությունը ազգաբանորեն թերի է ուսումնասիրված: Սակայն 20-րդ դարավերջից ազգագրության մեջ քաղաքի ազգագրական ուսումնասիրությունը դարձավ գիտահետազոտական նոր ուղղություն: Այդ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գյուղաբնակների հետ միասին քաղաքային բնակչությունը մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ ժողովրդի էթնիկ մշակույթի պահպանման ու զարգացման մեջ: Քաղաքներում ավելի պարզ են դրսևորվում այն այլէթնիկ ազդեցությունները, որոնց ենթարկվում է էթնիկական մշակույթը, ուստի ժողովրդի ավանդական մշակույթի ուսումնասիրությունը թերի կլինի առանց քաղաքի ու քաղաքային բնակչության հետազոտության:

Այս տեսանկյունից կարևորելով նաև հայկական քաղաքների համալիր պատմազգագրական ուսումնասիրությունը և հաշվի առնելով այն, որ քաղաքային համայնքը՝ որպես հայ ժողովրդի հասարակական համակեցության ձև, մինչև օրս հանգամանորեն չի լուսաբանված (բացառությամբ Կ.Վ.Սեղբոսյանի հետազոտությունների), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ազգագրագետների խումբը ձեռնամուխ եղավ այդ բացը լրացնելուն: 2005թ. ՀՀ ԿԳ նախարարության մրցույթին ներկայացվեց և հաստատվեց «Ալեքսանդրապոլ – Լենինական - Գյումրի քաղաքի պատմազգագրական ուսումնասիրությունը» թեման:

Թեման առաջարկվեց՝ նկատի ունենալով այն, որ XIXդ. երկրորդ կեսից Արևելյան Հայաստանում իր ուրույն կենցաղամշակութային համալիրն ունեցող Ալեքսանդրապոլ քաղաքը Արևմտյան Հայաստանի Կարին, Կարս, Բայազետ քաղաքների էթնոմշակութային բազմաթիվ արժեքների կրողն է և իրենից ներկայացրել ու այժմ էլ ներկայացնում է արևելահայ ու արևմտահայ մշակույթների յուրատեսակ խառնարան: Քաղաքի կենցաղամշակութային համալիրը, որը ավանդական հայկականի և դրսեկ՝ ինտերնացիոնալ, ուրբանիզացված արժեքների ու տարրերի հաջող խառնուրդի լավագույն օրինակ է, դիտարկվում է առավել վաղ ուրբանիզացիայի դրսևորումներին ադապտացված քաղաքների շարքում:

Հայտնի է, որ քաղաքը մշակութային բաց համակարգ է և շուտ է ադապտացվում նորին: Սա վերաբերում է նաև Ալեքսանդրապոլ-Գյումրի քաղաքին: Իր կենցաղամշակութային համալիրի բազմաթիվ ավանդական տարրերի կողքին քաղաքային մշակույթը բավական շուտ ընդունում,ընկալում և նորովի էր արտահայտում դրսեկ երևույթները՝ տալով դրանց նոր որակներ, որոնք դրսևորվում էին տեղական խոսվածքում և առտնին կյանքում: Սակայն այստեղ նորութային արժեքները դժվարությամբ էին մուտք գործում, ինչը պայմանավորված էր քաղաքային բնակչության էթնիկ և կոնֆեսիոնալ բազմազանությամբ, քանի որ

գերակշռող հայերի կողքին ապրում էին թուրքեր, հույներ, ռուսներ, հայ գնչուներ: Քաղաքը հիմնադրած արևմտահայ արհեստավորներն ու առևտրականները, որոնք հայկական ավանդական քաղաքային մշակույթի կրողներ էին, նոր մշակութային դաշտում՝ Արևելյան Հայաստանում, փորձում էին ստեղծել իրենց հարազատ քաղաքային միջավայր՝ մերժելով տեղական սովորույթները:

Այս բոլորով հանդերձ՝ նորը կարողանում էր մուտք գործել Ալեքսանդրապոլ և կայուն տեղ գրավել բնակչության կենցաղում: Այդ պրոցեսը շատ հետաքրքիր դրսևորումներ ուներ, քանի որ ընթանում էր հին-նոր, քաղաքային-գյուղական, յուրային-օտար հակադրությունների պայմաններում: Այդ է պատճառը, որ XIX դ. վերջին և XX դարասկզբին քաղաքում հստակ տարանջատված, բայց իրար կողքի կենցաղավարում էին հին-ավանդականը՝ արհեստավորականների և նոր-եվրոպականը՝ մեծահարուստ առևտրականների միջավայրում: Ալեքսանդրապոլում մեկտեղված են տեղական (արևելահայկական և արևմտահայկական), ռուսական և արևմտաեվրոպական մշակույթների բազմաթիվ դրսևորումներ, որոնք երևակվում են քաղաքաշինության, արհեստների ու առևտրի և առավել ցայտուն քաղաքի բնակչության սոցիոնորմատիվ ու հումանիտար մշակույթներում: Ալեքսանդրապոլին հատուկ էթնոմշակութային բազմաթիվ երևույթներ եզակի են իրենց տեսակի մեջ և արդյունք են ուրբանիզացիոն այն գործընթացների, որոնք տեղի ունեցան XIX դ. ողջ ընթացքում և XX դարասկզբին:

Հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի ազգագրական համալիր ուսումնասիրությունը գիտական նոր մոտեցման կարիք ուներ: Քանի որ աշխատության վերնագիրը ժամանակին հուշել էր մեր ուսուցիչը՝ հայ ազգագրության նվիրյալ ու մեծ գիտնական Յու.Մկրտումյանը, ուստի մենք առաջնորդվել ենք նրա առաջարկած «մշակույթի տեսությամբ» ու դրան համապատասխան դասակարգումներով՝ մենագրությունը նվիրելով նրա հիշատակին:

Գրքի առաջին գլխում, որը վերնագրված է «Ալեքսանդրապոլի առաջնային արտադրության մշակույթը» ներկայացված են քաղաքի հիմնական տնտեսական զբաղմունքները՝ գյուղատնտեսություն, արհեստներ և առևտուր: Երկրորդ՝ «Ալեքսանդրապոլի կենսապահովման մշակույթը» գլխում ուսումնասիրվել են քաղաքաշինական առանձնահատկությունները, քաղաքային բնակարանը և դրա ներսույթը, ավանդական ուտեստն ու տարազը: Երրորդ գլուխը նվիրված է քաղաքի սոցիոնորմատիվ մշակույթին, որում հատուկ տեղ է հատկացված էսնաֆություններին և քաղաքային ինքնակառավարման կառույցներին, ընտանիքին ու ընտանեկան ծիսաշարին: Չեն անտեսվել նաև Ալեքսանդրապոլի հանրության բնորոշ այնպիսի մշակութային երևույթներ, ինչպիսիք են ժամանցը, բամբասանքը, լոթիությունը և թաղային կռիվները: Ալեքսանդրապոլի հումանիտար մշակույթի որոշ կարևոր բաղկացուցիչներ՝ մասնավորապես ազգային եկեղեցական տոները, քաղաքային տոնածիսական կյանքը, ինչպես նաև ժողովրդական բժշկության եղանակները ներկայացված են չորրորդ գլխում:

Կումայրի-Գյումրին Ալեքսանդրապոլ քաղաք դառնալու ճանապարհին

Ռուսական կայսրությանը միացած Արևելյան Հայաստանում XIXդ. 30-40-ական թթ. կազմավորվեց մի քաղաք, որն իր կենցաղամշակութային համալիրով էականորեն տարբերվում էր Երևանի նահանգի մյուս քաղաքներից: Նորաստեղծ Ալեքսանդրապոլը դարձավ Արևմտյան Հայաստանի երեք հայտնի քաղաքների՝ Կարինի (Էրզրում), Կարսի և Բայազետի մշակութային ավանդույթների կրողն ու դրանց համակեցության (սիմբիոզ) լավագույն օրինակը: Հայ իրականության մեջ դեռևս անտիկ շրջանում և միջնադարում հաջողված

կամ անհաջող փորձեր էին արվել նոր հիմնված քաղաքներում վերաբնակեցնել այլ քաղաքների բնակիչներին (Արտաշատ, Տիգրանակերտ, Դվին, Արշակավան, Կարս և այլն): Փաստ է, որ այս քաղաքների հիմնումը կատարվել է հայոց պետականության գոյության պայմաններում: Ալեքսանդրապոլի պարագան այլ էր, քանզի այն հիմնվեց օտար՝ ռուսական պետականության պայմաններում: Քաղաքն ու քաղաքաբնակները, պահպանելով ցցուն արտահայտված էթնիկ կամ ավանդութային դիմագիծը, կարողացան հաջողությամբ իրենց կենցաղամշակութային համալիր ներմուծել ռուսական և եվրոպական քաղաքներին բնորոշ արժեհամակարգեր և մշակութային տարրեր: Քաղաքատեղի ընտրությունը, թաղամասերի դասավորությունը, փողոցների հստակ ուղղվածությունը (հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք), քաղաքի կառուցապատումը՝ ըստ նախապես հաստատված գլխավոր պլանի, և այլ բնույթի նորամուծություններ հայկական քաղաքաշինության մեջ չտեսնված երևույթ էին: Բնավ էլ պատահական չէր, որ Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերի բնակիչները «քաղաք» հասկացության տակ պատկերացնում էին կա՛մ Թիֆլիսը, կա՛մ Ալեքսանդրապոլը:

Ալեքսանդրապոլը հիմնադրվեց պատմական Կումայրի բնակատեղի հարակից տարածքում՝ Ախուրյանի ձախ ափին՝ ներառելով երկու փոքր գետակ՝ Գյումրի չայը և Ղորղոբան: Քաղաքի կլիմայական պայմանները բավական խիստ են՝ երկարատև և սառնաշունչ ձմեռ, չորային եղանակ և տափաստանային ուժգին քամիներ: Բացի այդ, քաղաքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում և վերապրել է մի քանի կործանիչ երկրաշարժներ:

Պատմական ակնարկ. Հնագիտական պեղումների արդյունքները վկայում են, որ ներկայիս քաղաքատեղին բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզի դարից: Ք.ա. III հազարամյակի սկզբում և հետագա դարերում կյանքն այնտեղ չի դադարել: Բնակատեղին երբեմն ընդարձակվել, երբեմն մեծ գյուղաքաղաքի է վերածվել (XI-XIIIդդ.), երբեմն նրա բնակչությունը նոսրացել է, ու այն վերածվել է աննշան բնակավայրի (XVII-XVIIIդդ.):

Կումայրի անունով բնակատեղին առաջին անգամ հայկական գրավոր աղբյուրներում հիշատակում է Ղևոնդ պատմիչը: Նրա հաղորդմամբ 774թ. Արտավազդ Մամիկոնյանը, մոլորեցնելով Դվինի ամիրային, զենք ու սպառազինություն ձեռք բերեց՝ իբր նրա թշնամիների դեմ կռվելու նպատակով և գալով Շիրակ՝ «…նա (***իմա՝ Արտավազդը***-հեղ.) հասավ Շիրակ գավառի Կումայրի գյուղը և սպանեց գլխավոր հարկահանին ու նրա մոտ եղած ամեն ինչը վերցնելով՝ ամբողջ տնով գնաց Վրաց աշխարհի կողմերը…»:[1] Պատմական Կումայրիի տարածքում՝ Չերքեզի ձոր կոչվող վայրում, XIXդ. ռուս զինվորականները հողային աշխատանքների ժամանակ հանդիպեցին կենտրոնագմբեթ խաչաձև հորինվածքով մի կառույցի ավերակների, որը VII դ. Ճարտարապետության կնիքն էր կրում: Հավանաբար այն հենց հռչակավոր Դպրեվանքն է: Այստեղ է գործել միջնադարի ականավոր հոգևոր և մշակութային գործիչ Բարսեղ Ճոնը, որի մասին վկայում է Վարդան Բարձրբերդցին: Ըստ որոշ հետազոտողների՝ մինչև Տրապիզոն մեկնելն այստեղ է ուսանել միջնադարյան հայ մեծանուն գիտնական Անանիա Շիրակացին: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Դպրեվանքում են հաստատվել բյուզանդական Ռոմանոս կայսեր կողմից հալածված Հակոբիկյան միաբանության ճգնակյաց անդամները:

Բնակավայրի վերաբերյալ գրավոր հաջորդ հիշատակությունը՝ Կումիրի անվամբ, 1209թ. թվագրվող ձեռագիր հիշատակարանն է, որը թողել է Հովասափ անունով մի հոգևորական. «Ես մեղուցեալ և յետինս ի կրոնաւորս Ովասափս, որ էի ազգաւ եւ տոհմիւ ի մեծ գեաւղաքաղաքէն Կումիրոյ…»:[2] Հետագայում, բարբա-

[1] *Ղևոնդ, Պատմություն, թարգմ. և ծանոթ. Ա.Տեր-Ղևոնդյանի, Եր., 1982, էջ 112:*

[2] *Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թիվ 1886:*

ռային առանձնահատկություններից ելնելով, առաջանում են բնակավայրի ***Գումրի, Կումրի, Գիմրի*** անվանաձևերը: Տվյալ բնակավայրի մասին տեղեկություններ այլևս չեն հանդիպում ընդհուպ մինչև XVIIIդ. առաջին կեսերը: ***Գյումրի*** անվամբ այն հիշատակվում է նախ թուրքական Արիֆ Ահմեդ փաշայի՝ 1724թ. երևանյան արշավանքի ժամանակ և նույն դարի երեսնական թվականների վերջերին պարսից Նադիր շահի հրամանով կազմված Շորագյալի սուլթանության գյուղերի ցուցակում:[1] Հետաքրքիրն այն է, որ Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ում ոչ մի հիշատակություն չկա հիշյալ բնակավայրի մասին, որը արդեն XVIIIդ. վերջին և XIXդ. սկզբին վարչական առումով մտնում էր Երևանի խանությանը ենթակա Շորագյալի սուլթանության մեջ:

1801թ. Վրաստանը Ռուսաստանին միանալուց հետո ռուսական քաղաքական շրջաններում աճեց հայկական հողերին տիրանալու ձգտումը: Ռազմական նպատակների իրագործման համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող Գումրին[2] բնականաբար չէր կարող վրիպել ռուսական զինվորականության ուշադրությունից: Ռուսական հրամանատարության ռազմական ծրագրերում արդեն ուրվագծվում էին բնակավայրը ռազմական հենակետի վերածելու նկրտումները:

XIX դարասկզբի Գյումրին մի փոքրիկ գյուղ էր Չերքեզի ձոր (***Չարքքզի ձոր***) կոչվող վայրում, որի բնակիչները ժամանակին ձորից աստիճանաբար բարձրացան բլրի վրա, որն էլ հետագայում դարձավ նոր ձևավորվող քաղաքի «Գեղցոց մահլեն» (թաղը): Նրանից ներքև ավելի ուշ առաջացավ քաղաքի հիմնական թաղամասերից մեկը՝«Ձորի մահլան» կամ «Ձորի բողազը»: Ժամանակակիցների վկայությամբ XIX դարասկզբին Գյումրի գյուղն ուներ մի հին եկեղեցի, տարբեր թաղամասերում բնակվում էին մոտ 30 տուն պարսիկներ և 20 տուն պարսկահպատակ հայեր:[3] Ամրոցի կառուցումից հետո գյուղն աստիճանաբար տեղափոխվեց ավելի վեր՝ հյուսիսարևմտյան կողմ, իսկ հին եկեղեցու տեղում, Ալեքսանդրապոլի գավառապետ իշխան Արղության-Երկայնաբազուկի միջոցներով, 1857թ. կառուցվեց նորը՝ Ս. Նշան եկեղեցին:[4] Հայր Ղևոնդ Ալիշանը նշում է,թե Մարմաշենի վանքից 5-6 մղոն վերև՝ 1,5 մղոն հեռու Արփաչայի (Ախուրյանի) ափից, կա մի հին գյուղ՝ Կումայրին, որտեղ մինչև 1800թ. կար նաև ամրություն: Այդ գյուղն այլազգիներն անվանում էին Կիմրի կամ Գիմրի և ուներ հազիվ 70 տուն:[5] 1826 թվականին Երևանի Հյուսեին Ղուլի խանի արշավանքի հետևանքով Գյումրին վերածվել էր 50 տնից բաղկացած գյուղի:[6]

Աղբյուրների հավաստմամբ 1804 թվականին, երբ ռուսական կազակային առաջին խմբերը մտան Գյումրի, գյուղի շրջակայքն ամայի էր: Այստեղ տեղակայված կազակային սահմանապահ կայազորի զինվորների համար բնակավայրի հարավային կողմում կառուցվեց բնակելի թաղամաս, որը հայտնի է «Կազաչիյ պոստ» անվամբ: Կարճ ժամանակ անց այստեղ ստեղծվեց լավ ամրացված սահմանային կայան, որում տեղակայված էր ռուսական բա-

---

[1] *Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին, Գյումրի, 2005:*

[2] *Հարկ ենք համարում նշել, որ գիտականորեն հիմնավորված և, մեր կարծիքով, ճշգրիտ տարբերակը բնակավայրի Գումրի կամ Գիմրի անվանաձևն է: Յավոք, օտարահունչ «Գյումրի» անվանաձևը քաղաքացիություն ստացավ ոչ միայն պատմագրական կամ այլ բնույթի աղբյուրներում, այլև պաշտոնապես՝ մեր ժամանակներում, երբ այսպես ասած՝«հանրաքվեի» արդյունքում Լենինականը վերանվանվեց Գյումրի: Նախկին և ներկա քաղաքի ոչ մի բնակիչ, ելնելով բարբառային առանձնահատկություններից, չէր կարող սեփական բնակավայրը Գյումրի կոչել, քանի որ իւ երկբարբառը խոսվածքի մեջ բառամիջում միշտ արտաբերվում էր ու կամ ի, օր.՝ձիւն-ձուն, հիւս-հուս, ալիւր-ալուր, հարիւր-հարուր և այլն: Այդուհանդերձ, ավելորդ բանավեճերից խուսափելու համար տեքստում օգտագործել ենք Գյումրի տեղանվանական ձևը:*

[3] *ՀՀ ԳԱԱ ՊԻ արխիվ, Մ.Թամրազյանի նյութերը, տետր 1:*

[4] *ՀՀ ԳԱԱ ՊԻ արխիվ, գործ 103, Նիկողոսյան Ն., Գյումրի-Լենինականի անցյալը (1935թ.):*

[5] *Ղ.Ալիշան, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 154:*

[6] *Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1984, էջ 458:*

վականին մեծ մի կայազոր: Ռուսների զորուժի առկայությամբ պայմանավորված՝ Գյումրին սկսեց դեպի իրեն ձգել պատերազմներից ու զրկանքներից այս ու այն կողմ ցրված հայերին: Ռուսական հովանավորության ներքո ապահով անկյուն փնտրող նորեկները տեղավորվեցին «Զորի մահլայում»: Հարկ է նշել, որ Շիրակի և Գյումրու միացումը ռուսական կայսրությանը պաշտոնապես վավերացվեց 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով:[1]

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի սկզբում պարսիկներին հաջողվեց ստիպել ռուսներին նահանջել մինչև Գյումրի, սակայն որևէ լուրջ հաջողության նրանք այլևս չհասան: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Գյումրին դարձավ ռուսական զորքերի գլխավոր հենակայան (ֆորպոստ), որտեղից գեներալ Ի.Պասկևիչի զորքերը հարձակում ծավալեցին դեպի Ախալցխա-Ախալքալաք և Կարս: Այս պատերազմի արդյունքները հիմնավորապես փոխեցին Գյումրու ճակատագիրը և նոր բնակավայրի՝ Ալեքսանդրապոլի հիմնադրման սկիզբը դարձան:

XIX դարի առաջին քառորդին Գյումրին՝ իբրև բնակավայր, ոչ մի հեռանկար չունեցավ, քանի որ Հայաստանի արևելյան հատվածը շարունակում էր գտնվել պարսկական տիրապետության ներքո, որտեղ շինարարական գործունեություն ծավալելու համար տնտեսական հնարավորությունները սահմանափակ էին: Դրությունն զգալիորեն փոխվեց Արևելյան Հայաստանի՝Ռուսաստանին միավորվելուց հետո, երբ ցարական քաղաքացիական և զինվորական իշխանությունների կողմից, ճիշտ է դանդաղ, սակայն որոշակի հետևողականությամբ ու ծրագրով իրականացվող քաղաքաշինական միջոցառումների արդյունքում Հայաստանի տարբեր շրջաններում իրար հետևից վերակառուցվեցին կամ հիմնվեցին նոր քաղաքներ: Վերջիններից էր արևմտահայ գաղթականների կողմից Գյումրի գյուղի հարավային մասում՝ Ախուրյան (Արփաչայ) գետի ձախ ափին հիմնված, 1837թ. քաղաքի կարգավիճակ ստացած Ալեքսանդրապոլը: Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում Գյումրի-Ալեքսանդրապոլը XIX դարի առաջին երեսնամյակին:

Քաղաքի բնակչության ձևավորումը և ներէթնիկ կազմը. Ադրիանապոլսի պայմանագրի կնքմանը հաջորդած արևմտահայերի գաղթին որոշակի կազմակերպվածություն հաղորդելու նպատակով Թիֆլիսում, Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավիլեյսկու գլխավորությամբ, հիմնվեց հատուկ կոմիտե, որն զբաղվելու էր գաղթականներին ընդունելու, տեղաբաշխելու, օժանդակություններ և արտոնություններ տալու խնդիրներով:[2] Հիշյալ պայմանագրի ստորագրումը օսմանահպատակ հայությանը դրեց անելանելի վիճակի մեջ: Պատերազմի ընթացքում ռուսների կողմից գրավված շրջանները Թուրքիային վերադարձնելու որոշումը արևմտահայության մի մասին թուրքական հաշվեհարդարից խուսափելու համար հարկադրեց օգտվել պայմանագրի 13-րդ հոդվածից, անցնել ռուս-թուրքական սահմանը և ընդունել ռուսական հպատակություն:

Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար գեներալ Ի.Պասկևիչի առաջարկությամբ նորեկները տեղավորվելու էին հետևյալ կերպ. Էրզրումի փաշայությունից՝ Ախալցխայի ու Ախալքալաքի շրջան, Կարսի փաշայությունից՝ Փամբակի-Շորագյալի դիստանցիա ու Հայկական մարզ և Բայազետի փաշայությունից՝ Հայկական մարզ:[3] 1830թ. գարնանը սկսվեց և հունիսին իր բարձրակետին հասավ արևմտահայերի արտոնված ներգաղթը: Արևմտյան Հայաստանից ներգաղթած 14000 ընտանիքներից 3491-ը հաստատվեց Շիրակում, այդ թվում նաև՝ Գյումրիում ու դարձավ ապա-

[1] *Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ հրատ. հ. V., Եր., 1974, էջ 135:*

[2] *Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը…., էջ 77:*

[3] *Ադ.Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա., Թիֆլիս, 1894, էջ 351; Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 191-192:*

գա Ալեքսանդրապոլի քաղաքային բնակչության հիմնական կորիզը:[1]

Կոմիտեն գործելու էր Պասկևիչի՝ 13 կետից բաղկացած հատուկ հրահանգի համաձայն և պարտավոր էր մինչև 1830թ. գարուն մանրամասն տեղեկություններ հավաքել Վրաստանում, Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի մյուս ռուսական պրովինցիաներում պետական ամայի հողատարածությունների վերաբերյալ: Քրիստոնյաների վերաբնակեցման կոմիտեի ընդհանուր կանոններով բոլոր գաղթականները բաժանվելու էին երեք կարգի՝ 1. վաճառականներ կամ առևտրով զբաղվողներ, 2. արհեստավորներ կամ որևէ արհեստով զբաղվողներ և 3. հողագործներ կամ գյուղացիներ: Ստանալով բավարար քանակությամբ հող՝ նրանք բնակություն էին հաստատելու առավելապես պետական հողերի վրա՝ ամբողջական գյուղերով այնպես, ինչպես նախկինում:

Կոմիտեն գաղթականներին տեղաբաշխելիս պարտավոր էր խստիվ ղեկավարվել վերոհիշյալ դասակարգմամբ: Դա թույլ կտար առաջին երկու խմբերին, որոնք մեծ մասամբ քաղաքաբնակներ էին, գաղթելուց հետո տեղավորվել քաղաքներում, իսկ երրորդ խմբի գաղթականներին՝ գյուղերում: Մինչդեռ գաղթականների վերոհիշյալ դասակարգումը հակասության մեջ էր մտնում դեռևս 1829թ. հունվարի 5-ին Ի. Պասկևիչի՝ ցարին ներկայացրած նախագծի հետ, որի համաձայն՝ Փամբակ-Շորագյալի դիստանցիայում հաստատվելու էր Կարս քաղաքից (հետագայում նաև Բայազետ, Կարին, Բասեն և այլ քաղաքներից) ու համանուն փաշայությունից գաղթած քրիստոնյա բնակչությունը: Արդյունքում ստեղծվեց մի անորոշ իրավիճակ,երբ հարյուրավոր արևմտահայ քաղաքաբնակ ընտանիքներ հաստատվեցին մի տարածքում, որտեղ որևէ քաղաքատիպ բնակավայր գոյություն չուներ: Այնուհանդերձ միայն Գյումրիում հաստատվեց ռուս-թուրքական սահմանն անցած ավելի քան 1250 ընտանիք:[2]

Արևմտահայ քաղաքաբնակ գաղթականներին Գյումրիում տեղավորելու մասին գաղթականության հարցերով զբաղվող կոմիտեի (Переселенческий комитет) ընդունած որոշման պատճառներն էին. նախ՝ XIX դարի 20-ական թվականների վերջերից սկսած, կառավարական շրջանակներում արդեն կարծիք էր ձևավորվել Գյումրին քաղաքի վերածելու մասին, և հետո, ըստ արխիվային փաստաթղթերի, կարսեցիներն իրենք, դեռևս 1829 թ. դեկտեմբերին գեներալ-մայոր Բերխմանից անցագրեր խնդրելով, ցանկացել էին բնակություն հաստատել հենց Գյումրիում: Կարսեցիների այս ցանկությունն իր պատճառներն ուներ: Դեռևս նախորդ դարում Կարսից և հարակից գյուղերից որոշ ընտանիքներ հաստատվել էին Ախուրյանի ձախ ափին գտնվող Գյումրյուկ պարսկական մաքսատան շրջակայքում և աշխույժ առևտուր էին անում պարսկահպատակ տարածքներում:[3]

1829-1831թթ. արևմտահայերի մեծ գաղթը ռուսահպատակ դարձրեց Կարս քաղաքի գրեթե ողջ քրիստոնյա բնակչությանը՝ 693 ընտանիքի կամ շուրջ 5000-5500 մարդու: Ռուս-թուրքական սահմանն անցած կարսեցիների 600 ընտանիք, այդ թվում նաև՝ 150 ընտանիք հույներ, Կանցի Մարտիրոսի ու Ստեփանոս արքեպիսկոպոս Խաժակյանի (վերջինս մինչև 1837թ. մարտի 27-ը կաթողիկոսի հրամանով եղել է տեղի գաղթականների առաջին հոգևոր առաջնորդը) գլխավորությամբ տեղավորվեցին Գյումրիում:[4]

Կարսեցիների հետ միաժամանակ Արևմտյան Հայաստանի տարածքից գաղթեցին նաև Բայազետի փաշայության քրիստոնյաները: Բայազետցիները, հիմնականում քաղաքից

---

[1] *Ա.Հայրապետյան, Արևելյան Շիրակը…., էջ 80:*

[2] *Յ. Գեղամեանց, Ախալցխայից մինչև Անի, «Փորձ» Տփխիս, 1880 N 4, ապրիլ, էջ 56:*

[3] *Т. Акопян, Развитие Еревана после присоединения Восточной Армении к России, Сборник документов, 1801-1917гг., Ер., 1978, стр. 79.*

[4] *Կրպե, Կարս քաղաքը, Մոսկուա, 1893, էջ 79:*

գաղթածները, հաստատվեցին ապագա Նոր Բայազետում և Գյումրիում: Գաղթից հետո Գյումրու բնակչության մեջ բայազետցիները թվով երկրորդն էին կարսեցիներից հետո և կազմում էին Գյումրիում տեղավորված կարսեցիների քանակի կեսը՝ մոտավորապես 300 ընտանիք:[1]

Ռուսական իշխանությունների որոշմամբ էրզրումցիները հաստատվելու էին Ախալքալաքում և Ախալցխայում: Սակայն գաղթի վերջում Կարս հասած էրզրումցի 200 ընտանիք տեղավորվեց Գյումրիում և, մեծ մասամբ լինելով հայ-կաթոլիկ, հիմնեց «Ֆրանգների մահլեն»: Էրզրումի փաշայությունից Գյումրի գաղթեցին նաև «թոնդրակյան» կոչվող հայ բողոքական աղանդի ներկայացուցիչներ: Էրզրումցիների հետ Գյումրիում հաստատվեցին և իրենց թաղը՝ «Բոշի մահլեն», հիմնեցին նաև 30-40 ընտանիք հայ բոշաները (գնչուները կամ «մաղագործները»): 1829-1831թթ. ընթացքում ռուս-թուրքական սահմանն անցան ու Գյումրիում հաստատվեցին նաև մոտ 100-120 ընտանիք բասենցիներ ու մշեցիներ:

Այսպիսով, 1829-1831թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունից Գյումրի գաղթեց 1250 ընտանիք կամ շուրջ 6600-6800 մարդ, որոնք էլ դարձան 1837թ.-ին հիմնված քաղաքի բնակչության կորիզը: Ներգաղթից անմիջապես հետո բնակավայրի բնակչության թիվն աճեց և հասավ 1350 ընտանիքի կամ 7250 մարդու, որի 96%-ը հայեր էին, 1%-ը՝ հույներ, 3%-ը՝ մահմեդականներ:[2] Շնորհիվ արևմտահայերի ներգաղթի, XIX դարի 30-ական թվականների կեսերից սկսած, Գյումրին դարձավ ամենամիատարր բնակչությամբ հայկական քաղաքը ոչ միայն Արևելյան, այլ նաև Արևմտյան Հայաստանում: Ալեքսանդրապոլի էթնոժողովրդագրական պատկերը XIX դ. և XX դ. առաջին քառորդում ներկայացված է ստորև բերված աղյուսակում:[3]

Տարեթիվը	Բնակչությունը	Հայեր	Այլք
1832	7250	6960	287
1842	9385	8930	455
1848	11018	10542	476
1850	11280	10772	508
1860	13013	12285	728
1867	17272	16495	777
1869	18394	17566	828
1873	19976	18996	980
1886	24230	22912	1318
1897	30616	29240	1364
1908	32901	31255	1646
1914	51316	49006	2310
1919	51000	48705	2295

Ներգաղթյալների տեղավորման կոմիտեն նորեկներից պահանջում էր տներ կառուցել հաստատված ճակատամասով (ֆասադով) ուղիղ գծի վրա, հարմարություններով օժտված, և թողնել «երեք սաժեն լայնությամբ» (մոտավորապես 6,5 մետր) փողոցներ:[4] Օգտվելով ռուսական կառավարության տված վերոհիշյալ արտոնություններից և ընձեռած հնարավորություններից՝ արևմտահայ գաղթականներն ըսկըսեցին տներ կառուցել նաև Գյումրիում: Աստիճանաբար առաջացան նոր թաղամասեր:Ի դեպ, սկզբնական շրջանում սրանք ձևավորվեցին տարերայնորեն ու առանց քաղաքաշինական որոշակի ծրագրի, և բնակչությունը դրանցում ինքնաբերաբար տեղաբաշխվեց կա՛մ ըստ ազգային պատկանելության (օրինակ՝ «Թուրքի մահլա»), կա՛մ ըստ դավանանքի

[1] *Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը…,էջ 81:*

[2] *Ա.Հայրապետյան, Էթնոժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերը Ալեքսանդրապոլի գավառում (1840-50-ական թթ.), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VI, Գյումրի, 2003, էջ 77-78:*

[3] *Նյութերը վերցված են ռուսական տեղեկատու-վիճակագրական աղբյուրներից, ինչպես նաև հայ մի շարք հետազոտողների ժողովրդագրական հետազոտություններից՝Զ.Կորկոտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931թթ.),Եր., 1932; Թ.Հակոբյան, Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), Եր., 1959; Հ. Սարգսյան, Ալեքսանդրապոլի գավառի էթնոաշխարհագրական բնութագիրը XIX դարի վերջերին, ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ»,հ. I,Գյումրի, 1998: Г. Саркисян, Население Восточной Армении в XIX- начале XXв., Этнодемографическое исследование, Ер., 2002; Ա.Հայրապետյանի վերը նշվ. աշխատությունը, ինչպես նաև նույն հեղինակի աշխատասիրությամբ լույս տեսած՝ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2011 գիրքն ու այլ նյութեր:*

[4] *Աղ. Երիցեանց, նշվ. աշխ., էջ 440-441:*

(օրինակ՝ «Ֆռանգների մահլա») և կա՛մ նույնիսկ ըստ զբաղմունքի (օրինակ՝«Ռանչպարների մահլա»):[1] Դեռ դարի սկզբին այստեղ բնակություն հաստատած ռուս զինվորականներն ունեին իրենց թաղը, որը գտնվում էր քաղաքի հարավային մասում և կոչվում էր «Ռուսսկայա սլոբոդա» (տեղաբնակներն անվանում են «Սլաբոդկա»): Մոտ 40-50 տուն մահմեդականները Գյումրու հարավ-արևելքում (այժմյան ավտոկայանից մինչև հին գերեզմանոց) հիմնեցին «Թուրքի մահլեն»: Դրանից վերև՝ դեպի հյուսիս, 150 տուն հույները հիմնեցին «Ուռմնոցը» կամ «Հունաց մահլեն»: 30-40 տուն հայ բոշաները հիմնեցին «Բոշի մահլեն» (այժմյան Սայաթ-Նովա փողոցից մինչև նախկին հանրախանութ ընկած տարածքը): Մոտ 50 տուն հայ կաթոլիկների ջանքերով հիմնվեց «Ֆռանգների մահլեն»՝ իր եկեղեցով (Օրիորդաց գիմնազիայից մինչև Զինվորական կոմիսարիատ ընկած տարածքում):«Հունաց մահլից» հյուսիս խղճուկ տներ էին կառուցել աղքատ գաղթականները, որոնց թաղը «Հողեպլան» էր կոչվում, իսկ հին գյումրեցիներն էլ բերդի կառուցման պատճառով տեղավորվել էին գերազանցապես «Ջորի մահլում»:[2]

Մինչև 1837թ. վերոհիշյալ թաղերի նեղ, ծուռումուռ փողոցներով, փողոցահայաց բութ ու «կույր»՝ առանց պատուհանների տուֆաշար պատերով ցածրիկ տներ ունեցող բնակավայր էր Գյումրին: Եվ քանի որ մինչև XIX դարի 30-ական թվականների վերջերը Գյումրիում կատարվող քաղաքաշինական միջոցառումները հիմնականում ունեին ռազմական նշանակություն, ապա բնակավայրի վերաբերյալ մռայլ պատկերն անփոփոխ մնաց նաև հաջորդ երեք-չորս տարիների ընթացքում: Այնպես որ 1837թ. վերջերին Նիկոլայ I ցարի Անդրկովկաս կատարած այցելության արդյունքում, նախ քաղաքի կարգավիճակ ստանալով, իսկ կարճ ժամանակ անց նաև Ալեքսանդրապոլ վերանվանվելով հանդերձ, նորաստեղծ այս քաղաքը ժամանակակիցների հուշերում մնաց որպես տիպիկ ասիական քաղաք: Քաղաքի հետագա կառուցապատումը և պլանային շինարարությունը փոխեցին նրա «ասիական» տեսքը. հայտնվեցին մայթերով (սա նորություն էր արևելահայ քաղաքաշինության մեջ), ուղիղ և սալարկված փողոցներ, հասարակական և կրոնական նշանակության կառույցներ, որի արդյունքում XIXդ. 30-40-ական թթ. գյուղաքաղաք հիշեցնող խղճուկ Ալեքսանդրապոլը մի քանի տասնամյակում դարձավ սեփական դիմագիծ ունեցող շեն ու գեղեցիկ քաղաք:[3]

Նորաստեղծ քաղաքի անվանակոչությունը կապված է ռուսական Նիկոլայ I ցարի 1837թ. հոկտեմբերի 4-ին Գյումրի այցելելու և կառուցվող բերդի աշխատանքներին ծանոթանալու հանգամանքի հետ: Ցարի կարգադրությամբ բերդն անվանվեց Սուրբ նահատակ թագուհի Ալեքսանդրայի անունով, բերդի տարածքում հիմնվեց ուղղափառ Սբ Ալեքսանդրա եկեղեցին, իսկ քաղաքը 1840թ. բարձրագույն հրամանով անվանվեց Ալեքսանդրապոլ՝ սրբուհի Ալեքսանդրա նահատակի անվամբ, այլ ոչ թե ցարի կնոջ՝ Ալեքսանդրա Ֆյոդորովնայի, ինչպես կարծում են որոշ հետազոտողներ (ռուսական իրականության մեջ ավանդույթ էր նոր հիմնված քաղաքներին որևէ սրբի անվանակոչության տոնի առթիվ սրբերի անունով կոչելը, օր. Սանկտ Պետերբուրգ): Հարկ է նշել, որ քաղաքաբնակները շատ շուտով Ալեքսանդրապոլը «կրճատեցին» և խոսակցական մակարդակում կիրառելի դարձրեցին Ալեք-Պոլ և ալեքպոլցի անվանաձևերը: Հատկանշական է նաև, որ հնաբնակներն ու գյուղաբնակներն իրենց շարունակում էին զգալ որպես ***գիմրեցիներ*** և ոչ թե ***ալեքպոլցիներ***:[4]

---

[1] *Խ. Ավետիսյան, Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանի ներկա տարածքում 1828-1914թթ., ՊԲՀ, № 3, Եր., 1978, էջ 57; Վ.Հարությունյան, Գյումրի-Ալեքսանդրապոլը XIX դարում, «Բանվոր», Լենինական, 1978, 14 դեկտեմբերի, № 297, էջ 3:*

[2] *Ն.Նիկոդոսյանի նյութերը, տետր 1:*

[3] *Ա.Հայրապետյան, Արևելյան Շիրակը…, էջ 179:*

[4] *Կ.Մեղրոսյան, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, ՀԱԲ, պրակ 6, Եր., 1974, էջ 166:*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Գյուղատնտեսական զբաղմունքներ, առևտուր, արդյունագործություն

Հին գյումրեցիները (տեղաբնիկներ) զբաղվում էին երկրագործությամբ (ռանչպարություն), անասնապահությամբ և արհեստներով: Ալեքսանդրապոլ քաղաքի ձևավորումից հետո էլ հնաբնակները, համահավաք (կոմպակտ) ապրելով նորաստեղծ «Գեղցոնց մահլա», «Զորի բողազ» կամ «Ռանչպարների մահլա» թաղամասերում, շարունակեցին զբաղվել գյուղատնտեսությամբ (1840-50-ական թթ. սկսած՝ հատկապես բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ): Քաղաքի ռանչպարների շարքերը համալրեցին նաև կարսեցի գաղթականության մի մասը՝ մոտ 150 տուն և Արևմտյան Հայաստանի որոշ պատմագավառներից (Ալաշկերտ, Մուշ, Բասեն և այլն) Ալեքսանդրապոլ գաղթած վերաբնակիչները: Բոստանչիությունը դարձավ Ալեքսանդրապոլի բնակչության բավական ստվար հատվածի հիմնական զբաղմունքը և որոշ ընտանիքների համար տոհմական անվանաձև («Ռանչպարենք»,«Բոստնջոնք» և այլն): Մինչև 1870-ական թթ. պահպանվել էին նույնիսկ հողագործական համայնքները՝ «հին ռյաթ» և «թազա (նոր) ռյաթ»[1] ինչպես նաև գյուղական համայնքներին բնորոշ փոխօգնության ավանդական եղանակները (խաբ, համկյալ և այլն): Պատահական չէր, որ ռուսական իշխանությունները բավական երկար ժամանակ ալեքպոլցիներին հարկադրում էին թե՛ որպես գյուղացիներ և թե՛ որպես քաղաքաբնակներ: Տեղափոխվելով նոր թաղամասեր՝ հին գյումրեցիներն ու երկրագործությամբ զբաղվող նորաբնակներն իրենց բնակարանային համալիրները կառուցեցին ավանդական եղանակով՝ գյուղատիպ կցակառույցներ, գոմ, հարդանոց և այլն: Գյուղատնտեսական զբաղմունքների տարածվածության մասին էին խոսում բազմաթիվ ձիթհանների և ջրաղացների առկայությունը, որոնք ձեռներեց ալեքպոլցիների համար դարձել էին լավ եկամտի աղբյուր: Հայտնի էին՝ Գյոդակ Մկոյենց, Տեր-Ավագենց, Սատանա Պապոյենց, Մխոյենց, Խեչիկենց, Բոյաջոնց, Պեպանենց, Մալոյենց ձիթհանները,[2] Ձիթողցոնց, Խաչատուր Օհանջանյանի, Ունանենց, Անուշենց, Արշակ աղի, Ղանդիլենց, Վանցոնց, Բաբայովենց ջրաղացները:[3] Գյուղատնտեսական զբաղմունքները քաղաքի տնտեսության մեջ երկար ժամանակ պահպանեցին իրենց կարևոր նշանակությունը, սակայն XIXդ. վերջերից սկսած՝ դրանք կորցրին իրենց նախկին նշանակությունը՝ վերածվելով օժանդակ կամ սեզոնային զբաղմունքների, իսկ նախկին ռանչպարներից շատերը դարձան հմուտ արհեստավորներ և առևտրականներ:

Հանրահայտ փաստ է, որ համեմատաբար երիտասարդ քաղաք Ալեքսանդրապոլը, կարճ ժամանակահատվածում տնտեսական

---

[1] *Կ.Սեղբոսյան, նշվ. աշխ., էջ 177:*

[2] *Նույնը:*

[3] *Գ.Աղանյան, Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության զարգացման հիմնական միտումները (XIX դարավերջ-XX դարասկիզբ), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. X, Գյումրի, 2007, էջ 79:*

աճի աննախընթաց ցուցանիշներ ապահովելով, կարողացավ դառնալ Անդրկովկասի նշանավոր առևտրաարդյունագործական կենտրոններից մեկը: Արդեն 1840-ական թթ. սկզբին «երիտասարդ» քաղաքն իր քաղաքային եկամուտներով Անդրկովկասում գրավում էր 8-րդ տեղը՝ առաջ անցնելով Գորիից, Սղնախից, Նախիջևանից և Բաքվից: Երկու-երեք տասնամյակ հետո այս ցուցանիշները բարելավում են և Ալեքսանդրապոլն իր տնտեսական համախառն արդյունքով և քաղաքային եկամուտներով շրջանցում է նահանգային կենտրոններին (Երևան, Ելիզավետպոլ, Բաքու)՝ ընդհուպ մոտենալով Թիֆլիսին:[1]

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության արագ զարգացումը պայմանավորված էր մի շարք նպաստավոր գործոններով:

Արևմտյան Հայաստանից (Կարս, Կարին, Բայազետ) ներգաղթած բնակչությունը աչքի էր ընկնում իր բացառիկ աշխատասիրությամբ և ձեռներեցությամբ: Ներգաղթածների այս հատկությունները հիացրել են հայ և ռուս հետազոտողներին: 1836թ. Փամբակ-Շորագյալի դիստանցիան ուսումնասիրած ռուսական բանակի սպա Ն. Ֆլորովսկին Գյումրու նորաբնակների մասին գրում էր. «Նրանք բանիմաց են և հակում ունեն դեպի լավ տնտեսությունը, հատկապես Թուրքիայից նոր գաղթածները: Օգտակար նորամուծությունն այնտեղ ամենափոքր դժվարությունների անգամ չի հանդիպում»:[2] 1838թ. մայիսին Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենի հետ քաղաք այցելած Խաչատուր Աբովյանը ևս հիացմունքով է խոսում նորաստեղծ քաղաքի բնակիչների աշխատասիրության, շինարարական տաղանդի և բարձր ճաշակի մասին: Մեծ լուսավորիչը համոզված էր, որ «…ժամանակի ընթացքում այն (իմա.՝ Գյումրին-հեղ.) շատ կպայծառանա»:[3] Մինչև XIXդ. կեսերը Արևմտյան Հայաստանի առևտրաարհեստավորական կենտրոնները՝ Կարինը, Կարսը, Վանը, Երզնկան, Բայազետը, իրենց զարգացման մակարդակով և քաղաքային տնտեսության համախառն արդյունքով զգալիորեն գերազանցում էին ոչ միայն արևելահայկական քաղաքներին, այլև բուն Օսմանյան տերության, հարևան Պարսկաստանի ու Կովկասի բազմաթիվ քաղաքներին: Արևմտահայ գաղթականներն իրենց հետ բերեցին վերը հիշված կենտրոնների (Կարինի և Կարսի արհեստագործական և Հին Բայազետի առևտրական) բազմադարյան ավանդույթները և նոր բնակավայրերում՝ Ախալցխայում, Ախալքալաքում, Նոր Բայազետում ու հատկապես Ալեքսանդրապոլում, պարարտ հող գտան, ուր առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին՝ դրանք խորացնելու և զարգացնելու համար:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության զարգացման հաջորդ նախապայմանը քաղաքի ռազմաստրատեգիական բարենպաստ դիրքն էր: XIXդ. առաջին երեսնամյակին միմյանց հաջորդող ավերիչ պատերազմները ծանր հարված էին հասցրել Ռուսաստանին սահմանամերձ օսմանյան և պարսկական տարածքների տնտեսությանը: Այս պետությունները 1828-1830թթ. հայերի զանգվածային արտագաղթից հետո զրկվեցին ամենաաշխատասեր, բանիմաց և, ինչու չէ, ձեռներեց բնակչությունից: Օսմանյան արևելյան վիլայեթներն արդյունագործական ապրանքներ արտահանողից վերածվեցին ներմուծողի, որից առավել օգտվեցին Ախալցխայի և Ալեքսանդրապոլի առևտրաարհեստավորական խավերը: Ալեքսանդրապոլի արհեստավորներն ու առևտրականները արագ կողմնորոշվեցին հարևան երկրների շուկայի պահանջարկի խնդրում և շուտով մենաշնորհային դիրք գրավեցին մի շարք ապրանքատեսակների արտադրության և արտահանման ասպարեզում (մետաղամշակության,փայտամշակության ապրանքներ, շինարարական արհեստներ, կաշվի, հացահատ-

[1] *Նույն տեղում, էջ 77:*

[2] *Обозрение Российских владений за Кавказом, ч. II, СПБ, 1836, с. 305.*

[3] *Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.7, Եր., 1952, էջ 46:*

կի և աղի արտահանում և այլն):[1] Նույնիսկ Ալեքսանդրապոլից բավական հեռու գտնվող Կողբի նշանավոր աղահանքերում արդյունահանվող աղը մեծածախ գներով ներմուծվում էր Ալեքսանդրապոլ և այնտեղից միայն արտահանվում հարևան տարածաշրջաններ:[2] Միջնորդ մեծածախ առևտուրը ողջ Արևելյան Հայաստանում և մասամբ նաև Անդրկովկասում ու հարևան տարածաշրջաններում դարձել էր ալեքպոլցի վաճառականների մենաշնորհը, ուստի պատահական չէր, որ 1845թ. Անդրկովկասում առաջիններից մեկն այստեղ բացվեց ամենամյա երկշաբաթյա տոնավաճառ (համեմատության համար ասենք, որ Ելիզավետպոլում տոնավաճառ բացվեց 1846թ., Գորիում 1852թ. և այլն):[3] Մեծածախ առևտրի զարգացման գործում մեծ նշանակություն ուներ նաև քաղաքի կիրակնօրյա շուկան, որն աչքի էր ընկնում իր մարդաշատությամբ և իրականացվող առևտրական գործարքների մեծ ծավալներով: Ընդարձակ էր նաև ալեքպոլցի առևտրականների կապերի աշխարհագրությունը, որը չէր սահմանափակվում հարևան երկրներով (Թուրքիա, Պարսկաստան, Վրաստան), այլև տարածվում էր դեպի Ռուսաստան և Ուկրաինա (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Նիժնի Նովգորոդ, Խարկով), Արևելյան և Արևմտյան Եվրոպա (Վարշավա, Լայպցիգ, Մարսել և այլն): Ալեքսանդրապոլցի վաճառականներն առևտրական ներկայացուցչություններ ունեին Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, Մարսելում և բուն Հայաստանից միակն էին, որ մասնակցում էին Նիժնի Նովգորոդի ամենամյա հռչակավոր տոնավաճառին:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության զարգացմանը նպաստեցին նաև մի շարք վարչական ու ռազմաքաղաքական գործոններ: Դառնալով համանուն գավառի կենտրոն՝ Ալեքսանդրապոլն ստացավ ադմինիստրատիվ-կառավարչական արտոնություններ: Քանի որ Ալեքսանդրապոլը գավառի միակ քաղաքային բնակավայրն էր, որտեղ կենտրոնացված էին տնտեսական և վարչական բոլոր լծակները, այստեղ էին գալիս հարևան գյուղերի բնակիչները, և քաղաք այցելող յուրաքանչյուր ոք ինչոր կերպ առևտուր կամ փոխանակություն էր կատարում: 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ալեքսանդրապոլը և գավառը շուրջ 90 տարի՝ մինչև 1918 թ., զերծ մնացին ավերիչ պատերազմներից, ինչը ևս նպաստեց քաղաքային տնտեսության բնականոն և արագ տեմպերով զարգացմանը: Միևնույն ժամանակ XIX դ. երկրորդ կեսի ռուս-թուրքական երկու պատերազմները (1853-1856 թթ.,1877-1878 թթ.) էապես նպաստեցին քաղաքի տնտեսության զարգացմանը: Հետազոտողներից շատերը, օրինակ, նշանավոր գրող Ատրպետը, իրավացիորեն նշում են, որ այս պատերազմների ժամանակ ալեքպոլցի արհեստավորները մեծածավալ ռազմական պատվերներ էին ստանում և սպասարկում էին ռուսական բանակին: Հարկ է նշել, որ Անդրկովկասում հիշյալ ժամանակահատվածում երկաթուղու բացակայությունը դժվարացնում էր կապերը մետրոպոլիայի՝ Ռուսաստանի կենտրոնական արդյունաբերական զարգացած շրջանների հետ, և ռուսական պետությունն ու բանակը ստիպված էին շատ դեպքերում ապավինել տեղական արտադրողներին: Հատկապես շատ պատվերներ ունեին երկաթագործ վարպետները (դարբիններ, պայտագործներ, պայտարներ, մեխագործներ),[4] զինագործները (ալեքպոլցի նշանավոր զինագործ Կարանյանների ընտանիքը պատվեր ուներ վերանորոգելու ռուսական բանակի շարքից դուրս եկած կամ

[1] *Գ.Աղանյան, Ալեսանդրապոլի տնտեսության զարգացման հիմնական միտումները…, էջ 78:*

[2] *Պտույտ Ալեքսանդրապոլի շրջակայքում, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1869, № 21:*

[3] *Վ.Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Ուսումնասիրություն և փաստաթղթեր, Եր., 1958, էջ 89:*

[4] *Գ.Աղանյան, Պայտի հետ կապված արհեստները երկաթագործության համակարգում, Հանրապետական գիտական նստաշրջան 1986-1988թթ., Ազգաբանական և բանագիտական հետազոտությունների արդյունքները, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1990, էջ 5-7:*

վնասված սառը զենքը և հրազենը),[1] անվագործները և սայլ պատրաստողները (առանց բացառության բոլոր գրաստային փոխադրամիջոցներն անցնում էին Թիֆլիս-Ախալցխա-Ալեքսանդրապոլ-Կարս և Երևան-Ալեքսանդրապոլ-Կարս խճուղիներով), թաղիքագործները, վրանագործները, կաշեգործները և կոշկակարները: Միևնույն ժամանակ ալեքպոլցի վաճառականները հատուկ պատենտ (արտոնագիր) էին ստանում որոշակի ապրանքներ հատկապես բանակին մատակարարելու համար:

Ավելի ուշ՝ Առաջին աշխարհամարտի տարիներին, պատկերն արմատապես փոխվեց, քանի որ գործող երկաթուղու գոյության պայմաններում ռուսական կապիտալն ամբողջովին վերահսկելի դարձրեց ռազմական մատակարարումները և զորքի սպասարկումը, ինչը լուրջ հարված հասցրեց տեղական արդյունագործությանն ու առևտրին:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության մեջ բավական էական փոփոխություններ տեղի ունեցան Թիֆլիս-Ալեքսանդրապոլ (1898թ.),Ալեքսանդրապոլ-Երևան–Ջուլֆա (1903թ.) և Ալեքսանդրապոլ-Կարս-Սարիղամիշ երկաթուղիների շինարարության և շահագործման արդյունքում:[2] Այս երկաթուղիների կառուցումը մի կողմից նպաստեց տնտեսական կապերի սերտացմանը Կովկասի և Ռուսաստանի քաղաքների հետ՝ միաժամանակ խոցելի դարձնելով քաղաքի ավանդական շուկան, քանի որ երկրի եվրոպական մասից ներկրված էժանագին ֆաբրիկագործարանային ապրանքների հետ մրցակցությունում տեղական արհեստավորական արտադրանքը զգալիորեն զիջում էր:Այս հանգամանքը պատճառ դարձավ արհեստների որոշ ճյուղերի անկման կամ էլ վերադասավորման:[3] Ալեքսանդրապոլը XXդ. սկզբին դարձավ երկաթուղային խոշոր հանգույց և այստեղ կառուցվեց երկաթուղային ամենամեծ դեպոներից մեկը Անդրկովկասում:[4]

Քաղաքային տնտեսության զարգացման գործում մեծ նշանակություն ուներ մաքսատան գոյությունը: Դեռևս պարսկական տիրապետության շրջանում մաքսատուն կար Գյումրու մերձակա թուրք-պարսկական սահմանին, իսկ ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո ռուսական խոշոր մաքսատուն հիմնվեց բուն քաղաքում: Մաքսատան եկամուտները տարեցտարի աճում էին և, 1870-ական թթ. վերջին առևտրափոխանակության և տարանցիկ առևտրի ծավալների մեծացմանը զուգընթաց, բազմապատկվել էին: Սկզբնական շրջանում գործում էր 1821թ. ընդունված, հատուկ Անդրկովկասի համար մշակված մաքսային օրենսդրությունը, որը նպաստավոր պայմաններ էր ստեղծում եվրոպական ապրանքների ներմուծման համար, սակայն 1831թ. ընդունվեց նոր օրենք, որը հովանավորչական (պրոտեկցիոնիստական) բնույթ ուներ և խրախուսում էր տեղական ու ռուսաստանյան արտադրողներին: Եվրոպայից ներմուծվող որակյալ ու էժանագին ապրանքների վրա դրվեցին բավական մեծ մաքսային տարիֆներ՝ 5% և ավելի, որը կիրառելուց հետո միանգամից աճեցին քաղաքի մաքսատան եկամուտները: Այսպես՝ եթե 1832թ. մաքսային եկամուտները կազմում էին 877 արծաթ ռուբլի, ապա 1833թ. այդ թիվը հասավ 1447 ռուբլու:[5] Հարկ է նշել, որ հովանավորչական այս քաղաքականությունը միևնույն ժամանակ բավական մեծ վնաս էր հասցնում տեղական տարանցիկ առևտրի շուկային, քանի որ Բաթումի և Տրապի-

[1] *Գ.Աղանյան, Հայկական զինագործությունը XIX-XXդդ. սկզբին (ըստ Կարնո և Ախալցխայի նյութերի), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Գյումրի, 2000, էջ 136:*

[2] *Կ.Կոզմոյան, Լենինական, Եր., 1957, էջ 15:*

[3] *Գ.Աղանյան, Ավանդական արհեստների փոխակերպումները Ալեքսանդրապոլ-Լենինականում (XIXդ. երկրորդ կես-XX դ. առաջին կես), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի, 2006, էջ 48:*

[4] *Գ.Աղանյան, Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության…, էջ 79:*

[5] *Նույն տեղում, էջ 80:*

զոնի նավահանգիստներ բերվող եվրոպական ապրանքները, շրջանցելով Ալեքսանդրապոլի և Երևանի մեծածախ շուկաները, բերվում էին Թավրիզ ու Սպահան և տարածվում մերձավորարևելյան երկրներում: Դրա պատճառով էլ, 1846 թ. նոր մաքսային օրենսդրությամբ, օտարերկրյա ապրանքների մաքսային տարիֆները փոխվեցին: Այս նորամուծությունը մեծ եկամուտներ չբերեց քաղաքի մաքսատանը, քանի որ ռուս-թուրքական սահմանը Ալեքսանդրապոլից հեռանալուց հետո (1878թ. Կարսի մարզը միացվեց Ռուսաստանին) դրա դերն զգալիորեն նվազեց, իսկ եկամուտները պակասեցին:

Տարանցիկ առևտրի կենտրոն լինելու հանգամանքը թելադրում էր իջևանատների (քարավանատներ կամ տեղական բարբառով՝ խաներ) և ավելի ուշ հյուրանոցների թվի անընդհատ աճ: 1838թ. Ալեքսանդրապոլում կար երկու, 1863-ին՝ յոթ, իսկ 1900-ականների սկզբին շուրջ տասը իջևանատուն:[1] Գրավոր զանազան աղբյուրներում պահպանվել են այդ իջևանատներից մի քանիսի անուններն ու հասցեները՝ «Ալմոյի խան» (կամ Արմոյի)[2], գտնվում էր 23 փողոցում, «Մոլա Ալու խան» և «Սհատչոնց խան»՝ 25-ում, «Կարմիր խան», «Բաբայովենց խան», «Նազարեթ աղայի խան», «Օխտնախպրանց խան», «Շիլաջոնց խան», «Գինոսենց խան»՝ բոլորը 27 փողոցում,[3] ինչպես նաև «Դավի (ուղտ) խան»՝ Սլաբոդկա թաղամասում: 1914թ. տվյալներով Ալեքսանդրապոլում կար հինգ հյուրանոց,[4] որոնց անունները ցավոք չեն հիշատակվում: Իջևանատները գտնվում էին հիմնականում շուկային հարակից փողոցներում, որտեղ էլ տեղակայված էին գրաստային փոխադրամիջոցները սպասարկող արհեստավորների կրպակները. մառանջիների (սայլի անիվ պատրաստողներ) արհեստանոցները գտնվում էին 27 փողոցում, պայտագործների, պայտարների և մյուս երկաթագործների արհեստանոցները 25 փողոցում և այլն:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության երկու հիմնական բաղադրիչները՝ արհեստներն ու առևտուրը, իրենց համախառն արդյունքով, եկամուտների, պետական և քաղաքային բյուջե մուծվող հարկերի և տուրքերի չափերով բավական տարբերություններ ունեին: Առաջ անցնելով՝ նշենք, որ մինչև 1895-96թթ. քաղաքային տնտեսության տարբեր ճյուղերի եկամուտների հաշվարկը կատարվում էր արծաթ ռուբլով, իսկ դրանից հետո՝ ոսկի ռուբլով: Բանն այն է, որ XIXդ. 90-ական թթ. ֆինանսատնտեսական և դրամական բարեփոխումների շնորհիվ ռուսական ռուբլին դարձավ կոնվերտացվող ու մրցունակ արժույթ և, բնականաբար, ռուսական վիճակագրական տեղեկատվությունն սկսեց ներկայացվել ոսկե ռուբլու հաշվարկով, որը ավելի թանկ ու գնողունակ էր, քան մինչռեֆորմյան չկոնվերտացվող արծաթե ռուբլին:

Առաջին հստակ վիճակագրական տեղեկությունը Ալեքսանդրապոլի արհեստավորների տարեկան եկամտի մասին ունենք 1863 թ. կտրվածքով: Ըստ այս տեղեկության՝ արհեստավորների ընդհանուր արտադրանքի ծավալը դրամական համարժեքով կազմել է շուրջ 160 հզ արծաթ ռուբլի:[5] Հարկ է նշել, որ Վ. Աբրահամյանը, հենվելով մեկ այլ փաստաթղթի վրա, առանձնացնում է ըստ արհեստի ճյուղի ստացվող եկամուտները, որոնց հանրագումարը կազմում է մոտավորապես 115 հզ արծաթ ռուբլի:[6] Այստեղ նկատվում է որոշակի անհամապատասխանություն, քանի որ 160 հզ ռուբլի

---

[1] *Գ.Աղանյան, Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության…, էջ 79:*

[2] *Այն ամենամեծն ու նշանավորն էր, որի հետ կապված մինչ օրս մարդկանց բազմությունը, ժխորը և աշխույժ ելումուտը ցույց տալու համար քաղաքի հնաբնակները օգտագործում են «Դառավ Ալմոյի խանը» դարձվածը:*

[3] *Գ.Աղանյան, Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության…, էջ 79:*

[4] *ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, FF II, Ն. Նիկողոսյանի նյութերը, էջ. 7378:*

[5] *Сборник статистических сведений о Кавказе, т. I, отд. III, с. 52.*

[6] *Վ. Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դ. սկիզբ), Եր., 1971, էջ 57-58:*

ծավալ ունեցող արհեստավորական արտադրանքը չէր կարող ապահովել 115 հզ ռուբլի եկամուտ: Ամենայն հավանականությամբ, հետազոտողը շփոթել է *եկամուտ* և *ծավալ* հասկացությունները: Նման սպրդումները և տարընթերցումներն ընդհանրապես հատուկ են Վ. Աբրահամյանի աշխատությանը, ուստի, որպեսզի մերկապարանոց չինչի մեր պնդումը, նշենք, որ իր բերած աղյուսակից վերը հղում կատարելով մեկ այլ փաստաթղթի՝ հեղինակը գրում է, որ 1865 թ. Ալեքսանդրապոլի արհեստավորների եկամուտը կազմել է 19 հզ ռուբլի:[1] Վերջին թիվն առավել մոտ է իրականությանը և տնտեսագիտորեն առավել հիմնավորված: Ալեքսանդրապոլի արհեստավորական արտադրանքի ծավալները մինչև 1890-ական թթ. անընդհատ աճում են, չնայած արհեստավորների թիվը որոշակի կրճատման միտում է արձանագրում:Հանրահայտ փաստ է, որ ռուսաստանյան կապիտալի արագ տեմպերով զարգացումը հետռեֆորմյան շրջանում և կենտրոնական իշխանությունների վարած հովանավորչական քաղաքականությունը ռուսական ֆաբրիկագործարանային արտադրության նկատմամբ զգալի վնաս պատճառեցին երկրի գաղութային ծայրագավառների ավանդական արդյունագործությանը: Արհեստների շատ ճյուղեր, ինչպես նշեցինք վերևում, անկում ապրեցին, սակայն ընդհանուր առմամբ Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության հաշվեկշռում արհեստավորական արտադրանքի բաժինը շարունակում էր մնալ բավական բարձր:

Մինչռեֆորմյան շրջանում Ալեքսանդրապոլի արհեստավորներն ու առևտրականները պարտավոր էին վճարել երկու տեսակի հարկ՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական հարկը վճարվում էր որևէ զբաղմունքով (արհեստով, առևտրով և այլն) պարապելու համար թույլտվության հատուկ վկայական (պատենտ) ստանալու ժամանակ: Եթե որևէ մեկը երկու շաբաթվա ընթացքում չէր ստանում վկայականը, ապա քաղաքի կամ գավառի ոստիկանական վարչությունը (1870-ական թթ. ռեֆորմներից հետո՝ քաղաքային վարչությունը) իրավասու էր զրկել տվյալ արհեստավորին կամ առևտրականին իր զբաղմունքով պարապելու իրավունքից: Հետաքրքիրն այն է, որ քաղաքի կոմունալ-կենցաղային ծառայությունները (կոյուղու սպասարկում, լուսավորությունն ապահովող, կանաչապատում իրականացնող պետական հիմնարկներ և այլն), ինչպես նաև գրադարանները, ընթերցարանները, բարեգործական և բարեխնամ (որբանոցներ, մանկատներ) գործունեությամբ զբաղվող հիմնարկները ազատվում էին հիմնական հարկից, սակայն այս դեպքում անպայման անհրաժեշտ էր ստանալ հատուկ տեղեկանք ոստիկանական կամ քաղաքային վարչությունից: Յուրաքանչյուր արհեստավոր տարին մեկ անգամ պետք է մուծեր հիմնական հարկ և ստանար պատենտ: Ոստիկանական և քաղաքային վարչությունները հսկում էին նաև արտադրանքի որակը և գները:

Հիմնական հարկի չափերի մասին, կոնկրետ Ալեքսանդրապոլի պարագայում, ձեռքի տակ ունենք տեղեկություն միայն XX դ. սկզբի համար, որը կազմում էր երեք ռսկի ռուբլի 85 կոպեկ տարեկան յուրաքանչյուր արհեստավորից: Առաջին և երկրորդ գիլդիայի առևտրականները վճարում էին համապատասխանաբար՝ 650 և 97 ռուբլի 50 կոպեկ:[2] Առաջին գիլդիայի առևտրականները, որոնց շահույթը մեծ գումար էր կազմում, վճարում էին նաև լրացուցիչ հարկ, որի չափերը որոշվում էին վերը հիշված պետական մարմինների կողմից՝ երեք տարին մեկ անգամ վերանայելու պայմանով: Ըստ նույն աղբյուրի՝ լրացուցիչ մուծումները կազմում էին առաջին գիլդիայի համար 118 ռուբլի, երկրորդի՝ 10 ռուբլի 25 կոպեկ:[3]

1875 թ. հիմք ընդունելով ֆինանսների նախարարության շրջաբերականը, Կովկասի

[1] *Վ. Աբրահամյան, Հայ համքարությունները…, էջ 57-58:*

[2] *Ն.Նիկողոսյանի նյութերը, էջ 7229-7252 :*

[3] *Նույնը:*

փոխարքայի հրամանով տեղի քաղաքների արհեստավորների և առևտրականների համար սահմանվեցին հարկերի և տուրքերի համապատասխան տեսակներ և չափեր: Հարկերն ու տուրքերը բաժանվեցին հետևյալ կերպ *ա)պետական տուրք, բ) քաղաքային տուրք, գ) դպրոցների և բարեգործական հիմնարկներին հատկացվող տուրքեր և դ) պատենտի համար մուծվող տուրք:*[1] Հարկերի և տուրքերի այս տեսակներն աննշան փոփոխություններով կիրառվեցին մինչև Ռուսական կայսրության փլուզումը:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության կարևոր բաղկացուցիչներից էր առևտուրը, որով զբաղվողների թիվը անհամեմատ մեծ էր, քան նահանգային կենտրոն Երևանում (այստեղ առևտրականների ամենամեծ թիվը գրանցվել է 1880-ական թթ.՝ կազմելով շուրջ 562 մարդ)[2] և Կովկասի մյուս քաղաքներում՝ զիջելով միայն Թիֆլիսին: Ալեքպոլցի առևտրականների տարեկան դրամական շրջանառության ծավալները երեք անգամ գերազանցում էին արհեստավորական արտադրանքի համապատասխան արդյունքը, չնայած որ առաջինով զբաղվողների թիվը չորս անգամ պակաս էր վերջինից: 1860-ական թթ. տվյալներով Ալեքսանդրապոլում հաշվվում էր շուրջ 670 առևտրական (ըստ Նիկողոսյանի՝ 673), որոնց թիվը համարյա անփոփոխ է մնում մինչև 1910-ական թթ.: Եթե 1860-ական թթ. Ալեքսանդրապոլի վաճառականների առևտրական շրջանառությունը կազմում էր շուրջ 500 հզ արծաթ ռուբլի,[3] որը կազմում էր Երևանի նահանգի ողջ առևտրաշրջանառության 1/3-ը, ապա 1910-ական թթ. այդ ցուցանիշը կրկնապատկվում է:

Ինչպես նշեցինք վերևում, ալեքպոլցի առևտրականները աչքի էին ընկնում իրենց ձեռներեցությամբ և կարողացել էին որոշ ապրանքատեսակների և առևտրի եղանակների խնդրում մենաշնորհային դիրքեր գրավել: Այսպիսի մենաշնորհի փայլուն օրինակ է դժնիկ կամ «լվի ծաղիկ» (լատ. Rhamnus, տեղի բնակչությունն անվանում էր «ալաջայրա») կոչվող բույսից ստացվող դեղին և կանաչ ներկերի պատրաստման և արտահանման փաստը: Ալեքսանդրապոլցի Սիրեկան Գորոյանն իր եղբայրների հետ, 1850-ական թթ. սկսած, կազմակերպում է այս բույսի աճեցման և վերամշակման գործը:[4] Մեծ քանակությամբ «լվի ծաղիկ» աճեցվում, հավաքվում, հատուկ աղացներում փոշի էր դարձվում և արտահանվում Ռուսաստան ու Եվրոպա: Հարկ է նշել, որ այս բույսից ստացվում էր դեղափոշի, որն այն ժամանակվա բժշկության մեջ օգտագործվում էր որպես լուծողական: Գորոյանների հիմնած «Արագած» առևտրական ընկերության մասնաճյուղեր բացվեցին Մոսկվայում և Պետերբուրգում: Սիրեկան Գորոյանը Կովկասի տընտեսության զարգացման բնագավառում մեծ ներդրում ունենալու համար «Ազատ տնտեսական ընկերակցության» կողմից պարգևատրվեց արծաթե մեդալով, իսկ նրա մոսկովյան առևտրական լիազոր-ներկայացուցիչներ հայր և որդի Միրզոյանցներն արժանացան Մարսելի միջազգային ցուցահանդեսի ոսկե մեդալի:[5] «Արագած» ընկերության վարկանիշն այնքան բարձր էր Ռուսաստանում, որ այդ ապրանքանշանի տակ ի հայտ եկան կեղծ ընկերություններ, որոնք դժնիկի փոշու անվան տակ վաճառում էին քիմիական անորակ ներկեր, որոնցով ներկված թելերը շատ շուտ գունաթափվում ու խունանում էին:

Ինչ վերաբերում է ռուսական աղբյուրներում ֆաբրիկա կամ գործարան հորջորջվող ձեռնարկություններին, ապա պետք է նշել, որ դրանք հիմնականում ավելի շատ մանուֆակտուրա կամ որոշակի աշխատանքային բաժանում ունեցող մեծ արհեստանոցներ էին իրեն-

---

[1] *Հ. Էսադզե, Историческая записка об управлении Кавказом, т. II, Тифлис, 1907, с. 45-46.*

[2] *Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801-1879թթ.), Եր., 1959, էջ 472-473:*

[3] *Վ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 92:*

[4] *Ատրպետ, Ինչ ժառանգեցինք, ձեռագիր, ՀՊԹ արխիվ, գործ 176 /ա, էջ 32:*

[5] *Վ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 93:*

ցից ներկայացնում: Ռուսական վիճակագրությունը սրանց տակ հիշատակում է օճառի, ճարպամոմի, կաշվի դաբաղման, օղու թորման արհեստանոցները և նույնիսկ ձիթհանները, որոնք բնականաբար շատ հեռու են գործարան կոչվելուց: Հարկ ենք համարում մեջբերել ռուսական այդօրինակ աղբյուրներից մեկում տեղ գտած տվյալները վերոհիշյալ, այսպես կոչված, գործարանների մասին.[1]

№	Գործարանի անվանումը	Գործարան-ների թիվը	Արտա-դրանքի հանրագու-մարը	Աշխատող-ների թիվը
1	Կոշիկի	3	250	3
2	Օճառագոր-ծարան	10	5000	12
3	Կաշվի մշակման	2	15000	6
4	Աղյուսի գործարան	4	2000	4
5	Յուղհալ գործարան	4	2000	15
6	Բրուտագոր-ծական	2	65	2
	Ընդամենը	25	11 4000	42

Գործարանային արտադրությանն ավելի մոտ կարելի էր համարել Ձիթողցյաններին և Ծաղիկյաններին պատկանող գարեջրի արտադրությունները և XIXդ. վերջին հիմնված մեխանիկական փոքր արտադրամասը:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսությունը չի կարելի պատկերացնել առանց խանութների,կրպակ-արհեստանոցների և հասարակական սննդի օբյեկտների (ճաշարաններ, սրճարաններ, գինետներ, գարեջրի կրպակներ և այլն): 1860-ական թթ. սրանց թիվը գերազանցում է հազարը, որն ավելի մեծանում է 1910-ական թթ. ի հաշիվ սննդի օբյեկտների ավելացման:[2] Քաղաքում գործում էին 26 սրճարան, որոնցից 15 գինետուն, 13 տրակտիր (ճաշարան), 4 գարեջրի կրպակ և այլն: Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում «խանութ» հասկացությունը կարող էր ներառել և՛ ցուցափեղկերով մեծ ու ընդարձակ խանութ, և՛ փոքր կամ աննշան կրպակ, այնպես որ դրանց մեծ թիվը չպետք է տարակուսանքի տեղիք տա:

Վերջում մի քանի խոսք քաղաքի եկամուտների հավաքագրման և բյուջեի ձևավորման մասին: Ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո Արևելյան Հայաստանի քաղաքային բնակչությունը և սրանց թվում նաև ալեքսանդրապոլցիները հարկադրվում էին որպես պետական գյուղացիներ[3] և չէին մտցվում ռուսական դասային կարգացուցակի քաղքենիներ (мещане) դասային ռեեստրի մեջ, որը շերտավորվում էր ըստ գիլդիաների: Հարկ է նշել, որ ալեքպոլի բնակիչները այս անարդարությունը շտկելու համար նամակ-խնդրագրով դիմել են Նիկոլայ I ցարին և համառություն ցուցաբերելով կարողացել են հստակեցնել իրենց՝ որպես քաղաքաբնակների հարկադրելու հարցը, որը ասենք նահանգային կենտրոն Երևանում գոնե մինչև 1870-1880-ական թթ. դեռևս չէր լուծված:[4]

Հետագայում դրությունը շտկվեց և քաղաքաբնակները դասվեցին քաղքենիների շարքը, որոնք իրենց հերթին ըստ գույքային կամ ունեցվածքային ցենզի որպես հարկատուներ բաժանվեցին ութ խմբի: Ամենաբարձրը համարվում էին առաջին և երկրորդ գիլդիայի վաճառականները (մինչև 1863թ. գիլդիական ռեֆորմը կար նաև երրորդ գիլդիան, որը վերացվեց), հետո գալիս էին մանր առևտրականները, արհեստավորները, սպասարկման ոլորտի ներկայացուցիչները, կառապաններն ու սայլապանները և այլն: Այս խմբերից յուրաքանչյուրի ներկայացուցիչները, ինչպես վերը նշել ենք, մուծում էին որոշակի հարկեր և տուրքեր, որոնցից էլ ձևավորվում էր քաղաքային բյուջեն: Բերենք մի քանի մասնագիտական և ունեցվածքային խմբերի հարկային պարտավորությունների մասին տվյալներ. օ-

[1] *СМОМПК, вып. XI, 1891, с. 135-136.*

[2] *Համադրելով Վ.Աբրահամյան բերած աղյուսակի նյութերը ռուսական վիճակագրության մեջ հանդիպող առևտրականների քանակի մասին տեղեկություններին ստացվում է հիշյալ թիվը: Տե՛ս նաև Նիկողոսյանի հուշերը, էջ 7377-7386:*

[3] *Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 478:*

[4] *Նույնը:*

ինակ՝ օղու և գինու պահեստներից յուրաքանչյուրը պետական գանձարան էր մուծում 211 ռուբլի, քաղաքի բյուջե՝ 36 ռուբլի, դպրոցների համար՝ 16 ռուբլի, պատենտի համար՝ 4 ռուբլի (ընդ. 267 ռուբլի), քաղաք մտնող ապրանքներից հօգուտ բյուջեի գանձվում էր 8243 ռուբլի, քաղաքի կշեռքի (ստանդարտի կամ չափ ու կշեռքի) կապալը բյուջե էր բերում 5041 ռուբլի և այլն:[1] Ընդհանուր առմամբ Ալեքսանդրապոլ քաղաքի ընդհանուր եկամուտը XXդ. սկզբին կազմում էր շուրջ 120-130 հզ ոսկե ռուբլի,[2] որն իր ժամանակի 30 հազարանոց քաղաքի համար հսկայական գումար էր կազմում (եթե նշված թիվը վերածենք ժամանակակից արժույթի միավորի, ապա կստացվի մոտավորապես 1,5-1,7 մլրդ դրամ):

Եվ վերջապես նշենք, որ Ալեքսանդրապոլի տնտեսության ոչ մեծ, բայց բնորոշ և կարևոր հատվածը կազմող գյուղատնտեսական արտադրության ծավալները, ցավոք, հնարավոր չէ գոնե մոտավոր ճշգրտությամբ ներկայացնել, քանի որ թե՛ ռուսական վիճակագրության մեջ և թե՛ տեղացի հուշագիրների մոտ չկան քիչ թե շատ հավաստի տվյալներ:

Արհեստներ

Արհեստներն ու առևտուրը ալեքսանդրապոլցիների տնտեսական կենցաղի հիմնական բաղադրիչներն էին: Կարինցի, կարսեցի և բայազետցի գաղթականների շնորհիվ քաղաքը շատ արագ վերածվեց Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի արհեստավորաառևտրական խոշոր կենտրոնի: Կարինցիների և կարսեցիների շնորհիվ քաղաքում հիմք դրվեց բազմաճյուղ և բարձրարվեստ արհեստների, իսկ ձեռներեց և հմուտ բայազետցիների շնորհիվ ծաղկեց առևտուրը: Քաղաքի կենտրոնում արագ աճեցին արհեստավորական շարքերը («չարսուները»), և ինչպես վկայում է օտար ճանապարհորդներից մեկը. «…հունաց եկեղեցու շուրջը (ներկայիս «Արագած» ճեմափողոցի սկզբնամասից մինչև Քաղաքապետարան և Ն. Ռիժկովի փողոց-հեղ.) այնքան կրպակ և արհեստանոց կար, որ այն հեռվից չէր երևում»: Արհեստավորական շարքերը գոյություն ունեին դեռևս զարգացած միջնադարում և հատուկ էին բազմաճյուղ արհեստավորական ավանդույթներ ունեցող հայկական միջնադարյան բոլոր քաղաքներին,[3] և պատահական չէր, որ այս ավանդույթն իր շարունակությունը գտավ նորաստեղծ Ալեքսանդրապոլում: Դեռևս XIXդ. 30-40-ական թթ. ձևավորվել էին հետևյալ հիմնական չարսուները. № 25 փողոցում էին գտնվում՝ «դամրջնոցը», «դասապխանեն», «դազանչոնցը», «նալբնդնոցը», «մառանջոնցը», «ատթարնոցը», «դյուրգրնոցը», «մազմննոցը», «թիքիճոնցը», «ուտունճոնցը», № 23 փողոցում՝ «սապոնջոնցը», № 27 փողոցում՝ «փափախչոնցը», «բազազ խանեն», «փամբուկչոնցը», № 25-27-ի միջև «ղույումճինոցը» և «բախալ խանեն», «սապոնջոնց» ու «դասաբխանի» արանքում «թիքիճոնց» նեղ «սողախը» (նրբանցք) և այլն: Արհեստավորների թվի ավելացման և առևտրի շրջանակների ընդլայնման հետ կապված՝ չարսուները տարածքներն ընդլայնում են և ընդգրկում ներկայիս Ն.Ռիժկովի փողոցը և շրջակայքը: Այստեղ կենտրոնանում են բրդավաճառների, մաշկակարների, մանրավաճառների և դերձակների շարքերը: Քաղաքի երկու շուկաները («Ղափան-ղանթար» կամ «Բեզբենդ» և «Մալի մեյդան») և նրանց շուրջ ձգվող չարսուները արհեստավորական ապրանքներով ապահովում էին ոչ միայն Շիրակի, այլև հարևան տարածաշրջանների (Ջավախք, Լոռի, Արագածոտն և այլն) բնակչության պահանջարկը: Ալեքպոլցի շինարար վարպետների կառուցած սրբատաշ գեղեցիկ շենքերն ու եկեղեցիները զարդարում էին Երևանի, Կարսի, Սարիղամիշի, Արդահանի, Մեծ Ղարաքիլիսայի (Վանաձոր), Վաղարշապատի և շրջակա մեծ գյուղերի փողոցները: Ինչպես վերը նշեցինք, արհեստների և առևտրի զարգաց-

[1] *Ն. Նիկողոսյան, էջ 7377:*
[2] *Նույն տեղում, էջ 7388:*
[3] *Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. I, Եր., 1958:*

մանը նպաստեցին նաև Ալեքսանդրապոլում գործող երկշաբաթյա տոնավաճառը, քաղաքի ռազմաստրատեգիական դիրքը և առևտրական բանուկ ճանապարհների խաչմերուկում գտնվելու հանգամանքը: XIXդ. վերջին - XXդ. սկզբին Ալեքսանդրապոլում կային ավելի քան 100 արհեստ և զբաղմունք, որոնցով զբաղվողների տարեկան եկամուտը զիջում էր միայն փոխարքայության կենտրոն Թիֆլիսին: Ալեքսանդրապոլցիների արհեստների և զբաղմունքների ողջ բազմազանությունը և դրանց խիստ մասնագիտացված լինելը հստակ երևում է ստորև բերվող անվանացանկից.

№	Արհեստը կամ զբաղմունքը	տեղական անվանումը
1	Աղբյուր կառուցողներ	լաղումջի
2	Աղիքից լար պատրաստողներ	քիլաջի
3	Աղյուսագործներ	քիրամիդճի
4	Աշուղներ և երաժիշտներ	սազանդար, չալղջի
5	Ապակեգործներ (ապակի գցողներ)	շուշաջի
6	Անվագործ դարբիններ	թաքռջի, կալոսնիկ
7	Ասեղնագործողներ	ասեղնագործ
8	Ատաղձագործներ	մառանգյոզ
9	Արծաթագործներ	ղարաղույումջի, զարգյար
10	Բամբակ զզողներ	հալաջի
11	Բաղնիսպաններ	համամջի
12	Բաղնիքի աշխատողներ	ղափըջի, քիսաջի
13	Բանջարաբույծներ	բոստանչի
14	Բեռնակիրներ	համբալ
15	Բրուտներ	չոմլաքչի
16	Գամ կամ մեխեր պատրաստողներ	մըխչի
17	Գզրարներ	հալաջի
18	Գլխարկ կարողներ	փափախչի
19	Գինեգործներ և գինի վաճառողներ	մեհանիճի
20	Դաշույն և թուր պատրաստողներ	ղըլըջի
21	Դանակ պատրաստողներ	բիչախչի
22	Դարբիններ	դամրջի
23	Դեղին մետաղ ձուլողներ	թոքմաջի
24	Դերձակներ (ասիական)	թարզի կամ թերզի
25	Դերձակներ (եվրոպական)	պարտնոյ
26	Երկաթե օղեր և շղթաներ պատրաստողներ	թաշմաջի
27	Երկարաճիտք կոշիկ կարողներ	ճզմաջի
28	Զինագործներ (հրացանագործներ)	թվանքչի
29	Զոլավոր (մետաքսե) կտոր գործողներ	մանուսաջի
30	Թաղիքագործներ	քեչաջի
31	Թամբագործներ	սառաճ
32	Թամբի փայտե կմախքը պատրաստողներ	ղալթախչի
33	Թամբի (ավանակի փալանի)խոտե մասը պատրաստողներ	փալանչի
34	Թել ոլորողներ	բիքյուջի
35	Թել ներկողներ	ալմաջի
36	Թիթեղագործներ	թանաքյաջի, ժեշտանջի

37	Թոնիր շինողներ	թընդրրճի
38	Ժամագործներ	սհատջի
39	Ժանյակ պատրաստողներ	թանթանա շինող
40	Խաղախորդներ (դաբաղողներ)	դաբաղջի
41	Լար (կաշվից) պատրաստողներ	քիրիշճի
42	Խավով կտոր գործողներ	փեշտմալջի
43	Խոհարարներ	աշչի
44	Խոտ և դարման վաճառողներ	ալաֆդար
45	Ծաղկողներ	ղալամքյար
46	Ծեփագործներ	սվաղջի, չամուռջի
47	Ծխախոտագործներ	թութունջի
48	Ծխամորճ պատրստողներ	չիբուխճի
49	Կազմարարներ	
50	Կառապաններ	ֆայտոնջի
51	Կարմիր գույնով ներկողներ	շիլաջի
52	Կապույտ գույնով ներկողներ	բոյաջի
53	Կոշիկ, հողաթափ կարողներ	թիքիջի
54	Կիսակոշիկ կարողներ	կոնդուրաջի
55	Կիր մարողներ	քիրաջի
56	Կղմինդրագործներ	քիրամիդջի
57	Կոշիկ վաճառողներ	ղաֆաֆ
58	Կոշիկի պայտ պատրաստողներ	նալչաջի
59	Կտավագործներ	ջուլիակ
60	Հասարակ մետաղից զարդ պատրաստողներ	ղարաղույումջի
61	Համետագործներ	փալանճի
62	Հացթուխներ	աքմակչի
63	Հին ասան հալողներ	քիզաջի, քելեջի
64	Հնակարկատներ	փինաջի
65	Հողաթափ կարողներ	մասչի
66	Հյուսներ	դուրգյար
67	Հրացանի կայծքար և ձգան պատրաստողներ	չախմախչի
68	Հրացանափող պատրաստողներ	լուլաջի
69	Հրացանի խզակոթ պատրաստողներ	ղոնդաղջի
70	Ճախարակագործներ	չրխրջի, լիրրխճի
71	Ճոթ վաճառողներ	բազազ, բազիրգաններ
72	Մազագործներ կամ այծի մազ մանողներ	մազման
73	Մազից պարաններ գործողներ	մութաֆներ
74	Մանրավաճառներ	ատթարներ
75	Մաշկակարներ	փափուջի կամ բաբուջի
76	Մետաքսագործներ	ղազազ
77	Մոմ պատրաստողներ	մոմջի
78	Մունետիկներ	թալալ
79	Մուշտակ կարողներ	քուրքչի
80	Մսագործներ	ղասաբ
81	Նալ (պայտ) պատրաստողներ	նալջի

82	Նավթավաճառներ	
83	Նկարիչներ	նախշաքյար
84	Նպարեղեն վաճառողներ	բախալներ
85	Նվագողներ	զուռնաչիներ
86	Նուրբ բրդյա գործվածք պատրաստողներ	էյրամջի
87	Շրջիկ առևտրականներ	սովդաքյարներ
88	Ոսկերիչներ	ղույումջի
89	Ոսկեթելից տրեզ պատրաստողներ	ղայթանջի
90	Ոսկեթել բանվածք անողներ	թեհրիճի
91	Որմնադիրներ	յափուջի
92	Չիթ դաջողներ	չթջի
93	Պայտարներ	նալբանդ
94	Պղինձ (կաթսա) պատրաստողներ	ղազանջի
95	Պղնձագործ-անագապատողներ	ղալայջի
96	Ջուլհակներ	չուլջի
97	Ջրաղացպաններ	դեգիրմաջի
98	Ջրկիրներ	սուճիներ
99	Սայլի անիվ պատրաստողներ	մառանջի
100	Սանրագործներ	տարաղճի
101	Սափրիչներ	դալլաք
102	Սպիտակ կտոր դաջողներ	դաջբազ
103	Սրճարանատերեր	ղայֆաճիներ
104	Վառարան պատրաստողներ	սոպաճի
105	Վերնազգեստ (բրդյա) կարողներ	աբաջի
106	Տախտակ ձևողներ	խզարջի
107	Տրեխ կարողներ	չարուխջի, չըրխըջի
108	Փականագործներ	չիլինգար
109	Փայտի թամբ պատրաստողներ	սեմերճի
110	Փուռ աշխատեցնողներ	փռնջի
111	Քարտաշներ	տաշջի
112	Քաղցրավենիք պատրաստողներ	բաքմազջի
113	Քթախոտ պատրաստողներ	բուռնութջի
114	Օղի թորողներ	
115	Օճառագործներ	սապոնջի

Ալեքսանդրապոլի արհեստների մեջ առանձնանում էին հետևյալ մեծ ճյուղերը կամ «մայր արհեստները». ***շինարարական արհեստներ*** (քարտաշ-որմնադրություն, աղբյուրաշինություն, ծեփագործություն, ներկարարություն և այլն), ***մետաղամշակություն*** (երկաթագործություն, զինագործություն, ոսկերիչ-արծաթագործություն, պղնձագործություն, ձուլագործություն և այլն), ***փայտամշակություն*** (հյուսն-ատաղձագործություն, կահույքագործություն, տակառագործություն, տախտակագործություն), ***ոստայնանկություն*** (ասեղնագործություն, ժանեկագործություն, կըտավագործություն, գորգագործություն և կարպետագործություն,պարանագործություն, գըզրարություն և այլն), ***սննդի արտադրություն*** (հացթուխություն, հրուշակեղենի արտադրություն, մսագործություն, գարեջրագործություն, օղեթորում և այլն), կաշեգործություն, օճառագործություն, ներկելու և դաջելու հետ կապված արհեստներ և այլն: Յուրաքանչյուր մայր արհեստ, ինչպես ընդունված էր հայկական

բոլոր նշանավոր արհեստավորական քաղաքներում, տրոհվել էր խիստ մասնագիտացված ճյուղերի (օրինակ՝ երկաթագործության մեջ առանձնացել էին բուն դարբինները, փականագործները, խառատները, անասունի և կոշիկի պայտեր պատրաստողները, պայտարները, երկաթե օղեր պատրաստողները, անվագործները, թիթեղագործները, ձուլողները և այլք. ոսկերչության մեջ՝ արծաթագործները, ոսկերիչները, սնաղապատողները, ցանցկեն թելքաշ արծաթագործները և այլք. զինագործության մեջ՝ դանակագործները, հրացանագործները, սրեր և դաշույններ պատրաստողները, խզակոթ շինողները և այլք. դերձակության մեջ՝ տեղական և եվրոպական տարազ կարողները):

Արհեստների այսպիսի բազմազանությունը և արտադրանքի բարձր որակը քաղաք այցելած օտարազգիների հիացմունքն են առաջացրել (օրինակ՝ ալեքպոլցի վարպետների գործերը համեմատում էին բյուզանդական նրբաճաշակ ոսկերչության հետ): Ալեքպոլցի հայտնի արծաթագործ Մարտիրոս Տարախչյանի (եղել է ոսկերիչների համքարության գլխավոր վարպետը) պատրաստած սքանչելի արծաթե իրերը ոսկե մեդալի են արժանացել Փարիզի միջազգային ցուցահանդեսում: Նշանավոր Լաղումճի (աղբյուր շինող) Ռափը կարողանում էր ջուրը բարձրացնել կամ իջեցնել ցանկացած վայրը: Հյուսն-ատաղձագործ Ուսուլ Գրիգորը (Դուրգարյան) պնդում էր, որ այս արհեստը քաղաքում կատարելության էր հասել և զարգացման մեջ սահման չուներ: Յափուջի (քարտաշ-որմնադիր) Անտիկենց Թաթոսի աշխատանքները Ն.Մառը համեմատում էր անիական շինարարական արհեստների հետ: Յուրաքանչյուր արհեստավորի համար պատվի գործ էր բարձրորակ արտադրանք ստեղծելը, և համքարային ավագանին աչալուրջ հետևում էր, որ որևէ մեկը չխախտի այս սրբագործված կանոնը: Ալեքպոլցիների շրջանում «փեշակը» (արհեստ, զբաղմունք) դիտվում էր որպես «օսկե բիլազուկ» (ոսկե ապարանջան) և ապրուստի հուսալի միջոց: Փեշակ ունեցող և իր քրտինքով հաց վաստակող մարդը չէր կարող հարգանք ու պատիվ չունենալ ալեքպոլցիների շրջանում, և յուրաքանչյուր ծնող ձգտում էր իր զավակին «փեշակի տալ»: Զավակին խրատելիս ալեքպոլցի ծնողն ասում էր. «Օղո՛ւլ, արհեստավորի փորը մինչև ճաշն է դարդակ, փեշակ սորվի, օր հաց վաստըկես»:

Հետևելով հնամենի ավանդությանը՝ նշանավոր արհեստավորներից շատերը իրենց արտադրանքի կամ շինվածքի վրա հատուկ նշաններ էին դնում (ոսկերիչ-արծաթագործների նշանները հաստատվում և պահվում էին Թիֆլիսի հարգանշային (Пробная контора) վարչությունում): Ալեքպոլցի արհեստավորները զանազան միջոցներով գովազդում էին իրենց աշխատանքը՝ մասնակցելով եկեղեցիների կամ հարուստ համաքաղաքացիների տների շինարարությանը և ներքին հարդարանքի ստեղծմանը: Ավելի ուշ շրջանում զանազան արհեստավորական արտադրանքի գովազդողի դերում հանդես էին գալիս թալալները (մունետիկները), որոնք շուկայում բարձրաձայն գովում էին այս կամ այն արհեստավորի պատրաստած իրը կամ սնունդը:[1] Համբալ Մկոն ուսերին գցում էր աքմաքջոնց (հացթուխների) եփած լավաշները և շուկայով մեկ իր թավ և բամբ ձայնով հրավիրում էր գնորդներին՝ փորձել և գնել հացը:[2] Թալալները մի տեսակ «կենդանի լրագրի» դեր էին խաղում քաղաքի կյանքում և զբաղվում էին ոչ միայն արտադրանքի գովազդով, այլև քաղաքի բնակիչներին հայտնում էին պետական այրերի այցելության, կարևոր իրադարձությունների և այլ դեպքերի մասին. օրինակ, երբ քաղաք էր ժամանում Կովկասի փոխարքա Միխայիլ Ռոմանովը, թալալը հայտարարում էր. «Էսօր, էս սհաթիս ձեն կուտամ, նաչալնիկի (գավառա-

[1] *Տե՛ս Լ. Աթանեսյան, Գևորգ Բրուտյան. Կյանքն ու գործը, «Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշարի սույն հատորի հավելվածի նկ. 7 (այսուհետ՝ Լ. Աթանեսյան):*

[2] *Կ. Մեղրոսյան, նշվ. աշխ., էջ 186:*

պետի) հրամանն է, բոլոր էսնաֆները իրանց բայրաղներով (դրոշակներով) բդի էրթան Թիֆլիսու շոշի վրա թոփ էղնին՝ նամեստնիկը գուքա»:

Ավանդականի կողքին, XIXդ. կեսերից սկսած, ներմուծվում են «դրսեկ» արհեստներ՝ թիթեղագործությունը, անվագործ-դարբնությունը (կալոսնիկություն), եվրոպական դերձակությունը և այլն, որոնց նրբությունները ալեքպոլցի վարպետները շատ արագ և մեծ հմտությամբ յուրացնում էին:

Ռուսական գործարանային էժան ու զանգվածային արտադրանքի մուտքն Ալեքսանդրապոլի շուկա բազմաթիվ արհեստավորների աղքատացման պատճառ դարձավ, որը շատ լավ էին հասկանում էսնաֆական ավագանու անդամները: Նրանք ամեն միջոցով փորձում էին զերծ պահել քաղաքի շուկան ներմուծվող ապրանքների ճնշող հոսքից:XIXդ. վերջին-XXդ. սկզբին Ռուսաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության հետևանքով բազմաթիվ ավանդական արհեստներ կա՛մ վերանում էին, կա՛մ էլ սրանցով պարապողներն ստիպված էին վերարտակավորվել և հարմարվել նոր պայմաններին: Երկաթուղու մուտքը Ալեքսանդրապոլ և երկաթուղային մեծ դեպոյի կառուցումը որակյալ բանվորների պահանջարկ առաջացրին, որը լուծվեց շնորհիվ տեղական երկաթագործ վարպետների: Ամենևին էլ պատահական չէր, որ հենց Ալեքսանդրապոլն ընտրվեց որպես երկաթուղային շարժակազմի և շոգեքարշների վերանորոգման կենտրոն: Ռուսական իշխանությունները հաշվի էին առել տեղի աշխատուժի և մասնագետների կարողությունները. նրանց շատ արագ ու կարճ ժամանակում կարելի էր վերարտակավորել:

Ավելի ուշ՝ XXդ. առաջին կեսին (հատկապես խորհրդային իշխանության տարիներին), արհեստավորներից շատերը համալրեցին որակյալ բանվորների շարքերը: Խորհրդային իշխանությունների նախաձեռնած, երկրի լայնամասշտաբ ինդուստրացման տարիներին հիմնված արդյունաբերական ձեռնարկություններում մեծ չափով օգտագործվեցին տեղական վարպետների հմտություններն ու փորձը: Նախկին դարբինները, խառատները, փականագործները, ձուլագործները, ոսկերիչ-արծաթագործները,հյուսն-ատաղձագործները, կահույքագործները, դերձակները, կաշեգործները, օճառագործները, ներկողները և այլք կարողացան հարմարվել նոր պայմաններին: Բազմապրոֆիլ զինագործները դարձան բավականին բարդ մեխանիկական սարքերի (կարի մեքենա, կաթի զտիչ, մեխանիկական կալսիչ և այլն) վերանորոգողներ: Հարակից արհեստների՝ խառատության, փականագործության, գործիքաշինության բնագավառներում ձեռք բերված հմտությունները թույլ տվեցին զինագործներին արագ «կողմնորոշվել» և, ինչու չէ, նաև հարմարվել նոր պայմաններին: Նրանցից քչերը շարունակեցին զբաղվել իրենց արհեստով: Նշանավոր ոսկերիչ-արծաթագործներ Գուրգեն Տարախչյանը (Մաշտի Գուրգեն) և Մարտին Իզմիրյանը (Կոջկունեց Մարտին), օրինակ, նորաբաց Տեքստիլ կոմբինատում ծաղկավոր չթի դաջվածքի նախշերն էին փորագրում: Յուղհալ արտելների հիման վրա և սպանդանոցի վարպետների ուժերով ստեղծվեց Լենինականի Մսի պահածոների կոմբինատը, հռչակավոր կահույքագործ-վարպետները դարձան «Կարմիր նոյեմբեր» կահույքի ֆաբրիկայի հիմնադիրները և այլն: [1]

Հարկ է նշել, որ բազմաթիվ արհեստավորներ՝ թիթեղագործներ, քարտաշ-որմնադիրներ, ծեփագործներ, ներկարարներ (նախշքարներ), սղոցարարներ (խզարչի) և այլք, շարունակեցին պարապել սեփական արհեստով և զբաղվել մասնավոր-անհատական գործունեությամբ: Սա բխում էր հիշյալ արհեստների բնույթից, քանի որ դրանցից շատերը արհեստանոցի գոյության կարիքը չունեին կամ էլ ի սկզբանե շրջիկ արհեստավորներ էին:

[1] *Գ.Աղանյան, Ավանդական արհեստների փոխակերպումները…, էջ 47-51:*

Ալեքպոլցի նշանավոր արհեստավորները

№	Անուն, ազգանուն, մականուն	զբաղմունքը
1	Էրզրումցի յափուջի Գինոս	քարտաշ-որմնադիր
2	Հեպոյենց Սահակ	քարտաշ-որմնադիր
3	Թամրազյան Գրիգոր (այս գերդաստանը տվել է 13 վարպետ)	քարտաշ-որմնադիր
4	Ղուշանենց Աղաջան	քարտաշ-որմնադիր
5	Մոծակենց Գրիգոր	քարտաշ-որմնադիր
6	Պապիկ Կարապետյան (ուստա Պապո)	քարտաշ-որմնադիր
7	Անդիկյան Թադևոս (Անտիկենց Թաթոս. այս գերդաստանը տվել է 11 վարպետ)	քարտաշ-որմնադիր
8	Ֆահրադյան Աղաբաբ	քարտաշ-որմնադիր
9	Հեքիմյան Սահակ	քարտաշ-որմնադիր
10	Գառոյենց Ակո	քարտաշ-որմնադիր
11	Թուրանենց Մուկուչ	քարտաշ-որմնադիր
12	Հայրոյենց Ասո	քարտաշ-որմնադիր
13	Յուզբաշովենց Գևորգ (Խոխռ Գևոր)	քարտաշ-որմնադիր
14	Հեքիմենց Աբրահամ	քարտաշ-որմնադիր
15	Ասմարյան Հովհաննես (Գևորգենց Օնես)	քարտաշ-որմնադիր
16	Անտիկենց Ավետիք	քարտաշ-որմնադիր
17	Թամրազյան Մնացական	քարտաշ-որմնադիր
18	Շողանենց Աղաջան	քարտաշ-որմնադիր
19	Հարոյենց Մկրտիչ (այս գերդաստանը տվել է 16 վարպետ)	քարտաշ-որմնադիր
20	Բանկլիենց Խաչո	քարտաշ-որմնադիր
21	Հաջի Ոսկան (այս գերդաստանը տվել է 12 վարպետ)	քարտաշ-որմնադիր
22	Մանուշենց Մարկոս (այս գերդաստանը տվել է 11 վարպետ)	քարտաշ-որմնադիր
23	Չթչյան Մելքոն	քարտաշ-որմնադիր
24	Հաջի Ոսկանենց Հակոբ (Տուկատ Հակո)	քարտաշ-որմնադիր
25	Կոստանյան Կարապետ (այս գերդաստանը տվել 10 վարպետ)	քարտաշ-որմնադիր
26	Լաղումջի Ռափ	աղբյուր շինող
27	Ղարիբյան Բաբկեն (Ղրջենց Մամիկոն)	ծեփագործ
28	Ջիգարջյան Սիմոն (Ջիգարջողլոնց ուստա Սիմոն)	հյուսն-ատաղձագործ
29	Ջիգարջյան Հովհաննես (Ջիգարջողլոնց Օնես)	հյուսն-ատաղձագործ
30	Կարապետյան Մանուկ (Արդար Մանուկ)	հյուսն-ատաղձագործ
31	Սադոյան Դավիթ	հյուսն-ատաղձագործ
32	Զատիկովենց Հովհաննես և Մկրտիչ եղբայրներ	հյուսն-ատաղձագործ
33	Վարդապետյան Հակոբ (Լենկոնակ Հակոբ)	հյուսն-ատաղձագործ
34	Վարդապետյան Հովհաննես	հյուսն-ատաղձագործ
35	Վարդապետյան Մկրտիչ	հյուսն-ատաղձագործ
36	Դուրգարյան Մկրտիչ (Խելոք Մուկուչ)	հյուսն-ատաղձագործ
37	Դուրգարյան Աղաբաբ	հյուսն-ատաղձագործ
38	Դուրգարյան Գրիգոր (Ուսուլ Գրիգոր)	հյուսն-ատաղձագործ
39	Միրզոյան Զուրաբ	հյուսն-ատաղձագործ
40	Դուրգյար Մարտիրոս	հյուսն-ատաղձագործ
41	Վիրաբյան Գրիգոր	հյուսն-ատաղձագործ
42	Տալյան Գրիգոր (Ուստա Գոքոր, Աշուղ Շերամ)	հյուսն-ատաղձագործ
43	Նալչաջյան Հովհաննես (Գոմեշ ախպերներ)	դարբին

44	Նալչաջյան Մկրտիչ	դարբին
45	Գյանջեցի Նիկոլ	դարբին
46	Նալյան Գևորգ	դարբին
47	Լոռեցյան Լևոն	դարբին
48	Պապոյան Գրիգոր	դարբին
49	Պապոյան Պապո (Սատանա Պապոյենց)	դարբին
50	Չպլախյան Վարդան	դարբին-անվագործ
51	Դեմիրճօղլյան Կարապետ	դարբին
52	Մխչի Դավիթ	դարբին-մեխագործ
53	Չիլինգարյան ընտանիքը	փականագործ
54	Ղալավուղ Մանուկ	պայտար
55	Հակոբյան Գրիգոր	ոսկերիչ-արծաթագործ
56	Տարախչյան Մարտիրոս	ոսկերիչ-արծաթագործ
57	Տարախչյան Գուրգեն (Մաշտի Գուրգեն)	ոսկերիչ-արծաթագործ
58	Զարգարյան Հարություն	ոսկերիչ-արծաթագործ
59	Նիկողոսյան Եղիա	ոսկերիչ-արծաթագործ
60	Հակոբյան Գրիգոր	ոսկերիչ-արծաթագործ
61	Աղաբաբյան ընտանիքը	ոսկերիչ-արծաթագործ
62	Իզմիրյան Մարտիրոս (Կոջկունենց Մարտին)	ոսկերիչ-արծաթագործ
63	Ղաֆա Սիմոն	արծաթագործ
64	Անտոնյան Կարապետ	պղնձագործ
65	Խուրդայան Միքայել (Ղալայջի Մկո)	պղնձագործ
66	Ժամակոչյան Սուրեն	պղնձագործ-մուշուրբա սարքող
67	Խուրդայան Կարապետ (Գյուման Կարո)	կլայեկող-անագագործ
68	Մոմջի Մեծ Գորո	մոմագործ
69	Քյալ Մկո	մոմագործ
70	Ղազազ Ավետիք	մետաքսագործ
71	Ղազազ Ուռում (հույն) Յորո	մետաքսագործ
72	Կորկոտյան Ավետիք	մետաքսագործ
73	Ղազազ Գալուստ	մետաքսագործ
74	Թարզի Մանվել	ասիական դերձակ
75	Թարզի Մեխակ (Ավետիսյան)	ասիական դերձակ
76	Թարզի Փիլոս	ասիական դերձակ
77	Թարզի Աղաբեկ (Պարոնիկյան)	ասիական դերձակ
78	Խայաթ Զահրիյան (աշուղ Խայաթ)	ասիական դերձակ
79	Ֆանտազի Արտաշ	եվրոպական դերձակ
80	Ստամպոլցով Գևոր (Ստամբոլցյան Գևորգ)	եվրոպական դերձակ
81	Աքմակչի Քերոբվե և Սերոբվե եղբայրներ	հացթուխներ
82	Ալվանջի Ալեքսան (Քուփալյան)	ներկարար
83	Ժեշտանջի Մկո և Ալեքսան	թիթեղագործ
84	Պետրոսյան Գարեգին (Փափախչի Գարեգին)	գդակագործ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Նախորդ գլխում նշեցինք, որ մինչև XIXդ. 30-ական թթ. վերջերը Գյումրիում ռուսական իշխանությունների կողմից իրականացվող քաղաքաշինական և կառուցապատման միջոցառումները հիմնականում ունեին ռազմապաշտպանական նշանակություն: Նորահռչակ քաղաքի բնակչության կենսապահովման բուն խնդիրների լուծմանը ռուսական իշխանությունները ձեռնամուխ եղան 1840-ական թթ. վարչական փոփոխություններից հետո միայն, որոնց արդյունքում երբեմնի աննշան Գյումրին դարձավ Երևանի նահանգի ամենամեծ՝ Ալեքսանդրապոլի գավառի կենտրոն՝ սրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ: Գավառային կենտրոն դարձած Ալեքսանդրապոլը ոչ միայն սոսկ ադմինիստրատիվ-կառավարչական գործառույթներ էր իրականացնում, այլև տնտեսական և մշակութային կենտրոնի դեր էր կատարում շրջակա բոլոր բնակավայրերի համար: Վարչական կենտրոն դարձած յուրաքանչյուր բնակավայրի կենցաղամշակութային համալիրի ձևափոխումը հստակ արտահայտվում էր բնակչության սոցիալ-հոգեբանական և վարքագծային արժեհամակարգերում: Ռուսական կառավարչակարգը, որը հայտնի էր իր խիստ բրգաձև կառուցվածքով, հրաշալի հնարավորություն էր ստեղծում գավառային կենտրոնի համար՝ իր «ձեռքում» կենտրոնացնելու ողջ ադմինիստրատիվ ռեսուրսը, և յուրաքանչյուր քիչ թե շատ կարևոր հարց լուծվում էր այդտեղ: Ալեքսանդրապոլի համար հիշյալ կառավարչաձևը, զարգացման հսկայական խթան դառնալով հանդերձ, միաժամանակ մի տեսակ անջրպետ դարձավ քաղաք-գյուղ և քաղաքացի (քաղքցի)-գյուղացի (գեղցի) հակադրությունն ընդգծելու առումով: Գավառային կենտրոնի յուրաքանչյուր բնակչի համար շրջակա գյուղերից քաղաք այցելած ցանկացած գյուղաբնակի՝ սոցիալական առավել ցածր աստիճանի վրա կանգնած մարդուն, վերաբերվում էին ակնհայտ քամահրանքով կամ էլ նրան «նայում էին վերևից»: Նման վերաբերմունքը բավական երկար պահպանվեց Ալեքսանդրապոլում, ընդհուպ մինչև XXդ. առաջին երեսնամյակը:

Եթե Անդրկովկասի հին քաղաքներում (Թիֆլիս, Երևան և այլն) արևելյան ոչ պլանավորված, կուտակային կառուցապատումը վերափոխելը և եվրոպական քաղաքաշինության տարրեր մտցնելն այլևս հնարավոր չէին, ապա նոր հիմնադրված քաղաքների պարագայում դրությունն այլ էր: Այս քաղաքների շարքում էր նաև Ալեքսանդրապոլը, որի գլխավոր հատակագիծը հաստատվեց 1840թ.: Համաձայն այս փաստաթղթի՝ քաղաքը պետք է ունենար քառանկյունի տեսք, կանոնավոր ձև՝ ուղղանկյուն խաչվող փողոցների ցանցաձև սխեմայով, երկայնքով ու լայնքով իրար հատող փողոցներով, որոնք հստակ հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք էին ձգվում: Սկզբնական շրջանում բոլոր փողոցներն անխտիր համարակալված էին՝ հյուսիս-հարավ ձգվողները՝ կենտ, արևելք-արևմուտքը՝ զույգ թվերով: XIXդ. երկրորդ կեսից որոշ համարակալ-

ված փողոցներ ստացան անվանումներ (օր. Ալեքսանդրովսկայա, ներկայիս՝ Աբովյան): Ալեքպոլցիների շրջանում չափազանց արմատավորված էր փողոցներն ըստ համարների անվանելը, և այդ ավանդույթը շարունակվեց նույնիսկ խորհրդային տարիներին, երբ բոլոր փողոցներն ու նրբանցքներն արդեն անվանակոչված էին:

Ըստ այդ հատակագծի՝ Ալեքսանդրապոլն զբաղեցնում էր մայոր Ջաֆար բեկի երբեմնի սեփականությունը կազմող հողաբաժինը՝ Հին Գյումրի բերդի տարածքները (այժմյան քաղաքային մարզադաշտի, Սպայի տան, «Ճերմակ» հիվանդանոցի և «Բալատոն» վարժարանի)[1] ու նրա շրջակայքում նախկինում գոյություն ունեցող կառուցումների արևելյան կողմում «400 մետր աւելի ցած իւր ախոյեան Կարսից»:[2]

Քաղաքի տեղանքի այդպիսի ընտրությունը բխում էր գլխավորապես ռազմական նկատառումներից: Քանի որ թուրքական սահմանը քաղաքի արևմտյան կողմում էր, և վտանգն սպառնում էր հենց այդտեղից, այդ պատճառով էլ բերդաքաղաքի ամրոցային կառուցումները դա օղակում էին արևմուտքից, մասամբ նաև հյուսիսից, մինչդեռ արևելյան կողմից «քաղաքն անպարիսպ տարածեալ է ի դաշտակողմն»:[3]

Պաշտպանական կառույցների այսպիսի դասավորվածությունը պայմանավորված էր նաև քաղաք մտնող երեք գլխավոր ճանապարհների ուղղություններով. հարավից՝ Երևանից եկող, արևմուտքից՝ Կարսից և հյուսիսից՝ Թիֆլիսից: Բնականաբար նման պայմանները պետք է թելադրեին բնակավայրի առավել համակցված կառուցապատում: Քաղաքը տեղադրվել էր ռելիեֆի համեմատաբար ավելի ցածր տարածության վրա և ուներ անհարթ դիրք. տների մի մասը կառուցվել էր ձորակի մեջ, մյուս մասը՝ բլուրների ու զառիվայրերի վրա:[4] Քաղաքի տեղանքի մասին բավականին մանրամասն նկարագրություն է թողել XIXդ. անգլիացի ճանապարհորդ Լինչը. «Պատկերացրեք նախնառաջ ոչ խոր գետ, որը հոսում է դեպի հարավ, թեթևակի ափսեաձև, բայց ընդարձակ դաշտավայրի միջով: Նրա ձախակողմյան կամ արևելյան ափի հարթ տեղանքով ձգվում է ոչ մեծ բարձրություն ունեցող ցցուն գագաթով բլրաշար: Այս բլրաշարի հետևում են դարձյալ երեք զուգահեռ բլրաթմբեր՝ կառուցապատված քաղաքային տներով»:[5] Այնուամենայնիվ, չնայած քաղաքի տեղանքի զգալի անհարմարություններին, սկսած 1840թ. նոր կառուցապատումներն Ալեքսանդրապոլում իրականացվել են կանոնավոր ձև ունեցող, ուղղանկյուն խաչվող փողոցների ցանցաձև սխեմայով:[6] Հարկ է նշել, որ քաղաքի հատակագծումից ու հատկապես կառուցապատումից առաջ հաշվի առնվեցին գրունտային ջրերի բարձր մակարդակը և քաղաք մտնող խմելու ջրի կավե փողրակավոր մի քանի աղբյուրների հոսքի խնդիրը: Նախագծողները հստակ պատկերացնում էին, որ կառուցապատման թույլտվությունից առաջ անհրաժեշտ է լուծել ջրահեռացման խնդիրը, և կառուցվեց դրենաժային հատուկ ստորգետնյա թունելների (լաղումներ) համակարգ, որով աղբյուրների և գրունտային ջրերը հոսելով միանում էին թիվ 30 փողոցի տակով անցնող գլխավոր ջրատարին: Ջրատարների մաքրմամբ և նորոգմամբ զբաղվում էին հատուկ մասնագետներ՝ լաղումջիները, որոնք հստակ գիտեին բոլոր թունելների մուտքերն ու ելքերը: Քաղաքի դրենաժային համակարգն անընդհատ գտնվում էր քաղաքային իշխանության և

[1] Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 7:

[2] Էլիզէ Ռէկլիւ, Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավազան, Ռիրմիա լիճ եւ Առաջաւոր Ասիա, Վաղարշապատ, 1890, էջ 63; Գէորգ-Մեսրոպ, Աշխարհագրութիւն Պատմական Հայաստանի, Կ. Պոլիս, 1924, էջ 30:

[3] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 154:

[4] Աղ. Մխիթարեանց, Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 28 ապրիլի, N 15, էջ 3:

[5] Х.Ф.Б. Линч. Армения. Путевые очерки, этюды. Тифлис, 1910, стр. 163.

6 Ю. Яралов, Города Армении, М.,1950, стр. 12-13; О. Халпахчян, Армяно-русские культурные отношения и их отрожение в архитектуре. Ер., 1957, стр. 42-43.

համայնքի ուշադրության կենտրոնում, իսկ լաղումջիները վարձատրվում էին կիսով չափ պետության, կիսով չափ՝ համայնքի կողմից:

Կառուցապատվող քաղաքի հատակագծի ստեղծման ժամանակ հաշվի առնվեցին նաև այլ գործոններ: Այսպես, հին Գյումրու թաղերն զբաղեցրել էին արևելահայաց «ազատ հարթ դաշտով» հյուսիսից հարավ զուգահեռ ձգվող բլրաշարերը: Դրանք ձգվում էին վերջիններիս միջով նույնպես զուգահեռ հոսող գետակների բոլորը: Այդ թաղերը, ինչպես ասվեց, նախապես ի հայտ էին եկել տարերայնորեն, ձևավորվել հին, ավանդական շինարարական եղանակներով և տարածվել տեղանքին համապատասխան՝ բնակավայրին տալով հյուսիսից հարավ ձգվածություն, ինչը միաժամանակ համապատասխանում էր գետակների ընթացքին ու գերակշռող հյուսիսային քամիների ուղղությանը:

Այս ամենի մանրամասն հաշվառման հիման վրա 1840թ. Ալեքսանդրապոլի հատակագծմամբ ստացվեց փողոցների հետևյալ պատկերը: Քաղաքի համեմատաբար հարթ ու երկար փողոցներն իրար էին կապում հյուսիսում և հարավում գտնվող «Ռանչպարների», «Ջորի բողազ» և «Թուրքի մահլա» թաղամասերը. հյուսիս-հարավ ձգվող փողոցներին ուղղահայաց հատողները, որ տեղանքի պատճառով աչքի էին ընկնում խիստ ալիքավորությամբ, միմյանց էին միացնում քաղաքի երկու՝ արևելյան և արևմտյան կողմերում տեղադրված «Ֆռանգների» և «Հույների» թաղամասերը: 1840թ. հատակագծով նախատեսվում էր նաև խաչվող փողոցներում ստեղծել կանոնավոր ուղղանկյուն թաղամասեր՝ կվարտալներ, իսկ համեմատաբար մեծ թաղամասերում լինելու էին նաև նրբանցքներ («սողախներ»):

Ավելի հանգամանալի և ընդգրկուն դարձնելու համար XIX դարակեսի Ալեքսանդրապոլի նկարագիրը՝ մեջբերենք մի քանի վկայություն ժամանակի վիճակագրական հաշվետվություններից: Այսպես, 1852թ. «Կովկասյան օրացույց»-ի տվյալներով, Ալեքսանդրապոլում արդեն 1850թ. կար 240 հաստատված ճակատամասով (ֆասադով) տուն, 1808 ասիական տիպի քարե տուն, 250 կրպակ, 150 փողոց, 2 հրապարակ, 10 կամուրջ:[1] 1852-1853 թթ. մեկ այլ հաշվետվության մեջ խոսվում է Ալեքսանդրապոլի 75 թաղամասերի, 52 աղբյուրների, 186 ջրհորների, 2048 քարաշեն տների (200-ը լավ ճակատամասերով) մասին, և այս ամենը՝ 11280 բնակչի համար: Շենքերը տեղական սև տուֆից են, կա մեկ հայ առաքելական՝ Սբ Աստվածածին, ու մեկ հայ կաթոլիկ եկեղեցի, նաև 1849թ. հիմնադրված ուղղափառ եկեղեցի, երկու շուկա՝ գյուղմթերքի և անասունների վաճառքի, յոթ քարվանսարա, 850 կրպակ, երեք բաղնիք, մեկ հրապարակ, մեկ նոր և երկու հին հայկական, մեկ մահմեդական և մեկ ընդհանուր գերեզմանոց:[2] Երևանի նահանգի քաղաքների տնտեսական-քաղաքացիական կյանքի վերաբերյալ 1865 թ. հաշվետվության մեջ Ալեքսանդրապոլի մասին ասվում էր. «Քաղաքը, որ հյուսիսից սահմանակից է Եսաուլ, Օրթաքիլիսա, Թոփառլի, արևելքից՝ Ղոնախ-Ղռան, Հաջի – Նազար - Ղուլի, հարավից՝ Դյուզքյանդ, Թափադոլլակ, Ղարաքիլիսա գյուղերին, իսկ արևմուտքից՝ Արփաչայ գետին, ունի 16 337 բնակիչ: Քաղաքային բնակչությանն է պատկանում հետևյալ անշարժ գույքը՝ 2870 տուն, 1460 կրպակ, 17 քարվանսարա, 6 ջրաղաց, 36 գործարան: Ընդ որում, վերը նշվածից ազնվականությանն են պատկանում 25 տուն, 145 կրպակ, 5 քարվանսարա, 5 (օճառի) գործարան: Հոգևորականությանը՝ 37 տուն, 74 կրպակ, առևտրականներին՝ 700

---

[1] *В. Руцевич, Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края, Кавказский календарь на 1852 год, Тифлис, 1851, отд. III, с. 275-276.*

* *Ալեքսանդրապոլի եկեղեցիների մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 208, թթ. 1-3; Մաշտոցի անվան Մատենադարան, Շահաթունյանի արխիվ, թղթ. 63, վավ. 28, էջ 1-3:*

[2] *Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, СПБ.,1853, стр. 259; Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Арнении после присоединения к России (1830-1870), Ер.,1993, док. 134, стр. 319, док. 141, стр. 344.*

տուն, 40 ջրաղաց, կրպակ և գործարան: Մնացած անշարժ գույքը պատկանում է հասարակ բնակչությանը»: [1]

Արդեն XIXդ. 50-ական թվականներին Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի զարգացման բավականին բարձր տեմպերը հետևանք էին այն համեմատաբար ապահով իրավիճակի, որում հայտնվել էր Ռուսաստանի տիրապետության տակ անցած այս տարածաշրջանը, ապահովություն, որը հնարավորություն էր տալիս տեղի բնակչությանը ոչ միայն բնականոն հունով ապահովելու իր կենսակերպը, այլև աննախադեպ բարենպաստ պայմաններ էր ստեղծում ինչպես քաղաքային շինարարության, այնպես էլ տնտեսական կյանքի առաջընթացի համար:

ԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆԵՐՍՈՒՅԹ

Քաղաքի և գյուղի հստակ տարբերակումը ալեքպոլցիների կենսաձևում ցցուն արտահայտված է բնակարանի և նրա ներսույթի կահավորման նկատմամբ դրսևորած մոտեցումներում: Գյուղական և քաղաքային տիպի բնակարանների համալիրը և կահավորանքը մի անգամ ևս ապացուցում են, որ նորաստեղծ քաղաքը թե՛ իր բնակչության ներէթնիկ առանձնահատկություններով և թե՛ կենցաղամշակութային համալիրներով առնչություն չուներ մինչ այդ գոյություն ունեցած աննշան գյուղակի հետ: Սակայն, քաղաքի կառուցապատման շրջանակների ընդլայնմամբ պայմանավորված, նախկին Գյումրու սահմանները ձուլվեցին նորաստեղծ բնակավայրին, իսկ հողագործ-ռանչպարների մի մասը տեղափոխվեց քաղաքի վերին թաղամասերը՝ կառուցելով սեփական եկեղեցին՝ Սբ Գրիգոր Լուսավորիչը, որը մինչ օրս էլ ժողովուրդն անվանում է «Գեղցոնց ժամ»:

Պայմանավորված դեռևս կենսունակ անասնապահական - երկրագործական տնտեսաձևի կենցաղավարմամբ՝ սկզբնական շրջանում քաղաքում գերակշռում էին գյուղական ավանդական տիպի կիսագետնափոր և վերգետնյա տները: Կիսագետնափոր կամ, ինչպես հին գյումրեցիներն էին ասում, «ղառնավուճ» տները մեկ բաժնից բաղկացած պարզ շինություններ էին: Դրանց մեկ մետրից ավելի հաստություն ունեցող պատերը, որ շարված էին համարյա չմշակված, անձև տուֆաքարերով և կավի շաղախով, բարձրանում էին սարալանջերին: Այսպիսի տները հատակագծում ներկայացնում էին քառակուսի կամ քառանկյունաձև մեկ մեծ սենյակ՝ ծածկված յուրատիպ փայտագմբեթ ծածկով, որը հենվում էր պատերին կից կանգնեցված երկու կամ չորս սյուների վրա: Փայտագմբեթ ծածկի կենտրոնում թողնվում էր քառակուսի անցք-երդիկ՝ սենյակը լուսավորելու և միաժամանակ սենյակի կենտրոնում գտնվող թոնրի ծուխը հեռացնելու համար: Փայտե ծածկը արտաքուստ հողի հաստ շերտով էր պատվում, իսկ երդիկը՝ խաչերկաթի ցանցով: Երդիկների վրա լցված հողը տափանվում էր հատուկ բազալտե գլդոններով, որոնք «Ռանչպարների մահլայում» և «Հողեպլանում» պահպանվել էին մինչև XXդ. 70-ական թթ. և դարձել էին քաղաքաբնակների քամահրանքի ու ծաղրի առարկա:

Սակայն մինչև XIXդ. կեսերը Գյումրիում առավել տարածված էին ծածկված բակով համալիր տները, որոնք բաղկացած էին 4-7 մասերից (դրանք են՝ ծածկված բակը, թոնրատունը, գոմը, գոմի օդան, մառանը կամ քիլարը, ցորենի ամբարը), որոնց հետագայում ավելանում է դրսի օդան կամ տան ամենահանդիսավոր սենյակը՝ դահլիճը:[2] Մեծամասնության տները 3-4 մասանի կամ աչքանի էին, ինչպես բնիկ գյումրեցիներն էին ասում՝ «մի բակ, մի

[1] *ՀԱԱ, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 14-I մաս, թթ. 50-64; Сборник статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, составил и издавал Н. Воронов, т. 1, отд. 1, Тифлис, 1869, с. 36-38.*

[2] *Ս. Մաթևոսյան, Գյումրու ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985, էջ 32:*

աշխանա, մի տուն և մի օդա»: Բնակելի և օժանդակ կառույցների մուտքի դռներն ու բացվածքները ելնում էին անմիջապես ծածկված բակի մեջ: Փակ կամ ծածկված բակերը հատուկ էին ասիական կամ արևելյան քաղաքաշինությանը, որի համաձայն՝ դեպի փողոց էր նայում խուլ, առանց պատուհանների պատը: Այդպիսով, ծածկված բակերը դառնում էին կապի միջոց առանձին բաժինների մեջ, իսկ վատ եղանակներին կամ ձմռանը փոխարինում էին դրսի բակին՝ ծառայելով աշխատանքի, կենցաղային այլ նպատակների և նույնիսկ ժամանցի համար: Փակ կամ ներքին բակերը կենսունակ գտնվեցին նաև քաղաքատիպ առանձնատների շինարարության պարագայում, երբ երկու և ավելի սրբատաշ ճակատամասով պարփակված շինությունների միջև թողնվում էր բակամաս, որտեղ «դրսի աչքից հեռու» կարող էին իրենց ժամանցն անցկացնել (զբաղվել ձեռագործով, լոտո խաղալ և, ինչու չէ, քննարկել քաղաքաբնակներին հուզող խնդիրները կամ մի խոսքով՝ բամբասել) միջին և բարձր խավի օրիորդներն ու տիկնայք:*

Ինչպես նախորդ տիպում, այս տներն էլ լուսավորվում էին փայտաշեն ծածկի մեջ բաց թողնված երդիկների միջոցով: Հետագայում, սակայն, օդան (ձմեռնատուն) լուսավորելու համար դրա դրսի պատին փոքր լուսամուտ-*փենձերե* էին բացում, որն ապակու բացակայության պատճառով ձեթած թղթով էին պատում: Նման թուղթ էին քաշում նաև ձմռանը երդիկի վրա դրվող *չերչիպե* կոչվող սրածայր հարմարանքի վրա, որ անձրևն ու ձյունը թուղթը չփչացնեն:[1]

Տները կառուցվում էին իրար կպած շարքերով, և ամեն տուն իր հարևանի պատի մեջ կես մետրաչափ քառակուսի անցք էր թողնում, որ անհրաժեշտության դեպքում (հատկապես ձմռանն ու վատ եղանակներին) կարողանային իրար հետ հաղորդակցվել:

XIXդ. կեսերից ռուսական քաղաքաշինության սկզբունքներով վերակառուցման արդյունքում Ալեքսանդրապոլ վերանվանված քաղաքում բացվեցին լայն և ուղիղ փողոցներ, նախագծվեցին ընդարձակ հրապարակներ, բարձրացան կապիտալ շինություններ: Արհեստների ու առևտրի զարգացումը բարձրացրեց բնակչության կենսամակարդակը, որն էլ բերեց նոր՝ քաղաքային տիպի բնակարանների լայն շինարարության: Այդ տարիներին կառուցված քաղաքատիպ բնակելի տները, որոնց բազմաթիվ օրինակներն անաղարտ պահպանվել են մինչ օրս, ժողովրդական ճարտարապետության անկրկնելի նմուշներ են, պատմամշակութային արժեքներ, որոնցով ժամանակակից Գյումրին դեռ մնում է որպես XIXդ. շունչը կրող ավանդական հայկական քաղաք, որտեղ միախառնված են եվրոպական և ռուսական զանազան ճարտարապետական ոճեր և կառուցապատման լուծումներ:

Ըստ իրենց հատակագծային կառուցվածքի՝ քաղաքատիպ տները միաշար կամ երկշար դասավորություն ունեն: Սենյակների միաշար դասավորություն ունեցող տները սկզբնական շրջանում կառուցվել են միհարկանի շենքի ձևով և հիմնվել ծածկված բակով համալիր տների կազմում, իսկ երկշար տիպը ձևավորել է նոր՝ երկհարկ կառուցվածք, որում առաջին հարկն օգտագործվում էր տնտեսական և արտադրական նպատակներով, իսկ երկրորդ հարկը հիմնականում լինում էր բնակելի: Այս տիպի տներին բնորոշ է. ա) օժանդակ բաժինների առանձնացումը բնակելի հատվածից՝ հաճախ առանձին կառույցի ձևով, բ) նախամուտքի շուրջ սենյակների դասավորվածությունը, գ) սենյակների միջանցիկ կապը՝ միմյանց մեջ բացվող դռների միջոցով:

Նոր տիպի տներում սենյակների քանակն ու դասավորվածությունը ապահովում էին դրանց ֆունկցիոնալ նշանակությունը, բնական օդափոխությունն ու ջերմափոխանա-

---

* *Այսպիսի կառուցապատման դասական օրինակ է մեծահարուստ Պետրոս Չիթողցյանի կառուցած առանձնատունը, որտեղ այժմ տեղավորված է Գյումրու քաղաքային կենցաղի և ճարտարապետության թանգարանը:*

[1] *Խայաթ Զահրիյան, Հիշողություններ հին Գյումրիից, ՀԱԻ, ԲԲԱ, FF I, էջ 8115:*

կությունը: Սենյակների թիվը պայմանավորված էր ընտանիքի կարողությամբ: Որքան ունևոր էր ընտանիքը, այնքան շատ էր սենյակների թիվը: Այս բնակարանների արտաքին փողոց նայող պատերի վրա բացվում են լուսամուտներ և դռներ, որով հաղթահարվում է ընտանիքի ավանդական ներփակվածությունը: Տանտիրոջ ունևորության աստիճանով պայմանավորված տունն ու բակը բաժանվում են երկու մասի՝ հանդիսավոր ընդունարանի և կենցաղային պահանջներին հատկացվող նեղ մասի: Լուսամուտները, որոնք արդեն ապակեպատ են, բարձր առաստաղների պայմաններում մեծ չափեր են ստանում և հարմար դասավորության շնորհիվ առատորեն լուսավորում և օդափոխում սենյակները: Սենյակներում կառուցվում են պատի վառարաններ, որոնք պատվում են հախճապակե սալերով կամ թիթեղներով: Օդափոխության համար պատերի մեջ տեղադրվում են օդատար խողովակներ, իսկ մթնոլորտային տեղումներից գոյացած ջրերը տների հարթ տանիքներից հեռացնելու համար կառուցվում են ելուստավոր, քանդակազարդ, քարե բարձրարվեստ ջրհորդաններ: XIXդ. երկրորդ կեսից սկսած, երբ կենցաղ ներմուծվեց տանիքների թիթեղապատումը, քարե ջրհորդաններին փոխարինեցին ջրահեռացման գեղարվեստորեն զարդարված թիթեղյա հարմարանքները: Հետաքրքիրն այն է, որ «Ռուսսկայա սլոբոդա» («Սլաբոդկա») թաղամասի «Խոլմ չեստի» («Պատվո բլուր») վայրում կառուցված ժամատան թիթեղապատ տանիքն առաջինն էր Ալեքսանդրապոլում և, քանի որ արևի ճառագայթների տակ այն փայլում էր, ժողովրդի մեջ մտավ «Պըլպըլան ժամ» անվամբ: Հետագայում միջին և բարձր խավի բնակիչների բնակարանային համալիրների մեծ մասը նույնպես դարձավ «պըլպըլան»:

1870-ական թվականներին կառուցված երկհարկանի տների բակի կողմի ճակատներին կառուցվում են փայտե ցանցկեն պատը շգամբներ, որոնք, բացի հիմնական գործառույթից, միաժամանակ գեղեցկացնում էին շենքի արտաքին տեսքը:

XIXդ. երկրորդ կեսին Ռուսական կայսրության քիչ թե շատ նշանավոր քաղաքներում մեծ թափով սկսեցին կառուցել բազմաբնակարան կամ բազմահարկ շենքեր, որոնք ժողովուրդն անվանում էր «Շահութաբեր տներ»: 1860-80-ական թվականներից, երբ Ալեքսանդրապոլը դարձավ Անդրկովկասի զարգացած առևտրական կենտրոններից մեկը, այստեղ ևս սկսվեցին կառուցվել այնպիսի տներ, որոնք ունեին վարձով տալու միջոցով շահույթ ստանալու համար հատկացված բաժիններ: Այդ է պատճառը, որ դրանք կառուցվում էին հիմնականում քաղաքի կենտրոնում՝ առևտրական փողոցներում, հրապարակներին, շուկաներին մոտ: Շահութաբեր տները, վաճառատան կառուցվածքային սկզբունքին համապատասխան, ունեին մի քանի առանձին, ճոխ բնակարաններ և օժանդակ շինություններ: Դրանք հիմնականում երկհարկանի շենքեր են, որոնց վերին հարկը հատկացված էր բնակության համար, իսկ ներքևինը ծառայում էր որպես խանութ կամ պահեստ: Տանտիրոջ կարիքներին ծառայող բնակարանների սենյակները բարձրանում էին նկուղային հարկի վրա, իսկ վարձով տրվող բաժինները գտնվում էին հանդիպակաց թևում: Նման տների լավագույն օրինակներն են Զիթողցոնց (Հաղթանակի պողոտայի 101) և Վեքիլովների (Գորկու փողոցի 30) տները:

Սկսած 1850-ական թվականներից՝ տների արտաքին ճակատները երեսապատվում են սրբատաշ քարով: Շարքի կարաններն («դարզերը») ընդգծվում են սպիտակ եզրագծով՝ դայթաններով, որը բնորոշ է միայն Ալեքպոլի տներին: Ալեքպոլցի վարպետները պատի գունազարդումը համարել են գեղարվեստական արտահայտչամիջոց, ուստի լայնորեն օգտագործել են կարմիր ու սև տուֆը՝ դրանցով կազմելով գոտիներ, որոնցով պսակված են որմնասյուները, կամարների աղեղները, պատուհանների, դռների ու դարպասների երեսա-

կալները: Երբեմն գունավոր քարերը պատի շարվածքում դասավորել են շախմատաձև կամ շեղանկյունաձև: Տներում հաճախ են հանդիպում շքեղ ձևավորված մուտքեր, փողոցից բակ տանող դարպասներ: Բնորոշ է լուսամուտների, դռների ու դարպասների շրջանակումը զարդաքանդակ երեսակալներով, դարպասների վերնամասերի հարդարումը սիմետրիկ տեղադրված զույգ վարդակներով, փականաքարի վրա փորագրված արձանագրություններով: Լուսամուտները ներսից կամ դրսից փակվում էին խլափեղկերով (*ստավնի)*, որը, անշուշտ, ռուսական բնակարանաշինության ազդեցություն էր: Վարչական շենքերի և շահութաբեր տների մուտքերի դիմաց՝ մայթերի վրա, անպայման առկա էին կառանասյուներ, որոնցից կապում էին ձիերի սանձերը:

Ալեքսանդրապոլի քաղաքային ճարտարապետության կարևոր բաղադրիչներից էին հասարակական կառույցները՝ քաղաքի Վարչական շենքերը, գինետներն ու սրճարանները, պանդոկներն ու քարավանատները, կրպակները, արհեստանոցներն ու բաղնիքները, ջրաղացները, ավելի ուշ շրջանում նաև հատուկ ուսումնական հաստատությունների համար կառուցված շինությունները (Վիճակային դպրոցի, Օրիորդաց կամ Օլգինյան պրոգիմնազիայի, Առևտրական ուսումնարանի համալիրները): Ալեքսանդրապոլի բազմաթիվ քարավանատներից որպես մեծածավալ և երևելի ճարտարապետական կառույց հայտնի էր Ալմոյենց խանը, որը գտնվում էր 23-րդ և 28-րդ փողոցների խաչմերուկում:

Ալեքսանդրապոլի ճարտարապետական համայնապատկերում և քաղաքի բնակչության կենսատարածքում հատուկ տեղ ունեին բաղնիքները (ալեքպոլցիների բաղնիքի ծեսի մասին կխոսվի իր տեղում): Ճարտարապետական առումով սրանք ևս արևելյան և արևմտյան ոճերի հետաքրքիր խառնուրդ էին: Դրսից բաղնիքներից շատերը սրբատաշ քարով շարված կառույցներ էին և իրենց տեսքով չէին խաթարում քաղաքի ճարտարապետական համապատկերը, իսկ ներսից դրանք ամենաիսկական արևելյան գմբեթավոր երդիկներով կառույցներ էին՝ ասիական լոգանքին բնորոշ բոլոր հարկաբաժիններով և հարմարանքներով հանդերձ: Ալեքպոլի նշանավոր բաղնիքներն էին Կոստանովների, Ուռմընոց, Հակոների, Վեքիլովների, Տեր-Մարտիրոսովների, Ձիթողցոնց, Գևոր աղի «Ֆանտազիա», «Կենտրոնական» բաղնիքները: Այստեղ հաջողությամբ լուծված է եղել ոչ միայն ջրամատակարարման համակարգը, այլև համարների տաքացման և լուսավորման հարցը:

Ալեքպոլի ճարտարապետությունը չի սահմանափակվում միայն բնակարանային, հասարակական շինություններով: Քաղաքի վարպետների արվեստի արգասիքն են բավական թվով ինժեներական այլ կառույցները՝ աղբյուրները, կամուրջները, ջրհորները, ջրատար ուղիները: Աղբյուրները կառուցվում էին ինչպես հանգանակությամբ, այնպես էլ պատվերով՝ որպես հիշատակ կամ նվեր և կրում էին տարբեր (վարպետի, պատվիրատուի, թաղամասի, կամ վարպետի կողմից աղբյուրին տրված խորհրդանշական, կրոնաբարոյախոսական իմաստ բովանդակող) անուններ, օր.՝ Մոսոյի, Քյափանակեցոնց, Օզնեցոնց, Ձիթողցոնց, Օխտնախպրանց, Բախալբաշոնց, Հեպոյենց, Քյալ Նիկոլի, Երկեն Հակոյենց, Խալաթովենց, Կարմիր աղբյուր և այլն: Աղբյուրի քարային մասը հաճախ կառուցում էին քարտաշորմնադիրները, սակայն ամենակարևորը՝ ջուրը տարբեր վայրերից ցանկացած «տեղը հասցնելը», աղբյուրագործների գործն էր: Ալեքսանդրապոլի նշանավոր աղբյուրագործներից էր Ռաֆայելը (լաղումչի Ռափը), որը կարողանում էր ջուրը բարձրացնել ու իջեցնել ցանկացած վայր:

Մինչև 1878թ.-ը քաղաքի միջով հոսող Գյումրի գետակը («Գիմրի չայ») գետնուղու մեջ առնված չի եղել, և քաղաքը հաճախ ենթարկվել է մեծ հեղեղումների: Անձրևաջրերից առաջացած ցեխի պատճառով կենտրոնական փողոցներում նույնիսկ անհնար է եղել երթևեկե-

լը: Քաղաքը գետի հաճախակի ողողումներից անվտանգ դարձնելու և փողոցները բարեկարգելու նպատակով այդ գետակը հատող փողոցներից մի քանիսում կառուցվել են կամուրջներ, իսկ քաղաքի կենտրոնական հատվածում գետն առնվել է գետնուղու մեջ: Մեծ ջանքերից հետո հնարավոր է դարձել լեռնային գետակների ջուրն ամփոփել ամուր ջրանցքների մեջ և քաղաքի ճահճացած հողը չորացնել:

Ալեքսանդրապոլը զարդարող ճարտարապետական կոթողների մեջ հատուկ տեղ են գրավում «Ամենափրկիչ»,«Աստվածածին» (Յոթ վերք), «Սուրբ Նշան» (Սև ժամ), «Գրիգոր Լուսավորիչ» (Գեղցոց ժամ) հայ-առաքելական, «Սուրբ Ալեքսանդրիա», «Խոլմ չեստի» (Պլպլան ժամ), «Գեորգի Պոբեդանոսեց» կայազորային ռուսական, «Սուրբ Գևորգ» (Ուռմընոց) հունական ուղղափառ, ինչպես նաև կաթոլիկ (ֆռանգների) եկեղեցիները, որոնք տեղադրված էին հրապարակներում, առանձին թաղերում կամ զորակայաններում: Սրանց մեջ աչքի է ընկնում Սբ Ամենափրկիչ եկեղեցին, որը կառուցվել է 1859-1873թթ. Անիի Մայր տաճարի նմանությամբ տոհմիկ որմնադիրներ Պապիկ Կարապետյանի (Բարտաշոյանց) և Թադևոս Անտիկյանի (Անտիկենց Թաթոս) կողմից՝ Վարպետաց վարպետ (ուստալարուստասի)Արդար Մանուկի ղեկավարությամբ:

Բնակարանի ներսույթը (ինտերիերը) էթնիկ մշակույթի կարևոր ցուցիչներից է, քանի որ այն միավորում է տվյալ ժողովրդի կենցաղի, ճարտարապետության, դեկորատիվ-կիրառական արվեստի և վերջապես գեղարվեստական ճաշակի բոլոր կարևոր դրսևորումները: Քաղաքային բնակարանի ներսույթի էվոլյուցիան հստակորեն արտացոլում էր իր դարաշրջանի կենսաձևն ու կենսամակարդակը, հասարակության սոցիալական շերտադասությունը (մեծահարուստներ, միջին խավ, չքավորներ և այլք): Այստեղ մեկտեղվում են սեփական կամ ավանդական և դրսեկ՝ ինտերնացիոնալ կամ ուրբանիզացիոն տարրերը: Ալեքսանդրապոլի մշակութային ներկապնակը այս տարրերի հաջողված խառնուրդներից է, և քաղաքային բնակարանի ներսույթը դրա վառ ապացույցն է: Բնակելի համալիրին համապատասխանում էր նաև տան ներքին հարդարումը: Ավանդական, արևելյան տիպի կահկարասին բնորոշ էր բնակչության ցածր և միջին խավին, խառը՝ ավանդական-նորաձև տարրերով հարդարված էին արհեստավորական խավի բնակարանները, իսկ հարուստները գերադասում էին զուտ եվրոպական, խիստ ժամանակակից կահկարասին:

Անլուսամուտ, երդիկավոր տների կահույքը փայտե թախտն էր, սնդուկները, առանց թիկնակի աթոռները, մանկական կահույքը և բազմաթիվ ու բազմատեսակ գործվածքները՝ գորգերը, կարպետները, թաղիքները (քեչա), ջեջիմներն ու մեզարները, խսիրները և այլն, որոնք ծառայում էին որպես ծածկոց, փռոց, վարագույր: Սենյակը, նախքան XIXդ. վերջին նավթավառի տարածումը, լուսավորում էին ձիթաճրագներով ու ճրագումոմերով: Բնակարանը ջեռուցվում էր օջախ-թոնրի միջոցով, որի շուրջը ձմռանը քուրսի էին սարքում:[1] Պետք է նշել, որ հետագայում՝ հյուրասենյակների կառուցումից հետո էլ, շատ դեպքերում քուրսու սենյակը պահպանվում էր որպես ձմեռնատուն, քանի որ հյուրասենյակը ջեռուցելը շատ ծախսատար ու դժվար էր: Բացի քուրսուց, տաքանալու համար օգտագործում էին նաև շարժական կավե (թաղար) ու թիթեղյա (մանղալ) վառարաններ, որոնց մեջ լցնում էին վառվող ածուխի կտորներ:

Հյուրասենյակը (*օդա),* որը պատկից էր քուրսու սենյակին, մոտ 30 քմ մակերես ուներ, արդեն այլ ոճով էր հարդարվում: Կահույքն այստեղ արդեն ավելի նորաձև էր, քանի որ բարձր առաստաղով ու պատուհաններով, տախտակած ու ներկած հատակով եվրոպական տիպի սենյակը համապատասխան հարդարում էր պահանջում. ավանդական թախտի ու սնդուկի կողքին տեղավորվում էին սպաս-

[1] *Խայաթ Զահրիյան, էջ 8155-8156:*

քապահարանը (*շկապի*), որտեղ ցուցադրվում էին ապակեղենը, բարձրարոտ, ասեղնագործ սփռոցներով ծածկված մեծ ու փոքր սեղանները, գեղեցիկ թիկնակով (*վիեննական*) աթոռները, ռուսական թախտերը (*գուշետկա*): Սենյակին նոր տեսք էին տալիս դռան ու պատուհանների ասեղնագործ ու ժանյակե վարագույրները, հայելին, ինքնաեռը, կախովի ջահերը, լամպերը և այլն: Պատերը, բացի ավանդական գորգերից ու կարպետներից, զարդարում էին «Մայր Հայաստան» կամ «Ոգի Հայաստանի», «Գառն Աստծո», «Հույս, հավատ, սեր» և այլ ասեղնագործ գեղեցիկ պատկերներով:[1] Այս տներում պահպանվել էր նաև ավանդական սպասքը, որը շարվում էր քիլարում: Սա բավականին մեծ, հողե հատակով, երդիկավոր սենյակ էր, որի պատերին թարեքներ էին կապված այնպես, որ տակը կարասները տեղավորվեին, իսկ վերևում՝ ավելի մանր իրերը: Գյուղական կենցաղավարությանը սովոր հնաբնակները սվիններով էին ընդունում ցանկացած նորամուծություն իրենց շրջապատող իրերի և կահավորման մեջ: Զանազան անծանոթ կամ դրսից ներմուծված առարկայի կամ սարքի նկատմամբ սարսափն ու զավեշտի աստիճանի հասնող նախապաշարումը դարձել էին անեկդոտիկ պատմությունների առարկա: Ալեքպոլցիները պատմում էին, որ «Ռանչպարների մահլայում» ապրող մի ընտանիքի հարսները, նորաձևության հովերով տարված, ռուսական ինքնաեռ (*սամովար*) էին գնել: Երբ նրանց բոստանչի սկեսրայրը վերադառնում է տուն և տեսնում է սամովարը, չափազանց բարկանում է և կացնով հարձակվում է «սատանի հաջաթի (հարմարանքի)» վրա:[2] Գյուղական կենցաղով ապրող ալեքպոլցիների «հողմաղացների հետ կռիվը» երկար շարունակվել չէր կարող, քանի որ ուրբանիզացիոն գործընթացներն ու դրսեկ տարրերի ճնշումն իրենց գործն անում էին: Սրանց սերունդները ևս ստիպված էին ընդունել խաղի կանոնները՝ շարունակելով զբաղվել իրենց «փեշակով»՝ հողագործությամբ:

Այլ էր քաղաքային տիպի բնակարանների ներսույթի պատկերը: Մի քանի սենյակներով ու ապակեպատ լուսամուտներով այս տները պահանջում էին ներսույթի ձևավորման այլ մոտեցումներ և կահույքի ֆունկցիոնալ հստակ կիրառություն: XIX դ. կեսերից, երբ լայն կիրառություն ստացավ եվրոպական կահույքը, քաղաքային բնակարաններում հայտնվեցին զանազան սպասքապահարաններ, կոմոդներ, կլոր ճաշասեղաններ, թիկնակով աթոռներ, զարդասեղաններ, սենյակի մեծ հայելիներ և այլն, սակայն ավանդական կամ, ինչպես ասում էին օտարները, ասիական կահույքը, շարունակում էր կենցաղավարել: Առավել ունևոր արհեստավորական խավի տանը, բացի վերը հիշված կահույքից, հայտնվեցին բացովի սեղաններ, վիեննական փափուկ աթոռներ, նարդու և սեղանի այլ խաղերի սեղանիկներ, կարի մեքենա, զարդապահարան և այլն: Ավանդական կահկարասին կամաց-կամաց դուրս մղվեց և տեղափոխվեց բնակարանային համալիրի տնտեսական կցակառույցներ: Լավ վարվեցողության նշան էր դառնում եվրոպական և ռուսական սպասքի օգտագործումը: Քաղաքաբնակ արհեստավորաառևտրական խավն անընդհատ փորձում էր նույնիսկ կահավորանքով զատվել իրենց իսկ քաղաքում ապրող ռանչպարներից և հարակից շրջանների «գեղցոնցից»: Առաջին հայացքից թվում է, թե իր ավանդականությունն անընդհատ ցուցք դարձնող ալեքպոլցի արհեստավորը ևս պետք է ամեն կերպ ընդդիմանար օտարածին մշակութային տարրերի մուտքին իր համար սրբագործված և փակ համարվող այնպիսի մի տարածք, ինչպիսին բնակարանն ու նրա ներսույթն է: Սակայն կատարվեց միանգամայն հակառակը: Գաղթականներից սերված հաջորդ իսկ սերունդը շատ շուտ և օպերատիվ արձագանքեց նորամուծության հովերին թե՛ հագուստի (օր.՝ կոնաձև երկարգագաթ

[1] *Հ. Գյոլեցյան, Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), Տետր 1, 1976թ., ՀԱԻ, ԱԲԱ, 4/77, էջ 9-12:*
[2] *Նույն տեղում, էջ 48-49:*

փափախներին փոխարինեցին կեպի-շափխաները) և թե՛ բնակարանի ու նրա ներսույթի կահավորման մեջ: Միևնույն ժամանակ ալեքպոլցի արհեստավորական խավին հաջողվեց բավական երկար ժամանակ «անձեռնմխելի» պահել և տաբուացնել ընտանեկան կենցաղի ավանդական բազմաթիվ տարրեր: Փաստորեն արտաքին ատրիբուտների փոփոխությունը արմատապես չկարողացավ փոխել կենսաձևի առավել ավանդական և սրբագործված բաղադրիչները:

Մեծահարուստների կամ էլիտար խավի բնակարանները կահավորվում էին զուտ եվրոպական ոճով, որը ռուսական միջնորդավորված ազդեցություն է: Այստեղ արդեն ավանդական համարյա ոչինչ չկա: Յուրաքանչյուրը փորձում էր իր հարկաբաժինները կահավորել առավել նորաձև և թանկարժեք կահույքով ու սպասքով՝ ցույց տալու համար իր ունեցվածքային և սոցիալական բարձր կարգավիճակը: Էլիտար խավին պատկանող երկհարկանի բոլոր տների հատակը տախտակապատ էր և կարմիր յուղաներկով պատված: Առանձին հարկաբաժիններ էին կազմում ննջարաններն ու հատկապես ընդարձակ հյուրասենյակները: Վերջիններս ալեքպոլյան էլիտար մշակույթում աչքի էին ընկնում իրենց բազմագործառութային (բազմաֆունկցիոնալ) նշանակությամբ: Որպես կանոն՝ այսպիսի հյուրասրահներում դրվում էր դաշնամուր (ռոյալ), և մեծահարուստների զավակների ուժերով անց էին կացվում մշակութային տարբեր միջոցառումներ՝ համերգներ, պոեզիայի երեկոներ, բեմադրվում էին ազգային և եվրոպական պիեսներ: Ալեքպոլցի Ձիթողցյանների հյուրասենյակի մի հարկաբաժինը նույնիսկ առանձնացված բեմի նման էր կառուցապատված և ծածկվում էր բեմական վարագույրով: Մեծ հյուրասենյակի կահավորանքի կարևոր բաղկացուցիչներ էին եվրոպական տարբեր ոճերի կահույքը, գրամոֆոնը, մեծ գեղազարդ հայելին, քանդակները և դեկորատիվ այլ իրեր, պատերին կախվում էին գեղանկարներ և այլն:

Ալեքսանդրապոլյան բնակարանի ներսույթի ձևավորման գործում մեծ էր հատկապես ռուսական ազդեցության գործոնի դերը: Ինքնաեռների լայն տարածումը կենցաղում, պատուհանագոգերի զարդարումը ծաղկամաններով կամ էլ, այսպես կոչված, «Սուրբ անկյունների» ի հայտ գալը բնակարաններում, անշուշտ, ռուսական մշակութային ազդեցության կնիքն էին կրում: Նոր, քաղաքատիպ ներսույթի ձևավորման վրա ռուսական ազդեցության արձագանքներն առկա էին նույնիսկ տեղական բարբառում, որում յուրօրինակ հնչերանգով արտաբերվում էին կահավորման պարագաների անվանումները՝ *շիֆաներկա, շկաֆ, կռուգլի* (նկատի ունի կլոր ճաշասեղանը), *զանավեսկա, վիշիլկա, սամավառ, սախառնիցա, չաշկա, ըստաքան՝, տառելկա, բուֆետնի, գարդիրովկա* և այլն:[1]

ՀԱԳՈՒՍՏ

Ալեքսանդրապոլի հայ բնակչության հագուստը XIXդ. վերջին երկու տիպի էր՝ ավանդական-ասիական և նորաձև-եվրոպական: Սրանով պայմանավորված՝ նույնիսկ դերձակներն էին տարբերվում. այսպես՝ ավանդական հագուստ կարողները միայն հայեր էին և կոչվում էին *թարզի*, իսկ եվրոպական շորեր կարողները այլազգի էին՝ հրեաներ, ռուսներ, լեհեր, որոնք եկել էին Ռուսաստանից և հայտնի էին *պարտնոյ* անունով:[2]

Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց հագուստի համալիրը բաղկացած էր ներքնազգեստից, վերնազգեստից, գլխի հարդարանքից և ագանելիքից (ոտքի հարդա-

---

[1] *Կ. Բազեյան, Գ. Աղանյան, Ռուսական մշակութային ազդեցության մի քանի դրսևորումներ Ալեքսանդրապոլի կենցաղում, Մշակույթների երկխոսություն. Հայ-ռուսական մշակութային կապեր (պատմություն և արդիականություն),Միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2008, էջ 201:*

[2] *Կ. Բազեյան, Դերձակությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում, ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Գյումրի, 2009, էջ 86:*

բանք): Բավականին տարբերվում էին երեխաների, երիտասարդների, ամուսնացածների և ծերերի առօրյա և տոնական հագուստները: Դրանց տարբերությունը արտահայտվում էր ոչ թե ձևվածքով, որը նմանատիպ էր, այլ կտորի տեսակով ու զարդարանքների առկայությամբ:

Ալեքսանդրապոլի կանանց ավանդական տոնական զգեստը ներկայացնում էր Բարձր Հայքի (Կարին) տարազը և մեծ ընդհանրություններ ուներ Կարսի ու Ջավախքի, հատկապես Ախալցխայի ու Ախալքալաքի քաղաքային հագուստի հետ:

Կանանց ներքնազգեստը ավանդաբար կազմել են շապիկն ու վարտիքը: Շապիկը կարել են կարմիր, սպիտակ բամբակե կամ մետաքսե կտորներից: Գյուղական միջավայրում շապիկը երկարափեշ էր և երկար թևերով: Տարիքավոր կանանց շապիկը ևս երկար փեշեր ուներ և հասնում էր մինչև ոտքի կոճերը: Քաղաքային կենցաղում XIXդ. վերջերից սկսեցին գործածվել կարճ թևքերով, մինչև ծնկները իջնող շապիկը: Երիտասարդների շապիկներն ավելի նորաձև էին՝ փեշի մասում ծալաբոլորով (աբոռկա), առանց թևերի, եզրերն ասեղնագործ կամ ժանեկազարդ: Կանանց վարտիքը, որը կարում էին կարմիր բամբակե ու մետաքսե կտորներից, եղել է մի քանի տիպերի՝ խոնջանով, կապիչներով, կարճափողք: Մինչև XIXդ. կեսերը գործածական են եղել ոտքի կոճերին հասնող, ոլորուն հյուսածո քուղ-խոնջանով կապվող շապիկները, որոնց ասեղնագործ, ժանեկազարդ կամ մետաքսյա ժապավենով զարդարված փողքը պետք է երևար հագուստի տակից: XIX դարավերջին և հատկապես XX դ. սկզբին, առավելապես երիտասարդ աղջիկները և կանայք սկսում են հագնել կարճ փողքերով, եզրերին գործարանային ժանյակե ժապավենով վարտիքներ: Կենցաղ է մուտք գործում ներքնազգեստի նոր տարր՝ կրծկալ-*լիվչիկ*, որը կարվում էր սպիտակ բամբակե կտորից, հասնում էր մինչև գոտկատեղ և կոճկվում էր թիկունքից:[1]

Կանանց հագուստի համալիրում գործածական էր միևնույն ձևվածքի վերնազգեստի չորս տեսակ, որոնք տարբերվում էին կտորի որակով և զարդարանքով: Մահուդից կարված վերնազգեստը կոչվում էր *ջուպպա*, թավշից կարվածը՝ *խրխա*,մետաքսիցը՝ *ղատիֆա*, *ֆայ, լահոռ*, իսկ բրդյա գծավոր կտորից կարվածը՝ *փութալի*: *Ղատիֆան, խրխան, փութալին* տոնական վերնազգեստներ էին, իսկ *ջուպպան*՝ ամենօրյա:[2] Թավշե ու մահուդի վերնազգեստների ամենասիրված գույներն էին մուգ կարմիրը, կապույտը, կանաչը և մանուշակագույնը: Վերնազգեստի կրծքի մեծ բացվածքի շուրջը, ինչպես նաև քղանցքի, թևքաբերանների եզրերը զարդարվում էին փայլուններով, ոսկեթել, արծաթաթել ասեղնագործությամբ: Ասեղնագործության հիմնական զարդանախշը բուսական էր՝ ծաղիկներ, տերևներ, կոկոններ, որոնք, իրար միանալով, անընդհատ շղթա էին կազմում: Վերնազգեստի կրծքամասի խոր բացվածքը զգեստի տարբերակիչ գծերից էր, որը ծածկվում էր կրծկալով: Կրծկալի (*դյոշ, գյոկսլուղ*) կիրառումն ուներ ինչպես գործնական նշանակություն՝ ծածկելու այդ բացվածքը, այնպես էլ գեղագիտական, քանի որ կարվում էր գեղեցիկ նախշազարդ,ժանյակե կտորներից կամ էլ շքեղ ասեղնագործվում էր: Այն ժամանակվա վայելչության, գեղեցիկի ընկալման չափանիշների համաձայն՝ կուրծքը հնարավորինս պետք է քողարկվեր ու չընդգծվեր:

Ալեքսանդրապոլի կնոջ ավանդական տարազի կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը թավշե կամ մահուդե կարմիր գոգնոցն էր, որն ուներ երկու տարբերակ՝ ուղիղ եզրերով ու երեք կողմը ալիքաձև-ծոնթրաձև (*քյարթմալի*) կտրտված: Վերջինս կտրվում էր հատուկ գոր-

[1] *Ս. Պողոսյան, Ներքնազգեստը հայոց տարազի համակարգում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական հինգերորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 34:*

[2] *Ն. Ավագյան, Հայկական ժողովրդական տարազը, Եր. 1983, էջ 19:*

ծիքով և ոչ թե մկրատով: Գոգնոցի եզրերի զարդանախշերը համապատասխանում էին վերնազգեստի նախշերին՝ ոսկեթել ասեղնագործությամբ կամ բարակ քուղով (տրեզ) եզրազարդված: Գոգնոցի անկյուններում ասեղնագործվում էին ոսկեթել նշաձևեր, որոնց կենտրոնում երբեմն գրվում էին տիրոջ անվան սկզբնատառերը: Գոգնոցը կապվում էր կարմիր-դեղին, մետաքսյա, ծոպավոր, երկերես, հյուսածո գոտիով: Գոտին ուներ երկու մետր երկարություն, զարդարված էր երկրաչափական նախշերով, որոնց մեջ գերակշռում էր կենաց ծառի պատկերը: Վերջիններիս վրա հաճախ եղել են բարեմաղթանքի խոսքեր, գործելու թվականը, կրողի անունը և այլն:

Ալեքսանդրապոլում կանայք վերնազգեստի վրայից հագնում էին նաև կարճ բաճկոնսալթա, որը կարվում էր վերնազգեստի գույներով՝ թավիշից: Ոսկեթելով ասեղնագործվում էին սալթայի եզրաբերաններն ամբողջությամբ, կողքերի ու հետևի կարերը, երբեմն նաև թիկունքն ու առջևի բացվածքի ներքևի երկու անկյունները: Ասեղնագործության զարդանախշերը նման էին վերնազգեստի նախշերին, միայն այստեղ, բացի նշաձևերից, հանդիպում էին նաև կենաց ծառի խիստ ոճավորված պատկերներ: Բացի սրանից, կանանց տարազի համալիրում գործածվում էր *փարաջա* կոչվող վերարկուն, որը կարվում էր արտասահմանյան սև կամ շագանակագույն բրդյա կտորից: Այն երկար թևերով, հետևից դարսերով, առջևում կոճակներով իրար միացող երկար հագուստ էր, որը հագնում էին ձմռանը՝ հիմնականում եկեղեցի գնալիս: Տարեց կանայք ցուրտ եղանակներին օգտագործում էին բրդյա հաստ գլխաշոր-ծածկոցներ՝ *շալովնի*:[1]

Կանանց հագուստի համալիրի կարևոր բաղկացուցիչ մասն էր գլխի հարդարանքը, որում հստակ դրսևորվում էին սոցիալ-տարիքային առանձնահատկությունները: Ըստ դրա՝ կարելի էր որոշել, թե կրողը ինչ կարգավիճակ ունի՝ աղջիկ է, ամուսնացած կին, թե այրի: Աղջիկների գլխի հարդարանքը խիստ պարզունակ էր՝ ծոպազարդ գդակ, արծաթե կախիկավոր գլխազարդ-թասակ: Աղջիկների ծամերին կամ գդակին չարխափան նպատակով ամրացրել են աչքի ուլունքներ, հմայիլներ:

Կանանց գլխի հարդարանքը էապես տարբերվում էր Հայաստանի մյուս շրջանների հարդարանքից և իր գեղեցիկ ու ճաշակով ձևավորմամբ լրացնում, շքեղացնում էր կնոջ արտաքին տեսքը: Գլխի հարդարանքի հավաքմանը նախորդում էր մազերի հարմար սանրվածքը: Ծամերը երկու հյուսքով էին: Մազերի վրա դրվող մուգ կարմիր գլխարկի տակից սանրով դեպի առաջ էին ձգում աղեղի ձև տված փնջերը, որոնք կոչվում էին *զիլիֆ*: Գլխարկները, որ փոխարինում էին այլ տարածաշրջաններում գործածվող լաչակին, երկու տեսակ էին՝ մահուդից և թավշից: Կարմիր մահուդե գլխարկը, որ կոչվում էր *ֆաս ու փուսքուլ*, գմբեթաձև գագաթ ուներ, որտեղ ամրացված էր մետաքսյա մանուշակագույն, կապույտ կամ սև մետաքսյա երկար փնջիկծոպը: Գլխարկի մյուս տեսակը, որ կարվում էր մուգ կարմիր թավշից՝ տափակ, շրջանաձև, առանց փնջիկի գագաթ ուներ: Այն աստառապատվում էր և զարդարվում ոսկեթել ասեղնագործությամբ:[2]

Այնուհետև, գլխարկի վրա կախում էին կտորի նեղ ժապավենով միացված մարգարտաշար քունքակախիկները (*զիլիֆլըղ*)՝ յուրաքանչյուր կողմում 5-6 ական զույգ, որոնց ծայրերին ամրացվում էին մեկական ոսկեդրամ: Փողոց դուրս գալիս այդ կախիկները հավաքում էին դեպի վեր՝ գլխաշորի տակ: Գլխի հարդարանքի մյուս բաղադրիչը ճակտնոցն էր (*ջուխտ շերիդ մայմուդա*), որը բաղկացած էր երկու շարք ոսկյա դրամների (*ուռուբյա*) դարսաշարից. կենտրոնում տեղադրվում էր մեկ մեծ դրամ, որ կոչվում էր միջանոց: Երբ ճակտնոցը զույգ էր լինում, դրամների քանակը մի

[1] *Ն. Ավագյան, նշվ. աշխ., էջ 24:*

[2] *Ն. Ավագյան, նշվ. աշխ., էջ 71-72:*

քանի տասնյակից կարող էր հասնել մոտ 200-ի՝ նայած թե ինչ հարստության տեր էին կրողները: Հարուստ ընտանիքներում ճակտոնոցի վրա ավելացվում էր ջավշակ կոչված զարդը: Վերջինս ոսկյա թերթիկներից և մարգարիտներից կազմված շարան էր՝ ամրացված թավշյա ժապավենի վրա, կամ առանձին մարգարիտներով եզերված զարդատախտակների շարան, որ կապվում էր ճակտնոցի վերևի եզրին և կապիչներով հանգուցվում ծոծրակին: Ոսկե թերթիկները երբեմն էմալապատվում էին և ավելի նմանեցվում ծաղիկների:

Կնոջ ճակատը զարդարող մյուս տարրը վարդն էր (*թանթանա, օյա*): Այն 5 սմ լայնությամբ, մուգ կարմիր թավշից շրջանակ էր, որի վրա՝ ճակատի երկու կողմերում, ամրացվում էին նույն թավշից երկու կլոր բարձիկներ: Այդ բարձիկներն ու դրանց միջև ընկած տարածքը զարդարվում էր ասեղնագործ ժանյակով: Նախ ողջ մակերեսը պատվում էր կանաչ խոտով, ցողուն ներկայացնող ժապավենով, որին ամրացվում էին գույնզգույն մանր ծաղիկները՝ մանուշակ, մեխակ, նարգիզ, շուշան և այլն: Ծաղիկների թերթիկներին անցկացնում էին ձիու մազ,որպեսզի դրանք փռված դիրքը պահպանեն: Երբեմն ծաղիկների մեջ ամրացվում էր «աքաղաղ», որը ավելի զվարթ տեսք էր հաղորդում ընդհանուր պատկերին: Վարդ պատրաստելը հատուկ մասնագիտություն էր, որին տիրապետում էին միայն կանայք, որոնք հայտնի էին ոչ միայն քաղաքում, այլև մոտակա գյուղերում: Հայտնի վարդ-թանթանա գործող էր Հովհաննես Շիրազի մայրը՝ Աստղիկը: Վարդի մյուս տեսակը ասեղնագործվում էր մարգարիտներով ու բուսանախշերով, որը կըրում էին տարեց կամ այրի կանայք:

Գլխի հարդարանքի հիշյալ մասերը կապելուց հետո վրայից զցում էին երկար, քառանկյունաձև, եզրերը ժանեկազարդ մետաքսյա նուրբ շղարշե քողը կամ *չիքիլան*, որը հասնում էր մինչև կրողի սրունքները: Միջին տարիքի կանայք չիքիլայի փոխարեն կապում էին բամբակյա նուրբ գործվածքից գլխի ծածկոց – գլխաշոր (*յազմա)*, որը գունավոր էր (կանաչ, շագանակագույն, մանանեխագույն, բալագույն) և դաջազարդ բուսանախշերով զարդարված: Յազման չորս կողմերում եզրազարդվում էր թանթանայի ասեղնագործ ժանյակից գունավոր ծաղկաշղթայով: Փողոց դուրս գալիս կանայք այս բոլորի վրայից զցում էին լրացուցիչ ծոպազարդ ծածկոց (*էիրաս*), որը գործում էին հատուկ վարպետները (*էյրամճի)* սպիտակ, կապույտ նուրբ բրդից ու գլխի մասում գեղեցիկ ասեղնագործում:

Ալեքսանդրապոլցի կնոջ ավանդական տեսքն ամբողջացնում էին տարբեր տեսակի զարդերը:[1] Բացի գլխի հարդարանքում առկա ոսկեղենից ու մարգարիտներից, կանայք կրել են նաև ոսկյա կամ արծաթյա գնդաձև ականջօղեր, ապարանջաններ (*բիլազուկ*), ակով կամ առանց ակի մատանիներ, մարգարտաշար, ոսկեդրամներով, ոսկե հատիկաշար և այլ տեսակի մանյակ-վզնոցներ, կրծքազարդեր: Հարուստների հարսերն ու կանայք կրել են ոսկե երկտակ հաստ շղթաներ՝ խաչով, կափարիչով ժամացույց,թանկագին՝ ադամանդյա, զմրուխտե քարերով խոշոր մատանիներ, ականջօղեր, կրծքազարդեր: Աղջիկները կրում էին արծաթե ականջօղեր ու մատանիներ:

Ալեքսանդրապոլում կանայք գործածում էին տնայնագործ բրդե, մետաքսե, երբեմն բամբակե սպիտակ երկարաճիտ հելունագործ գուլպաներ: Կանանց ոտնամանը դեղին կամ կարմիր կաշվից, փափուկ ներբանով *մաս բաբուջն* էր, որի վրայից հագնում էին կրկնակոշիկի տիպի, կոշտ ներբանով, սրաքիթ հողաթափ-բաբուջ: Այս *բաբուջը* հագնում էին դրրսում, իսկ տանը հագնում էին միայն *մասը*: Երիտասարդ կանանց *մասը* դեղին էր, իսկ *բաբուջը*՝ կարմիր, կամ հակառակը՝ *մասը* կարմիր, իսկ *բաբուջը*՝ դեղին: Կոշիկների վրայից հագնում էին կաշվե կրկնակոշիկներ, որոնք

[1] *Ս. Պողոսյան, Շիրակի ավանդական զարդահամալիրը, ՇՊՄԺ Հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 134-138:*

երկարացնում էին կոշիկների «կյանքը» և պաշտպանում աղտոտվելուց:

XIXդ. վերջերին-XXդ. սկզբներին երիտասարդ ունոր կանայք սկսեցին կրել եվրոպական հագուստի համալիր, որը բաղկացած էր երկմաս վերնազգեստից (կարճ բլուզ և կիսաշրջազգեստ) կամ ամբողջական զգեստ-*դեյրայից*: Ոտքերին հագնում էին տափակ կրունկով, կլորավուն ծալքով *տուֆլիներ*: Ուշագրավ է այն, որ եթե երիտասարդ աղջիկները նորաձև հագուստի հետ կրում էին փոքրիկ պայուսակներ ու գլխի համապատասխան հարդարանք, ի դեմս տարբեր տեսակի գլխարկների, ապա ամուսնացած կանայք շարունակում էին պահպանել գլխի ավանդական հարդարանքը, որը վկայում է կնոջ տարազի այդ մասի կարևոր նշանային արժեքը:[1]

Տղամարդու հագուստի համալիրը ևս բաղկացած էր ներքնազգեստից, վերնազգեստից, գլխի և ոտքի հարդարանքից: Տղամարդկանց ներքնազգեստը կազմված էր սպիտակ բամբակյա շապիկից և նույն գույնի կտավե, բամբակե կամ քաթանե վարտիքից *(իշտոն)*: Շապիկը կրծքի բացվածք ուներ, իսկ թևերը դաստակի մոտ կոճկվում էին: Վարտիքն ունեցել է լայն ձագ և լայն փողքեր, որոնք բերանին ամրացված հյուսածո կապիչներով ամրացվում էին ոտքին: XIXդ. վերջին սկսում են օգտագործել կոճակավոր վարտիքները;

Տղամարդու տարազում առանձնանում են երկու համալիր՝ ավանդական-բարձրհայքյան և տեղական-արևելահայկական:[2] Տղամարդու ավանդական առօրյա տարազը պարզ կառուցվածք ուներ և հարմարեցված էր աշխատանքային պայմաններին: Շապիկի վրայից հագնում էին բաճկոնակ-ելակ, որը մետաքսե, թավշե կտորից անթև կարճ զգեստ էր կամ բամբակե ներդիրով, կարագծերով հարդարված ելակ: Ելակի հետ հագել են շատ լայն փողքերով և մեծ ձագով, խոնջանակապով բրդե շալվար, որի փողքերը դրվել են սոնապանի (*թոզլուխ*) կամ գուլպայի մեջ: Նման շալվարը կարելի էր հետ ու առաջ հագնել: Երիտասարդները հագել են մահուդե, բրդե նուրբ կտորներից շալվարներ, որոնց փողքերը թողնում էին արձակ: Գործածական էին կտորից, հյուսածո և արծաթե գոտիները, իսկ տարեց տղամարդիկ կապում էին բրդե լայն գոտի, որը նաև գրպանի դեր էր կատարում:

Տղամարդու ավանդական տարազի հետաքրքիր տարր էր *ջուպպա-աբա* վերնազգեստը, որը նման էր կանանց ջուպպային և միայն տարբերվում էր նրանով, որ եզրազարդվել է կարմիր, դեղին, կապույտ մետաքսե տրեզով: Այս զգեստը շատ շուտով դուրս եկավ երիտասարդների հագուստից, որոնք սկսեցին հագնել կարճ վերնազգեստ-*կուրտկա,* բայց երկար պահպանվեց տարեց տղամարդկանց տարազում:

Պահպանելով Կարնո տարազի ավանդույթները՝ տղամարդիկ կրում էին մահուդե գդակ-*ֆես*,իսկ տղաները՝ ասեղնագործ գդակարախչի: Ալեքսանդրապոլ տեղափոխվելուց հետո շուտով վերացավ գառան մորթուց սրածայր ու բարձրադիր գլխարկների կիրառությունը՝ փոխարինվելով տեղական մորթե փափախով: Տղամարդիկ ոտքերին հագնում էին գուլպա հիշեցնող սոնապաններ և որպես ոտնաման ծառայող *յամանի*, *մաս-բաբուջ* և *տրեխ-չարոխ*:

Եթե ավանդական հագուստը համեմատաբար կայուն էր պահպանվել ավագ սերնդի տղամարդկանց շրջանում, առանձնապես միջին և աղքատ խավերում, ապա հարուստ խավի ներկայացուցիչները և երիտասարդները շուտով անցան տեղական-կովկասյան տարազաձևերին:

Տղամարդու տարազի կովկասյան համալիրը կազմված էր ներքնազգեստից, արխալուղ-*չուխայից*, գոտուց, շալվարից, գլխի հարդարանքից և ազանելիքից: Կարճ վերնազգեստ արխալուղը կարում էին մետաքսե, բամբակե,

[1] *Ս. Պողոսյան, Շիրակի և Ջավախքի հայոց ավանդութային տարազը (XIX դ. վ.-XX դ. սկիզբ), թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր. 1994:*

[2] *Նույնը:*

բրդյա մուգ կապույտ կամ սև կտորներից, առօրյա տարբերակը՝ բամբակից:Արխալուղի վերևամասը մինչև գոտկատեղ կիպ էր, որի տակ շարով հավաքվում էր լայն ներքնամասը: Տարեց տղամարդիկ հագել են ծնկներից վար իջնող, իսկ երիտասարդները՝ ծնկներից վեր *արխալուղ*: Շալվարները կարում էին կապույտ, սև,շագանակագույն, մոխրագույն բրդյա կտորներից: Դրանք երկու տեսակի էին՝ խոնջանավոր և կոճակավոր: Քաղաքում տարածված էին արձակ փողքերով շալվարները, չնայած կային նաև գյուղական տիպի՝ փողքերը բարձրացված և ոտքի փաթաթաններով (*դոլաղ)* կապված շալվար հագնողներ: 1900-ական թթ. խոնջանավոր շալվարներին փոխարինել են կոճակավոր շալվարները:Արխալուղի վրայից տղամարդիկ կապում էին կտորից, կաշվից կամ արծաթյա գոտիներ: Տղաները կապել են կտորից բարակ գոտի, որի լայն տարբերակը գործածել են նաև տարեց տղամարդիկ: Երիտասարդ և տարիքով տղամարդիկ կապել են թամբաձև ճարմանդով արծաթյա գոտի (*քամար*):[1]

Կովկասյան տարազի կարևոր բաղկացուցիչ տարրերից է եղել տաք վերնազգեստ-*չուխան*, որը այծենակաճ-*յափնջու* և գլխանոց-*բաշլուղի* հետ ամբողջացրել է տարազի համալիրը: Չուխան չորս տիպի էր՝ դարսերով, չաքերով, շարերով և չերքեզկա:

Այս տարազը կրող տղամարդիկ դնում էին կոնաձև, սպիտակ, շագանակագույն, սև-սպիտակ մորթե փափախ:Հարուստները կրում էին ոչխարի թավ, հատուկ տեսակի մորթուց կարած *բուխարի* կոչվող բարձրադիր ու թանկարժեք գլխարկներ, որոնք խավոտ թաղիքից կարված յափնջու և բրդե նուրբ կտորից կարած գլխանոց-բաշլուղի հետ խիստ հարգի էին: 1900-ական թթ. սկսած՝ Ալեքսանդրապոլի արհեստավորական խավի մեջ լայն տարածում գտավ քաղաքային հովարով գլխարկը՝ *շապխան*: Գլխարկը, կիրառական գործածությունից զատ, միաժամանակ տղամարդու պատիվն էր, նրա արժանապատվության, «տղամարդկության» ցուցիչը: Կովկասյան տարազաձևում ոտքերին հագնում էին տնայնագործ ոտնաման-*չարոխ*, *ճզմա* և բարձրաճիտք կոշիկներ: Երիտասարդ և միջահասակ տղամարդիկ գերադասում էին երկարավիզ ճտքակոշիկ-*սապոգները*, որոնք ռուսական մշակույթի ազդեցությամբ էին մուտք գործել հայկական կենցաղ: Հարուստ խավերի և երիտասարդ մտավորականության ներկայացուցիչները XIXդ. վերջից սկսում են կրել նորաձև-եվրոպական հագուստ՝ սպիտակ վերնաշապիկ, եվրոպական բաճկոն և տաբատ, թանկարժեք մահուդից վերարկուներ, լայնեզր գլխարկներ (*շլյապա*) և լրացուցիչ հարդարանքի մասեր (սև ժապավեն, «թիթեռնիկ», փողկապ, օսլայած դնովի օձիք և սպիտակ կտորից բազպաններ):

ՈՒՏԵՍՏ

Ալեքսանդրապոլցիների կերակրացանկը հարուստ էր: Բացի ավանդական գեղջկական համարվող կերակուրներից, որոնք մեծ տեղ էին գրավում սննդի համակարգում, կային զուտ քաղաքային և հատկապես Ալեքսանդրապոլին բնորոշ ուտեստներ, որոնց պատրաստմամբ աչքի էին ընկնում և պարծենում կանայք: Սնունդը չափազանց բազմազան էր և կազմված էր հացահատիկային մթերքներից, մսեղենից (այդ թվում՝ ոչխար, տավար, այծ, հավ, ձուկ), կաթնեղենից, բանջարեղենից, լոբազգիներից, վայրի բույսերից, մրգերից ու դրանց չրերից և այլն: Կերակուրները տարբերվում էին ըստ պաս և ուտիս օրերի, ամենօրյա, տոնական և ծիսական կերակուրների:

Ուտելիքի պատրաստությունը կնոջ այն կարևորագույն պարտականություններից էր, որտեղ դրսևորվում էին նրա տնարարությունն ու տնտեսվարությունը: Խստաշունչ ու երկարատև ձմռանը, երբ փակվում էին բոլոր ճանապարհները և այլ տեղերից մթերք չէր բերվում,

[1] *Ն. Ավագյան, նշվ. աշխ., էջ 55-57:*

ալեքպոլցին ստիպված էր սննդի պաշարի համար հոգալ: Բացի այդ, գյումրեցիները հիմնականում արհեստավորներ էին և հատկապես շինարարներ, որոնք աշխատում էին գարնանից մինչև ուշ աշուն, ուստի աշխատած փողով ողջ տարվա պարենի ու վառելիքի պատրաստությունը, ինչպես ժողովուրդն է ասում, ձմեռվա «թադարուքը», նախօրոք էին տեսնում:[1] Կանայք գարնանից զբաղվում էին դրանով: Գնում էին դաղձ, եղինջ, սիբեխ, սինձ, էրիժնակ, ժախ, ավելուկ, թելուկ, ղմի, դանդուռ, թրթնջուկ, խավրծիլ, ծնեբեկ, ղանձիլ, ձնճղլոզ, ճնճղպաշար, ճերմակ բանջար, շրեշ, պատատուկ, փիփերթ, քեղ, ողորմակոթ կամ վարդապետի ժախ, որոնց մի մասը ուտում էին թարմ վիճակում, մի մասը չորացնում էին, մյուսը՝ թթու դնում:[2]

Մայիսի վերջերից յուղ ու պանրի «թադարուքի» ժամանակն էր: Տանտիկիններն այնքան յուղ էին հալում, որը պիտի բավականացներ ողջ ընտանիքին մինչև նոր յուղի հալելը: Ստացված յուղը լցնում էին կավե զնդանների մեջ և բերանը փակում սերեկով: Սերեկը ստանում էին ոչխարի ստամոքսը լավ վերամշակելով: Այն խոնավ վիճակում քաշվում էր յուղի ամանի բերանին ու ամուր կապվում: Չորանալուց հետո սերեկը կծկվում, ամուր փակում էր զնդանի բերանն ու չէր թողնում օդ անցնի ներս: Նույն ձևով պահում էին նաև պանրի տարբեր տեսակները:

Ամռանը չորացնում էին կանաչ լոբին, պատրաստում մուրաբաները (ընկույզի, վարդի, բալի, հոնի, խնձորի և այլն): Ձմռան համար մեծ քանակությամբ գնում էին գլուխ (քյալլա) սոխ և ծլակ-կանաչ սոխ: Ուշ աշնանը բանջարեղենի պաշարի հավաքումն էր՝ գազար,բողկ, շաղգամ, կարմիր բազուկ, դդում, կաղամբ, լոլիկ և արդեն ավանդական կերակրացանկ մուտք գործած կարտոֆիլ: Կաղամբը, կարմիր ու սպիտակ բազուկը, շաղգամը, բացի թարմ վիճակում պահելուց, նաև թթու էին դնում: Հատկապես թթու կաղամբով շատ կերակրատեսակներ էին պատրաստում՝ մսով ու պասուց տոլմաներ, քոչիկ, կոնջոլ: Կաղամբի հետ թթու էին դնում գազար, սոխ, կանաչ լոլիկ, կանաչ պղպեղ: Ալեքպոլցիները շատ էին սիրում ծիծակի թթուն: Կարմիր լոլիկը աղ էին դնում կամ չորացնում էին: Չորացնում էին դդումը, որը օղակաձև կտրտում ու կախում էին: Չորացնում էին նաև ոչխարի տոտիկները, որոնք լավ մաքրում, նոր էին կախում՝ ձմռանը *տոտոխ*՝ ոչխարի տոտիկներով խաշ եփելու համար: Ուշ աշնանը պատրաստվում էր դավուրման (տհալ)՝ մեկ ոչխարով կամ երինջով՝ նայած ընտանիքի կարողության:

Վերը թվարկած բոլոր ուտելիքներն ունեին պատրաստման իրենց հատուկ եղանակները և պահելու համար նախատեսված համապատասխան կարասին: Ալեքպոլցի կինը երբեք յուղի, պանրի կամ թթուների ամանները մեկը մյուսի փոխարեն չէր օգտագործում, որովհետև դրանցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ համն ու հոտն ուներ, որը կպչում էր ամանին ու կարող էր փչացնել այլ մթերքի համը: Ընդունված չէր նաև ամանները օճառով լվանալը, քանի որ օճառը համարվում էր «անմաքուր»: Լվանում էին տաք ջրով մի քանի անգամ, ապա պարզաջրում գոլ ջրով:

Հարկ ենք համարում թվարկել այն ամանները, որոնք տարածված էին ալեքպոլցիների կենցաղում մինչև XXդ. սկիզբը: Լայն գործածություն ունեին կավե և պղնձյա ամանները, ավելի քիչ՝ փայտից պատրաստվածները:

Կավե ամաններն էին.

բոլուղներ - 1մ 10սմ բարձրությամբ, ներսը ձթած կարասներ՝ թթու դնելու համար.

բուլուլ/բղիկ/- կես մետր բարձրությամբ, դարձյալ ներսից ձթած՝ աղցանի համար.

զնդան -1,5-2 փութ յուղի տարողությամբ, ներսը ջնարակված /ապակեներկ/, գործածվում էր յուղ կամ պանիր պահելու համար.

պուտուկ /կճուճ/ - երկու կողմից կանթերով ման՝ ջրալի կերակուրների համար.

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 20-27:*
[2] *Ն. Նիկողոսյան, էջ 7229-7252:*

ծափ - կարճ, լայն փորով աման ապուրի, հարիսայի, խաշի, քյաշկայի համար.

քյասա /քարսանք/ - բռնելու համար ունկերով լայն, հաստ, մեծ չանախ, որի մեջ լցնում էին ալյուր, հացահատիկ կամ ամաններն էին լվանում.

չանախ – քյասայից փոքր աման՝ 4-5 մարդու կերակուրի համար, որը փուռն էին ուղարկում.

չինի – չանախից փոքր, բարակ, ներսից ջնարակած աման.

կուռիկ – մի մարդու համար նախատեսված աման.

պուլիկ – թթխմոր պահելու աման.

փարչ /կուժ/ - տարբեր մեծության, բռնելու կանթով ջրի կամ գինու աման:

Պղնձե ամաններ՝

մատաղի մեծ կաթսա, որ 8-10 փութ միս էր տանում. տրվում էր եկեղեցուն նվեր, որից օգտվում էին բոլորը.

պղինձ – սովորական կաթսա 2-3 փութ տարողությամբ, որի մեջ ջուր էին տաքացնում և յուղ հալում.

լազան – բերանի մասում նեղ ու երկար, մեծ պղինձ, որն օգտագործվում էր բաղնիքում.

եղակ – լազանի ձևով, բայց նրա կեսից փոքր աման, որով բաղնիքում գռից ջուր էին վերցնում.

փարխաջներ - բռնելու կանթերով տարբեր չափերի ջրի ամաններ. դրանց մեծ չափերովը գործածվում էր յուղ հալելու կամ դավուրմա պատրաստելու համար.

դաբա - լայն փորով, կանթերով պղինձ՝ յուղի աման.

գյուգյում - փարչի նման պղինձ՝ ջրաման.

իպրուղ – տարբեր մեծության, կանթով, կողքից ծորակով ջրաման, որի դեղինից փոքր չափինը օգտագործվում էր եկեղեցի ջուր տանելու ու օրհնելու համար.

թավա - երկաթե կոթով լայն, տափակ աման՝ խավիծի կամ տապակելու համար.

շերեփ - կերակուր խառնելու համար.

քավկիր - ծակոտիներով, երկար բռնակով տափակ շերեփ՝ կերակուրի քափը քաշելու համար.

փլավքամիչ -կլոր, լայն, ծակոտիներով, առանց կանթի.

թասեր - կերակուրի զանազան մեծության ամաններ.

բաղիա - թասից մեծ, կերակուրի կամ մածնի աման.

սինի - կլոր մատուցարան՝ փուռը խմորեղեն տանելու համար.

մուշուրբա - դեղին պղնձից ջուր խմելու աման.

դուշխանա - տարբեր մեծության ամաններ՝ կերակուր եփելու համար.

յամաղ – սոխառաձի փոքր աման.

զառֆ - փոքր սրճաման:

Փայտե իրերից օգտագործում էին դույլերը կաթի ու ջրի համար, կերակրամանները /*գուշ*/, կաթի և լվացքի տաշտերը, հացի կլոր մատուցարանը /*տեփուր*/, հացի կլոր, միակտոր տաշտերը, մեծ ու փոքր տակառները, շերեփներն ու գդալները և այլն: Պղնձե ամանները տարվա մեջ երկու մեծ տոներին անագապատվում էին ու մեծության կարգով շարքշարք դարսվում թարեքներում: XXդ. սկզբներից պղնձե ու կավե ամաններին փոխարինեցին էմալե ու ալյումինե ամանները, թիթեղյա տապակներն ու չուգունե կերակրամանները:[1] Հախճապակյա և ապակյա ամաններն ու բաժակները, որոնք մեծահարուստների կենցաղին բնորոշ սպասք էին, լայն գործածություն չունեին, իրենց թանկության պատճառով դանդաղ էին մուտք գործում միջին եկամուտներ ունեցող ալեքպոլցիների կենցաղ՝ հաճախ ոչ թե գործածության նպատակով, այլ միայն ցուցադրության:

Հացն ու հացամթերքները (ձավար, բլղուր, փոխինդ, էրիշտա և այլն) ալեքսանդրապոլցու կերակրացանկի հիմնական բաղադրիչներն էին, ուստի դրանց մշակումը, պատրաստումն

[1] *Ն. Նիկողոսյան, էջ 7364-7369:*

ու թխելը ևս մեծ արարողակարգ էր: Պատրաստությունն սկսվում էր ցորենի վերամշակումից: Ցորենը խաշվում, չորացվում էր, ապա տարվում ջրաղաց, որտեղ կեղևահանվում ու դրանից ձավար էր ծեծվում: Ուշ աշնանը թխում էին ձմռան հացը, որը հետո չորացնում ու շարում էին հացի համար նախատեսված հատուկ պահարանում կամ ջաֆարիկի վրա: Ալեքսանդրապոլում թխում էին տարբեր հացատեսակներ՝ *լավաշ, բոքոն, թափթափա, լոխում* (վերջինս շաղախվում էր կարագով և խըմորեղենի պարզունակ ձևն էր):

Բավականին աշխատատար էր էրիշտայի պատրաստումը, որի ժամանակ դրկից կամ ազգական կանայք ու աղջիկները միմյանց օգնում էին: Ալեքպոլում հաճախ փոխինդով խաշիլ են պատրաստել. այն գյուղական ուտեստ էր և շատ սիրված, քանի որ թե՛ սննդարար էր, թե՛ արագ պատրաստվող (*թաթարյա ճաշ*):[1] Ցորենից պատրաստում էին նաև *նիշաստա* (ածիկ). խիստ սննդարար կերակրի հավելուկ էր, որը օգտագործվում էր բուժիչ նպատակներով. տրվում էր *տուկատ* (թույլ-չաճող) երեխաներին կաթի հետ կամ կերակրի մեջ, ինչպես նաև օգտագործում էին ծերունական թուլության դեմ:

Ամենօրյա կերակրատեսակները շատ բազմազան էին՝ տարբեր տեսակի շիլաները, փլավներն ու ապուրները, որոնք կոչվում էին օգտագործվող սննդամթերքների անվանումներով՝ *ոսպով փլավ, բլղուրով փլավ, բրնձով փլավ, չորթանով փլավ, չրով թիրիթ, շաղգամով յայնի, կորկոտապուր, պոչով ապուր, թանով ապուր, հառլապուր* և այլն:

Առանձին խումբ են կազմում պասուց կերակուրները: Տապակած սիբեխի զոխը պասի օրերի ամենաընդունված կերակուրն էր. 4-5 զոխը թաթախում էին ալյուրի խյուսի մեջ, ապա տապակում ձեթով՝ ուժեղ կրակի վրա այնպես, որ երկու կողմերն էլ լավ կարմրեն: Այս կերակուրը գյումրեցիների մեջ հայտնի էր *պասուց ձուկ* անունով: Պատահական չէր, որ թթվի կարասները բացում էին Նոր տարուն և ուտում մինչև Զատիկ: Ժողովուրդն ասում էր. «Էլի էկավ վենձ պասը, բացե՛ք զոխի կարասը»:[2] Ծննդյան և Զատկի թաթախմանը բրնձով փլավի հետ անպայման տապակում էին կանաչ լոբի՝ վրան պաստեղով ձվածեղ: Ալեքսանդրապոլում, ի տարբերություն գյուղացիների, պասին, ձավարով տոլմայից բացի, պատրաստում էին նաև բրնձով տոլմա. սոխառածի հետ խառնում էին բրինձ, քիշմիշ, ծիրանի քաղցր չիր, լավ խառնելուց հետո փաթաթում թթու կաղամբի թերթերով, շարում պուտուկի մեջ, կրկնակի ծավալով ջուր լցնում և դնում բոցը մարած թոնրի մեջ: Պասուց կերակուրներ էին պոչով ապուրը (եփվում էր Մեծ պասի երկուշաբթի օրը, որը ուտելու համար հրավիրում էին մոտ հարազատներին), ավելուկով ու թելուկով աղցանները, խաշած կարտոֆիլը, կարմիր լոբին, բակլան, սիսեռը, որոնք մատուցում էին աղով, պղպեղով ու ծեթրոնով (ծիտրոն) համեմված:

Տոնական օրերին ալեքպոլցու հարգի կերակրատեսակներից էին *թաթար բորակին, տոլման, սաթրի քյուֆթան, քարի քյուֆթան, դազան խորովածը, թավա քիֆթասին, չանաղը, թավան, քյալլան* և այլն: Վերջին երեքը փըռում էին պատրաստվում և արհեստավորների շրջանում հարգի կերակուրներ էին: Ալեքսանդրապոլի տանտիկինները փռում էին եփել տալիս *գաթան, փախլավան, շաքարլոխումին, սհանչորակին* (բիսկվիթ): Փռում պատրաստվում ու տաք վիճակում վաճառվում էր *Գյումրվա յաղլին*՝ արդար յուղով պատրաստած ու երեսին շաքարի փոշի ցանած խմորաթերթիկը: Վաճառքի համար թխում էին նաև սպիտակ ալյուրով չորուկ:

Ծիսական կերակուրներն էին՝ Ամանորի պասուց տոլման, Կաղանդի գաթան (տարեհացը), տարբեր պատկերներով կարկանդակները, Ծննդյան տոնի հարիսան, Տերնդեզի *խե-*

[1] *Հ.Գյոլեցյան, նշվ. աշխ., էջ 38:*

[2] *Նույն տեղում, էջ 24:*

ձախը (աղանձ), Սբ Սարգսի փոխինդով խաշիլն ու կարկանդակները, Զատկի *ջեյեզով փիլլավը*, Սբ Խաչի քյաշքյան, Համբարձման կաթնապուրը, մատաղը, հոգեհացի խաշլաման, ատամհատիկը և այլն:

Ալեքպոլի քաղաքային կերակուրները տարբերվում էին որոշակի նրբաքիմք առանձնահատկություններով ու քաղցր ուտելիքների առատությամբ: Այդպիսիք էին քիշմիշով սոուսը, դդմով, քիշմիշով, մեղրով (կամ շաքարով) ճաշը, տապակած ծիրանի չիրը, ջեյեզով փլավը (քիշմիշով, ծիրանի, սև սալորի չրերով ու նշով), չորացրած սպիտակ թթով ձվածեղը, խուրմով ձվածեղը, պաստեղով ձվածեղը, ղայմաղը (մեղրուսեր), հասութան, զուրբիան: Խաղողի թփով տոլման նույնիսկ կերել են շաքարի փոշով ու դարչինով: Պայմանավորված քաղցր ու հարգի ճաշատեսակների առատությամբ՝ քաղաքում կային հատուկ նուբարեղենի խանութներ (Չանկի Խաչոյի, Քյանդարովենց), որտեղ բացառապես անուշեղեն և համեմունքներ էին վաճառվում:[1]

Ալեքսանդրապոլում ուտում էին օրը երեք անգամ՝ նախաճաշ, ճաշ և ընթրիք: Առավոտյան նախաճաշին անպայման թեյ էին խմում, ուտում հաց, պանիր, կարագ, խաշած ձու, եփում էին հասութա կամ փոխինդով խաշիլ, իսկ պաս օրերին՝ խաշած կարտոֆիլ, լոբի, երբեմն հալվա կամ գաթա: Թեյը մեծ մասամբ խմում էին կծովի, միայն շատ փոքր երեխայի և մեծ մամի թեյն էին քաղցր անում, որ «պզտիկը վենձնա, մամն էլ ղվաթից, ուժից չընկնի»:[2] Ճաշին ուտում էին վերը թվարկած բազմազան կերակուրները՝ փլավներ, շիլաներ, ապուրներ և այլն: Ընդ որում, տղամարդիկ հաճախ ճաշում էին աշխատավայրում: Ընթրիքին ուտում էին ճաշի ավելցուկը կամ պատրաստում էին սպաս, կաթնով: Սովորաբար ամռանը սննդի մեջ մեծ մաս էր կազմում կաթնամթերքը՝ կաթը, մածունը, սպասը և այլն:

Մինչև XIXդ. վերջը հացկերույթի ժամանակ խիստ պահպանվում էր սեռատարիքային հստակ բաժանումը: Նախ ուտում էին տղամարդիկ, ապա նոր՝ կանայք ու երեխաները: Ընդ որում, երիտասարդ հարսները նախ կերակրում էին երեխաներին, հետո իրենք ուտում: Նորահարսը նույնիսկ սկեսրոջ հետ հացի չէր նստում: XX դարասկզբից, փոքր ընտանիքների թվի աճման հետ կապված, նկատվում է միմյանցից առանձին հաց ուտելու սովորույթի վերացում: Խոսքը վերաբերում է ամենօրյա ընտանեկան հացկերույթին: Կանանց ու տղամարդկանց առանձին հաց ուտելու սովորույթը պահպանվեց շատ երկար (ընդհուպ մինչև XXդ. վերջ) ծիսական հացկերույթների ժամանակ՝ հոգեհացի, մատաղի արարողություններում:

Հատկանշական է, որ մինչև եվրոպական տիպի կահույքի մուտքը, նույնիսկ դրանից հետո, ուտում էին գետնին նստած՝ ընդհանուր մի ամանից: Պահպանվել է նման հացկերույթի նկարագրություն. «Հացկերույթը նահապետական էր և հետաքրքիր: Հինգ կամ վեց մարդ միասին մեկ ամանից էին կերակուր ուտում, և ավելի հետաքրքիր էր նրանց փլավ ուտելը. մի մեծ պղնձյա սինիով դնում էին առաջները, ուտում էին առանց հացի, ձեռքերը որքան վերցնում էր, տրորում էին սինիի վրա, լավ ամրացնում, որ հատիկները չթափվեն, թաթալոշ արած՝ քաշում էին բերանները»:[3]

Ինչպես ամենօրյա, այնպես էլ տոնածիսական հացկերույթի պարտադիր մասն էր կազմում խմիչքը: Ամանորի սիրված ըմպելիքը չրի կոմպոտն էր, որը մինչ օրս պահպանվել է ալեքպոլցիների կենցաղում: Ալեքսանդրապոլցի տղամարդկանց սիրած ալկոհոլային խմիչքը օղիներն (ռախի) էին, որոնցից առավել տարածված էին Զավախքից բերված *հացի ռախին* և Արարատյան դաշտավայրից ներմուծվող

[1] *Հ. Աղաբեկյան, Ակնարկ ալեքսանդրապոլցու կերակրացանկից, ՇՊՄԺ հանրապետական 2-րդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1998, էջ .43:*

[2] *Հ. Գյոլեցյան, նշվ. աշխ., էջ 54:*

[3] *Խայաթ Զահրիյան, էջ 8156:*

թրմօղիները՝ *խուժան արաղ*, առանց որի սեղան չէին նստում, ընդ որում, դրանք օգտագործվում էին ոչ միայն տանը, այլև դրսում:

XIXդ. երկրորդ կեսից լայն տարածում ստացավ գարեջուրը, և շատ շուտով այն իր հատուկ տեղը գրավեց ալեքպոլցի տղամարդկանց սննդակարգում: Քաղաքում մեծ թիվ էին կազմում պանդոկները, գինետները (միկիտան) և գարեջրատներն ու կրպակները, որտեղ արհեստավորները աշխատանքից հետո կամ ընդմիջմանը և տարբեր գործերով քաղաք եկած հյուրերը մի կտոր հաց էին ուտում, որը ուղեկցվում էր թունդ խմիչքների տարբեր չափաբաժիններով: Գինին այնքան էլ տարածված չէր, չնայած այն ևս դրվում էր սեղանին տարբեր տոների կամ ծիսական արարողությունների ժամանակ:

Քաղաքային կենցաղում լայնորեն տարածված էին սուրճը (սև սուրճին զուգահեռ նաև օգտագործում էին բռված-աղացած գարուց պատրաստված ըմպելիքը՝ *ղայֆան*) և թեյը, որոնցով հյուրասիրում էին հյուրերին ընտանեկան տոների ու արարողությունների ժամանակ: Տղամարդիկ սիրում էին սուրճ խըմել նաև սրճարաններում (*ղայֆախան)* և համքարական ակումբներում (*կլուբներ),* որտեղ զրուցում էին քաղաքականությունից, քաղաքի անցուդարձից, գործարքներ էին կնքում կամ, որն ավելի ընդունված էր, ունկնդրում էին հայտնի աշուղների երգերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ, ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դեռևս միջնադարում, հայկական արհեստավորաառևտրական խոշոր կենտրոններում (Անի, Դվին, Կարին, Վան և այլն) և գաղթօջախներում (Կ.Պոլիս, Թիֆլիս, Լվով, Նոր Ջուղա և այլք) ձևավորված արհեստավորական եղբայրությունների՝ համքարությունների հիմնական խնդիրն էր՝ կարգավորել քաղաքի բընակչության սոցիալական, տնտեսական և կենցաղային փոխհարաբերությունների ներդաշնակությունը: XIXդ. հայ խոշոր հետազոտողներից մեկը՝ Կազանի համալսարանի իրավագիտության պրոֆեսոր Սողոմոն Եղիազարյանցը,[1] ուսումնասիրելով Անդրկովկասի և ի մասնավորի՝ հայկական քաղաքների համքարական կառուցվածքը, հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում միջնադարյան եվրոպական «ցեխերի» և վերջիններիս միջև: Եղիազարյանցի կարծիքով, թե՛ արևմտյան և թե՛ արևելյան տիպի կորպորատիվ կառույցները տնտեսական բնույթի խնդիրներ լուծելուց զատ, ունեին սոցիալ-կարգավորող գործառույթներ, որոնք իրենց իրավական ձևակերպումն էին ստանում իշխանության բարձրագույն մարմինների կողմից հաստատված կանոնադրություններում: Եղիազարյանցն իրավամբ համքարությունները դիտում է որպես քաղաքային համայնքի հասարակական-սոցիալական կառուցվածքի ատաղձ, որի վրա կառուցվում էին ներքին և արտաքին կապերը: Այստեղ հարկ է նշել, որ հիշյալ կորպորատիվ կառույցների արտաքին կապերի (իշխանություն-համայնք) միջև կան էական տարբերություններ. դրանք Արևմուտքում և Արևելքում հողի սեփականության՝ միմյանցից տարբեր ձևերի գոյության արդյունք են: Եթե միջնադարյան եվրոպական արհեստավորաառևտրական նշանավոր քաղաքները որևէ մեծատունի՝ խոշոր ֆեոդալի սեփականությունն էին, և դրա բնակիչները համարվում էին սյուզերենի հպատակները (բացառություն էին կազմում ազատ քաղաքները), ապա Արևելքում դրությունն այլ էր: Այստեղ քաղաքները պետական, այսինքն՝ միապետի սեփականություն էին,իսկ բնակիչները պետության հպատակներ էին և հարկատու՝ պետական գանձարանին: Եվրոպական «ցեխերը», ելնելով իրենց համայնքի անդամների ենթակայությունից, հարաբերությունները կարգավորում էին ֆեոդալ-սյուզերենի հետ, իսկ արևելյան համքարականները նույն իրավահարաբերությունների մեջ էին թագավոր-պետության հետ: Ուշ միջնադարյան և նոր դարաշրջանի սկզբի հայ համքարությունների դեպքում գործ ունենք ոչ թե սեփական, այլ օտար (օսմանյան, պարսկական, լեհական, ռուսական և այլն) պետական կառույցներ-հայ համայնք փոխհարաբերությունների հետ: Վերը նշված բոլոր գործառույթներին հայ համքարությունների պարագայում ավելանում է մեկ այլ կարևոր «պարտականու-

[1] *С. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи. Организация и внутреннее управление закавказских амкарств, Казань, 1891.*

թյուն»՝ համայնքի պաշտպանությունը և նրա կենսապահովման երաշխավորումը:

Ձևավորվելով արևմտահայ արհեստավորաառևտրական կենտրոններից սերած գաղթականության հիմքի վրա՝ Ալեքսանդրապոլը ժառանգեց՝ դեռևս միջնադարից եկող այն բոլոր համքարային ավանդույթները, որոնք հատուկ էին Կարինին, Կարսին և Բայազետին: Սրանից էլ բխում էր այն հասարակական հարաբերությունների և հասարակական կառույցների բնույթը, որը հատուկ էր արևմտահայ դասական քաղաքային համայնքին. ներքին լայն ինքնավարություն, պետություն-հանրույթ միջնորդավորված կապեր, ինքնապաշտպանական ավանդական կառույցների վերապրուկներ (նկատի ունենք միջնադարում համքարություններին կից ձևավորված կիսառազմականացված «Կտրիճվորաց եղբայրությունների» հասակային խմբերը): Արևմտահայ ավանդույթով պայմանավորված՝ Ալեքսանդրապոլում արհեստավորական եղբայրությունները կոչվում էին էսնաֆություն, իսկ նրա անդամները՝ էսնաֆներ:

Անհրաժեշտ է նշել, որ XIXդ. վերջին երեսնամյակում իրականացվող տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումները ուղղակիորեն բախվում էին քաղաքային հասարակության կազմակերպման այնպիսի ավանդական կառույցների հետ, ինչպիսիք էին համքարությունները: Եթե XIXդ. առաջին կեսին նվաճված և յուրացվող Կովկասում ռուսական իշխանությունները հանդուրժողական և մինչև իսկ խրախուսական վերաբերմունք ունեին համքարությունների նկատմամբ, ապա դարավերջին իրադրությունը կտրուկ փոխվեց: Ռուսական իշխանությունները լռելյայն համաձայնություն էին կայացրել համքարային ավագանու հետ և քաղաքային ինքնակառավարման շատ ֆունկցիաներ հանձնել էին համքարականներին:[1] Օրինակ, ինչպես XVIIIդ., այնպես էլ XIXդ. ողջ ընթացքում Թիֆլիսի համքարություններն ու դրանց ավագանին էին որոշում քաղաքագլխի ընտրության հարցը, իսկ քանի որ համքարների մեծամասնությունը հայ էր, ապա սկզբում Արևելյան Քարթլիի թագավորը, այնուհետև նաև Կովկասի փոխարքան ստիպված էին այս պաշտոնում հաստատել բացառապես հայերին: Նման իրավիճակ էր տիրում նաև Երևանի նահանգի քաղաքներում և դրանցից ամենամեծում՝ Ալեքսանդրապոլում, որտեղ քաղաքային ողջ ինքնակառավարումը գտնվում էր էսնաֆների ձեռքում: Պետական իշխանությունները փորձում էին չըխառնվել քաղաքի հասարակության ներքին հարցերին՝ թողնելով վարչական բազմաթիվ գործառույթներ (վատորակ ապրանքի համար պատիժներ, արհեստավորների միջև ծագած վեճերի լուծում, զանցանքների քննություն և այլն) էսնաֆական ավագանու տրամադրության տակ: Մինչև Պ.Ստոլիպինի նախաձեռնած հողային ռեֆորմները (1907-1910-ական թթ.) գյուղական համայնքի կառավարումը ևս իրականացվում էր ներքին ինքնակառավարման ավանդական մարմինների միջոցով: Պետությունը նման պարագայում գործ ուներ ոչ թե որոշակի համայնքի անդամի կամ ընտանիքի հետ, այլ գյուղական ավագանու ղեկավարի՝գյուղավագի կամ գյուղապետի հետ, որն ընտրվում էր համայնքի ժողովում և հաստատվում դիստանցիայի պրիստավի կողմից: Հասարակական-քաղաքական նոր պայմաններում իրերի այսպիսի դասավորությունը թույլ չէր տալիս իշխանության կենտրոնական մարմիններին՝ Կովկասի փոխարքայությանը, ի մասնավորի Երևանի նահանգին, ոչ միայն խառնվել Ալեքսանդրապոլի ներքին ինքնակառավարման խնդիրներին, այլև կարգավորել արհեստագործական արտադրանքի իրացման և քաղաքի շուկայի վերահսկման խնդիրները:

Բոլոր ներքին իրավական և այլ կենսական կարևոր հասարակական խնդիրները կարգավորվում էին էսնաֆությունների Կանոնադրությամբ և սովորութային իրավունքի նորմերով:

[1] *Գ. Աղանյան, Մեկ անգամ ևս հայ համքարությունների շուրջ,ՇՊՄԺ հանրապետական V գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ,Գյումրի, 2002, էջ 32:*

Սկզբնական շրջանում նույնիսկ ռուսական իշխանությունները ձեռնպահ էին մնում և չէին խառնվում կամ միջամտում քաղաքի բնակչության ներհամայնքային գործերին (XIX դ. վերջերին, կապված Ռուսական կայսրությունում մունիցիպալ բարեփոխումների հետ,իրադրությունը քիչ փոխվեց): Համքարությունների ղեկավար կառույցներն ու համքարական ավագանին հանդես էին գալիս յուրահատուկ բուֆերի դերում՝ համայնքի և պետական-իշխանական կառույցների միջև: Էսնաֆությունները փորձում էին «մոտիկ չթողնել» իշխանական կառույցներին՝ միջամտելու հանրության ներքին կյանքին և ամեն կերպ հետ էին պահում իրենց անդամներին պետական մարմինների հետ ավելորդ «շփումներից»: Կորպորատիվ (մասնագիտական) և համայնքային շահերը դասվում էին ամեն ինչից վեր, և էսնաֆական ավագանին փորձում էր բոլոր ներքին հարցերն ու ծագած խնդիրները լուծել՝ ելնելով հանրության գրավոր և բանավոր իրավական նորմերից: Գլխավոր վարպետները *(ուստաբաշի*) և վարպետաց վարպետները (*ուստալար-ուստասի*) կարող էին պատժել վարպետներին և ենթավարպետներին այս կամ այն զանցանքի համար կամ էլ լուծել էսնաֆների միջև ծագած վեճերը՝ առանց պետական կառույցների միջամտության: Հասարակական կարգի և բարոյական նորմերի պահպանումը ևս այս կամ այն չափով առնչվում էին համքարություններին՝ դրանով ինչ-որ տեղ թեթևացնելով պետական մարմինների հոգսը: Այսպես, XIXդ. վերջին և XXդ. սկզբին այն ժամանակների համար բավական մեծ՝ 30 հազարանոց Ալեքսանդրապոլում ծառայում և հասարակական կարգն էին պահպանում մեկ տասնյակից մի փոքր ավել ժանդարմներ և ոստիկաններ:

Ալեքսանդրապոլի էսնաֆություններն իրականացնում էին համատեղ տնտեսավարման (մեծածախ գներով հումքի համատեղ հայթայթում, գնային քաղաքականության համատեղ կարգավորում և այլն), փոխօգնության և համայնքին զանազան եղանակներով օգտակար լինելու բազմաթիվ գործառույթներ: Յուրաքանչյուր էսնաֆ պետք է հոգ տաներ իր արհեստակցի մասին, եթե նա որևէ հանգամանքի բերումով ծանր վիճակի մեջ էր ընկել (արհեստավորին կարող էին տրամադրել հումք, դրամական օգնություն, պատվեր և այլն, և բնավ էլ պարտադիր չէր, որ օգնողի կամ օգնողների անունը բացահայտվեր): Էսնաֆների խնդիրն էր նաև բարոյական և ավանդութային նորմերից շեղված արհեստակիցներին *դուզ* (ուղիղ) ճանապարհին վերադարձնելը: Եթե որևէ էսնաֆ չարաշահում էր խմիչքը, կասկածվում էր ընտանեկան դավաճանության մեջ, իր եկամուտներին ոչ հարիր շվայտություն էր ցուցաբերում, կռվարար էր ու խառնակիչ կամ էլ ցածրորակ ապրանք էր տալիս գնորդին, ապա արհեստակից ընկերներն սկզբում նրան հանդիմանում էին, բարեկամաբար խորհուրդներ էին տալիս, և եթե դա էլ չէր օգնում, դիմում էին ամենախիստ միջոցի՝ էսնաֆին «*յոլ սուզ*» էին անում (զրկում էին վարպետի պատվաշնորհից):Ճյուղային էսնաֆության *իգիթբաշին* (կատարածուն)՝ կատարելով համքարային ժողովի կամ ուստաբաշու հրահանգը, հանրության ներկայությամբ հանում էր *յոլ սուզ* արված արհեստավորի գոգնոցը և կախում նրա կրպակի դռանը: Այդ վարպետի կյանքը քաղաքում ընդմիշտ վերածվում էր դժոխքի, և նա նույնիսկ կարող էր հեռանալ համայնքից:

Քաղաքի համար կենսական և հոգևորմշակութային նշանակություն ունեցող բոլոր ձեռնարկումներում, մինչև XXդ. սկիզբը, որպես հիմնական դերակատար, հանդես էին գալիս էսնաֆությունները: Դա եկեղեցիների, հասարակական շինությունների կառուցումն էր, որտեղ էսնաֆներն առանց բացառության աշխատում էին անվճար, քանի որ այս աշխատանքներին մասնակցելը դիտվում էր որպես մի տեսակ մատաղ կամ զոհաբերություն (հին քաղաքային ավանդույթներ ունեցող շատ երկրներում ևս այս աշխատանքները հանրային կեցության ձևերից էին, որոնք, օրինակ, հին հույների շրջանում հայտնի էին «լիտուրգիա»

անվամբ, որը հայերեն թարգմանվում է պատարագ՝ զոհաբերություն):

Համքարությունների սոցիոնորմատիվ գործառույթները հատկապես հստակ են արտահայտվում քաղաքային համայնքի ներսում՝ սեռատարիքային հարաբերությունների մակարդակում: Համաձայն համքարային Կանոնադրության՝ այդ կազմակերպությունների լիիրավ անդամներ էին տղամարդ վարպետներն ու ենթավարպետները, սակայն իրականում, սովորութային բանավոր իրավունքի մակարդակում, դրանց մեջ ներգրավված էին նաև նրանց կանայք և երեխաները: Քաղաքի սոցիոնորմատիվ մշակույթում հատուկ տեղ էր հատկացվում կնոջը: Վարպետի կինը ամուսնու մահից հետո և անչափահաս զավակներ ունենալու դեպքում լիակատար իրավունք ուներ տնօրինելու ամուսնու արհեստանոցը կամ կրպակը (վաճառել, վարձով տալ և այլն)՝ նախապես ստանալով ճյուղային համքարության գլխավոր վարպետի համաձայնությունը: Հանգուցյալ վարպետների երեխաները շրջապատված էին հատուկ հոգատարությամբ և ճյուղային համքարությունները, ի հաշիվ իրենց գանձարանի, հոգում էին որբերի կրթության և հետագա ճակատագրի մասին: Համքարական գանձարանից միջոցներ էին տրամադրվում նաև որբ աղջիկների օժիտը պատրաստելու համար: XXդ. սկզբին Ալեքսանդրապոլում համքարությունների միջոցներով կառուցվեցին և պահվում էին երկու սեռերի համար ուսումնական հաստատություններ, որտեղ ոչ լրիվ միջնակարգ կրթության հետ պատանիներն ու աղջիկները հմտանում էին արհեստների մեջ: Հարկ է նշել, որ այս ուսումնական հաստատություններում սովորողների գերակշիռ մասը քաղաքային համայնքի քիչ ապահով ընտանիքներից էին. այս հարցում ևս համքարությունները ամբողջովին իրականացնում էին իրենց սոցիոնորմավորող գործառույթները: Ալեքսանդրապոլի էսնաֆությունների միջոցներով 1860-1896թթ. ընթացքում քաղաքում գործում էր նաև աղքատանոց, որը հետագայում անցավ քաղաքային Դումայի հոգածության ներքո:

XIXդ. վերջի և XXդ. սկզբի համառուսաստանյան լիբերալ բարեփոխումների արդյունքում համքարությունների սոցիոնորմատիվ և կարգավորող գործառույթները զգալիորեն նվազեցին, սակայն մեծ թվով կորպորատիվ ավանդույթներ շարունակեցին կենցաղավարել ընդհուպ մինչև խորհրդային կարգերի հաստատումը և դրանից հետո: Նոր իշխանությունների ջանքերի շնորհիվ ալեքսանդրապոլյան համքարային ավանդույթներն ու համայնքի կառավարման ավանդական միջոցները XX դ. 30-ական թթ. սկզբներին համարյա ամբողջովին արմատախիլ արվեցին:

ԱԼԵՔՊՈԼՅԱՆ ԷՍՆԱՖՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ. ՀԱՄՔԱՐԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳ

Ալեքսանդրապոլի էսնաֆությունների թիվը XIXդ. անցնում էր երեսունից, իսկ համքարային հարաբերությունների շրջանակում ներառված էր արհեստավորա-առևտրական քաղաքի գրեթե ողջ բնակչությունը:[1]

Էսնաֆությունները նորաստեղծ Ալեքսանդրապոլում պահպանեցին իրենց ավանդական ներքին կառուցվածքը և ողջ ծիսակարգը, որոնք ձևավորվել և սրբագործվել էին դարերի ընթացքում: 1840-ական թթ. սկզբին Թիֆլիսի գլխավոր վարչությունը հաստատեց Ալեքսանդրապոլի էսնաֆական օրինակելի Կանոնադրությունը (սրանից ելնելով՝ տարբեր ճյուղային եղբայրություններ ստեղծեցին սեփական կանոնադրական փաստաթղթերը) և մինչև երկրի խորհրդայնացումը այն չնչին փոփոխություններով կիրառվեց որպես իրավական նորմատիվ փաստաթուղթ:

[1] *Գ. Աղանյան, Ալեքսանդրապոլի էսնաֆությունները..., էջ 50:*

Էսնաֆական աստիճանակարգն ուներ հետևյալ պատկերը՝ աշակերտ (տեղական բարբառով՝ *աշկերտ*), ենթավարպետ (*խալֆա*),

№	Համքարության անվանումը	անդամների թիվը (վարպետ, ենթավարպետ, աշակերտ)
1	Ատթարներ (մանրավաճառներ)	150
2	Մրգավաճառներ	120
3	Մաշկակարներ	218
4	Խանութպաններ	100
5	Պարանագործներ	45
6	Տրեզագործներ	46
7	Կառապաններ (ֆայտոնջի)	19
8	Քարտաշ-որմնադիրներ (յափուջի)	100
9	Կղմինդրագործներ	12
10	Կաշեգործներ	46
11	Կտոր և թել ներկողներ (շիլաջի)	18
12	Դարբիններ (դամրջի)	247
13	Մսագործներ (ղասաբ)	116
14	Պղնձագործներ և կլայեկողներ (ղալայջի)	124
15	Ջինագործներ	40
16	Հյուսներ (ղուրգյար)	23
17	Ատաղձագործներ	150
18	Սղոցարարներ (խզարջի)	44
19	Պայտարներ (նալբանդ)	117
20	Ասիական և եվրոպական դերձակներ	222
21	Կոշկակարներ	100
22	Ոսկերիչ-արծաթագործներ (ղույումջի)	63
23	Փականագործներ (չիլինգար)	45
24	Բամբակագործներ և սանձ պատրաստողներ	59
25	Ծխախոտագործներ (թութունջի)	168
26	Ղայթան գործողներ (ղայթանջի)	218
27	Ջուլհակներ	90
28	Գլխարկ կարողներ	65
29	Գզրարներ (հալաջի)	9
30	Հացթուխներ (աքմակջի)	71
31	Բաղնիսպաններ	16
32	Ջուռնաչիներ (չալղջի)	23
33	Վառարանագործներ	11
34	Կապույտ գույնով ներկողներ (բոյաջի)	58
35	Մարկիտաններ	89
36	Վարսավիրներ (դալլաք)	120

վարպետ (*ուստա)*, արհեստավորական որոշակի շարքի (*չարուի*) ավագ վարպետ (*քեշա* կամ *քյոշա ուստասի*), գլխավոր վարպետ (*ուստաբաշի)* և վերջապես՝ վարպետաց վարպետ (*ուստալար-ուստասի)*:

Էսնաֆների միջև խստորեն պահպանվում էին ավագության սկզբունքը և փոխադարձ հարգանքի մթնոլորտը: Մեկ աստիճանից մյուսին անցումը ինիցիացիոն (ձոնման) ծեսերի կիսաթատերականացված շարք էր, որտեղ յուրաքանչյուր մասնակից ուներ իր դերակատարումը և մասնակցության աստիճանը: Քաղաքային կենսաձևին բնորոշ այս ծիսաշարքում իբրև վերապրուկ պահպանվել էին հնուց եկող հասակային և սոցիալ-մասնագիտական խմբերի անցումային ձևերն ու դրանց սոցիալականացման եղանակները: Էսնաֆական աստիճանակարգի յուրաքանչյուր փուլի հաղթահարումը նշանակում էր նաև հասնել քաղաքային համայնքում որոշակի սոցիալական սանդղակի: Բոլոր ենթավարպետների ու վարպետների շրջանում տարածված էր «*եղբար*» դիմելաձևը, որը ևս միջնադարյան եղբայրություններից մնացած ավանդույթ էր և կորպորացիայի անդամության հստակ ցուցիչ: Հին համքարականների շրջանում պահպանվել էր նաև, այսպես կոչված, «ծտի լեզուն»՝ արհեստավորական ծածկալեզվի մի տեսակ, որին տիրապետում էին միայն վարպետության աստիճան ունեցողներն ու համքարային ավագանին: Ավելի ուշ շրջանում ծածկալեզուն կամաց-կամաց մոռացվեց, և արդեն XXդ. սկզբներին դրան տիրապետում էին շատ քչերը: Այս ավանդույթը մինչ այժմ էլ պահպանվել է «ռաբիս» երաժիշտների շրջանում, «սարթերեն» այսինքն՝ թարսերեն (շրջախոսություն) անվամբ, որը ծածկալեզվի պարզունակ տարբերակ է միայն. օր. «խարեբ նաջ»՝ «ախպեր ջան», «լաչել»՝ «չալել», «ղոփ»՝ «փող», «սոխել»՝ «խոսել» և այլն:

Արհեստավորական եղբայրության առաջին աստիճանը աշակերտության համակարգն էր: Ճյուղային յուրաքանչյուր էսնաֆություն սահմանում էր աշակերտության որոշակի ժամանակահատված՝ ելնելով արհեստին տիրապետելու դժվարության աստիճանից: Երբ ծնողը պատանուն բերում էր վարպետի մոտ՝ «աշկերտության», ասում էր. «Օսկոռը քեզի, միսը ընձի, դուն իրան նայե քու զավակի պես». և վարպետը, համաձայն Կանոնական նորմի, պարտավոր էր խոստանալ, որ աշկերտին չի տարբերի իր հարազատ զավակներից և նրան «փեշակ» (արհեստ) կսովորեցնի: Վարպետը սկզբում ստուգում էր, թե որքան ուշիմ (ֆայմով) էր ապագա աշկերտը, և եթե հետագայում նա սովորելու ձգտում չէր ցուցաբերում, ապա հեռացվում էր արհեստանոցից:* Աշկերտները սկզբնական տարիներին ոչ միայն արհեստ էին սովորում, այլև վարպետի տանը զանազան կենցաղային հանձնարարություններ էին կատարում (օրինակ՝ վարպետի երեխաներին ամեն շաբաթ ուղեկցում էին բաղնիք): Վարպետը պարտավոր էր աշկերտին *շագիրդանե*[1] (աշակերտավարձ) վճարել, որը կուտակվում էր հետագայում՝ ենթավարպետ ձեռնադրվելիս զանազան ծախսերը հոգալու համար: Աշակերտի համար վարպետը նաև դաստիարակ էր. նա խրատներ էր տալիս, մատնանշում էր քրիստոնեին վայել ճշմարիտ ուղին, սովորեցնում էր պապերի նիստուկացը և ծանոթացնում էսնաֆական ավանդույթներին: Կարգազանց աշակերտներին վարպետը կարող էր հանդիմանել, *ուստի սիլա* (ապտակ) տալ (հարկ է նշել, որ էսնաֆական շրջանակներում

---

* *Աշակերտի ուշիմության ստուգման հետաքրքիր եղանակ էին կիրառում դարբինները: Հացի սեղանի մոտ նստած վարպետը ուղարկում էր նորաթուխ աշակերտին ջուր բերելու, երբ սա վերադառնում էր՝ երկաթյա բաժակի ունկը (կանթը) բռնած, ապա վարպետը լուռ ու մունջ վերցնում էր բաժակը «անֆայմի» (ոչ ուշիմի) ձեռքից, թափում էր ջուրը և բաժակին ամրացնում էր նոր կանթ՝ նորից ջրի ուղարկելով: Երբ «անֆայմ»-ը վերադառնում էր արդեն երկու կանթը բռնած, ապա վարպետը սրան վոնդում էր՝ բացատրելով, որ կանթը իր համար է խփված, քանզի իր ձեռքերը մրոտ են և կարող են մրոտել բաժակի շուրթը. տե՛ս Կ.Սեղբոսյան, Արհեստավորական ավանդույթները…, էջ 195:*

[1] *Գ. Աղանյան, Ալեքսանդրապոլի էսնաֆությունները..., էջ 53:*

չէին խրախուսվում մարմնական պատիժները, և հին վարպետները համոզված էին, որ «Մէ լեղի խոսքը հազար հատ սիլա արժէ»), կամ վռնդել արհեստանոցից: Դաստիարակության յուրօրինակ ձև էր հանդիսանում հիշոց-հայհոյանքը, որն աշակերտը պետք է ընդուներ որպես *օրշնանք* (օրհնանք):

Էսնաֆական հաջորդ աստիճանը ենթավարպետն էր, որին անվանում էին «խալֆա» կամ «կես ուստա»: Երբ աշկերտության շրջանն ավարտվում էր, վարպետի առաջարկով տվյալ էսնաֆության մի քանի վարպետ և ուստաբաշին որոշակի ծիսական արարողություններ իրականացնելուց հետո նախկին աշակերտին խալֆայության աստիճան էին տալիս: Ապագա ենթավարպետը կամ նրա ծնողները պարտավոր էին *խալֆայացու հախ* (վճար) տալ վարպետին, սեղան գցել և թաշկինակներ նվիրել ուստաբաշուն, իգիթբաշուն և իր վարպետին: Խալֆայի կատարած ինքնուրույն աշխատանքը զննելուց հետո ուստաբաշին դիմում էր հավաքված վարպետներին՝ «Ուստե՛ք, իսիգ կոնա՞ խալֆա էղնի», և ստանալով դրական պատասխան՝ ասում էր. «Էս տղի մեղքը ձեր վիզը»: Սրանից հետո խալֆան մի երկու *ուստի սիլա* էր ստանում իր վարպետից և լսում էր հետևյալ ուսանելի բարեմաղթանքը.«Չտեսածդ չվկայես, չլսածդ չխոսիս, չդրածդ չվերցնես, մեր փիրի անեծքին ենթարկվիս, թե էս պատվիրանները չկատարես»: Նորընծա ենթավարպետներից շատերը շարունակում էին աշխատել իրենց վարպետի արհեստանոցում, կամ էլ եթե վարպետը ցանկություն և օգնություն էր ցուցաբերում, կարող էր բացել սեփական կըրպակը: Այսպիսի օգնություն ցուցաբերած վարպետները մեծ հարգանք էին վայելում քաղաքում, ուստի վարպետն ինչքան շատ խալֆա էր պատրաստել, այնքան մեծ էր նրա հեղինակությունը: Օգնություն ստացած խալֆաներին Ալեքսանդրապոլում անվանում էին *չրաղ* (ճրագ), քանի որ արհեստանոց և գործիքներ տրամադրած վարպետը, մտնելով նորաբաց կրպակը, մոմ կամ ճրագ էր վառում օջախին: Խալֆաները կամ կես ուստաները մասնակցում էին էսնաֆական ժողովներին և նրանց կողմից իրականացվող միջոցառումներին, սակայն մինչև վարպետ դառնալը չէին համարվում էսնաֆության լիիրավ անդամներ:[1]

Վարպետները էսնաֆության լիիրավ անդամ էին և քաղաքում մեծ հարգանք էին վայելում: Խալֆայից ուստա դառնալու գործընթացը ևս ուղեկցվում էր հատուկ ծիսական արարողություններով և պարտադիր գործողություններով: Վարպետացուի ուսուցիչ ուստան էսնաֆության վարչական մարմնին կամ ժողովին էր ներկայացնում թեկնածուին՝ թվելով նրա բոլոր արժանիքները: Վարպետացուի աշխատանքին հավանություն տալուց հետո ուստաբաշին նշանակում էր ձեռնադրության օրը և տեղը: Վարպետ ձեռնադրելու համար կարևոր պայման էր համարվում նաև թեկնածուի տարիքը, քանի որ հարիր ու վայել չէր անբեղանմորուս մեկին հավասարների շարքը դասելը: Բնության գրկում՝ որևէ տեղ դաշտում, ավանդական կերուխումի վայրերում (XIXդ. երկրորդ կեսից հիմնականում հավաքվում էին Քյանդարովենց այգում), տվյալ էսնաֆության ուստաբաշու գլխավորությամբ հավաքվում էին վարպետները և նստում ըստ կարգի: Ուսուցչի հարցին, թե՝ «Դու ի՞նչ կըսես», վարպետացուն, ցույց տալով վարպետներին, պատասխանում էր. «Կամքը ինոնցն է»: Վարպետների համաձայնությունը ստանալուց հետո ուստաբաշին թաշկինակ կամ փուշի (քող) էր գցում վարպետացուի գլխին, իսկ ուսուցիչ-վարպետը, ի նշան *օրթաղության* (գործակցության, հավասար իրավունքներ ստանալու), ձախ ձեռքով գրկում է նրա պարանոցը: Ծեսին ներկա գտնվող քահանան «Մաշտոց»-ից աշակերտ ձեռնադրվելու հատվածն էր կարդում: Ուստաբաշին, նախօրոք հեռացնելով երիտասարդ էսնաֆներին, օծյալ վարպետի ականջին շշնջում էր հետևյալ ծածկագիր-բանաձևը. «Օր

[1] *Գ. Աղանյան, Ալեքսանդրապոլի էսնաֆությունները, էջ 53:*

կհարցնեն ուրտեղ ես օծվել, կըսես օր ձեռնադրվել եմ քաղաքը, կապուտ գմբեթի տակ, կանանչ խալու վրա»:[1] Այնուհետև ուստաբաշին հայրական խրատ էր կարդում, ուսուցիչ-վարպետը *ուստա սիլասի (*ապտակ) էր տալիս, իսկ վարպետացուն որպես *հախ* ՝ ներկաներին նվիրում էր խալաթ, փուշի արխալուղ, թաշկինակ, և սկսվում էր խնջույքը: Ձեռնադրված նորաթուխ վարպետը կարող էր *«օրթախությամբ»* (կիսովի) աշխատել իր ուսուցիչ-վարպետի հետ կամ էլ բացել սեփական գործը: Վարպետը էսնաֆության լիիրավ անդամ էր և մինչ իր մահը օգտվում էր այն բոլոր արտոնություններից և իրավունքներից, որոնք բխում էին իր բարձր կարգավիճակից:

Ալեքսանդրապոլում անընդհատ ընդլայնվում էին քաղաքի գործարար հատվածն ու շուկան, ուստի նոր առաջացած արհեստավորական շարքերը կառավարելու նպատակով ստեղծվում է *քյոշա ուստասիի* պաշտոնը (այն բացակայում է արևելահայ մյուս համքարություններում), որը հաշվետու էր ճյուղային էսնաֆության ղեկավարության առջև և կարգավորում էր տվյալ տարածքում աշխատող արհեստավորների միջև հարաբերությունները:

Ճյուղային համքարության գլուխ կանգնած էր ուստաբաշին, որը պետք է լիներ հմուտ, առաքինի և պատվարժան վարպետ: Ուստաբաշու հեղինակությունը չափազանց մեծ էր էսնաֆների և քաղաքային հասարակության շրջանում: Նա էր հարթում էսնաֆների միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները, պատժում կարգազանցներին, կազմակերպում կարիքավորների օգնությունը, հոգ տանում որբերի և այրիների մասին. նա էր կապող օղակը իշխանությունների և իրեն ենթակա էսնաֆների միջև և այլն:[2]

Ալեքսանդրապոլի ուստաբաշիներն իրենցից ընտրում էին վարպետաց վարպետին, որի գործառույթներն ավելի շատ ներկայացուցչական էին:

Էսնաֆական կառավարման կառույցը ներկայացնում էին մի քանի պաշտոնյաներ՝ *ուստաբաշին, աղսախկալները* (օգնականներ), *խազնադարը* (գանձապահ) և *իգիթբաշին* (կատարածու): Այս պաշտոնյաներին ընտրում էր ճյուղային էսնաֆության ժողովը, և վարչական մարմինն ստանում էր լայն լիազորություններ:

Ալեքսանդրապոլի յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր հովանավոր սուրբը[3] կամ սուրբ նախահայրը (փիրը), որի պատկերը նկարված էր էսնաֆական դրոշին: Հայր Հովսեփը հյուսների հովանավորն էր, Դավիթ մարգարեն՝ դարբինների, Աբելը՝ քարտաշ որմնադիրների, Հաբեթի որդի Թոբելը՝ պայտագործների, Սբ Հովհան Օձնեցին՝ զինագործների, Սբ Կարապետը՝ երաժիշտների և այլն: Փիրերի անվանակոչության և տաղավար տոների օրերին էսնաֆության անդամները խաչվառներով և դրոշներով հանդիսավոր ծիսական երթեր էին կազմակերպում, համայնական (ախարի) մատաղ էին մատուցում, ուխտի էին գնում համապատասխան սուրբ նախահայրերին նվիրված սրբավայրերը: Ալեքսանդրապոլցի արհեստավորները երդվում կամ էլ նզովում էին *փիրաց-վարպետաց* անունով: [4]

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Գավառային քաղաքի իրավունքներ ունեցող Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի ղեկավարումը 1840-1870թթ. իրականացվում էր գավառապետի կողմից: 1870թ. այստեղ ստեղծվեց վարչակառավարական և պատժիչ գործառույթներով գավառային ոստիկանական վարչություն, որն իրավասու էր կա-

[1] *Գ. Սեղբոսյան, նշվ. աշխ., էջ 197:*

[2] *Գ. Աղանյան, Ալեքսանդրապոլի էսնաֆությունները..., էջ 54:*

[3] *Գ.Աղանյան, Երկաթագործական արհեստները հովանավորող պատրոն-փիրերի համակարգը, ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ,Գյումրի, 2000, էջ 38-39:*

[4] *Նույնը:*

տարել նաև քրեական գործերի և քաղաքացիական հարցերի քննություններ:

1892թ. ցարական կառավարությունը հրատարակեց համապետական քաղաքային կանոնադրություն: Ալեքսանդրապոլում այն կիրառվեց 1896 թ.-ից: Նոր կանոնադրությամբ սահմանվում էին քաղաքային ինքնավարության ոչ դասային երեք օրգաններ՝ ընտրական ժողով, դումա և վարչություն:

Քաղաքային ընտրական ժողովը գումարվում էր միայն քաղաքային դումա ընտրելու համար՝ 4 տարին մեկ անգամ: Քաղաքային ինքնավարության օրգանների մեջ դուման համարվում էր կարգադիր օրգան: Նրա անդամները կոչվում էին *ձայնավորներ*: Քաղաքային դումայի ընտրություններին մասնակցելու համար սահմանված էր հատուկ կարգ. օրինակ՝ 1896թ. Ալեքսանդրապոլի քաղաքային ընտրական ժողովին մասնակցած 621 մարդուց ընտրվել էր դումայի 35 ձայնավոր և 8 թեկնածու: Դուման հիմնականում զբաղվում էր վարչաֆինանսական և տնտեսական նեղ հարցերով: Նրա գործառույթների մեջ էին մտնում պաշտոնական անձանց և քաղաքային վարչության ընտրությունների անցկացումը (փակ, գաղտնի քվեարկությամբ), քաղաքային ինքնավարական օրգանների պաշտոնյաների ու աշխատակիցների աշխատավարձերի, քաղաքային հարկերի ու տուրքերի նշանակումը, քաղաքի անունից փոխառությունների ու այլ պարտավորությունների մասին եղած առաջարկներին ընթացք տալը, քաղաքային ծախսերի և եկամուտների նախահաշիվների հաստատումը, կատարողական օրգանի՝ քաղաքային վարչության գործունեության ղեկավարումը և այլն: Դումայի նիստերին նախագահում էր քաղաքագլուխը: 1892թ. քաղաքային նոր կանոնադրությունը, զգալիորեն սահմանափակելով դումայի իրավունքները, փոխարենը որոշ անկախություն տվեց քաղաքագլխին: Վերջինս, որ միաժամանակ համարվում էր քաղաքային վարչության նախագահ, իրավունք էր ստանում, սեփական հայեցողությամբ, դումայի օրակարգից հանել յուրաքանչյուր հարց: Վարչությունը քաղաքային ինքնավարության գլխավոր գործադիր օրգանն էր և, քաղաքագլխից զատ, ուներ ևս երկու անդամ՝ ընտրված դումայի կողմից չորս տարի ժամկետով: Այն ղեկավարվում էր գոյություն ունեցող պետական օրենքներով ու կարգադրություններով, ինչպես նաև դումայի՝ ներքին օրենքի ուժ ստացած որոշումներով: Վարչության հիմնական պարտականությունն էր քաղաքային տնտեսության և ներքին կյանքի կառավարումը: Քաղաքային դումայի նման, վարչությունը ևս գտնվում էր պետական օրգանների հսկողության տակ: Օրինակ, եթե քաղաքային վարչությունը դումայի որևէ կարգադրություն համարում էր գոյություն ունեցող պետական օրենքներին հակասող, ապա գործը հանձնվում էր նահանգապետին՝ քաղաքային գործերի նահանգային ատյանում այդ մասին համապատասխան որոշում կայացնելու համար:Քաղաքային վարչության երկու անդամներից մեկը, որը համարվում էր նաև քաղաքագլխի տեղակալ, վերջինիս բացակայության դեպքում փոխարինում էր նրան և վարում վարչության գրասենյակային գործերը: Վարչության մյուս անդամն զբաղվում էր արտագրասենյակային գործերով: Քաղաքային վարչությունում, բացառությամբ քաղաքագլխի և վարչության անդամների առօրյա կարգադրությունների, մյուս բոլոր հարցերը լուծվում էին նիստերով՝ ձայների մեծամասնության սկզբունքով: Ինչպես դումայում, այնպես էլ քաղաքային վարչությունում, վերջին խոսքը մնում էր քաղաքագլխին, որի անհամաձայնության դեպքում վարչության մյուս երկու անդամները որոշում ընդունել չէին կարող:

Քաղաքային ինքնավարության բոլոր ընտրովի պաշտոնյաները դիտվում էին որպես պետական աստիճանավորներ, ենթարկվում էին պետական կարգապահական ընդհանուր օրենքներին և պարտավոր էին իրենց գործունեության ամբողջ ընթացքում օգտագործել քաղաքային գերբի ատրիբուտները կրող կնիք:

1900թ. վերջերին քաղաքային վարչությունն առաջարկեց Ալեքսանդրապոլի նոր զինանշանի նախագիծ: 1901թ. հունվարի 16-ին քաղաքային դուման հավանություն տվեց զինանշանի նախագծին: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվում պահպանվել է այդ զինանշանի նկարագիրը. կանաչ քառամաս վահան, որի վերևի աջ մասում արծաթազօծ Արարատն է՝ ոսկեզօծ տապանով: Ներքևի աջ մասում ոսկե ծառ է, վերևի ձախ մասում՝ Երևանի նահանգի զինանշանը: Ներքևի ձախ մասում հրանոթ է՝ ոսկե հրետասայլով ու անիվներով: Վահանը զարդարված է կայսերական թագով և Անդրեևյան ժապավենով: Նոր զինանշանի գլխավոր արժեքն այն էր, որ կազմվել էր տեղում, և հեղինակները նրանում կարողացել էին արտահայտել Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի նոր յուրահատկությունները: Զինանշանը զուգորդում էր պատերազմից հետո ծնված և խաղաղության հարկն իմացող քաղաքի հատկանիշները: Նրա վրա պատկերված լայնասաղարթ ծառը, նշանավորելով կյանքն ի հակակշիռ մահվան, միաժամանակ վկայում էր ալեքսանդրապոլցիների զբաղմունքի մասին, իսկ ծառի վերևում նոյյան տապանով Մասիսն էր, որ խորհրդանշում էր հայ ժողովրդի ազգային լավատեսության ու հավերժության ակունքները:

Հերալդիկայի ցարական դեպարտամենտը չհաստատեց Ալեքսանդրապոլի նոր գերբի նախագիծը և իր պատասխանի մեջ՝ թվագրված 1903թ. հունիսի 22-ով, Ալեքսանդրապոլի քաղաքային իշխանություններին պարտադրեց «ավելորդ ինքնագլխությամբ զբաղվելու փոխարեն գործածել 1843թ. հաստատված զինանշանը»:

XIX դարավերջին ցարական կառավարության վարած հետադիմական քաղաքականությունը խիստ սեղմեց քաղաքային ինքնավարության իրավունքներն ու գործունեության շրջանակները: 1892թ. կանոնադրությամբ մնացել էր քաղաքային ինքնավարության միայն անունը: Կորցնելով ինքնուրույնությունը՝ քաղաքային ինքնավար մարմինները կախման մեջ դրվեցին պետական օրգաններից այն չափով, որ նույնիսկ ամենաանշան հարցերը լուծելիս մի քայլ անգամ չէին կարող անել առանց նահանգապետի կամ Ներքին գործերի նախարարության թույլտվության:

ԱԼԵՔՊՈԼՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԸ

Ալեքպոլցու ընկալմամբ ընտանիքը սրբագործված, «դրսի աչքից» ու միջամտությունից զերծ մի տարածք էր:

Ալեքսանդրապոլի քաղաքային ընտանիքը փոքր էր՝ բաղկացած երկու կամ երեք սերընդի ներկայացուցիչներից (ծնողները, զավակները, եթե նրանք ամուսնացած էին, նաև՝ նրանց ընտանիքները): Սակայն կային նաև մեծ ընտանիքներ, որտեղ մեկ հարկի տակ ապրում էին տան ղեկավարի ընտանիքի անդամներից բացի նաև եղբայրներն իրենց ընտանիքներով: XIX դ. վերջից գնալով մեծ ընտանիքների թիվը պակասում է, ինչը պայմանավորված էր ընտանիքում արևմտյան ներընտանեկան հարաբերությունների արմատավորմամբ:

Ընտանիքի ողջ շարժական ու անշարժ գույքի սեփականությունը տնօրինում էր տան ղեկավարը՝ տղամարդը, բացառությամբ անձնական օգտագործման իրերից՝ հագուստ, զարդեր, աշխատանքային գործիքներ: Անձնական սեփականություն էր նաև հարսների օժիտը: Ընտանիքի ընդհանուր սեփականության իրավունքը ժառանգվում էր հորից ավագ որդուն: Եթե ընտանիքը մեծանալով բաժանվում էր, ապա հայրը՝ որպես տան ղեկավար և միանձնյա սեփականատեր, ինքն էր որոշում յուրաքանչյուր որդու չափաբաժինն ընդհանուրից, ընդ որում, եթե տանը կային նաև աղջիկներ, ապա առանձնացվում էր նրանց օժիտը, նոր մնացածից կատարվում մասնատումը: Սովորաբար ծնողները մնում էին փոքր որդու հետ՝ գտնելով, որ նա, լինելով անփորձ,

իրենց խորհրդի ու աջակցության կարիքն ավելի ունի:

Ավանդական ընտանիքի ղեկավարը, անկախ դրա անդամների թվից, տան տարիքով մեծ տղամարդն էր *(հաջի աղան)*, որին անվերապահորեն լսում ու ենթարկվում էին բոլորը: Նրա օգնականն ու խորհրդատուն կինն էր (*խանում-աբլա*), որի վրա էին դրված տան ներքին խնդիրների կարգավորումն ու վերահսկողությունը: Ներընտանեկան հարաբերությունները, որտեղ ամենակարևորը երկու սեռերի փոխհարաբերություններն էին ու ավագության կարգը, կառուցված էին փոխադարձ հարգանքի ու հնազանդության վրա:Կին-տղամարդ, ավագ-կրտսեր կապն ու հարաբերությունները, ինչպես նաև բարոյական նորմերի պահպանումը նահապետական ընտանիքում խիստ կանոնակարգված էին և գտնվում էին տանտիկնոջ՝ մեծ մոր անմիջական իրավասության ներքո:

Ընդհանրապես ընտանիքը ալեքպոլցու համար սրբություն էր, ուստի տղամարդու կարևորագույն գործառույթն ընտանիքի անդամներին նյութապես ապահովելն էր: Պատվախնդիր ալեքպոլցի տղամարդու համար շատ ամոթ ու անպատվաբեր էր ապրել կնոջ, հարսի կամ աղջկա աշխատած փողով: Կինը սովորաբար չէր աշխատում, բացառությամբ այրիներից, որոնք ստիպված էին միայնակ հոգալ զավակների ապրուստը և զբաղվում էին լվացարարությամբ, հաց թխելով, ջուր կրելով և այլն: XIXդ. վերջերին միայն թույլատրվեց կանանց աշխատել, այն էլ բացառապես որպես կարուձևի վարպետ կամ ուսուցչուհի: Ավանդական, ասիական տիպի փակ հասարակությունում,ինչպիսին հայկականն էր, ամուսնու կողմից կնոջ նկատմամբ որոշակի վերաբերմունք է եղել. նրա մասին դրսում չխոսել, անունով չդիմել, չգովել, երբեմն նաև հայհոյել, սակայն դա չի նշանակում, որ կանանց դերը նսեմացված էր: Կինը համարվում էր ամուսնու, ընտանիքի պատիվը, ուստի անպատվություն է եղել կնոջը ծեծելը, հատկապես ծնողների ներկայությամբ: Տեղի ու անտեղի կնոջը ծեծողին ասել են. «Հա՛ն գլխարկդ, ծեծե՛, ծեծե՛, հետև դի՛ր գլխիդ, ի՛նչ օգուտ ըդորից»: Հասարակությունը դատապարտել է նաև կնոջը կամ աղջկան «չափից դուրս» ազատություն տվող տղամարդուն:[1]

Ալեքպոլցի հարսները չխոսկան էին, սկեսրանց ընտանիքի տղամարդկանց և մեծերի հետ չէին խոսում, եթե չիքիլայով (քողով) երեսը ծածկված չէր, ապա բերանները փակում էին գլխաշորի (փուշի կամ շալովի) ծայրով: Խոսելու իրավունք ստանում էին մի քանի տարի հետո, երբ ծնվում էին երեխաները, ընդորում սկզբում խոսում էին կանանց, հետո տղամարդկանց հետ: Խոսելու թույլտվություն նրանք ստանում էին սկեսուրից նրա կողմից որևէ նվեր ստանալուց հետո: Այն կոչվում էր *բերանբացեք*: Հարսը սկեսրայրի հետ չխոսկան էր մնում շատ երկար ժամանակ, երբեմն մինչև մահ: Ավելի խիստ էր արգելանքը քավորի հետ հարաբերություններում, քանի որ հարսը ոչ միայն մինչև կյանքի վերջ, քավորի պատիվը պահելով, մնում էր նրա հետ չխոսկան, այլև խուսափում էր վերջինիս հետ հանդիպելուց:

Սկեսրայրի հետ հարսները իրավունք չունեին նստելու, ուտելու, առավել ևս նրանց ներկայությամբ պառկելու: Նորահարսները պառկում էին քնելու վերջում, նախապես օգնում էին սկեսրայրին ու սկեսրոջը հագուստները հանել, դրանք դասավորել անկողնու մոտ, ծածկել նրանց մեջքերը, նոր պառկել՝ ստանալով քնելու թույլտվություն: Հարսները սկեսուրներին դիմում էին *անա, քաջան*, ավելի ուշ՝ *մայրիկ*, իսկ սկեսրայրներին՝ *աղա-հայրիկ* բառերով, մեծահասակ կանանց՝ *խաթուն, քալա, աբլա, բաջի*, ավելի երիտասարդներին՝ *հարսաբլա, հարսխանում*, չամուսնացած աղջիկներին՝ *քույրիկ*, մեծահասակ տղամարդկանց՝ *ամի, տացու, ապեր, ախպար*, իսկ ավելի ուշ՝ *եղբար, աղա ախպեր* անուններով: Երիտասարդ հարսներն ու աղջիկները թե՛

[1] *Կ. Սեղբոսյան, նշվ. աշխ., էջ 237:*

տանը, թե՛ դրսում պետք է լինեին զուսպ, որովհետև մեծերի ներկայությամբ բարձրաձայն խոսելն ու ծիծաղելը անվայել էին համարվում: Ընդհանրապես աղջկա դաստիարակությամբ զբաղվում էր մայրը, որը պատասխանատու էր նրա հետագա վարքուբարքի, նիստուկացի համար: Եթե հարսը իրեն համապատասխան ձևով չէր պահում կամ որևէ շնորքով աչքի չէր ընկնում, դատապարտում էին նրա մորը, որ «աղջկան շենք ու շնորք չի սորվեցրե»:[1]

Ալեքսանդրապոլում, ինչպես և ողջ Հայաստանում, կարևորվում էր աղջկան՝ մանուկ հասակից ամուսնությանը նախապատրաստելը: Մայրը հետևում էր, որ նա ծույլ չլինի, լինի մաքրասեր, տնարար, գործունյա: 5-6 տարեկանից սովորեցնում էին տան գործերին, ապա հյուսքին ու կարուձևին, իսկ 13-15 տարեկանում անցնում էին ավելի բարդ աշխատանքներ կատարելուն՝ լվացք անել, արդուկել, ինչպես նաև սովորեցնում ձեռագործ անել, որի հմտություններին տիրապետելը հատկապես գնահատվում էր հարսնացու ընտրելիս: Այդ էր պատճառը, որ XIXդ. երկրորդ կեսից քաղաքում բացված իգական դպրոցներում պարտադիր առարկա էր ձեռագործը: Սակայն, քանի որ ոչ բոլորի աղջիկներն էին գնում դպրոց, ուստի մեծ թիվ էին կազմում տնային վարժարանները, որտեղ ուսուցիչների դերում հանդես էին գալիս վարպետ ասեղնագործուհիներն ու դերձակուհիները: Այդ գիտելիքներին տիրապետելն անհրաժեշտ էր, քանի աղջիկն անձամբ պիտի պատրաստեր օժիտի մեջ մտնող և նվերների համար նախատեսված զանազան հագուստի մասերն ու կենցաղային տարբեր առարկաները: Դրանք, ի դեպ, գեղեցիկ զարդարվում էին ասեղնագործությամբ ու ժանյակով:

Ինչ վերաբերում էր տղաներին, ապա քիչ թե շատ ունևորները ձգտում էին իրենց զավակներին նախ գրագիտություն սովորեցնել, որը մինչև XIXդ. կեսերն իրականացվում էին եկեղեցիներին կից խալֆայական դպրոցներում, որտեղ քահանաները երեխաներին գրել-կարդալ էին սովորեցնում, իսկ դարի երկրորդ կեսից, երբ բացվեցին արական դպրոցները, գիմնազիաները և ուսումնարանները, սկսեցին ուղարկել այնտեղ: Միայն շատ հարուստներն էին ի վիճակի իրենց երեխաներին ուղարկել կրթությունը շարունակելու Ռուսաստանում կամ Եվրոպայում, իսկ մնացածը, հատկապես արհեստավորները, նախընտրում էին իրենց զավակներին արհեստի տալ: Արհեստավորական ավանդույթներով հարուստ քաղաքում լավ վարպետ արհեստավորը պակաս պատիվ ու հարգանք չուներ: Բացի այդ, ավանդաբար, հայրերն իրենց արհեստի հմտությունները նախ և առաջ սովորեցնում էին իրենց ժառանգներին, հետո՝ ուրիշների, որ իրենց տոհմի ավանդույթները պահպանվեն:

Ամուսնություն և հարսանիք. Հայրական իրավունքի վրա հիմնված ավանդական ընտանիքում, ինչպիսին ալեքսանդրապոլյան ընտանիքն էր, երիտասարդների ընտրությամբ ամուսնությունը չնայած խստիվ սահմանափակված էր, սակայն այդօրինակ ամուսնությունը ևս չէր բացառվում: Երիտասարդների փոխադարձ ճանաչման և ընտրության համար կարևոր դեր էին խաղում հարևանական կապերը, հարսանեկան ծեսերը, ժողովրդական տոներն իրենց ծիսակատարություններով ու խաղերով, ուխտագնացությունները և այլն: Նման պարագաներում նրանք հնարավորություն ունեին միմյանց հետ շփվելու, իրար ճանաչելու և ընտրություն կատարելու: Ընտրությանը հետևում էին միջնորդությունները, և այն իրականանում էր ծնողների հավանությանն արժանանալուց հետո միայն: Այս ամենով հանդերձ՝ զավակների ամուսնության հարցի լուծումը ծնողներին էր վերապահված:

Ամուսնության թույլատրելի տարիքը աղջիկների համար սահմանված էր 13-15 տարեկան, իսկ տղաների համար՝ 15-20: XIXդ. վեր-

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 48:*

ջերից այդ սահմանը մի փոքր փոփոխության ենթարկվեց՝ կապված բնակչության գրագիտության բարձրացման, տղաների մասնագիտական գործունեության, ինչպես նաև սոցիալական վիճակի հետ: Այդ էր պատճառը, որ երիտասարդների մի մասը ամուսնանում էր բավականին ուշ՝ 30 և ավելի տարեկան հասակում այն դեպքում, երբ աղջիկների ամուսնական տարիքը չէր անցնում 20-ից (դրանից մեծ տարիք ունեցող աղջիկը համարվում էր տանը մնացած), ինչի հետևանքով ամուսինների միջև տարիքային տարբերությունը կազմում էր 15-20 տարի:

Ալեքպոլցին շատ բծախնդրությամբ ու մանրակրկիտ էր մոտենում տղայի կամ աղջկա ամուսնությանը, ուստի հարսնացու ընտրելիս (ավանդաբար տղայի կողմին էր վերապահված նախաձեռնությունը) հաշվի էին առնում բազմաթիվ հանգամանքներ: Նախ՝ուշիուշով ստուգվում էր ազգակցության աստիճանը՝ մինչև յոթ պորտ, քանի որ մերձավոր ազգականների ամուսնությունը արգելված էր, ապա՝ դավանանքը, որովհետև խնամիական կապերը հայ առաքելականների ու հայ կաթոլիկների միջև չէին խրախուսվում, այնուհետև սոցիալական դրությունը՝ ձգտելով եթե ոչ նույն, ապա գոնե իրենց հավասար կարողության տեր ընտանիքի հետ բարեկամանալ. փնտրում էին նաև գրավիչ արտաքինով, առողջ, շնորհքով ու այլ բարեմասնություններով օժտված աղջիկ: Կարևոր էր համարվում հատկապես հավանական հարսնացուի մոր գործոնը, և պատահական չէր, որ ալեքպոլցիների շրջանում բավական արմատացած մի բանաձև էր գործում. «Մորը աշե, աղջկան ուզե»: Այսինքն՝ ապագա հարսնացուի մոր և մայրական կողմի բարեմասնությունները կամ թերությունները կարող էին վճռորոշ դերակատարություն ունենալ նոր ընտանիքի ձևավորման գործում: Եթե նախապես աչքի տակ համապատասխան թեկնածու չունեին, ապա անցնում էին աղջիկտեսի:[1]

Աղջիկ տեսնելը[2]. Աղջիկ տեսնելը սովորաբար կազմակերպվում էր գարնանից մինչև աշուն:Տղայի մոտիկ հարազատներից 3-5 փորձառու, տարբեր տարիքի, տոնական հագնված կանայք գնում էին աղջկա տուն՝ ծանոթանալու: Եթե նախապես հարսնացուն որոշված չէր, կամ կոնկրետ աղջկա հասցե չունեին, ապա պտտվում էին քաղաքի թաղերով ու հարցնում, թե ո՛ր տանը հասած աղջիկ կա: Հարևանները սիրով պատասխանում, երբեմն էլ առաջնորդում էին նրանց տուն՝ աղջկա տիրոջը շուտափույթ նախազգուշացնելով խնամախոսների գալստյան մասին: Վերջինները, տուն մտնելով, ուշիուշով զննում էին տան շեմից մինչև հյուրասենյակ՝ փորձելով բաց չթողնել ոչ մի մանրամասն, որովհետև տան ներքին հարդարմամբ ու մաքրությամբ գաղափար էին կազմում մոր, աղջկա և ընդհանրապես տվյալ ընտանիքի մասին: Հյուրասենյակում հանդիսավորությամբ նստած խնամախոսները սպասում են աղջկան «առաջ բերելուն», որը կատարում էր տան հարսը: Գեղեցիկ ու նոր շոր հագած հարսնացուն մոտենում էր հյուրերին, համբուրում նրանց ձեռքերը և գլուխը կախ՝ սպասում կարգադրության: Խնամիները նրանից ջուր էին ուզում՝ քայլվածքը, մատուցելու շնորհքը գնահատելու համար: Աղջիկն անխոս, դանդաղ քայլերով գնում էր և սկուտեղով քաղցրավենիքի հետ բաժակով կամ ջրամանով (մուշուրբա) ջուր հրամցնում նրանց: Եթե աղջիկը կամ տունը դուր չէր գալիս, խնամախոսներն անմիջապես, առանց ջուրը խմելու և քաղցրավենիքը ճաշակելու, վեր էին կենում ու լուռ գնում: Այսպես աղջիկ տեսնելը կարող էր տևել մինչև 1-2 տարի:

Եթե աղջիկը դուր էր գալիս, ապա նրանք սկսում էին մանրամասն ծանոթանալ նրա ազգուտակի, ընտանիքի նիստուկացի, բնավորու-

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 53:*
[2] *Լ. Աթանեսյան, նույն տեղում, հավելված նկ. 5:*

թյան, տնտեսական վիճակի և այլնի մասին: Մի խոսքով, կարևորում էին դաստիարակությունը՝ ասելով՝ «թող հարսը նամուսով, վենձի (մեծի) ու պզտըկի հարգն իմացող, պատվով, շնորքով, ղոչախ էղնի, քիչմ էլ չիրքին (տգեղ) էղնի, վնաս չունի, սիրուն երեսին փլավ չեն ուտե»: Երբ երկար-բարակ խորհրդակցելուց հետո որոշում են այդ աղջկան ուզել, նորից նույն խմբով գնում էին աղջկա տուն և աղջկա մորը հայտնում իրենց նպատակի մասին. նրանք միաժամանակ տեղեկություններ էին հայտնում իրենց ընտանիքի ու տղայի մասին և սպասում պատասխանի: Պատասխանը բավականին ձգձգվում էր, քանի որ աղջկա ընտանիքն էլ իր հերթին էր սկսում հետաքրքրվել փեսացուի ազգի, ընտանիքի ու ծնողների մասին: Եթե համաձայնվում էին առաջարկին, ապա խնամիների հետ պայմանավորվում էին, թե երբ են գալու խոսք առնելու:

Խոսք առնելը. Եթե երկու կողմերն էլ համամիտ էին, և որևէ խանգարող հանգամանք չկար, տղայի հայրը, հորեղբայրը, քեռին, երբեմն նաև ուստան (եթե տղան արհեստ էր սովորում) հավաքվում էին սրճարանում, որտեղ հրավիրվում էին նաև աղջկա հարազատները: Այստեղ բոլորի ներկայությամբ տղայի կողմի ներկայացուցիչները օղիով (մեկ-մեկ գավաթ) *աչքալուսանք* էին խմում, որով խնամիությունը հաստատվում էր, այնուհետև շարունակում էին իրենց կերուխումը: Դրանից հետո թույլ էին տալիս տղային ու աղջկան իրար տեսնել: Նախօրոք պայմանավորված ժամին աղջիկն իր հարազատներից մեկի հետ կանգնում էր եկեղեցու դռանը, տղան անցնում էր եկեղեցու մոտով ու տեսնում աղջկան: Խոսք առնելուց հետո արդեն տղայի բարեկամները գնում են աղջկա տուն, որոշում նշանդրեքի (*հարսնատես)* օրը:

Նշանդրեք. Նշանդրեքի նախապատրաստությունը մեծ իրարանցում էր առաջացնում աղջկա տանը: Պատրաստվում էին, որքան հնարավոր է, լավ ընդունել խնամիներին, բծախնդրությամբ մաքրում ու կարգի էին բերում տունը, աղջկա համար նոր զգեստ (*հարսնատեսի դայրա)* էին կարել տալիս, հրավիրում էին հարևան ու բարեկամ կանանց՝ կերակուրներն ու թխվածքները պատրաստելու համար: Ձրգտում էին առատ ու հարուստ տեսականիով ուտեստ հյուրասիրել խնամիներին, որ ծաղրի առարկա չդառնան:

Կանայք ու տղամարդիկ առանձին սենյակներում էին նստում ու հյուրասիրվում: Սեղանը պատրաստում էին նախքան խնամիների գալը: Կանանց նախ հյուրասիրում էին թեյով (անպայման կիտրոնով), մուրաբայով, կոնֆետներով ու թխվածքներով. Գյումրու ավանդական գաթա, շաքարլոխում, սհանչորակի և այլն, հետո նոր ընթրիքի սեղան էին բացում:

Նախ խնամիներին, ապա հարազատներին տեղավորելուց հետո, մինչև կերուխումը, մեծ շուքով հարսին բերում էին սենյակ. փեսային տանում հարսի մոտ, ապա նվագով ու երգով առաջ բերում: Քահանան մոտենում էր նրանց, շարականներ էր երգում, ապա փեսային առաջարկում էր մատանին հագցնել հարսնացուի մատին, որից հետո արդեն նշանը համարվում էր պաշտոնական: Դրանից հետո նշանվածներին տանում էին տղամարդկանց սենյակն ու կանգնեցնում սեղանի վերին գլուխը՝ սկեսրայրի կողքին (եթե սկեսրայր չունի՝ մեծ տեգրոջ կամ ամենահարգված տարիքավոր բարեկամի): Սեղանի կառավարիչը կարգադրում էր խմել *թաժա ծաղիկների* կենացն ու բարեմաղթություններ անել՝ խաղաղ, երջանիկ, սաղջան, համերաշխ կյանք, ցանկանում «սաղ ըլին, բարով վայելին, հեչ գեշ օր չտեսնին, օխտը որդով սեղան նստին, մե բարձի ծերանան, միշտ ուրախ սեղաններ ունենան» և այլն:

Նշանվածների կենացից հետո խմում են նրանց ծնողների կենացը, այնուհետև հերթականությամբ ներկաներինը: Մի քանի կարևոր կենացներից հետո հարսին տանում են կանանց սենյակ, որտեղ նա նստում էր սկեսրոջ կողքին, բայց չէր մասնակցում հյուրասիրությանը, քանի որ դա անպատշաճ էր համար-

վում: Փեսան ևս հարսի գնալուց հետո նստում էր քավորի մոտ և մասնակցում կերուխումին՝ միայն խիստ զուսպ ու ծանր:

Լուսադեմին սեղանը կամաց-կամաց փոքրացնում էին՝ թողնելով մի սեղան, կանայք միանում էին, ու սկսվում էին պարերը. նախ՝ մեկ կամ երկու հոգով, ապա բռնում էին շուրջպարը: Երբ լույսը բացվում էր, անկախ նրանից ամառ է, թե ձմեռ՝ անպայման դուրս էին գալիս բակ կամ փողոց (եթե բակ չունեին), նվագել էին տալիս ու երգում «Առավոտ լուսո»-ն: Դրանից հետո բոլոր հյուրերը գնում էին, միայն փեսային աներանք պահում էին, որ մոտիկից ծանոթանան, իսկ նշանվածներին առանձին էին թողնում, որ իրար հետ խոսեն, իրար հասկանան:

Տոներին փեսայի ընտանիքի կանայք այցելում էին իրենց հարսնացուին և, եթե աղջկա ծնողները համաձայնվում էին, նրան մի քանի օրով իրենց տուն էին տանում, միասին գնում ուխտ կամ մոտակա սրբավայրերը: Յուրաքանչյուր այցելության ժամանակ տղայի բարեկամները հարսին որևէ նվեր էին տանում, գերազանցապես ոսկեղեն կամ արծաթեղեն՝ աշխատելով մինչև հարսանիք հարսի զարդարանքը լրացնել: Հարսին տալիս էին ամուսնական մատանի (*կալցո*), *բեյի մատնիքը* ՝անպայման թանկարժեք քարերով (*բախչալի*), *փերուշան* (մարգարտաշար), եթե ունևոր էին՝ նաև ժամացույց: Մնացած զարդերը տալիս էին հարսանիքին: Աղջկա կողմի բարեկամները նվիրում էին օժիտի պակաս մասերը՝ ամեն կերպ աշխատելով լրացնել տարիների ընթացքում հավաքած օժիտը:

Փեսատես. Հարսնտես-նշանդրեքից հետո տղայի կողմը, եթե հնարավորություն ուներ, հարսի հարազատներին հրավիրում էր իրենց տուն: Թե՛ հարսնտեսը, թե՛ փեսատեսը բարեկամներին փոխադարձ ճանաչելու ու մտերմանալու, երկկողմանի կապն ամրապնդելու միջոց էր: Աղջկա հարազատները անպայման կառքով էին գնում փեսայի տուն՝ տանելով նրա համար պատրաստված նվերները. դրանք դնում էին սինիների մեջ կամ կապում թանկարժեք կտորից կարված կապոցով (*բոխչա*): Այստեղ ևս, ինչպես հարսնտեսին, առատ կերուխում ու խնջույք էր կազմակերպվում:

Խոսք կտրել (քյասաբիչա). Խոսք կտրելը հարսանիքի օրն ու պայմանները որոշելու ծեսն էր: Փեսայի հայրն իր մի քանի հարգված ու տարիքավոր հարազատների հետ գնում էր հարսի տուն՝ որոշելու հարսանիքի օրն ու հարսնառի մասնակիցների թիվը, օժիտը տանելու օրն ու այն բերողների (*ջհեզվոր*) թիվը: Սովորաբար աղջկա կողմը զիջում էր խնամիներին ու համաձայնում նրանց առաջարկներին: Այս արարողությանը, որի ժամանակ ևս հյուրասիրություն էր լինում,պարտադիր մասնակցում էին հարսնացուի հորեղբայրներն ու քեռիները, որոնց կարծիքը հաշվի էր առնվում բանակցությունների ժամանակ:

Հարսանիք. Խոսք կտրելուց հետո երկու կողմի ընտանիքներն սկսում են պատրաստությունները, որի ժամանակ նրանց օգնում են մոտ հարազատներն ու հարևանները: Աշխատանքների ողջ ընթացքն ուղեկցվում էր ուրախ զրույցներով, կատակներով, երգերով ու պարերով: Նախօրոք թխում էին հացը, պատրաստում էին գաթան, որն ուղարկվում էր փռում եփելու:Նախքան հարսանիքը՝ մեկ կամ երկու օր առաջ, կազմակերպում էին հարսնաբաղնիքն ու փեսաբաղնիքը, քանի որ երկու նորապսակները պետք է մաքուր մտնեին նոր կյանք:

Փեսաբաղնիքի ծեսը կատարվում էր քավորի առաջնորդությամբ, տղայի երիտասարդ ազգականների ու ընկերների մասնակցությամբ՝ ուղեկցվելով երգով ու պարով: Նախօրոք բաղնիքում պատվիրում էին առանձին տեղ, վերցնում էին ուտելիք ու խմիչք, ինչպես նաև փեսայի նոր ներքնաշորերը, որ նախապես ուղարկում էին աներանք: Բաղնիքում էր կատարվում նորափեսայի նաև սափրվելու արարողությունը, քանի որ նախքան ամուսնա-

նալը (եթե փեսան տարիքով չէր), սովորության համաձայն, սափրվելու իրավունք չուներ: Ամբողջ ծախսը իր վրա էր վերցնում քավորը, որը դրանից հետո այդ ընտանիքի ամենապատվավոր ու հարգարժան բարեկամն էր դառնում:

Շատ հանդիսավոր էր անցնում նաև հարսնաբաղնիքը, որը կազմակերպվում էր հարսանիքից 2-3 օր առաջ: Այս դեպքում ևս հարսի մայրը և մոտ հարազատները նախապես հանդերձարանում ու լողասենյակում ամենահարմար տեղերը պահել էին տալիս և հանդիսավորությամբ ներս մտնում: Նախքան լողանալը հանդերձարանի նստարանի վրա սփռոց էին փռում, վրան շարում հետները վերցրած ուտելիքը և սկսում նախաճաշը. հրավիրվում էին մասնակցելու նաև բաղնիքի աշխատողներն ու ներկաները: Կերուխումի ընթացքում կատակում էին, միմյանց բարեմաղթանքներ հղում, մի խոսքով՝ ուրախանում: Նախաճաշից հետո նոր սկսում էին լողանալ, ընդ որում բոլոր հարազատները ցանկանում էին իրենք լողացնել հարսնացուին: Բաղնիքից հետո պարտադիր ֆայտոնով էին վերադառնում տուն, որտեղ դարձյալ սեղան էր բացվում կանանց համար:

Օժիտը. Հարսանիքի նախորդ օրը, համաձայն ավանդույթի, ուղարկում էին օժիտը: Հարսի մայրը հրավիրում էր հարևան ու բարեկամ կանանց և աղջիկներին, մեկ առ մեկ ցույց էր տալիս արդեն պատրաստի օժիտը՝ սկսած ամենամանր իրերից մինչև խոշորները: Միջին կարողությունների տեր ընտանիքում որպես օժիտ տալիս էին բրդից անկողին (վերմակ ու ներքնակ՝ 20կգ-ից ոչ պակաս), փետուրից բարձեր՝ մետաքսյա (քաշանի) կամ բրդյա ծաղկավոր երեսներով, 2 մութաքա, 2-3 թախտի բարձ՝ թավշյա, ասեղնագործ երեսներով, սպիտակեղեն, սրբիչներ, ներքնազգեստ, թաշկինակներ (6 կամ 12 ձեռք)՝ բոլորը ժանեկազարդ և ասեղնագործված, բրդյա ու մետաքսյա կտորներ, շրջազգեստներ ու վերարկու՝ բոլորովին նոր, բամբակից կամ բրդից գուլպաներ՝ նախատեսված ոչ միայն հագնելու, այլև նվերների համար, ինչպես նաև գորգ կամ կարպետ, սպիտակեղենի դարակներով պահարան (կոմոդ): Բացի այս, տալիս էին նաև բաղնիքի պիտույքների համալիր, որի մեջ մտնում էին գըլխին ջուր լցնելու պղնձյա թասը (*եղակ*), նալիկները և երկու բոխչա՝ մետաքսից (հագուստի համար) ու սպիտակ բամբակյա կտորից (սպիտակեղենի համար) իրենց պարագաներով:

Օժիտի հետ դնում էին մեծ քանակությամբ նվերներ՝ վերնաշապիկներ, գուլպաներ, երեսսրբիչներ, թաշկինակներ, գլխի շալե ծածկոցներ և այլն, որոնք նախատեսված էին սկեսրանց ընտանիքի անդամներին նվիրելու համար:

Օժիտը ցուցադրելուց հետո հարսներից մեկ-երկուսը (առավել շնորհքովները) պահարանի (*կոմոդ*) դարակներում խնամքով դասավորում էին իրերը, փակում ու բանալիներն ուղարկում սկեսրոջը: Հարսանիքի նախորդ կամ նույն օրվա ցերեկը գեղեցիկ, կարմիր կառքեր էին բերում և օժիտը դասավորում դրանց մեջ. մեկում միայն կոմոդը, իսկ մյուսում՝ անկողինը (այնպես որ անպայման երևար անկողնու երեսը), գորգը կամ կարպետը, բարձերն ու մութաքաները: Յուրաքանչյուր կառքի երկու կողմում՝ ոտնատեղին, կանգնում էին 12-14 տարեկան տղաներ, իսկ ավելի մեծին՝ մոտ 16 տարեկան տղայի, հանձնարարում էին օժիտն անփորձանք տեղ հասցնել: Երբ օժիտի կառքերը դանդաղ, հանդիսավոր երթով հասնում էին փեսայի փողոցը, հարևանները ուրախ դիմավորում ու լուր էին տալիս փեսայի տանը՝ *ջհեզը բերին* կանչելով: Փեսայի տանից դուրս էին գալիս, կառքերը բեռնաթափում և մեծ զգուշությամբ տանում տուն, որ ոչինչ չկոտրվի: Փողով ու քաղցրեղենով վարձատրում էին օժիտը բերող տղաներին, իսկ կառապաններին օղի էին հյուրասիրում ու բաց թողնում:

Փեսայի մայրը նույն օրը, իսկ ընդհանրապես հարսանիքից մեկ-երկու օր հետո, հրավիրում էր իր մոտիկ հարազատներին ու հարևաններին՝ հարսի օժիտը ցուցադրելու: Ներկաները գովում էին հարսի մոր առատա-

ձեռնությունը, ճաշակը, կարողների ու ասեղնագործողների ձեռքի շնորհքը, հիացմունք արտահայտում ու բարեմաղթություններ անում՝ «բարով, ուրախութենով հագնին, էս բերածը հին էղնի, հազարը՝ թաժա, էդ լավ շորերու մեջ հարսը ղոչ մանչ բերե» և այլն:

Հարսանեկան արարողակարգ. Հարսանիքները մեծ մասամբ կատարվում էին ձմռանը, շաբաթ օրը՝ երեկոյից մինչև լույս, շատ դեպքերում՝ նաև կիրակի ցերեկը: Հարսանիքի մասնակիցները՝ ազգականներն ու հրավիրյալները, հավաքվում էին վաղ առավոտից: Հրավերը կատարվում էր բանավոր, մինչև XIXդ. վերջերը. դրանից հետո ներմուծվեցին հարսանեկան հրավիրատոմսերը, որոնք տպագրվում էին տեղի տպարաններում: Հյուրերի հավաքվելուն պես երաժիշտները (չալղըջիք) սկսում էին նվագել, երգել ու ուրախացնել ներկաներին: Սովորության համաձայն՝ կանայք ու տղամարդիկ առանձին սենյակներում էին նստում, որտեղ նրանց համար արդեն պատրաստ էին ուտելիքներով լի սեղանները: Հացկերույթն սկսվում էր, ըստ սովորույթի, օրհնություններով ու բարեմաղթություններով, որից հետո ազաբները քավորի ղեկավարությամբ երգով ու նվագով անցնում էին փեսային շոր հագցնելու հանդիսավոր արարողությանը:

Փեսայի հարսանեկան հագուստը ձևվածքով չէր տարբերվում ավանդական տարազից, միայն նոր էր և թանկարժեք կտորներից կարված: Վերցնելով փեսայի հագուստի որևէ մաս և ցույց տալով շրջապատողներին՝ քավորը բարձր ձայնով ասում էր՝ «Տեսե՛ք՝ մեր թագվորն ինչ ունի», բոլորը բացականչում էին՝ «ի՞նչ ունի», քավորը պատասխանում էր՝ «Շապիկ, բամբակը բերած է Հնդստանից, թելը մանած է Մոսկովում, փաթուսխեն գործած է Մորոզովի ֆաբրիկայում, կարված է Թիֆլիզում. ասենք շնորհավոր»: Հանդիսականները կանչում էին՝ շնորհավոր, իսկ երաժիշտները երգում էին. «Ասենք շնորհավոր, ասենք շնորհավոր, մեր թագվորի շապիկը շնորհավոր»: Նույնը կրկնվում էր արխալուղը հագցնելիս, այս դեպքում ասվում էր. «Լավ դոշով արխալուղ, խաս լաստիկից, Ջահրոնց ուստա Մուկուչի կարած», և երգում էին. «Հա՛յ նազերով, նազերով, սանթուրներով, սազերով, ընկերների խոսքերով հագցրեք, հա՛յ, հագցրեք, չգիտե, հասկացրեք»:[1] Այսպես, յուրաքանչյուր զգեստ գովելով, հագցնում էին փեսային: Ջահելները փորձում էին գողանալ շորերից որևէ մեկը, որպեսզի քավորը իրենց նվեր խոստանա, իսկ քավորն իր հերթին աշխատում էր թարս հագցնել, որ ուրախ ու զվարճալի անցնի այդ արարողությունը: Հագնվելուց հետո փեսայի մայրը որդու ուսին գցում էր կանաչ *կոսպանդը*՝ մի մեծ քառակուսի գործվածք, որը կապվում էր թևատակին:

Ցերեկը *հարսնառը* (հարսին բերողներ) փեսայի, քավորի, ազաբբաշու ուղեկցությամբ մի քանի կառքերով շարժվում էին հարսի տուն: Հատկապես գեղեցիկ էր զարդարվում նորապսակների կառքը՝ լավ ծածկոցներով, ձիերի գլուխներին անցկացված զանգակներով և այլն: Երբ բավականաչափ մոտենում էին խնամոնց տանը, փեսայի բարեկամներից 12-14 տարեկան մի տղա՝ *հարսանքի աղվեսը*, վազելով գնում էր հարսի տուն՝ հայտնելով, որ հարսնառն եկավ: Հարսի հայրը շտապում էր խնամիներին դիմավորելու, որոնց տեղ հասնելուն պես սկսվում էին նվագը, երգն ու պարը: Հարսի մայրը փեսայի մյուս ուսից, խաչաձևելով կանաչ կոսպանդը, կապում էր կարմիրը: Այդպիսով, երկու ծնողները ապահովում էին իրենց նորապսակների պայծառ ու ծաղկուն ապագան, քանի որ կանաչ-կարմիր գույները հայոց մեջ խորհրդանշում են կյանքի հարատևությունն ու սերնդաշարունակությունը, որի վառ օրինակն է հայոց մեջ տարածված «Բարով կանաչ-կարմիրդ կապեմ» օրհնանք-մաղթանքը:[2]

---

[1] *Խ. Ջահրիյան, էջ 8074:*

[2] *Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Եր., 1975, էջ 159:*

Այնուհետև երկու կողմի երիտասարդները մրցման մեջ են մտնում: Փեսայի կողմից բերվում էր սինի, որի մեջ դրվում էին թանկարժեք կոնֆետներ, երկու շիշ օղի կամ կոնյակ, հարսնացուի՝ քավորի բերած շորերը, նվերներն ու զարդերը՝ գլխի հարդարանքի մասերը՝ *ջուխտ շերիդ, ջավշակ* (սրանք մարգարտաշարից կախվող ոսկիներն են), ոսկե շղթա, բիլազուկ, կրծքի ոսկե քորոցներ, բարեկամների բերած ոսկե մատանիները և այլն: Մետաքսյա բոխչայի մեջ դրված սինին, գլխներին դնելով ու մեկը մյուսին փոխանցելով, մոտ մեկ ժամ պարեցնում էին, նոր մտնում ներս:

Նորահարսը մինչև հարսնառի գալն արդեն հագնված էր լինում, բացառությամբ գլխի հարդարանքի, որը բերում էր քավորը: Հարսի հագուստը ևս ավանդական էր, սակայն խիստ վառ գույների համադրությամբ՝ կապույտ, կանաչ, կարմիր մետաքսե կամ թավշյա կտորներից, ոսկեթել հարուստ ասեղնագործությամբ, մարգարիտներով ու թանկարժեք քարերով ընդելուզված, ոսկյա զարդերով զարդարված: Ինչպես փեսային, այնպես էլ հարսին, հագուստի յուրաքանչյուր մաս հագցնելով, երգով գովում էին, շնորհավորում ու բարեմաղթանքներ հղում նրանց: Գլուխը հարդարելուց հետո գցում էին երկու՝ կարմիր և սպիտակ մետաքսե քող, մեկը՝ մինչև կրծքամաս, որը ծածկում էր երեսը, և մյուսը՝ ուսերն ի վար:

Փեսան քավորի առաջնորդությամբ գնում էր *փնջատուն* (հարսի սենյակը) ու դուրս բերում հարսին: Նրանց միասին տեսնելով՝ ներկաներն ընդունում են ուրախ բացականչություններով ու բարեմաղթություններով: Մոտ մեկ ժամ ուրախանալուց հետո հարսնացուի ընտանիքի ծխատեր քահանան հարսի ու փեսայի ձեռնադրումն էր կատարում, որից հետո հարսանքավորները շարժվում էին դեպի եկեղեցի: Այստեղ քահանան նորապսակներին կանգնեցնում էր բեմի առաջ, իսկ նրանց կողքերին՝ մեկական կերոն բռնած փոքրահասակ աղջիկների: Քավորը նրանց գլխին խաչ էր բռնում, ու քահանան կատարում էր պսակի կարգը՝ կարդալով համապատասխան շարականներ ու աղոթքներ, որից հետո հարսի ու փեսայի պարանոցին կարմիր ու կանաչ ոլորուն թելերից նարոտ էր կապում, որը քանդվում էր առագաստ մտնելուց առաջ: Նարոտը ևս ուներ ամուսնական զույգի սերնդաշարունակման ունակությունն ապահովելու և շրջապատի վնասաբեր ուժերի ազդեցությունից նրանց զերծ պահելու խորհուրդ:

Պսակի ծեսի ավարտից հետո բոլորը (այդ թվում նաև քահանան) դուրս էին գալիս եկեղեցուց ու նվագով վերադառնում տղայի տուն: Այս անգամ էլ բոլորից շուտ տեղ էր հասնում *աղվեսը* և հայտնում, որ *պսակն եկավ*: Այդժամ երիտասարդ տղաները (ազաբները) նախապես զարդարված՝ վզից զանգակ կախած, եղջյուրներին՝ գունավոր ժապավեններ կամ ծաղիկներ կապած խոյ էին բերում, կառքի առջև պառկեցնում՝ որպես մատաղ հարսի ու փեսայի առողջության և երջանկության համար: Քավորը նրանց փող էր նվիրում և մատաղացուն ողջ ու կենդանի վերադարձնում տիրոջը: Փեսայի մայրը դուրս էր գալիս նրանց ընդառաջ ավանդական լավաշով և նորապսակներին համբուրելուց ու «բարով վայելեք» մաղթանքից հետո լավաշը գցում նրանց ուսերին: Այնուհետև նորապսակներին հերթով մոտենում էին հարազատները, համբուրում ու պարելով հեռանում: Մոտ մեկ ժամ բակում երգելուց ու պարելուց հետո մտնում էին տուն: Տան դռան վերևում քավորը պահում էր ձեռքի սուրը, որ նորապսակները, դրա տակով անցնելով, մտնեն ներս (դրանով նորապսակներին պաշտպանում էր չար ու աներևույթ ուժերից՝ չարքերից), իսկ սկեսուրը շեմին երկու ափսե էր դնում, որ հարսն ու փեսան ներս մտնելիս ափսեները կոտրեն՝ դարձյալ չարը խափանելու նպատակով: Հարսին ու փեսային քավորն առաջնորդում էր սեղանի վերին գլուխը, որտեղ վերևում փակցված էր հարսանեկան վենզելը՝ նորապսակների անուններով:

Ալեքսանդրապոլի հարսանեկան սեղանը էապես տարբերվում էր իր հարուստ ու բազ-

մազան տեսականիով. դրա մեջ մտնում էին տաք ու սառը խորտիկներ, թխվածքներ, ոգելից ու զովացուցիչ խմիչքներ: Սառը խորտիկներից դրվում էր տնայնագործ երշիկեղեն (սուջուխ), ապխտած միս (բաստուրմա), խաշած հավ ու ձուկ՝ սառը վիճակում, թթուներ, կանաչեղեն, բանջարեղեն, պանիր և կարագ՝ կողքին շաքարավազով (խմելիս անպայման կարագ էին ուտում, որ չհարբեն): Տաք ուտեստներից ընդունված էին խաշլաման (միայն միսը), տարբեր փլավները, զուտ հարսանեկան սեղանի համար՝ փռում կարմրացված տոնական զարդարուն գառը, որը սկուտեղով դրվում էր սեղանի մեջտեղում. ի դեպ, պոզերի արանքում դնում էին հարսի ու փեսայի՝ հատուկ շրջանակով երիզված նկարը (XIXդ. կեսերից սկսած), իսկ շուրջը շարում խնձորներ՝վրան ամրացված վառվող մոմերով: Մեծ էր նաև խմիչքների տեսականին՝գինի, օղի, կոնյակ, լիմոնադ, գարեջուր, թան: Սեղանի ճոխությունը, սպասարկման մակարդակը կախված էին հարսանիքի տիրոջ սոցիալական դիրքից և ֆինանսական հնարավորությունից:

Ողջ հարսանիքի ընթացքում փեսային իր խորհուրդներով օգնում էր քավորը, որը սովորաբար համեմատաբար տարիքով, փորձված ու հարգված անձնավորություն էր: Քավորի ընտրության հարցում գյումրեցին խիստ բծախնդիր էր և աշխատում էր, որ նա լինի հարգված, հեղինակավոր, բարոյական, բարեխիղճ, ավանդական ընտանիք ունեցող մարդ: Քավորի պաշտոնը ժառանգաբար անցնում էր հորից որդուն, մեծ եղբորից փոքրին: Քավորը տան ամենահարգի ու ամենամոտ անձնավորությունն էր, որի նկատմամբ սանամերը մեծ ակնածանք ուներ. դեմքը բաց չէր երևում, հետը չէր խոսում:

Հարսանեկան արարողությունների մյուս կարևոր պաշտոնը ազաբբաշունն էր, որը նույնպես ընտրվում էր մինչև հարսանիքը: Ազաբբաշին փեսայի չամուսնացած հարազատներից կամ ընկերներից էր ընտրվում, նա ղեկավարում էր երիտասարդների խումբը, որը մասնակցում էր փեսաբաղնիքին, գնում հարսին բերելու և ողջ ընթացքում զբաղեցնում էր փեսային: Ազաբբաշու նշանը կոնֆետներով, չրերով, գույնզգույն ժապավեններով ու ծաղիկներով զարդարված թուրն էր, որը նա ձեռքից բաց չէր թողնում մինչև հարսանիքի վերջը: Սովորաբար հարսնացուի տանը նրա համար պատրաստում էին ուտելիքներով լի կապոց՝ *ազաբբաշու մարմա*, որը բացվում էր հարսանիքի հաջորդ օրը:

Հարսանեկան սեղանը կառավարելու համար ընտրում էին սեղանապետ կամ հացերեց (թամադա), որը պետք է լիներ հարգված, ճարտար լեզու ունեցող, զվարճախոս ու ղեկավարելու ունակությամբ հայտնի մարդ. նա պետք է այնպես հմտորեն կառավարեր սեղանակիցներին, որ ոչ ոք չանտեսվեր, դժգոհ չմնար ու անախորժություններ, հատկապես վեճեր չծագեին: Մեծ հարսանիքները լավ կառավարելու համար նա իրեն օգնականներ էր նշանակում: Հատկապես կարևոր էր պարի կառավարիչը, որը, որպես կանոն, լինում էր իր պարով ու երգով աչքի ընկած երիտասարդներից մեկը: Վերջինս հետևում էր, որ բոլոր կենացները ծաղկեցվեն, որոշում էր, թե երբ սկսեն պարել, ու պարի էր հրավիրում հյուրերին: Հարսանիքում պարում էին բոլորը, անկախ տարիքից ու սեռից, կային զուտ կանանց, տղամարդկանց, նաև խառը պարեր: Տղամարդկանց մենապարը *տրնգի* կոչվող թեք պարն էր, կանանցը՝ *միրզեի* կոչվող դանդաղ պարը, իսկ նորահարսի մենապարը կոչվում էր *ծանդր պար*: Մյուս պարերը, որոնք ընդունված էին հարսանիքներում (նաև այլ տոներին), խառը զուգապարերն ու շուրջպարերն էին, որոնք հայտնի էին *դուզ-պար*, *վերվերի, շորոր, յետ ու առաջ, չեմպերմի, շավալի* և այլն. դրանք բոլորն էլ ուղեկցվում էին համապատասխան երգով ու նվագակցությամբ:[1]

Հարսանիքին շուք տվողն ու ուրախացնողը երաժիշտներն էին (*չալղջոնք*), որոնք

[1] *Խ. Զահրիյան, էջ 8076:*

ջանք չէին խնայում հյուրերի տրամադրությունը բարձրացնելու և նրանց պահանջները կատարելու համար: Իրենց աշխատանքի համար նրանք վարձատրվում էին հյուրերից ստացված գումարով՝ շաբաշով, որը երբեմն բավականին մեծ թիվ էր կազմում:

Հարսանքավորները քեֆը շարունակում էին մինչև լույս և երբ բոլոր կենացները վերջացնում էին, հավաքում էին մեծ սեղանը, թամադային «գահընկեց» անում, և նոր քավորը հարսին պարի էր հրավիրում: Հարսի պարը խիստ կանոնակարգված էր, սկզբում պարում էին հարսն ու փեսան, հետո նրանց միանում էին իրար ձեռք բռնած երիտասարդ ամուսնացած կանայք ու տղամարդիկ, որոնք, վառված մոմերը ձեռքներին, փակ շրջան էին կազմում նորապսակների շուրջը ու դանդաղ պտտվելով պարում՝ միաժամանակ երգելով մանիներ: Չամուսնացածներն ու այրիները պարին չէին մասնակցում: Երբ հարսին ու փեսային հանում էին պարից, պարաշարը մեծանում էր. միանում էին ազաբներն ու սկսում արագացնել պարի ընթացքն ու անցնել *վերվերիի*: Վաղ առավոտյան՝ արևածագին, դուրս էին գալիս տանից, կանգնում դեմքով դեպի արևելք ու երգում «Առավոտ լուսո»-ն, այնուհետև անցնում շուրջպարի. քոչարիով ու վերվերիով ավարտելով հարսանիքը՝ հյուրերը գնում էին հանգըստանալու:

Հարսանիքի տերերը նույնպես մի որոշ ժամանակ հանգստանալուց հետո պատրաստվում էին *ջհեզվորներին* ընդունելու. նրանց համար նոր սեղան էին գցում ու նորից շարունակում կերուխումը: Այդ գիշեր նորապսակները առագաստ էին մտնում և առավոտյան, երբ տեսնում էին հարսի անարատությունը, նորից քեֆ ու ուրախություն էր կազմակերպվում: Սավանը կարմիր խնձորների հետ ուղարկվում էր աղջկա մորը՝ որպես աչքալույս ու շնորհավորանք, որ բարոյական ու մաքուր աղջիկ է մեծացրել: Աղջկա մայրը կանչում էր մոտիկ հարևան կանանց ու հարազատներին, կազմակերպում հյուրասիրություն և խնձոր բերողներին նվերներով ճանապարհում:

Այդ օրը փեսայի տանը բացվում էր *ազաբ-բաշու մարմեն* (թաշկինակը), որին մասնակցում էին երիտասարդները: Այն ուղեկցվում էր զվարճություններով, կատակներով, ծիծաղով: Երբեմն հարսի տանը թաշկինակի մեջ լցնում էին ոսկոր, կաղամբի կոթ և այլ մթերքներ՝ զըվարճություն պատճառելով ներկաներին:

Հարսանիքից մի քանի օր հետո փեսայի հարազատները՝ հարս ու աղջիկ, նորահարսին տանում էին բաղնիք, որը նույն ծիսակարգով էր անցկացվում, ինչպես հարսանիքից առաջ կազմակերպված հարսնբաղնիքը:

Հարսանիքի հաջորդ կիրակի օրը՝ ցերեկով, հարսի մայրը ազգական կանանց հետ աղջկա հագուստն ու կոշկեղենը (մինչ ամուսնությունը հագած) տանում էին սկեսրանց տուն, որ աղջիկը տան միջի շորերը հագնի, իսկ օժիտինը պահի տոն օրերին:

Դարձ. Հարսանիքից հետո, նայած սկեսրանց տրամադրության, հարսին ու որդուն թույլ էին տալիս այցելել հարսի հոր տուն: Բացի այս այցելությունից, աղջկան ծնողները դարձ էին տանում՝ մեկ կամ երկու շաբաթ պահում իրենց տանը: Այդ ընթացքում փեսան կարող էր այցելել աներանցը: Նորահարսին մեծ դարձ էին տանում Զատկին (դարձը տևում էր 15 օրից մինչև մեկ ամիս), որից մեկ շաբաթ առաջ աղջկա մայրը ազգական կանանց հետ գնում էր խնամոնց տուն և ստանում սկեսրանց թույլտվությունը: Երբ ժամանակը լրանում էր, այս անգամ սկեսուրն էր գնում խնամիների տուն՝ իրենց հարսին հետ տանելու: Ալեքսանդրապոլում դարձ գնալուն ասում էին՝ «հարսը դավթարները պատռեց», այսինքն՝ ինչ դժգոհություն, գանգատ ուներ, կարող էր բարձրաձայն պատմել: Այս դեպքում շատ կարևոր էր հարսի մոր դերը, որը խրատում, հանգըստացնում էր աղջկան, որ անախորժություններ չստեղծվեն ընտանիքում:

Ծնունդ և մկրտություն. Կնոջ ամենակարևոր գործառույթը երեխա բերելն ու դաստիարակելն էր, որով պայմանավորված էր նրա տեղն ու դերն ընտանիքում ու հասարակության մեջ: Երեխայի բացակայությունը կնոջ համար ամենամեծ դժբախտությունն էր, որը կարող էր բերել ամուսնալուծության: Այդ էր պատճառը, որ երեխայի ծնունդը ամենամեծ ուրախությունն էր ընտանիքի համար: Չծնված երեխայի սեռը որոշելու հետաքրքիր եղանակներ էին կիրառվում բնակչության մեջ: Այսպես. հաց թխելիս հացթուխը մի գունդ խմոր թոնիրն էր գցում ու դիտում. եթե գունդն առանց պատրռվելու ուռչում էր, դա նշան էր, որ արու զավակ է ծնվելու, իսկ եթե պատռվում էր՝ աղջիկ: Կամ երբ հղի կինը նստած տեղը ոտքերը հեռու է դնում, ուրեմն աղջիկ է բերելու, իսկ եթե հավաքված ու ձգված՝ տղա: Եթե հղի կինը շապիկ կարելու ժամանակ տղամարդու հանդիպելիս ձեռքի կարը անգիտակցաբար գոտիկն է խրում, ուրեմն տղա կծնվի: Եվ վերջապես, եթե հղի կնոջը անսպասելի հարցնեն, թե ինչու են ձեռքերը կեղտոտ, և նա ձեռքերի երեսին նայի, տղա կծնվի, իսկ եթե նայի բռի մեջ՝ աղջիկ:[1]

Հիվանդանոցների բացակայության պայմաններում ծննդաբերությունը կատարվում էր տանը տատմերների (*դայեկ*) օգնությամբ: Ընդունված չէր մանկաբարձ բժիշկ կանչել, քանի որ դա մեծ ամոթ էր կնոջ համար, որը նախընտրում էր մեռնել, քան դիմել բժշկի: Ավելի ուշ, համեմատաբար կիրթ ընտանիքներն սկսեցին դիմել մասնագետների՝ մանկաբարձուհու և բժշկի, բայց հասարակ ժողովուրդը շարունակում էր վստահել փորձառու տատմերներին: Այդ դայեկները տարիքն առած, փորձված, «մարդամիջի», տղամարդկանց ներկայությունից չքաշվող կանայք էին, որոնք գալիս էին անմիջապես,երբ սկսվում էին ծննդկանի երկունքի ցավերը: Վերջիններիս օգնությունը միշտ չէ, որ դրական ավարտ էր ունենում, լինում էին դեպքեր, երբ ծննդկանը մահանում էր,բայց դրա համար դայեկին չէին մեղադրում, այլ կապում էին Աստծո կամքի հետ կամ համարում չարքերի գործ: [2]

Նորածնին ու ծննդկանին չար աչքից, չար նավսից ազատելու համար դայեկը մի շարք հմայական միջոցներ էր կիրառում. շշի ծայրին մի սոխ էր անցկացնում ու դրանով խաչակնքում դուռը և դառնալով տուն՝ նստում ծննդկանի անկողնու վրա, երեք անգամ կրկնում. «Մարիա՛մ, ե՞ս եմ ծանր, թե՞ դու»: Ապա շիշը դնում էր ծննդկանի բարձի տակ, երբ ծննդկանը ներս ու դուրս էր անում, շիշը հետն էր տանում, որ աչք չտան: Ծննդկանին չար աչքից ազատելու համար ներս մտնողի դիմաց օդում փչում էին ու ասում. «Ուրբաթ օրվա մեռելի հողը աչքդ լցվի»:[3]

Ազատվելուց անմիջապես հետո ծնընդկանին այցելության էին գալիս հարազատներն ու հարևանները՝ նրա համար բերելով տարբեր սննդարար կերակուրներ՝ ձվածեղ, խավիծ կամ նիշաստա (ածիկ), որ ուժերը վերականգնվեին: Ծննդկանը և նորածինը համարվում էին հարամ՝ նրա ձեռքի հացին, օգտագործած իրերին ու հագուստին ձեռք չէին տալիս մինչև երեխայի կնունքը, որը կատարվում էր մեկ շաբաթ անց: Ծննդաբերությունից հետո ծննդկանը քառասունք էր պահում. տանից դուրս չէր գալիս, ամուսնու հետ չէր քնում, որը թերևս թուլացած օրգանիզմը վերականգնելուն նպաստող ժողովրդական միջոց էր:

Շաբաթվա մեջ երեխայի ծնողները տատմոր միջոցով *մե դանտրմ* շաքար (դանտը կոնաձև շաքար էր՝ մոտավորապես 2-4 կգ-ի չափով) էին ուղարկում քավորի տուն և հայտնում կնունքի օրը: Քավորը երեխայի համար որպես նվեր տանում էր ոսկյա կամ արծաթե խաչ, սպիտակ կտորից շապիկ կամ սպիտակ կտոր (*մեռոնլաթ*)՝ մկրտելուց հետո երեխային փաթաթելու համար և երկու հաստ մոմեր (կերոն): [4]

[1] *Ն. Նիկողոսյան, էջ 7270-7272:*

[2] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 56:*

[3] *Ն. Նիկողոսյան, էջ 7273:*

[4] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 57:*

Կնունքի օրը ծխատեր քահանան եկեղեցում սպասում էր մկրտության արարողությունը կատարելուն: Եկեղեցի գնում էին մի քանի հոգով, երեխային բերում էր տատմերը՝ սպիտակ, ժանյակազարդ ու մաքուր տակաշորերով, վերմակի մեջ փաթաթված ու քաշանի բոխչայով ծածկված: Այնտեղ նրանց դիմավորում է քավորն իր մոր, կնոջ ու երեխաների հետ: Քահանան կատարում էր մկրտությունը՝ մեջը մեռոն կաթեցրած գոլ ջրով լի ավազանի մեջ մտցնելով մերկ երեխային, որից հետո հանում ու տալիս էր քավորին: Վերջինս երեխային փաթաթում էր մեռոնլաթի մեջ, որից հետո քահանան մեռոն էր քսում երեխայի ճակատին, ծնոտին, ձեռքերի մեջ ու կրծքին խաչ էր գծում՝ միաժամանակ քավորին հարցնելով. «Քավո՛ր, երեխան ի՞նչ է խնդրում», որն իր հերթին պատասխանում էր. «Հույս, հավատ, սեր և մկրտություն»: Դրանից հետո երեխային նորից վերցնում էր դայեկը, հագցնում, փաթաթում ու տալիս քավորին: Շքախումբը վերադառնում էր տուն, քավորը երեխային բարեմաղթություններով դնում էր սանամոր գիրկը: Քահանան կարդում էր պահպանիչը, որից հետո բոլորը սեղան էին նստում: Եթե երեխան առաջինն էր, կամ աղջիկներից հետո ծնված տղա, ապա ճաշկերույթը շքեղ ու առատ էր լինում, իսկ հակառակ դեպքում բավարարվում էին մի քանի բաժակ օղի խմելով ու մաղթանքներով: Կնունքից հետո՝ ութերորդ օրը, երեխային մեռոնից հանում էին լողացնելով, որի ջուրը չէին թափում. դրանով լվացվում էր ծնընդկանը, լվանում էին նրա հագուստներն ու հարամ ամանները, որից հետո նա այլևս անմաքուր չէր համարվում: Ընդհանրապես կնունքը խիստ կարևորվում էր, և նորածնի հարազատները ձգտում էին շուտափույթ նրան կնքել, քանի որ անկնունք մահացած երեխային (իսկ հնում այդպիսի դեպքերը շատ էին) թույլ չէին տալիս թաղել գերեզմանոցում և ծես կատարել:

Մանկատածություն. Երեխայի ծնվելուց հետո մանկաբարձ-դայեկը նախ կտրում էր պորտը, և, եթե տղա էր, այն թաղում էին դրսում՝ որևէ լուսավոր տեղ, եթե աղջիկ՝ տան կամ բակի մութ ու հեռավոր անկյունում՝ հավատալով, որ այդպիսով տղան մեծանալով լուսավոր ճանապարհ կընտրի ու կդառնա աչքի ընկնող մարդ, իսկ աղջիկը կլինի խոնարհ ու հեզ տանտիրուհի: Այնուհետև երեխայի գլուխն ու մարմինը շփում էին աղով, որը, ըստ ժողովրդական հավատալիքների, չարխափան հատկություն ուներ, բայց իրականում հականեխիչ դեր էր կատարում:

Երեխային, անկախ սեռից, մինչև 4-5 ամսական ամուր բարուրում էին ու պառկեցնում փայտե օրորոցի մեջ: Երեխայի խանձարուրը (*բարուր*) բաղկացած էր ամենօրյա ու տոնական (մետաքսյա կամ սպիտակ բամբակյա կտորից և ասեղնագործված) բոխչաներից, շապիկից, եռանկյունաձև հողլաթից (*ֆողշոր*), 1մx 30սմ չափի թևաշորից, տակաշորից, գըլխարկից, գլխաշորից և այլն: Օրը մի քանի անգամ երեխային հանում էին, տակը փոխում, նորից բարուրում, աչքերը կապում ու դնում քնելու: Ավանդաբար նորածին երեխայի տակ հող էին դնում սևահողը լավ տրորում, կոշտերը վերացնում էին, տաքացնում (խարկում), լցնում տակաշորի վրա, ծածկում *ֆողշորով* ու փաթաթում: Տաք հողը հանգստացնում ու թմրեցնում էր երեխային, ու նա երկար քնում էր՝ չխանգարելով տան անդամներին: Եթե, այնուամենայնիվ, նա լավ չէր քնում, անընդհատ լալիս էր, առանց պատճառն իմանալու խաշխաշի փոշի էին տալիս, որը թմրեցնում էր երեխային:[1]

Մեռոնից հանելուց հետո ամեն երեկո երեխային լողացնում էին, որ լավ աճի: Երեխային սովորաբար լողացնում էր տատը կամ փորձառու կանանցից որևէ մեկը, որովհետև լողացնելը ուղեկցվում էր մերսումով, որը կատարվում էր մասնագիտորեն՝ մարմնի առանձին մասերն առանձին-առանձին ու հատուկ բառերի արտասանությամբ (երկնավզիկ, թեթ-

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 62-63:*

վաջրիկ և այլն): Նորածնի քառասունքից ու ատամ հանելուց հետո պատռում էին նրա շապիկը՝ որպես վտանգի, փորձության հաղթահարում:

Մինչև քառասունքը նորածնին չար աչքից պաշտպանելու համար բազմաթիվ գործողություններ ու արարողություններ էին կատարում՝ բարձի տակ դանակ, մկրատ ու ասեղ էին դնում, օրորոցի վրա աչքի ուլունք էին կախում և այլն: Երբ երեխան հիվանդանում էր, չէր աճում, նիհարում էր կամ անընդհատ լալիս, ասում էին՝ «էրեխեն կոխ է էղե», «չար հրեշտակն է զարկել», կամ «մեռելի շորշոփ է դիպել»: Ըստ գյումրեցիների՝ նորածինը *կոխ* կարող էր լինել, եթե տուն էր բերվել որևէ մթերք (հատկապես միս), ու երեխային վրան չէին դրել, կամ դաշտանի մեջ գտնվող կին ու աղջիկ էր մտել, կամ եթե քառասունքի մեջ գտնվող ծննդկան կամ չբեր կին էր եկել տուն, կամ եթե մահվան թափոր էր անցել, ու երեխային դուրս չէին բերել և այլն: Որպեսզի պարզեին, թե որն էր կոխի պատճառը, հարազատները եկեղեցուց մոմի մանրուք էին խընդրում, հալում ու իլիկի ծայրով ծորացնում էին ջրի մեջ (մոմ էին թափում): Ստացված պատկերով գուշակում էին, թե ինչն է պատճառը, ու համապատասխան բուժում կատարում: Զանազան աղոթքներ էին կարդում երեխայի շորերի վրա, ու դրանք թողնում հագին, մեռելի դեպքում՝ մայրը, մի շիշ տաք ջուր վերցրած, երեխայի հետ գնում էր գերեզմանատուն, որտեղ նոր մեռել էր թաղված, այդ գերեզմանի վրա լվանում էր երեխայի ոտքերն ու ձեռքերը և անմիջապես հեռանում: Ալեքսանդրապոլի քաղաքային այգու՝ Գորկայի տարածքում հընում գերեզմանատուն էր եղել, որտեղ թաղված էր Ստեփանոս արքեպիսկոպոս Չախալյանը, որի գերեզմանին էլ շատ ժամանակ տանում էին կոխ ընկած երեխաներին:[1]

4-5 ամսականից երեխային բարուրից հանում էին, ձեռքերն ու ոտքերը բաց պառկեցնում, որ նա կարողանա շարժվել ու կամաց-կամաց ճանաչել հարազատներին: 6-7 ամսականից սկսած՝ հագցնում էին, գրկում, սովորեցնում պարզ գործողություններ կատարել, կանգնեցնում էին փայտե հատուկ հարմարանքի՝ *թնդիրի* մեջ, որ կանգնել սովորի: 8-9 ամսականից արդեն քայլեցնում էին *ճոնիկով*, այնուհետև ձեռքը բռնած՝ սովորեցնում էին քայլել: Ոտքի ելնելուց հետո՝ մինչև 5 տարեկան, նրանցով զբաղվում էին քույրերը տատի վերահսկողությամբ:Այդ տարիքից սկսած՝ արդեն տղաներին ու աղջիկներին սեռերին համապատասխան հագուստներ էին հագցնում:

Ընտանիքում հատուկ նշվում էր նաև առաջին ատամ հանելը, որի ժամանակ *ատմահատիկ* (ատամհատիկ) էին պատրաստում. խաշում էին ցորեն, սիսեռ, ավելացնում քիշմիշ, խառնում իրար: Այդ օրը հավաքվում էին մոտ ազգականներն ու հարևանները, երեխային նստեցնում էին շորի վրա, գլխին լցնում այդ հատիկները, որը մեծ ուրախություն էր պատճառում թե՛ երեխային, թե՛ ներկաներին: Սովորության համաձայն՝ այդ ատմահատիկից բաժին էին ուղարկում այն մտերիմներին, որոնք ինչ-որ պատճառով չէին մասնակցել արարողությանը:

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՅԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոխօգնությունը. Քաղաքում, ինչպես և ցանկացած հայկական գյուղում, հարևանների տները կողք կողքի էին, ինչը նպաստում էր նրանց միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը: Հարևաններն ապրում էին մեկ ընտանիքի նման՝ բաժանելով և՛ ուրախությունը, և՛ տխրությունը: Բոլորին էին հայտնի հարևանների ներընտանեկան դրությունը, ֆինանսական վիճակը և մասնավոր կյանքի այլ մանրամասներ: Որպես օրենք՝ հարևանները հաշտ ու համերաշխ էին, պատրաստ միմյանց աջակցելու թե՛ հոգեպես, թե՛ նյութապես: Բարեկամին, հարևանին օգնելը

[1] *Ն. Նիկողոսյան, էջ 7274-7275:*

ուրախության և տխրության ժամանակ, կամ երբ ընտանիքը ի զորու չէ միայնակ իր ուժերով իրականացնելու մեծ ջանք և աշխատուժ պահանջող որևէ աշխատանք, յուրաքանչյուրը համարում էր իր սրբազան պարտքը:[1]

Ալեքսանդրապոլցու համար սովորական երևույթ էր հարևանից փոխարինաբար որևէ բան վերցնելը՝ «փոխ առնելը», միայն վերադարձնելու պարտադիր պայմանով, քանի որ պարտքը հետ չվերցնելը վիրավորական էր պարտատիրոջ համար: Հարևանները փոխ էին առնում «լավաշ հաց» (հատով), շաքար (կտորով), յուղ կամ ձեթ (բաժակով), բրինձ (թասով), կոճի թել (ղուլաճով՝ թելերը լայն բացած աջ ձեռքի մատներից մինչև ձախ ձեռքի ծայրը մեկ ղուլաճ էր), նավթ, լուցկի (տուփով), օճառ, ձու, մինչև անգամ՝աթար: Գործածելու համար վերցնում էին պղինձ, ղուշխանա, սինի, մեծ (վենձ) ասեղ, մկրատ, թեշիկ, խոնչա, գրտնակ, տաշտ, սանդերք, սալա, սըրըղ (լվացքի պարանի հենաձող), լվացքի պարան (չվան) և այլն: Հրավերքների կամ հարսանիքների ժամանակ հարևաններից վերցնում էին սեղան, աթոռ, սփռոց, լամպ, բաժակներ, գդալներ, ափսեներ և այլն: Հյուր գնալիս նույնպես հարևանից վերցնում էին հագուստեղեն՝ շալ, կոշիկ, վերարկու, նույնիսկ զարդեղեն՝ գլխի ոսկի, բիլազուկ, մատանի, թանթանա, չիքիլա: Սա շատ սովորական բան էր համարվում: Շատ անգամ, առավելապես վայելուչ երևալու համար տղամարդիկ էլ էին հարևանից վերցնում չուխա, արխալուղ, քյամար (արծաթ գոտի),կոշիկ, գլխարկ, նույնիսկ ժամացույց, որից մեծ մասամբ շատերն օգտվել չգիտեին: Մի խոսքով, ամանաթ էին վերցնում, որտեղից էլ ծագել է «ամանաթը տերը գուզե» դարձվածքը:[2]

Հարևանային և ազգակցական փոխօգնությունը լայնորեն կիրառվում էր հատկապես տնային տնտեսավարման այնպիսի ձևերում, որոնք կանանց գործունեության ոլորտին էին վերաբերում և պահանջում մեծ աշխատուժ: Ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքում, ընտանիքները ձմռան համար նախապատրաստում էին մեծ քանակությամբ հաց, հացամթերք և կաթնամթերք հավաքում: Մի քանի հարյուր լավաշ թխելու, տասնյակ կիլոգրամներով արիշտա պատրաստելու համար հավաքվում էին հարևան-բարեկամ հարսներն ու աղջիկները և միասին, մեկ օրվա ընթացքում, գործն ավարտում: Փոխադարձ օգնությամբ էր կատարվում նաև մեծաքանակ բրդի զգումը: Եթե գուլպայի համար անհրաժեշտ բուրդը տանտիկիններն ի զորու էին միայնակ զգել ու մանել, ապա ջեջիմի, կարպետի ու գորգի համար նախատեսված մեծաքանակ բուրդը լվանալը և հատկապես զգելն առանց օգնության, անհնար էր: [3]

Ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Ալեքսանդրապոլում, փոխօգնության այդ ձևը հայտնի էր «մաճի» անունով: Հարևան-բարեկամների հարսներն ու միջին տարիքի կանայք, ովքեր հրավիրվում էին «քյոմակ էնելու», առավոտ վաղ գալիս էին իրենց սանդերքներով և նստում նախօրոք լավ ավլած, ջեջիմները գետնին փռած պատերի տակ: «Մաճի» անելը մեծ հանդիսավորությամբ էր կատարվում. ծերերն ու փոքրահասակ աղջիկները զգելիք բուրդը խզզում էին՝ ավելի հեշտ ու արագ զգելու համար, մյուսները արագ-արագ զգում էին, զված երկար մազերը «ծերքը» խընամքով գլանաձև փաթաթում էին՝ «սիմակ» անում և զգուշորեն դասավորում զամբյուղների մեջ՝ պատրաստ մանելու:

Համատեղ աշխատելու երկու դեպքում էլ՝ թե՛ արիշտա կտրելիս, թե՛ բուրդ զգելիս ջահել հարսներն ու աղջիկները մի կողմից աշխատում էին, մյուս կողմից երգում, զվարճալի պատմություններ, դեպքեր պատմում,տատիկներին իրենց ջահելությունից պատմել տալիս

[1] *Կ. Базеян. Некоторые формы взаимопомощи в Александрополе (начало XX века)/ Международная научная конференция «Археология, этнология, фольклористика Кавказа». Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2010, с. 366.*

[2] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 125-127:*

[3] *Ն. Նիկորոսյան, էջ 7348:*

և ուրախանում: Նման գործընթացը երիտասարդների համար տոնական իրադարձություն էր, քանի որ հնարավորություն էր ընձեռում միմյանց հետ շփվելու և հաղորդակցվելու: Տոնական տրամադրությունը լրացնում էին նաև այն համեղ ճաշերը, թխվածքներն ու մրգերը, որոնք սիրով պատրաստում էր տանտիկինն իր «մաճիավորներին» հյուրասիրելու համար:

Քաղաքի բնակչության այն հատվածում, որտեղ զբաղվում էին անասնապահությամբ, տարածված էր փոխօգնության մեկ այլ տեսակ՝ կաթը «խաբ» տալու սովորույթը, որը կիրառվում էր ողջ Հայաստանում և բնութագրական էր հատկապես անասնապահական տնտեսավարմամբ գյուղական համայնքներում: «Խաբի» էությունն այն էր, որ կաթնատնտեսությամբ զբաղվող կանայք հենց գարնան սկզբից, մոտիկ հարևանների հետ խմբեր կազմելով, միավորում էին իրենց անասուններից ստացած կաթը՝ յուղ ու պանիր ստանալու համար:[1]

Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղում զուտ տեղական բնույթ կրող փոխօգնության ձևերից էր «Արփաչայը լվացքի գնալը»: Այս երևույթի գունեղ նկարագիրն իր բոլոր մանրամասներով թողել է Հեղինե Գյոլեցյանը, որը ևս կարևորել է այն՝ որպես իր քաղաքի համայնապատկերը լրացնող բաղադրիչ:Քանի որ նկարագրությունը համեմված է «Գիմրվա բարբառով» գրված բնորոշ դարձվածքներով, նպատակահարմար ենք գտել ներկայացնել առանց խմբագրման:

«Գյումրիում Մուռտառ չայից մինչև երկաթգիծ՝ դեպի արևելք ընկած հատվածում և 20 փողոցից հարավ մինչև քաղաքի հարավային ծայրն աղբյուրներ չկային, օգտվում էին միայն ջրհորներից: Սովորական լվացքը ջրհորի ջրով մի կերպ անում էին, սակայն կարպետ, ջեջիմ, խալի, մի խոսքով փռվածքը և անկողնու բրդերը ջրհորի ջրով լվանալը շատ դժվար էր, «թև չէր դիմանա ֆորեն ջուր քաշելու»: Ուստի ամռան տաք օրերին այդ մեծ լվացքը տանում էին Արփաչայ: Արփաչայը լվացքի գնալը ևս տոնական բնույթ էր կրում: Վարձում էին ֆուրգոն կամ «կաչկա» (միաձի սայլ), նայած հարմարության, հրավիրում էին մոտիկ հարազատների հարս ու աղջկա, լվացվելիք շորերը, անկողնու բուրդը, խալի, կարպետ, ջեջիմ, ջուր տաքացնելու համար պղինձը, լվացքի տաշտը, սալաները, թոխաջը, կերակուր եփելու ամանը (ղուշխանան), հաց, պանիր, ձու, կանաչեղեն, միս, մրգեր, ինքնաեռ, ճաշի ափսեները (քյասեքը), բաժակները, վառելիքը (փայտ կամ աթար), բարձում էին ֆուրգոնին, երեխաներին էլ նստեցնում վրան և ճանապարհվում դեպի Արփաչայ, որը Գյումրիից մոտ 3 կմ դեպի արևմուտք էր: Տեղ հասնելուն պես անմիջապես կրակ էին անում, ջուր տաքացնում, սպիտակեղենը օճառում: Բուրդը լցնում էին պարկերի մեջ, բերանը կապում, դնում էին ափին մոտ ջրի մեջ, վրան քարեր դնում: Ջեջիմները փռում էին գետափի ավազների վրա, հերթով իրար վրա փռում էին կարպետները, խալիները: Երեսի կարպետի կամ խալու վրա ջուր էին լցնում և օճառ քսում, ապա լվանում էին բրդյա գուլպայով: Խալիները և կարպետները լվանում էին 2-3 ջահել, առողջ և ուժեղ հարս ու աղջիկ, իհարկե *մինոց* հագած (հին շորեր, որ հագնում էին լվացքի, հաց թխելու և տունը «թոզ առնելու ժամանակ»): Միևնույն ժամանակ մի երկու հոգի էլ գետից ջուր էին բերում և անընդհատ լցնում խալիների և կարպետների վրա: Այնուհետև 4-5 հոգով բռնում էին կարպետի մի կողմից, մտնում էին գետը և «ցայում», այսինքն՝ կարպետը սուզելով ջրի մեջ, ետ ու առաջ շարժելով, պարզաջրում էին: Ապա գլանաձև փաթաթում էին, կանգնեցնում ավազի վրա, թողնում, որ ջուրը ցամաքի, փռում էին տաք ավազների վրա և չորացնում: Մյուսներն այդ ժամանակամիջոցում բուրդն էին թոխաջում, լվանում, չորացնում, երբեմն ձաղկում, մի մասն էլ լվացքն էր անում, գետի մեջ պարզաջրում և չորացնում: Այս ամենը կատարվում էր երգով, սրա-

[1] *Ն. Նիկողոսյան, էջ 7354-7359:*

միտ, ուրախ պատմություններով, հաճախ լողանում էին: Մեծահասակներն զբաղվում էին նախաճաշ, ճաշ պատրաստելով, հսկում էին երեխաներին, որ հանկարծ չխեղդվեն: Մի խայտաբղետ պատկեր էր ներկայացնում գետափի այդ հատվածը, որտեղ լվացք էին անում: Ավազների վրա փռված էին վառ գույներով կարպետներ, խալիներ, ջեջիմներ, սպիտակ լվացքը, զանազան չթեր, հագուստ, փռված էր բուրդը: Ամբողջ օրը մաքուր օդում աշխատելուց, լողանալուց, կատակելուց շատ մեծ բավականություն էին ստանում: Երեկոյան ֆուրգոնը գալիս էր, մաքուր լվացված, լողացած, հանգստացած, գոհ ու երջանիկ վերադառնում էին տուն, սրտատրոփ սպասելով մյուս բարեկամների Արփաչայ գնալուն:»[1]

Այսպիսով, կարելի է ասել, որ ալեքպոլցիների մեջ կենցաղավարող կամավոր, չվարձատրվող կոլեկտիվ աշխատանքը ազգակցական-դրացիական հարաբերություններում կարևոր նշանակություն ունեցող ավանդույթ էր, որը մտերմացնում էր մարդկանց, նրանց դարձնում հոգեպես ավելի բարի, օգնության պատրաստ ու առատաձեռն: Մարդիկ, մասնակցելով ընդհանուր աշխատանքներին, մի տեսակ բարոյապես բավարարվածություն էին ստանում, իսկ տանտիրուհին լցվում էր շնորհակալության զգացումով և մեծ ցանկությամբ՝ իր հերթին փոխհատուցելու արված լավությունը նույն կերպ: Այդ ձևով դրացիական-ազգակցական կապերն ավելի էին ամրապնդվում, իսկ կոլեկտիվը, կապված լինելով համայնքի ընդհանուր շահերով ու տնտեսական կյանքով, ավելի էր համախմբվում՝ պահպանված ու գործող փոխօգնության ավանդական ձևերի հիմքի վրա:

Ժողովրդական բժշկության ավանդական եղանակները

Ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Ալեքպոլում ժողովրդական բժիշկները XIX-XX դդ. գործում էին մասնագիտական կրթություն ստացած բուժակների ու բժիշկների կողքին և մեծ հեղինակություն վայելում, քանի որ թե՛ բժշկական սպասարկումը, թե՛ դեղորայքը թանկ էին: Բացի այդ, ժողովրդական բժիշկները դուրս էին եկել ժողովրդի ծոցից, ծանոթ էին նրա կարիքներին ու աշխարհայացքին, ուստի ավելի մեծ վստահություն և հարգանք էին վայելում: 1860-70-ական թթ. Ալեքսանդրապոլում հիվանդանոց դեռ չկար, գործում էին առանձին ռուս բժիշկներ, որոնց լեզուն չհասկանալով, ավելի հաճախ չվստահելով, բնակչությունը նրանց չէր դիմում, չնայած տարածված տարափոխիկ բազում հիվանդություններին: Ալեքսանդրապոլի գավառապետի՝ 1864թ. հաշվետվության համաձայն՝ քաղաքում կար մեկ բժիշկ, մեկ բուժակ և գործում էր մեկ դեղատուն:[2] Ինչպես վկայում է Ն. Նիկողոսյանը, 1862 թվականին զինվորական բժիշկ Գուրկոն քաղաքացիներին առաջարկում է, որ մի միաձի կառք տան ու վարձեն մեկ կամ երկու չոր ու մաքուր սենյակ, որտեղ որոշակի հաստատված օրերին նա կարողանա հիվանդներ ընդունել ու բժշկել առանց վարձատրության: Սակայն ժողովականներից մեկն առարկում է՝ ասելով. «Բժիշկ Գուրգոն մեզ համար չի ցավի, նա այդ անում է, որ իր չինն ավելացնի, ֆայտոն նստի ու քեֆին ման գա»: Ժողովը ցրվում է առանց գործին ընթացք տալու, համաձայնվելով ժողովականի յուրահատուկ դատողությանը:[3]

Բժշկի չդիմելու մյուս պատճառը հիվանդությունների առաջացման մասին ժողովրդական պատկերացումներն էին, որի համաձայն՝ հիվանդությունը համարվում էր մեղքի համար պատիժ կամ ճակատագիր: Դարձյալ վկայաբերենք Ն. Նիկողոսյանին. «1869թ. գավառական բժիշկ Միլոտովը նոր առաջարկություն է անում.-Ես ոչ կառք եմ ուզում, ոչ ձի: Դուք պատրաստեք սենյակներ, նշանակված օրերին

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 90-94:*

[2] *Ա. Հայրապետյան, Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում…, էջ 88-89:*

[3] *Ն. Նիկողոսյան, էջ 7296:*

հիվանդները գան, ես բժշկեմ: Ժողովականներից մեկը՝ Հովհաննես Տայանցը, խոստանում է աղքատների դեղորայքը իր սեփականությունից տալ ձրիաբար: Այս անգամ էլ մի ուրիշ ժողովական ասում է. - Զանգինություն տվողն էլ աստված է, քասիբությունն էլ: Մեկ մարդըմ, որ ասսու աչքեն ընկած չեղնի, ընչի պտի աղքատ, հիվանդ մնա: Յերբ վոր ասսու կամքը մեկ մարդըմ չկատարե, իրան քաղքի իշխանին մարդու տեղ չդնե, թեկուզ սատկի, իմ հեչ վեճը չէ: Թող խելոք էղնին, մարդու պատիվ գիտնան, ասսու ճամբեյեն չելնեն, աստված էլ ցավ, քասիբություն չտա: Այսպես երկու անգամ էլ օտարի կարեկցության դեմ են գնում քաղաքի իշխանները»: [1]

Ըստ ժողովրդական հավատալիքի՝ հիվանդությունները համարվում էին փոքրիկ էակներ, որոնք իրենց գլխին կրում են եռանկյունաձև գլխարկներ, իսկ ձեռքերին պահում են կանաչ, կարմիր ու սև ճիպոտներ: Նրանց առաջնորդի մոտ է գտնվում Աստծո հանձնարարականների տետրը, որտեղ նշված է, որ սև ճիպոտով պետք է հարվածեն մահվան դատապարտվածին, կանաչով՝ կարճատև հիվանդություն ունեցողին, իսկ կարմիրով՝ անկողնում երկարատև գամվածին:[2] Իսկ ինչ վերաբերում էր բուն հիվանդություններին, ապա դրանք համարվում էին վնասաբեր մոգության հետևանք: Մարդիկ հավատում էին, որ օրգանիզմի մեջ կարող են ներխուժել չար ոգիներ՝ սատանաներ, չարքեր, գրողներ, որոնք մարդուն հարվածում են գիշերները, այն էլ ոչ մարդաշատ վայրերում: Հավատում էին նաև, որ հիվանդություններ կարող են առաջացնել անեծքները, ուստի հիվանդի տերը դիմում էր սրբերի բարեխոսությանը, գրբացներին կամ ժողովրդական տարբեր բուժակների (հեքիմների, տատմերների, սափրիչների և այլն):[3]

Ըստ ազգագրական նյութերի՝ ժողովրդական բժիշկների մեջ գերակշռում էին կանայք, քանի որ եթե ոսկրաբույժները (***սնխչի***) հիմնականում տղամարդիկ էին, ապա հեքիմներն ու տատմայրերը՝ մեծ մասամբ կանայք: Ոսկրաբույժ-սնխչիների գերակշռող մասը հովիվներ էին, որոնք իրենց արհեստի մեջ հմտացել էին՝ 5-6 տարեկանից սկսած: Այն ժառանգաբար փոխանցվում էր հորից որդուն: Սովորաբար նրանք ունենում էին շարժական դեղատուն, որը մի թեթև խուրջին էր, որի մեջ պահում էին բազմաթիվ եղջյուրներ (արյուն առնելու համար), նշտարներ, սպեղանի՝ միլամ-յախու պատրաստելու համար, աքցաններ (ատամները հեռացնելու համար), ինչպես նաև «Նարեկ», «Կարմիր» ու «Շեկ» Ավետարաններ: Նրանք ունեին պուլիկներ, որոնք փոխարինում էին բժշկական բաժակներին, թասեր, պնակներ և այլն: Բժշկական գործունեությամբ զբաղվում էին նաև սափրիչները, որոնք գերազանցապես արյուն էին բաց թողնում:

Ըստ ժողովրդական բժշկական պատկերացումների՝ հիվանդությունները բաժանվում էին երեք խմբի՝ ընդհանուր, կանանց և մանկական:[4] Ընդ որում, ընդհանուր հիվանդությունների հիմքում ընկած էին ներքին հիվանդությունները: Հիվանդությունները բուժվում էին երկու հիմնական ձևով՝ ռացիոնալ (դեղաբուժություն, բուսաբուժություն, օրգանաբուժություն, ջրաբուժություն, արևաբուժություն, սննդաբուժություն և այլն) և իռացիոնալ, այսինքն՝ հոգեբանական բուժում (հիպնոս, կախարդություն, բուժական ներշնչանք, երաժշտությամբ և խոսքի միջոցով բուժում և այլն):

Ընդհանուր հիվանդություններից հիշատակվում են վերքերը (իլյարասի, իլանճղ, խըլուրդի յարա), ուռուցքները (բկուռուցք, բեղնառ-ձեռքի վրայի ուռուցքներ, թևի կամ ոտքի ուռուցք, կարմիր քամի), աղիքային հիվանդությունները (սանճու, լուծ, փորկապություն, ճիճուներ, մայասուլ), ականջի, աչքի բորբոքումներն ու ցավերը, ատամնացավը, գլխացավը, սրտի բաբախն ու ցավը, հոդացավը (սզու),

[1] *Ն. Նիկողոսյան, էջ 7297:*
[2] *Ե. Լալայան, Ջավախք, Երկեր, հ.Ի, Եր., 1983, էջ 193:*
[3] *Լ. Աթանեսյան, Հավելված նկ. 1:*
[4] *Ալ. Մխիթարյանց, Փշրանք..., էջ 211:*

մատնաշունչը, ձեռքերի ու ոտքերի ճաքճքվելը, ձմրուկը, կոշտուկը (մազոլը), քթից արյունահոսությունը, թունավորումները, հարբուխը, հազը, ղոլինջը, դեղնությունը, մալարիան, տիֆը (վարցավք) և այլն:

Մանկական հիվանդություններից հիշատակվում են ծաղիկը, կարմրուկը, կապույտ հազը, խոզուկը, ջրջրուկը, լուծը (հարինք), մկնատամը (էրեթիկ), վերնուց (լուսնային հիվանդություն):[1]

Կանանց հիվանդությունների մասին ավելի քիչ վկայություններ կան, ինչը կարելի է բացատրել երկու հանգամանքով. նախ, որ պահպանված նյութերի հեղինակները տղամարդիկ են, ուստի բոլոր հիվանդությունների մասին չէ, որ կարող էին իմանալ կամ հարցնել, և որ ժողովուրդն ինքը հաճախ չէր տարբերում կամ հասկանում դրանք: Բոլոր դեպքերում ներկայացվել են կրծքի ուռուցքի և ծննդկանների ներքին բորբոքումների ժողովրդական բուժման եղանակները: Կանանց բժշկական օգնության մեջ առանձին տեղ են գրավում ծննդաբերությունն ու ծննդօգնությունը:

Ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Ալեքսանդրապոլում, ժողովրդական բժշկության մեջ լայնորեն կիրառվել են դեղաբույսերը (երիցուկ, պատատուկ, ավելուկ, տուղտ, կապույտ յոնջա, դանթափա, եզան լեզու (բարի յափրաղ), փռշտուկ, կեչու կեղև, շահթարա, իշակաթնուկ, դալի փուրչուլուկ, գյարմաշ, ղզըլջուխ, բարձմենակ ծաղիկ և այլն), բանջարանոցային մշակաբույսերը (սև բողկ, շաղգամ, սոխ, սխտոր, կոտեմ, համեմ, մաղադանոս, պղպեղ, դդում, կարտոֆիլ և այլն), ընդեղենները (կաղին, ընկույզ), պտուղները (տանձ, սերկևիլ, նուռ, հոն, թուզ և այլն), համեմունքները (մեխակ, դարչին, մանանեխ): Բուսական բուժամիջոցներն օգտագործվում էին թարմ կամ չորացած վիճակում՝ եփուկի, թուրմի, փոշու, թեյի ձևով և կիրառելի էին տարբեր հիվանդությունների ժամանակ:[2]

Կենդանական ծագում ունեցող (գորտ, խլուրդ, հավ, ձու, տավարի, թռչունների լեղի, այծի ճրագու, արջի յուղ, էշի արյուն, աղվեսի, տավարի շրդան, ոզնի) միջոցները հիմնականում կիրառվում էին ոսկրային (սալջարդ, հոդախախտ, կոտրվածք, հոդաբորբ) հիվանդությունների, այրվածքների ու վերքերի բուժման նպատակով: Բուժման նպատակով ժողովրդի մեջ լայնորեն օգտագործվում էին բուսական յուղերը, հատկապես կտավատի ձեթը, կարագը, յուղը, ձուն, թանը, կաթը (նաև՝ էշի և ձիու), ինչպես նաև մեղրն ու մեղվանյութերը (մեղրամոմ, ակնամոմ), որոնք տարբեր բաղադրամասերով ու այլ միջոցների հետ զուգակցված կիրառվում էին մրսածության, կապույտ հազի (մանկական այս հիվանդության դեմ լայնորեն կիրառվում էր էշի կաթը, որը հատկապես բերում էին քաղաքի մոտակա Հաջինազար (այժմ՝ Կամո) գյուղից)[3] վերքերի ու այրվածքների բուժման և բազմաթիվ այլ դեպքերում:[4]

Ժողովրդական բժշկության մեջ բուժական նպատակներով գործածվել են նաև հանքային նյութեր՝ շիբ, աղ, կապույտ քար, կապար, ցինկ, պղինձ, քուքուրդ և այլն: Բուժիչ՝ «չարը մաքրելու» հատկություն է վերագրվել օրհնված ջրին, որով շփել են հիվանդի մարմինը, ցավող տեղերը և ցանել տան անկյուններում, որ վնասազերծեն չարերին: Բուժական նպատակով օգտագործվել է հողը: Ինչպես վերը նշվեց, Ալեքպոլում լայնորեն տարածված է եղել նորածնին տաք, բոված հողի մեջ փաթաթված պահելը: Հողը պաշտպանում էր երեխային ցրտից, ամրացնում օրգանիզմը, միաժամանակ կատարելով տակդիրի դեր:[5]

---

[1] *Ալ. Մխիթարյանց, նշվ. աշխ, էջ 211-219; Ն.Նիկողոսյան, նշվ. աշխ, էջ 7293-7322:*

[2] *Ա. Մինասյան, Շիրակի և Ջավախքի հայոց ժողովրդական բժշկությունը (պատմազգագրական ուսումնասիրություն), Ատենախոսության սեղմագիր, Եր., 1995, էջ 7-11:*

[3] *Գ. Աղանյան, ԴԱՆ, Լենինական, 1986:*

[4] *Ա. Մինասյան, նշվ. աշխ., էջ 11-12:*

[5] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 64:*

Մեծ նշանակություն էր տրվում հիվանդի սննդին, ուստի բուժման նպատակով հատուկ սննդակարգ էր նշանակվում, որտեղ հատկապես մեծ տեղ էր տրվում թեյին և զանազան դեղաբույսերից, հատապտուղներից և մրգերից պատրաստված տաք թուրմերին: Հիվանդի նկատմամբ հատուկ վերաբերմունքն արտահայտվում էր նրանում, որ կատարում էին նրա ցանկությունները, հատկապես եթե որևէ բան էր ուզում ուտել, անպայման գտնում բերում էին: Այդ ցանկությունը հայտնի էր «կամակ» անունով:[1]

Բացի հիշյալ նյութերով կատարվող բուժման եղանակներից, ինչպես վերը նշվեց, ժողովուրդը հավատում էր նաև բուժման ոչ ռացիոնալ՝ հմայական միջոցներին: Այդպիսի միջոցներից մեկը հմայիլներով «գիր անելն էր»: Ալ. Մխիթարյանցը բերել է նման գրերի ու աղոթքների (կախարդություն, թովչություն, բըժժանք)[2] բազմաթիվ օրինակներ ու սնոտիապաշտական բնույթի հետաքրքիր պատմություններ, որոնք վկայում են ժողովրդի մեջ բուժման նման եղանակի լայն տարածվածության մասին:

Շատ հիվանդությունների պատճառ համարվում է վախը, որը ևս բուժվում էր հմայական միջոցներով՝ «վախը բռնելով» կամ «վախը չափելով» («թիզ չափելով»), գլխին «մոմ կամ արճիճ թափելով»: Այդ գործողություններն անում էին հատուկ օրերին ու հատուկ աղոթքներով: Անբուժելի հիվանդությունները կապվում էին որևէ սրբի, վանքի հետ, ուստի ապաքինվելու ակնկալիքով դիմում էին զոհաբերությունների, հիվանդին տանում էին սրբատեղի, լողացնում նրա մոտ բխող աղբյուրում, հագուստից մի կտոր կտրում ու կապում մոտակա ծառի վրա՝ հավատալով, որ հիվանդությունը թողնում են այդտեղ:[3] Պարզելու համար, թե որ սրբից է հիվանդությունը, դիմում էին նետ դնողներին, որոնք որոշում էին թե՛ սրբի անունը, թե՛ սրբատեղին:

Բուժական հմայական գործողություններից էին հիվանդի վրա տարբեր («չար աչքի», «աչքի հատի», «ծննդկանի սանջուի», «մսահանգուստի», «ականջացավի», «զոզկապի» և այլն) աղոթքներ, «Նարեկ» կարդալը: Յուրաքանչյուր աղոթքի ժամանակ արվում էին նաև որոշակի գործողություններ, որոնք նպաստելու էին խոսքի ազդեցությանն ու հիվանդի ապաքինմանը: Օրինակ՝ չար աչքի աղոթքի ժամանակ ձեռքին բռնում էին ծակող գործիքներ (ասեղ, քորոց, դանակ, մկրատ և այլն), որոնցով իբր ծակում, կուրացնում էին չար աչքը: Աչքի հատի աղոթքի ժամանակ աղոթողը հիվանդի ճակատի վրայից բրնձի, ցորենի, գարու հատիկներ էր թափում ձեռքին բռնած ջրով ամանի մեջ: [4]

Ինչպես ողջ Հայաստանում, այդպես էլ Ալեքսանդրապոլում, բնակչությունը բուժական նշանակություն է տվել «ծակ քարերին»: Ողջ տարածաշրջանում մեծ համբավ ունեին Հացիկ (Թոփառլու) գյուղի հռչակավոր «Ծակ քարն» ու մատուռը, որոնց հրաշագործ հատկությունների մասին ստեղծվել էին բազմաթիվ պատմություններ, ուստի սիրված ուխտատեղի էր ալեքպոլցիների և ընդհանրապես ողջ Շիրակի համար:

Մոգական գործողություններ շատ էին կատարվում հատկապես կանանց նկատմամբ՝ հղիության, ծննդաբերության ու հետծծնդյան ողջ շրջանում, ինչպես նաև նորածնի խնամքի ու մանկական հիվանդությունների դեպքում: Ծննդաբերությունը հեշտացնելու համար, օրինակ, հրացանով կրակել են, արորներն են քանդել, բացել են դռները, քանդել են հագուստի կապերը և այլն:[5] Չարքերից պաշտպանելու համար ծննդկանի մոտ դնում էին ակիշ, սանդերք, բարձի տակ պահում էին սուր, «Նարեկ», նշխարք կամ վերմակի վրա ասեղ էին ամրացնում: Տատմերը ակիշի վրա

[1] *Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 192:*
[2] *Ալ. Մխիթարյանց, Փշրանք…, էջ 163-190; 219-233:*
[3] *Այդ առումով Շիրակում հայտնի է Սառնաղբյուրի «Զաղան»:*
[4] *Ալ. Մխիթարյանց, Փշրանք…, էջ 185:*
[5] *Ա. Մինասյան, նշվ. աշխ., էջ 26:*

սոխ էր ամրացնում, ելնում դուրս, երեք անգամ աղոթում, ապա սոխը ուտեցնում ծննդկանին, որ չուշաթափվի, ու կաթն ավելանա, իսկ ակիշը կանգնեցնում նրա սնարի մոտ, որ չարքերը չմոտենան:[1]

Մոգական գործողությունների մի ողջ շարք էր կիրառվում նորածնի քառասունքի շրջանում, երբ երեխան առավել էր հակված չար ուժերի ազդեցությանը: Այդ մասին մանրամասն ներկայացվեց վերը:

Ժամանցը՝ որպես քաղաքային կենսաձևի կարևոր բաղադրիչ

Ալեքսանդրապոլցիների առտնին և տոնական կյանքի համայնապատկերում ուրույն տեղ ունի ժամանցի կազմակերպումը: Այնպես, ինչպես ալեքպոլցին էր անցկացնում և վայելում իր ժամանցը, չէր անցկացնում արևելահայ քաղաքային համայնքը ներկայացնող ո՛չ երևանցին, ո՛չ շուշեցին կամ էլ նորբայազետցին: Ալեքպոլյան ժամանցը մի տեսակ խառնուրդ էր ավանդական հայկական կամ արևելյան համայնակեցության և ռուսական ազդեցության: Հայկական ոչ մի քաղաքում, լինի հին ավանդական (Կարին, Կարս, Վան, Երևան) և կամ նոր (Նոր Բայազետ, Շուշի, Գորիս) այնպիսի լայն տարածում չունեին, ասենք, ռուսական ազդեցությամբ արմատավորված ժողովրդական կամ ընտանեկան զբոսանքները (народное гуляние)՝ շաբաթ-կիրակի կամ տոն օրերին ընտանիքով քաղաքային այգիներում հանգիստը անցկացնելը, ընտանիքով թատրոն գնալը և այլն: Ժամանցի կազմակերպումը, քաղաքային կենսաձևի կարևոր ատրիբուտ լինելով հանդերձ, միևնույն ժամանակ նաև հասարակական կեցության յուրատեսակ ձև էր ալեքպոլցի արհեստավորաառևտրական խավի ներկայացուցիչների համար: Սա առավել անբռնազբոս և ազատ պայմաններում շփվելու, հաղորդակցվելու, ծանոթանալու, բարեկամանալու, հասարակական-քաղաքական խնդիրները քննարկելու և վերջապես բամբասելու ամենահարմար եղանակն էր ալեքպոլցիների համար: Ալեքպոլցին որքան ներփակ ու ավանդապաշտ էր իր ներընտանեկան համակեցության հարցերում, այնքան էլ առաջադեմ ու ազատամիտ էր ժամանցի կազմակերպման հարցերում: Ավանդական արհեստավորական խնջույք-խրախճանքներին (քեֆերին), որոնք անցկացվում էին ակումբ-սրճարաններում կամ քաղաքից դուրս՝ հիմնականում Ախուրյանի ափին ***(Արփաչայի քյանարը)*** կամ Քյանդարովի, Սոֆիկի, Վարդապետի այգիներում, եթե մասնակցում էին միայն տղամարդիկ, ապա, ասենք, ռուսների հիմնած Գորկայի այգում կամ թատրոնում ալեքպոլցի տղամարդը հայտնվում էր իր կնոջ և երեխաների ուղեկցությամբ: Այգին ու թատրոնը մի տեսակ ցուցանքի վայրեր էին, որտեղ հասարակության դատին պետք է հանձնվեին ընտանիքի անդամների հագուստը, արդուզարդը, սանրվածքը, այլ կերպ ասած՝ բարեկեցության աստիճանը:

Համքարային ակումբներ և սրճարաններ.

Ալեքպոլցիների ժամանցի անքակտելի և կարևորագույն բաղկացուցիչներն էին համքարային ակումբները (կլուբները), սրճարանները (ղայֆախանաները), պանդոկները (դուքաններ-ը):Հիշյալ հաստատությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ համքարական ակումբ-սրճարանների և ընդհանուր սրճարանների: Ալեքսանդրապոլի սրճարանները բազմաֆունկցիոնալ հաստատություններ էին, որտեղ գործնական և անձնական ծանոթություններ էին հաստատվում,գործարքներ էին կնքվում, համքարային ժողովներ անցկացվում, վեճեր էին լուծվում և այլն: Հայտնի էին Կուզիկենց, Տալոյենց (Տալյաններ-ի), Հայկազունիների, Բախալբաշոնց մեծ սրճարանները: Քաղաքի յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր սրճարան-ակումբը: Այստեղ աշխատանքից հետո հավաքվում էին էսնա-

[1] *Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 167-168:*

ֆական ավագանին, ծանրաբարո ուստաբաշի-ներն ու վարպետները մի գավաթ սուրճի կամ ղահվեի շուրջ քննարկելու համար ճյուղային կորպորատիվ հարցեր, քաղաքային համայն-քին հուզող խնդիրներ և այլն: Սրճարանում պատվիրատուն գտնում էր կապալառուին, մի խոսքով, քաղաքի ողջ տնտեսական և հասա-րակական-մշակութային կյանքը արտածվում էր այս հաստատություններում: Այսպիսի ա-կումբ-սրճարանների մուտքը երիտասարդ խալֆաների և վարպետացուների համար մի տեսակ տաբու էր (հասակային-սոցիալական այս խմբի համար հասանելի էին փոքր պան-դոկները, գինետները և XIXդ. վերջից լայնորեն տարածում ստացած գարեջրատները, որոնց ավագ սերնդի ներկայացուցիչներն սկզբում բավական խեթ-խեթ էին նայում՝ համարելով դրանք երիտասարդությանը ճիշտ ուղուց շե-ղող և հարբեցողություն սերմանող հաստա-տություններ): Ակումբ-սրճարանում էսնաֆա-կանները ապառիկով սուրճ, գինի կամ օղի էին խմում: Յուրաքանչյուրի պարտքը կավճով գրվում էր *չաթալա* կոչվող տախտակի վրա, որը փակցված էր բուխարի-օջախի վերևում: *Չաթալեն սրբելը,* այսինքն՝ պարտքը փակելը պատվի խնդիր էր: Պարտապանը բոլորի աչքի առաջ գումարը հանձնում էր սրճարանատի-րոջը, որն էլ իր հերթին մեկ գավաթ սուրճ կամ օղի էր պատիվ տալիս պարտաճանաչ հաճա-խորդին: Տարիների ընթացքում յուրաքանչյուր էսնաֆական ակումբ-սրճարանում ձևավորվել էին նաև ավանդական խմբակային հացկերույ-թի կանոններ և նույնիսկ ճաշացանկ: Ողջ ձմռանը պարապուրդի մատնված քարտաշ-որմնադիրները, սպասելով աշխատանքային սեզոնի բացմանը, գարնանամուտի տոն հան-դիսացող Բարեկենդանից առաջ իրենց ա-կումբ-սրճարանում *դարսա քյաբաբ* էին պատ-վիրում և էսնաֆական խնջույք կազմակեր-պում: Ակումբում վարպետները նաև թուղթ էին խաղում (*ուչլի, սկյամբիլ, փաստոն*), նար-գիլե կամ չիբուխ ծխում և ունկնդրում քաղաքի կամ դրսեկ աշուղներին: Աշուղական արվես-տին շփվելը ոչ միայն գեղագիտական, այլև հասարակական-քաղաքական, սոցիալական և կրոնաբարոյագիտական խնդիրներ էր հե-տապնդում, քանզի աշուղներն էին միայն, որ բաց տեքստով կամ այլաբանորեն կարող էին խոսել ալեքպոլցիներին և ընդհանրապես հա-յությանը հուզող բազմաթիվ հարցերի մասին: Ակումբ-սրճարաններում տեղի և շրջիկ աշուղ-ները, հայտնի արևելյան սիրավեպեր ու հե-քիաթներ պատմելուց և միմյանց ու հանդիսա-տեսին *մուհամմա*՝ հանելուկ առաջադրելուց բացի, կազմակերպում էին մրցույթներ, որոնց ընթացքում հանդիսատեսներից *փասիյա բա-խալ*՝ խաղադրույք (խաղագումար) էին հավա-քում, որի մի մասը հասնում էր աշուղներին, մի մասը սրճարանատիրոջը, իսկ մնացյալը հանելուկի պատասխանը գտնողին: Եթե էս-նաֆական ակումբ-սրճարանները մի տեսակ կիսափակ կամ կորպորատիվ հաստատու-թյուններ էին, ապա սնկի պես աճող փոքր ու մեծ դուքանները, միկիտան-գինետներն ու գա-րեջրատները պատահական այցելուների և երիտասարդների ժամանցի վայրեր էին: Հիշ-յալ հաստատությունների առատությունը զար-մացրել էր վիճակագրական տեղեկություններ հավաքելու համար Ալեքսանդրապոլ այցելած ռուս սպաներին: XIXդ. 50-ական թթ. «Զինվո-րական ժողովածու»-ի համարներից մեկում ռուս սպան գրում է, որ միկիտանների թիվն այնքան շատ է, որ շուտով Ալեքսանդրապոլը կվերածվի «Դուքան քաղաքի» («Духань го-род»),[1] մեկ ուրիշ սպա արդեն նույն դարի վերջին գրում էր, որ քաղաքում գինու 8 և սպիրտի 2 պահեստ կա, գործում է 114 գինե-տուն և նույնիսկ հաշվել էր, որ 200 շնչին բա-ժին է ընկնում մեկ «խմելու հաստատություն» և զարմացել, որ փողոցներում ոչ մի հարբած մարդ չկա:[2]

[1] *Военный сборник, т. XI, отд. II, с. 483.*
[2] *СМОМПК, вып. XI,1891, с. 154.*

Բաղնիքի ծեսը[1]**.** Բաղնիք գնալը Ալեքսանդրապոլում հատուկ ծիսակատարություն էր: Հարկ է նշել, որ ալեքպոլյան բաղնիքներում քրիստոնյաներն ու մահմեդականները լողանում էին առանձին, որի մասին հետաքրքիր վկայություն կա Մկրտիչ Արմենի «Հեղնար Աղբյուր» վիպակում:[2] Բաղնիքը, բացի կիրառական սանիտարահիգիենիկ նշանակությունից, հաճախորդների և հատկապես կանանց ակումբի դեր է կատարել, զվարճանքի, հանգըստի, ազատ ժամանցի վայր է եղել: Այն զուտ քաղաքային երևույթ էր, հատուկ քաղաքի միջին և հարուստ խավերին: Ինչպես մյուս բոլոր քաղաքներում (Կարին, Կ.Պոլիս, Երևան, Վան, Թիֆլիս), Ալեքսանդրապոլում ևս բաղնիքը կանանց հատուկ հավաքատեղի էր, որտեղ կանանց, աղջիկների և երեխաների մեծ խմբեր էին հավաքվում և լողանում ընդհանուր բաժնում: Լողանալու ընթացքում նրանք շփվում և հաղորդակցվում էին, միմյանց փոխանցում օրվա նորությունները: Բացի այդ, երիտասարդ տղաներ ունեցողներն իրենց որդիների համար հարսնացուի ընտրություն էին կատարում բաղնիքում՝ զննելով աղջիկների կազմվածքը, տվյալներ հավաքելով նրանց առողջության ու բնավորության մասին:

Բաղնիքում հատուկ և առանձին լողասենյակներ չեն եղել, գոյություն են ունեցել միայն տղամարդկանց և կանանց առանձին բաժանմունքներ: Բաղնիք գնալիս հատուկ մետաքսե բոխչայի մեջ տարել են բաղնիքի պարագաները, որի մեջ մտնում էին մաքուր սպիտակեղեն, ցամքոցներ, գլխակապեր և այլ իրեր, ընդ որում՝ աշխատել են տանել ամենագեղեցիկը,ասեղնագործ ու ժանեկագործ նմուշներն ի ցույց ամենքի՝ կարևորելով ներքնազգեստի հարգարժան նշանակությունը: Վայելչության չափանիշները թույլ չէին տալիս լողացողներին լրիվ մերկանալ, ջահել աղջիկներն ու հարսները լողանալիս կրել են անթև, լայն բացվածքով մետաքսե կամ բամբակե շապիկ, տարեց կանայք փաթաթվել են շերտավոր, ծոպազարդ կտորներից կարված գոգնոցներով:

XIXդ. վերջին - XXդ. սկզբներին Ալեքսանդրապոլի բաղնիքի բոխչան ընդգրկում էր նալիկները՝ ոսկեթել ասեղնագործությամբ, սադափազարդ (այսպիսի նալիկներ պահպանվել են նաև այլ քաղաքներից), խավավոր ասեղնագործ ցամքոցներ՝ գլխին կապելու (*գլխեկապ*), ոտքերը սրբելու և փաթաթվելու մետաքսյա հատուկ կտոր (*քյաշանի փեշտամալ*): Գործածվում էին նաև լողանալուց հետո, ընդմիջումներին հագնելու խավավոր լայն խալաթներ: Մեծահասակ կանայք և երեխաները լողանալուց հետո գլուխներին կապում էին լաչակ՝ սպիտակ բամբակյա կտորից: Երեխաների լաչակներն ասեղնագործվում էին և եզրազարդվում ժապավենաձև նեղ ժանյակով: Բաղնիքի բոխչայի ուշագրավ մասերից են շապիկներն ու ուսնոցները, որոնք կանայք գցել են թաց հյուսերի տակ բաղնիքից վերադառնալիս: Դրանք զարդարվում էին ոսկեթել, մետաքսաթել ասեղնագործությամբ, բուսական երկրաչափական զարդանախշերով, երբեմն մարդակերպ պատկերներով և մակագրությամբ:

Բաղնիքում լողանալն ունեցել է որոշակի արարողակարգ: Խստորեն պահպանվել է ավագության կարգը, որպես հարգանքի նշան՝ ընդունված էր միմյանց, հատկապես տատիկներին և երեխաներին լողացնելը:

Բաղնիքի ծեսն ուղեկցվել է ճոխ ճաշկերույթով՝ որպես արարողակարգի պարտադիր մաս: Բաղնիք գնացել են մերձավոր հարազատներով և բարեկամներով: Միմյանց բաղնիք հրավիրելը հարգանքի և պատվի նշան է համարվել: Բաղնիք հրավիրել են նոր հանգուցյալի տերերին՝ քառասունքից հետո և սգահան արել:

Շատ հանդիսավոր են ընթացել փեսաբաղնիքը և հարսնաբաղնիքը: Հարսանիքի նախորդ օրը քավորը, ընկերները և բարեկամ-

[1] *Լ. Աթանեսյան, էջ 127, նկ. 1:*

[2] *Կ. Բազեյան, Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղը Մ. Արմենի «Հեղնար աղբյուր» վիպակում, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ.VIII, Գյումրի, 2005, էջ 65:*

ները փեսային նվագով, երգով ու պարով բաղնիք են տարել, լողանալուն զուգընթաց՝ զվարճացել, կատակել ու մինչև կեսգիշեր զբաղվել խրախճանքով: Հարսնացուին բաղնիք են տարել հարսանիքից 2-3 օր առաջ՝ մայրը, հարազատները և բարեկամները: Մինչև լողանալը հանդերձարանում տոնական նախաճաշ էին կազմակերպում՝ հյուրասիրելով բաղնիքի աշխատողներին ու լողացողներին, երգում, կատակում, բարեմաղթություններ անում, հետո նոր՝ լողանում: Ընդ որում, բոլորը ցանկանում էին՝ հարսնացուին իրենք լողացնեն: Նույն ձևով բաղնիք էին տանում նորահարսին հարսանիքից հետո, այս անգամ՝ սկեսրանք:

Ալեքպոլի հայտնի բաղնիքներն էին՝ Մարտիրոս աղի՝ 14 փողոցի վրա, 21 և 23 փողոցների միջև, տղամարդկանց ու կանանց բաժիններով, Հակոների՝ 27 փողոցի վրա, 16 և 24 փողոցների միջև, Գևոր աղի՝ 16 փողոցի վրա, 23-25 փողոցների միջև, Ջիթողցոնց բաղնիքը Մունդառչայի ու 20 փողոցի անկյունում, Ուռմնոց բաղնիքը՝ 26 փողոցի և Մունդառչայի անկյունում: [1]

Թաղային կռիվները. XIXդ. կեսերից Անդրկովկասի մի շարք քաղաքներում (Թիֆլիս, Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ) որպես ժամանցի ձև տարածված էին, այսպես կոչված, «թաղային կռիվները», որոնք միաժամանակ տղամարդկանց հասակային խմբերի և ձոնման ծեսերի (ինիցիացիա) ձևափոխված, վերապրուկային արտահայտություններ էին, տարբեր քաղաքներում յուրովի դրսևորումներով: Ալեքսանդրապոլում այդպիսի ժամանցային-մրցութային կռիվների մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Խայաթ Զահրիյանի ձեռագիր հիշողություններում: [2]

Կարինից և ընդհանրապես Բարձր Հայքից գաղթածներն իրենց հետ Ալեքսանդրապոլ բերեցին ոչ միայն համքարային հարուստ ավանդույթները, այլև դրանց բաղկացուցիչ մասը կազմող քաջվորաց կամ կտրիճվորաց կազմակերպություններին բնորոշ թաղակռիվները: Դրանք ուժային-մրցակցային կռիվներ էին և կրում էին կազմակերպված բնույթ, քանի որ ունեին չգրված օրենքներ, որոնք խստորեն պահպանվում էին, և որի նպատակն էր գերիշխանություն ունենալ քաղաքում: [3]

Հայոց քաղաքային կենցաղում երիտասարդական խմբերի՝ «եղբարց կամ քաջվորաց միաբանությունների», «կտրիճվորաց եղբայրությունների» գոյության և գործունեության մասին ամենավաղ վկայությունները վերաբերում են XIII դարին:[4] Այս խմբերի առանձնահատկությունն այն է, որ դրանք ունեին խիստ արտահայտված ռազմականացված բնույթ: Լինելով համքարային կազմակերպությունների բաղկացուցիչ մաս՝ այս կազմակերպություններն ունեին ավելի շատ ինքնապաշտպանական գործառույթ: Ավելի ուշ՝ XIXդ. գործած երիտասարդների հասակային խմբերի պաշտպանական-ռազմական գործունեությանն է անդրադարձել Լ. Վարդանյանը, որը, վկայակոչելով այլ հեղինակների, նշում է, որ գյուղերում տարբեր թաղերի պատանիների խմբերի միջև երբեմն առաջանում էին վեճեր կամ թըշնամանք, որն էլ հանգեցնում էր նրանց ընդհարմանը:[5] Ինչ վերաբերում է քաղաքներին, ապա, ըստ նույն հեղինակի, դրանք գտնվում էին համքարությունների վերահսկողությունների ներքո և Արևելյան Հայաստանում չունեին այնպիսի ընդգծված ռազմականացված բնույթ, ինչպես Արևմտյան Հայաստանում: Փաստորեն, կորցնելով նախնական ինքնա-

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 111-112:*

[2] *Խայաթ Զահրիյան, նշվ.աշխ., էջ 8092:*

[3] *ՀՀ ԳԱԱ ՀԱԻ պարարվեստի բաժնի արխիվ, Ժ.Խաչատրյանի ֆոնդ:*

[4] *Լ. Խաչիկյան, Երզնկայում 1280թ. կազմակերպված «Եղբայրությունը», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկատու», Եր., 1951, № 12: Նույնի Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը, «Բանբեր մատենադարանի»,Եր., 1962, № 6: Վ. Գրիգորյան, Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «Կտրիճվորաց եղբայրությունների» մասին, ՊԲՀ, Եր., 1963, № 2:*

[5] *Л. Варданян, Традиции мужских возрастных групп у армян в конце XIX-начале XX вв. (Историко-этнографическое исследование), АЭФ, т. 12, Ер., 1981, с. 103-107.*

պաշտպանական գործառույթը, այդ կռիվները շարունակվեցին՝ ձեռք բերելով ժամանցի բնույթ. օրինակ՝ Ջավախքում դրանք թաղային քարակռիվներն էին,[1] իսկ Ալեքսանդրապոլում՝ ձեռնամարտերը: Ըստ Ժ. Խաչատրյանի՝ Ախալցխայում հաճախ կռվում էին գետով բաժանվող հին և նոր քաղաքի «ազաբների խմբերը»:[2]

Շատ հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Թիֆլիսում կենցաղավարած թաղային կռիվների մասին, որոնք նույնպես ներկայացված են որպես զուտ ժամանցի սիրված ձևեր:[3]

Ալեքսանդրապոլի կռիվները ներկայացնող Խայաթ Զահրիյանը, այն համարելով «մի անախորժ ու մռայլ սովորություն… որ ընդունված էր ժամանակի անփորձ երիտասարդների մեջ»,[4] միաժամանակ բավականին մանրամասն նկարագրում է դրանք՝ անուղղակի ցույց տալով քաղաքային կենցաղում դրանց ունեցած կարևոր նշանակությունը: Հեղինակի թվարկած թաղային խմբերը ներկայացնում են Ալեքսանդրապոլի ամենահայտնի թաղերը, որոնց մի մասն առ այսօր պահպանել է իր ուրույն դեմքը՝ *սլաբոդկի, ձորի, բոշի, բոստանճիների, փափանենց, ուռումներու և ֆրանկների*: Ուշագրավ է այն, որ հիշյալ խմբերը ներկայացված են անվանական ձևով՝ յուրաքանչյուր կռվողն առանձին-առանձին: Բացի այդ, նկատվում է մեկ այլ առանձնահատկություն ևս՝ միացյալ խմբերով կռիվները. «փափանենց մայլի կռվող տղաները միացած ուռումներու մայլի տղոնց հետ կռվում էին ֆռանկների մայլի տղոց հետ, իսկ ֆռանկների մայլի տղերքն էլ միացած էին սլաբոդկի մայլի տղերանց հետ աներկյուղ կռվում էին: Ձորի մայլեցի քոյվլի թախումի տղաները միանում էին բոշի մայլի հետ՝ կռվում բոստանճիների թախումի հետ»:[5]

Կռվողների յուրաքանչյուր խմբի հովանավորում՝ «փողով օգնում» էին թաղի հարուստները: Հովանավորությունն այն էր, որ նախքան կռիվն սկսելը երիտասարդները մտնում էին գինետուն, մի փոքր ամրապնդվում՝ «գլուխները լավ տաքացնում», նոր դուրս էին գալիս հրապարակ: Այդ կերուխումի ծախսը վճարում էին վերոհիշյալ հարուստները:[6] Ուշագրավ է, որ նման սովորույթ գոյություն է ունեցել նաև Թիֆլիսում, որտեղ կռվողներին հովանավորողների թվում հիշատակվում են իշխաններ Արչիլ Մուխրանսկին, Դ. Բեհբութովը, նույնիսկ վրաց թագավոր Հերակլ II-ը, որոնք որպես հանդիսատես միշտ ներկա էին լինում այդ մրցումներին:[7] Այստեղ ևս, նախքան կռվելը, երկու կողմերի ներկայացուցիչները մտնում էին դուքան, որտեղ նախկինում պարտվածները հրավիրում էին հաղթողներին մի բաժակ գինի խմելու և պայմանավորվելու կռվի պայմանների մասին:[8]

Ալեքսանդրապոլում կռիվները տեղի էին ունենում կիրակի օրերին՝ ցերեկվա ժամի երկուսին: Նախապես որոշվում էր այն հրապարակը, որտեղ կայանալու էր կռիվը: Քանի որ այդ երևույթը պարբերաբար էր տեղի ունենում, այսինքն՝ արդեն սովորույթ էր դարձել, հրապարակում նախօրոք հավաքվում էր հանդիսատեսների մեծ բազմություն: Ընդ որում առաջին շարքում տեղերը զբաղեցնում էին այն մարդիկ, որոնք փող էին տալիս կռվողներին:[9]

Այս կռիվների ծիսականացված բնույթի վկայությունն է այն, որ կռվողները հրապարակ էին մտնում դուդուկների նվագակցությամբ: Հատկանշական է, որ Թիֆլիսում ևս

---

[1] *Ժ. Խաչատրյան, Ջավախքի ժողովրդական պարերը, ՀԱԲ, հ. 7, Եր. 1975, էջ 14:*

[2] *ՀԱԻ պարարվեստի բաժնի արխիվ, Ժ. Խաչատրյանի ֆոնդ:*

[3] *И. Гришашвили, Литературная богема старого Тбилиси. Тбилиси, 1977.*

[4] *Խ. Զահրիյան, նշվ. աշխ., էջ 8094:*

[5] *Նույն տեղում, էջ 8095:*

[6] *Նույնը, էջ 8096:*

[7] *И.Гришашвили, указ. соч., с. 23; Ю. Анчабадзе, Н. Волкова, Старый Тифлис, Город и горожане в XIX веке, М., 1990, с. 215.*

[8] *Նույն տեղում, էջ 22:*

[9] *Կ. Բազեյան, Ալեքսանդրապոլի թաղային կռիվների մասին, ՇՊՄԺ յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 145:*

կռվողների խմբերին ուղեկցում էին երաժիշտները (զուռնաչիներ, դհոլչիներ, երգասացներ), որոնք նվագում և գովերգում էին քաջերին:[1] Ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ Թիֆլիսում կռիվն սկսում էին երկու կողմերը ներկայացնող ավելի փոքր՝ 10-12 տարեկանների հասակային խմբի պատանիները: Կարճ ժամանակ կռվելուց հետո նրանք թողնում էին թատերաբեմը, և առաջ էին գալիս բուն կռվողները: Կիրառվում էին ձեռնամարտի տարբեր եղանակներ, որոնց միջոցով հաջողության չհասնելու դեպքում գործի էին դրվում գոտիների մեջ խրած կարճ դագանակները: Կռվի կանոնների համաձայն՝ կռվողներն իրավունք ունեին, բռունցքներից բացի, գործի դնելու դագանակներ կամ փայտյա թրեր, որոնք կրում էին մեջքի վրա, ինչպես նաև քարեր, որոնք նետում էին պարսատիկներով:

Ինչպես ցանկացած մրցման, այս դեպքում ևս կռվող կողմերին ոգևորում էին երկրպագուները, որոնք փորձում էին ինչ-որ ձևով օգնել իրենց թիմերին: Ըստ Խայաթի՝ փափանենց թաղի տղաներին օգնել են Պոլոզ Մուկուչն ու Բուլուլ Մակարեն, որոնք, տղաների հետևում կանգնած, որոշակի ձայնային նշաններով հասկացնում էին աջից կռվել, ձախից, թե հետ քաշվել: Ըստ հեղինակի՝ դա Պոլոզ Մուկուչի «գյուտն էր», որը մեծ ոգևորություն էր առաջ բերում, և կռվողները սովորաբար հաղթում էին: Կռիվն ընթանում էր այնքան ժամանակ, մինչև որևէ կողմը վերջնական հաղթանակ չտաներ: Երբեմն դրանք հասնում էին արյունահեղության և վնասվածքների, այդ ժամանակ նոր միջամտում էին իշխանությունները և դադարեցնում կռիվը:

Թաղային կռիվների որոշ արձագանքներ պահպանվեցին նաև խորհրդային շրջանում, սակայն դրանք ըստ էության կորցրել էին իրենց նախնական ռազմամարզական բնույթը և ստացել ավելի շատ հանցագործ միջավայրին բնորոշ երանգ:

[1] *Гришашвили И.,указ. соч., с. 23.*

Լոթիություն[2]**.** XIXդ. 70-80-ական թթ. Ալեքսանդրապոլի քաղաքային կենսաձև ներմուծվեց մի արատավոր երևույթ՝ լոթիությունը, որը կարճ ժամանակում պետք է արհավիրք դառնար քաղաքացիների գլխին: Լոթիները առանց որոշակի զբաղմունքի, կիսահանցագործ, սանձարձակ, ցուցամոլ և կիսալյումպենացված երտասարդներ էին, որոնք XIX դ. վխտում էին Թիֆլիսում, Բաքվում և Կովկասի քիչ թե շատ հարուստ այլ քաղաքներում: Այս երևույթը մինչև վերը հիշված ժամանակները խորթ էր ավանդապաշտ Ալեքսանդրապոլի և հատկապես առաջին հոսանքի գաղթականների ու նրանց սերունդների համար: Սակայն օտարածին և դրսեկ այս երևույթը համաճարակին հատուկ արագությամբ սողոսկեց ալեքսանդրապոլցի երիտասարդության մի ոչ ստվար հատվածի մեջ: Ալեքսանդրապոլում լոթիության ծնունդի ականատեսներն ու հետագա ուսումնասիրողներն այս արատավոր երևույթի արմատավորման պատճառները տեսնում են 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և դրանից հետո քաղաքում ստեղծված տնտեսական և բարոյահոգեբանական վիճակի մեջ:[3] Ռուսական բանակի աննախադեպ մեծ թվի կուտակումը Ալեքսանդրապոլում որոշակի աշխուժություն առաջացրեց քաղաքի առևտրատնտեսական կյանքում, որն առաջին հայացքից դրական հետևանքներ պետք է ունենար քաղաքային համայնքի համար: Սակայն իրականությունը առավել դաժան դուրս եկավ, և քաղաքը բավական երկար ժամանակ ճաշակում էր «տնտեսական հրաշքի» դառը պտուղները: Հեշտ վաստակի հետևից ընկնելով՝ շատ արհեստավորներ և նույնիսկ բոստանչիներ, թողնելով իրենց պապենական զբաղմունքը, զանազան չափերի միկիտաններ բացեցին քաղաքում, մեծ չափերի հասան ապառիկ վաճառքն ու վաշխառությունը: Սրանց զումարվեց նաև քաղաքի ավանդական բարոյական նորմերին ոչ հարիր մեկ այլ երևույթ

[2] *Լ. Աթանեսյան, էջ 129, նկ. 6:*

[3] *Կ.Սեղբոսյան, նշվ. աշխ., էջ 231-232:*

նս՝ ռուսական զինվորական իշխանությունների հովանավորությամբ Ալեքսանդրապոլում կիսալեգալ սկսեցին գործել անառականոցներ, որոնց «քրմուհիների» ծառայություններից օգտվում էին նաև տեղի երիտասարդները: Պատերազմից և ռուսական կայազորի մեծ մասի Կարս տեղափոխվելուց հետո նորաթուխ հարուստներից շատերը սնանկացան: Ժամանակի հայկական մամուլում («Մշակ» թերթ) բավական գունագեղ և մի քիչ էլ չափազանցված ներկայացվում է քաղաքային համայնքին տիրող անկումային տրամադրությունը: Եթե հավատանք «Մշակ»-ի թղթակիցներին, ապա կտեսնենք, որ քաղաքում ամենուրեք «լրբություն» է տիրում, լսվում են բարձրաձայն հիշոցներ, փողոցներում վխտում են զանազան սրիկաներ և արհավիրք դարձած լոթիներ, որոնցից «միայն խոլերան կփրկի»:[1]

Իսկ ովքե՞ր էին լոթիները և ինչո՞վ էին տարբերվում մյուս երիտասարդներից: Տարբեր ժամանակներում և քաղաքային տարբեր մշակութային միջավայրերում երիտասարդության հասակային ընդհանուր խմբից առանձնացել են որոշակի փոքր կամ մեծ խմբավորումներ, որոնց անդամները տարբերվում էին մյուսներից իրենց հագուստով, սանրվածքով, հասարակության մեջ պահվածքի ինքնօրինակ ձևերով, խոսելաոճով, ժարգոնով, նույնիսկ գաղափարներով (դենդիներ, ոսկե երիտասարդներ, ստիլյագներ, գվարդիականներ, գողականներ, հիփիներ, նոր ռուսներ, սափրագլուխներ, փանքեր և այլն): Սրանց մեծ մասը չուներ արհեստ կամ զբաղմունք և իրենից ներկայացնում էր լյումպենացված տարրերի բնորոշ օրինակ: Լոթիությունը ևս այսպիսի խմբավորումներից մեկն էր, որը բավական երկար ժամանակ պատուհասել էր Ալեքսանդրապոլը: Այա քաղաքի բնակչության որոշ շերտերի համար դարձել էր յուրօրինակ ապրելակերպ: «Լոթիների մեջն էլ կար շերտավորում, բայց իսկական լոթի հաշվվում էին նրանք, ովքեր գլխավորապես բանեցնում էին հյուրանոցներ, միկիտան-գարեջրատներ, սրճարան-ճաշարաններ և նման ձեռնարկություններ, որոնցից շատերը անառակ կանանցով... Լոթիների մեջ կային նաև որոշ անորոշ զբաղմունք ունեցողներ, պատվազուրկ մարդիկ, որոնց մասին, ինչպես նշում է Պարույր Բարսեղյանն ալեքպոլյան ամենահայտնի լոթի Պոլոզ Մուկուչին նվիրված իր անտիպ հուշերում, հեգնանքով ասում էին՝ «յաչքերեն լոթի», «լոթու շախպա դնողներ», «դախլի վրայեն բաժակ փախցնողներ», «միկիտանի մինդարներ» և այլն»:[2]

Ալեքպոլցի լոթին հատուկ՝ մյուսներից տարբերվող տարազ էր հագնում: Գլխին կրում էր ծուռ դրած *շապիկա*, հագնում թեք կտրված *դոշով*, հիմնականում սև չերքեզկա (սրանից էլ *դարաչուխարի տղա* արտահայտությունը),որի լայն թևքերը դուրս էին ծալված, կապում էր ծանր գնդերով արծաթե գոտի, ոտքերին կային սրաքիթ, անկրունկ երկարաճիտ կոշիկներ կամ սապոգներ: Լոթիի տարազի պարտադիր ատրիբուտ էր *բերութը*՝ դաշույնը: Այս անբանները զբաղվում էին հարբեցողությամբ, թափառում էին միկիտաններում, այցելում ռուսների բացած անառականոցները,զբաղվում մոլախաղերով (թղթախաղ, զառ և այլն), *դոխբազություն* (դուշբազություն) էին անում և պատեհ-անպատեհ տուրուդմփոց էին սարքում քաղաքի փողոցներում, որոնք կարող էին ավարտվել նաև մարդասպանությամբ:[3] Սրանց ձեռքից չէին պրծնում քաղաք այցելած հարևան գյուղերի բնակիչները, որոնք ծաղր ու ծանակի էին ենթարկվում՝ աննշան գներով սրանց զիջելով իրենց հետ բերած գյուղմթերքը, կամ ծեծվում էին: Լոթիների այս գործելակերպը հար և նման էր թիֆլիսյան կինտոների պահվածքին. կինտոները ևս սպասում էին գյուղացիներին Թիֆլիսի մերձակայքում՝ գնելով նրանց ապրանքը: Ընդ որում, գյուղացիների վրա «զանգվածային հարձակումը» կրում

[1] *«Մշակ»,1880, № 125; 1882, № 46:*

[2] *Պ. Բարսեղյան, Պոլոզ Մուկուչ (բնութագիր), ՀԱԻ, ԲԲԱ, FF VI, տետր 4, Եր., 1969, էջ 6638-6640:*

[3] *Նույնը:*

էր կազմակերպված բնույթ, և ոչ մի գյուղմթերք արտադրող Հավլաբարի կողմից չէր կարողանում առանց այդ գիշատիչներին շրջանցելու մտնել Թիֆլիս ու հասնել շուկա:[1]

Հատուկ պետք է նշել լոթիների ցցուն արտահայտված ցուցամոլության մասին: Ալեքպոլցի լոթիները սիրում էին քաղաքի նորահայտ ֆոտոատելեներում լուսանկարվել՝ ձեռքներին գինու գավաթ, զուռնաչիների հետ, զույգով կամ խմբակային: Լոթիները 6 հոգով 8 կառք էին վարձում, զուռնաչիների հետ պտտվում էին քաղաքի փողոցներում, իսկ կառքերից մեկի մեջ նստեցնում էին գինետիրոջը, որն անընդհատ նրանց գինի և օղի էր մատուցում: Լոթիական մեկ ուրիշ խուժան լցվում էր գյուղական սայլերի մեջ, իսկ զուռնաչիներին նստեցնում ուղտերի վրա և թափառում քաղաքի շուկայի մերձակա տարածքներում: Լոթիների հարբած օրգիաները հատկապես վտանգավոր էին կիրակի և տոն օրերին, երբ նրանք տեր ու տնօրինություն էին անում քաղաքի փողոցներում: Լոթիների ցերեկային արկածների շարունակությունն էին դառնում գիշերային կողոպուտները և թալանը: Քաղաքի էսնաֆական ավագանին զգալով, որ պետական իշխանություններն ինչ-ինչ պատճառներով չեն կարողանում կամ չեն ցանկանում պայքարել այդ արատավոր երևույթի դեմ, ստիպված էր սեփական ուժերով միջոցներ ձեռնարկել: Խանութների և արհեստանոցների տերերը գիշերային պահակներ էին վարձում կամ էլ լրացուցիչ վարձով ծառայությունից դուրս աշխատանքի էին վերցնում ոստիկաններին և գորոդովոյներին: Բացի այդ, երիտասարդ էսնաֆները ևս փորձում էին սաստել կամ ուժի գործադրմամբ կարգի բերել չափն անցած լոթիներին: Ի վերջո քաղաքային համայնքի ուժերով մի քանի տասնամյակում հաջողվեց զսպել լոթիներին, սակայն լոթիությունը՝ որպես երևույթ և քաղաքային կենսաձևի ուրույն արտահայտություն, պահպանվեց գոնե արտաքին, ցուցադրական ատրիբուտիկայի մակարդակում: Այսպես կոչված, «լոթիփոթի տղեքը» նույնիսկ խորհրդային իշխանության առաջին տարիներին «շողում» էին լուսանկարներից՝ գինու բաժակները ձեռքներին՝ հետին պլանում սեղանին դրված գինու շշի ֆոնին:

Ասեկոսեներ և բամբասանք. Ալեքպոլցի նկարիչ Գևորգ Բրուտյանն ունի կենցաղային տեսարաններ պարունակող գրչանկարների «Հին Գյումրի» կոչվող շարք (1937թ.):[2] Ծաղրանկարներ համարվող, սակայն իրենց բնույթով ավելի շուտ շարժ հիշեցնող նկարներում հեղինակը ծաղրի է ենթարկում քաղաքի ոչ վաղ անցյալի «հետամնաց» մի շարք սովորույթներ: Կենցաղային ժանրի տեսարանների (ամուսնական, հուղարկավորման արարողություններ, բաղնիքի ծես և այլն) մեջ կա բամբասանքի թեմայով մի տիպական գծանկար: Հայրենի քաղաքի կենցաղին ու բարքերին քաջածանոթ նկարիչը արվեստագետին հատուկ խորաթափանցությամբ և վարպետությամբ կարողացել է բամբասող կանանց ձեռքերի, աչքերի ու բերանի շարժումներով ներկայացնել բնակչության մեջ լայնորեն տարածված այդ սովորույթի ամբողջ պատկերը: Ալեքպոլյան ասեկոսեների և բամբասանքի հյութեղ նկարագրություններ ենք հանդիպում նաև Ավ. Իսահակյանի «Ուստա Կարո» անավարտ վեպում և հատկապես «Ուստա Կարոյի այցը սանամայրերին» պատմվածքում:[3]

Հատկանշական է, որ ալեքպոլցիները բամբասանքը համարում էին իրենց քաղաքին բնորոշ խիստ բացասական երևույթ՝ միաժամանակ քննադատաբար վերաբերվելով իրենց կողմից անընդունելի այդ սովորույթին: Անշուշտ, բամբասանքը զուտ Ալեքպոլին հատուկ հատկանիշ չէ, այն հատուկ էր հայկական

[1] *Ю.Г. Анчабадзе, Н.Г. Волкова, Старый Тбилиси, с.66.*

[2] *Լ. Աթանեսյան, էջ 127, նկ. 2:*

[3] *Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1975, էջ 249-279:*

գյուղական և քաղաքային բոլոր բնակավայրերին:

Ընդգծելով հասարակական կյանքի ու կենցաղի ստվերոտ կողմերն ու երևույթները՝ բամբասանքները՝ որպես բանահյուսության տեսակ, իրենցից ներկայացնում են պատկերավոր արտահայտությունների ու կայուն բանաձևերի մի համաձուլվածք: [1]

Բամբասանքներում տեղ են գտել.

- Առած-ասացվածքներ - Կընգա խորատեն չի պակսի, Ջուրը մտնին լողալ գիտեն, քյասարն հելնին դողալ գիտեն, Մեր հացի մեջ աղ չկա և այլն:
- Դարձվածքներ - Մե կովեն, տասը ծովեն, Օրը մեգ է, ծեձը՝ հազար, Քիչ այիբ ունեյիք, քոթեշ էլ հանեցիք, Բիթունն (բոլորն) էլ մե սանդրոի կտավ են, Չտեսան ճակտեն կախ, տեսան պատեն կախ և այլն:
- Օրհնանքներ - Օղորմի հիրան, լուսը կաթա գերեզմանին, Ասվաձ քեզի կյանք տա, Օղորմի քու անցավորներին և այլն:
- Անեծքներ - Սաբաբ էղնողի լուսը քոռնար, Գեդինը մտնիս, Գեդնի օխտը դատը անցնիս, Ասսանից (աստծուց) գդնիս, Ասսու բոբոլական (բաբելական) կրակը թափի գըլխուդ, Այ վա՛յը էրգրիդ գլխուն, Ջուլումդ բլի, Բալեքդ թաղեմ, Էրթըլներդ էղնի, գալերըդ չէղնի, Գլխուդ վերևը ճերմակ վարդիկ չտեսնիս, Ծակռտի՛ս, ծակ-ծակ շապիկ հագնիս և այլն:
- Լուտանքներ - թերմըշներ, լըգդի, քյաֆթառ, խուժընններ, այլանտագ, մեյմուն, չիչո, դախպա, իշու սըպպա (կամ իշու ձագ), պատռած վեկսիլ, չտես գյորմամիշ անտերներ, փոշտի թանաքաման և այլն:
- Պիտակավորումներ- երկան էշ, ուռած գըլոխ, բիրդան աղա, չռփըսըզներ (պարկեշտության սահմանն անցնողներ) և այլն:

Բամբասանքներում վառ գույներով ներկայացված են ալեքպոլցուն հատուկ զվարճախոսությունն ու սրամտությունը, որը հատկապես լավ է երևում համեմատություններում, ինչպես օրինակ՝ «Բրդի էրտամ էդ իշու ձագի հանգըջեն թըղթով բռնեմ, օր ձեռներըս չըկեղդոդի», «Շաքյարը էնքան քիչ է լըցրե, օր ֆիշնեն գունը թռցրել է», «Էշը ինքն է, խոդը ուրիշի առաջը կդնե», «Օտը գիդես թե քիչըմ մաքրվավ. մէ այլանդագըմ սիկտիրը քաշեց գնաց» և այլն:

Ունենալով կիրարկման և կենցաղավարման լայն ոլորտներ՝ բամբասանքներն ընդգրկում են ալեքպոլյան քաղաքային մշակույթի սոցիալական, կենցաղային, անձնական, հոգեբանական, քաղաքական և այլ բնագավառներ: Արտահայտվելով քաղաքային բանահյուսությանը բնորոշ ժարգոնային բառերով, գռեհկաբանություններով, հասարակաբանություններով, թուրքաբանություններով և ռուսաբանություններով՝ դրանք ստեղծում են ազգագրական, սոցիալ-հոգեբանական տիպորոշ միջավայր՝ որոշակի նկարագրություններով, դիպվածներով ու ըմբռնումներով: Բամբասանքներում դրսևորվում են ժողովրդի բարոյահոգեբանական առանձնահատկությունները, արժեքային համակարգը, կենցաղամշակութային յուրահատկությունները և այլն:

Սովորաբար բամբասանքի նյութ է դառնում այն երևույթը, անձնական այն հատկանիշը, որը հասարակական կարևորություն է ներկայացնում: Բամբասանքին մասնակցողների սեռատարիքային պատկանելությամբ պայմանավորված՝ խոսակցության թեման կարող է ընդգրկել անհատական-հասարակական հարաբերությունների լայն շրջանակ և վերաբերել կենցաղային ցանկացած հարցի՝ նայած թե զրուցակիցների համար ինչն է կարևոր:

Ավանդաբար բամբասանքը համարվել է կանանց բնորոշ զբաղմունք, և դա հաստատվել է քրիստոնեական հավատամքով: Ալեքպոլյան ժողովրդական իմաստությունն ասում է. «Բամբասելը և խոռվելը կնկա փեշակ է»:[2] Դա հաստատում է նաև Իսահակյանը. «Էնպես

[1] *Ռ. Խաչատրյան, Բամբասանքն իբրև բանահյուսության տեսակ, ՇՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 51-52:*

[2] *Ն. Նիկողոսյան, նշվ. աշխ., էջ 7468:*

դուրս կուգա, որ կնկա համար լսող պետք էր. էնքան, որ ինքը խոսի: Կնկա ականջն էղեր է օղի համար, թե չէ՝ խոսքի, կնկա խոսքն էլ որ կա, իրան մանած թելեն երկեն է»:[1]

Ավանդաբար քաղաքի բնակչությունն ավելի շատ ազատ ժամանակ ուներ, քան գյուղացին: Քաղաքաբնակ կանայք, ինչ-որ տեղ կտրված լինելով համայնքի կյանքին ակտիվորեն և ուղղակի մասնակցություն ունենալու հնարավորությունից, բամբասանքով և ասեկոսեներով անուղղակիորեն, միջնորդավորված «ինտեգրվում» էին դրա մեջ: Բամբասանքն ու ասեկոսեների տարածումը և՛ զրույցի, և՛ ժամանցի յուրահատուկ եղանակ էին քաղաքային հասարակության կենցաղում: Բամբասանքը նաև որոշակի հոգեկերտվածք ունեցող մարդկանց բնորոշ զբաղմունք էր և նույնիսկ ապրելաձև: Չարախոսելը, զրպարտելը, անպատվելը, վատաբանելը, պիտակներ կպցնելն ու ծաղրելը ալեքպոլյան հասարակության որոշակի հատվածի համար «առօրեական զբաղմունքի» էին վերածվել:

Թեև միշտ էլ ալեքպոլցիների կողմից բամբասանքը քննադատվել է, համարվել անվայելուչ,մերժելի երևույթ, սակայն դա չի խանգարել, որ այն գոյատևի և ընդգրկի կիրարկման լայն ոլորտներ: Ալեքպոլցի կնոջ չգրված բարոյականության կոդեքսի պահանջներից մեկն էլ խոսքի մշակույթին է վերաբերում. «Կնիկը պտի խոսքի ետևն ու առաջը իմացող էղնի, բերանն էկած խոսքը չըսե, լավըմ չափե, ձևե, նոր խոսի, փորեն դուս էկող խոսքը բկի քյառթերուն քցե, մնացածը ծանդր ու թեթև էնե, նոր դուս հանե: Կնիկը լըղըլղչի, խաբարբզան, խաբար տանող ու բերող, ուրիշներուն իրար քցող (գժտեցնող) պտի չեղնի»:[2] Բամբասասեր կամ բամբասանքչի մարդուն ալեքպոլցիներն անվանում էին՝ լըղըլղչի, չիչո, խաբարբզան, խառնակչի, խոսք տանող-բերող, յոթ ծովի մերան (կամ յոթ մածնի մերան), ճալան-ճոթան, չանթա, անթել տելեգրաֆ և այլն:

Մեր ձեռքի տակ եղած բամբասանքի նյութերը, իրենց չափազանցությամբ հանդերձ, հետաքրքիր տվյալներ են տալիս Ալեքպոլի առտնին կենցաղի, հատկապես կանանց զբաղմունքների, նրանց հետաքրքրությունների ու հատկանիշների մասին: Բամբասանքների ժամանակ արծարծված թեմաներով կարելի է պատկերացում կազմել այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն իսկական կինն ու տղամարդը, երիտասարդն ու ծերը, նրանց արտաքինում կամ վարքում ինչն է ընդունելի կամ մերժելի, բարոյական որ հատկանիշներն են համարվում դրական կամ բացասական և այլն: Ամենաշատ քննարկվող թեմաներն են կանանց գործ անելը, արտաքինը, վարքը, պահվածքը, ընտանեկան հարաբերությունները, ամուսնությունն ու աղջկատեսը:

Ալեքպոլցի կնոջ համար մաքրասիրությունը ամենակարևոր հատկանիշներից մեկն էր. «… թող բերանըմ էրկուս պակաս խորաթա էնե… յիստըկութենը խոմ փարով-փլով չէ, բան ու գործի անունն ինչ է»:[3] Այդ է պատճառը, որ շատ հաճախ քննարկվում էին այն գործերը, որոնք տնից դուրս էին կատարվում՝ ի ցույց ամենքին: Այդպիսի գործերից էին լվացք անելն ու բուրդ լվալը: Ընդունված կանոն էր տարին մեկ լվալ ներքնակների բրդերը, իսկ երեք տարին մեկ՝ վերմակներինը, այնպես որ ամռանը կանայք ցույց էին տալիս և՛ իրենց հմտությունը, և՛ կարողությունը: Բնական է, որ լվացքի մաքրությունը և փռելու ձևը, բուրդը լվալն ու ձաղկելը, անկողինը կարելը դրկից-հարևանների, սկեսուրների ու տեգերկինների քննարկման և բամբասանքի թեմա էր դառնում: Բերենք օրինակ. «Բուռտըս լվացի, փռեմ քիչըմ չորնա, չըբղեմ: Ես ըսի՝ լըմգաձ է, հըմը չէ. էնքան լավ լըվացվավ, աբրեշում դարձավ: Տեսնեյր էրեգ էն Օսանն էլ էր բուռտ լըվացե. զուլումըդ բլի. քեզի կընիգ ըսողին ինչ ըսեմ. ճըմռտե, դրել էր էն կողմ. կըսեմ՝ ըխչի՞, լավ չես լվացե, կըսե ընձի ձեռ կուդա: Այ վա՞յս խե-

[1] *Ավ. Իսահակյան, նշվ. աշխ., էջ 275:*
[2] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 60:*
[3] *Հ. Գյոլեցյան, տետր 1, էջ 117:*

լառ գըլխուտ. ես հընչի՞ բըդի քեզ պես լգդու հեդ թուլ տամ խոսա՞մ, օր դու էլ քեզի երեվագայես: Գիդե՝ չիդենք վօվ է…»:[1]

Ալեքպոլցի տանտիկինը, ինչպես արդեն ասվեց, հատուկ էր պատրաստվում ձմռանը կամ «ձմեռվա թադարուքին», որի մասն էր կազմում մուրաբաների և այլ պահածոների պատրաստումը: Բամբասանքի մյուս թեման այս եփութափն էր, որ նույնպես կարևորվում էր կնոջը բնութագրելիս: Ինչպես երևում է նյութերից, պարծենալու առիթ էր բազմատեսակ, մեծաքանակ մուրաբաների ու այլ կերակուրների պատրաստումը,գնված ապրանքի որակն ու քանակը. «…ընձի հըմար գինը նշանակուտուն չունի. լավն էղնի, փարին չեմ աշե. էդ էր պագաս. խո վերեվի խուժընները չեմ, կերտան բազրից ապուռ-ժուբուռ կառնին գուկան …հոդը աշխըրի գլխուն. ըսենք չտես են, ի՞նչ են տեսե օր. խո մեզի պես չե՞ն ճոռտե ու պոռտե: …Համեն օր հինքը կըտեսներ, թե բազրեն ինչ տեսագ ֆիշնա, գիլազ, ծորին, տիյա հերեգ էլ մոշ ու էն հանտեր, ի՞նչ կըսեն. հա մալինա. թանգ ու էժնին չեմ աշե. ինչ կըսեն կուդամ ու կառնիմ»:[2] Մեկ այլ բամբասանքում քննարկվում է մուրաբա եփելու հմտությունը. «Մեր հարևան Վարսոն ֆիշնի միրաբա էր էպէ: Ըսի՝ էրտամ շնորքը տեսնիմ. միրաբա զուլումդ բլի. գուն չկար հէրեսը. մուրաբինը գունն է. մուրաբեն օր գունով չեղնի…չլցնես վազը կարմրի… հոդը քեզի պես կնիգ ըսողի գըլխուն. շաքյար էնքան քիչ է լըցրե, օր ֆիշնեն գունը թոցրել է. մե կովեն, տասը ծովեն. ջուր. ի՞նչ մուրաբա»:[3] Բերված օրինակները ցույց են տալիս նաև ալեքպոլցիներին հատուկ մեծախոսությունը կամ, ինչպես ժողովուրդն է ասում,«մեծբերնությունը», չափազանցնելու, գլուխ գովելու, ուրիշին չհավանելու, անուն դնելու հատկությունը:

Հարկ է նշել, որ մեր ձեռքի տակ եղած բամբասանքների նմուշներում արտահայտված են նաև ալեքպոլցի տղամարդու որոշ ընդունելի հատկանիշներ, ինչպես օրինակ՝ «տըղեն կնգա գյամը բդի ձեռը պայե», «տղամարդը բդի խըմե», «էն թարֆեն օր գուգար, կըսեյն էրնեգ տիրոջդ. մայլի կընգտիգ ախ կենեյն, մէ անգամ հետը խոսայն, գիդես էդոնց պես ղզի՞գ էր»: [4]

Բամբասանքների մյուս կարևոր թեման երիտասարդ աղջիկների արտաքինը, պահվածքն ու նրանց ամուսնությունն է: Եթե XIXդ. եվրոպական հագուստը և հատկապես դիմահարդարման միջոցները դժվարությամբ էին կենցաղ ներմուծվում, ապա XXդ. սկզբին երիտասարդ կանանց շրջանում դրանք կամաց-կամաց դառնում էին բավական տարածված և ընդունելի տարրեր: Հագուստի ազատականացումն իր հետ բերեց արտաքին տեսքի այնպիսի փոփոխություններ, որոնք նախկինում համարվում էին անվայելուչ՝ կնոջ, աղջկա համար անընդունելի: Ալեքպոլցիները նորաձև, չափից դուրս ազատ հագնված և շպարված կանանց այսպես էին բնութագրում. «Ինչըղ օր օրիորդ Վարսենիկն էղնի»: [5]

Անշուշտ, նման բամբասանքները բացասական հետևանքներ էին ունենում, երբ տվյալ աղջկան ուզնկան էին գալիս: Ալեքպոլյան սովորության համաձայն՝ տղայի համար աղջիկ ուզելիս ծնողները հարսնացուի վարքի, շնորքի մասին տեղեկություններ էին հավաքում հարևաններից: Հասկանալի է, որ երբեմն չարախոսությունն իր հետևանք ունենում էր, և ամուսնությունը չէր կայանում:

Այսպիսի դեպքի մասին պատմում է նաև Մկրտիչ Արմենը «Հեղնար աղբյուր» վիպակում. «Սոսկալի վիրավորված, Մկրտչի մայրը վերադարձավ տուն՝ արդեն ճանապարհին մտածելով, թե ինչ կերպ վրեժ լուծի ամբար-

[1] *ՀԱԻ, ԲԲԱ, Հր. Մկրտչյանի նյութեր, FFVI, էջ 4094-4833, FFXI, էջ 71:*

[2] *Նույն տեղում, էջ 66:*

[3] *Նույն տեղում, էջ 67:*

[4] *Նույն տեղում, էջ 65, 129, 68:*

[5] *Օրիորդ Վարսենիկը ալեքպոլցի այն եզակի աղջիկներից էր, որը կրթություն էր ստացել Ռուսաստանում և, վերադառնալով հայրենի քաղաք, իր «ազատ» հագ ու կապի, ավանդապաշտ ալեքպոլցիների համար խորթ դիմահարդարման ու վարվելաձևերի համար ծաղրի էր ենթարկվում:*

տավաններից: Չանցավ նույնիսկ մի օր, և ամբողջ Զորի Բողազով տարածվեց նորությունը.- Մկրտչի մայրը գնացել է Հեղնարին ուզելու իր տղայի համար, բայց նկատել է, որ աղջիկը հիվանդ է… Հեղնարի անունը միանգամից կոտրվեց: Հարսնախոսների անընդհատ հոսքը նրանց տուն կտրուկ ընդհատվեց»: [1]

Ալեքպոլցի տղամարդու համար բամբասանքն ու ասեկոսեն անպատիվ երևույթներ էին: Օրնիբուն աշխատող արհեստավորը բամբասելու և ասեկոսեներ տարածելու ժամանակ չպետք է ունենար, բայց սրանց շրջանում էլ կային բարոյական կանոնակարգից շեղված մարդիկ, որոնց նկատմամբ քամահրանքով էին վերաբերվում «ղայդին տղամարդիկ»:

Բամբասանքների և ասեկոսեների տարածման ամենահարմար վայրերը քաղաքային ակումբները, սրճարանները, վարսավիրանոցներն ու գինետներն էին, որտեղ քննարկվում էին ամենաբազմազան թեմաներ: Երկրի ու քաղաքի անցուդարձը հատկապես շատ էր արտացոլվում ասեկոսեների մեջ, և ալեքպոլցիների մեջ տարածված էր հետևյալ բանաձև ընդհանրացումը. «Օր բիթուն ժողովուրդը կըսե ու կըխոսա, ուրեմըն բանըմ կա: Չէղած տեղը հեչ մարդ բան չի խոսա: Կրակ օր չէղնի՝ մուխ չի դուրս գա»:

[1] *Մ. Արմեն, Հեղնար աղբյուր, Եր., 1961, էջ 11:*

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՏՈՆԵՐ

XIX դ. վերջին–XX դ. սկզբին Ալեքսանդրապոլում նշում էին հետևյալ տոները՝ Ամանոր, Սուրբ Ծնունդ, Սուրբ Սարգիս, Տյառնընդառաջ, Բարեկենդան, Մեծ պաս, Զատիկ, Համբարձում, Վարդավառ, Սուրբ Աստվածածին, Սուրբ Խաչ:

Նոր տարին կամ Կաղանդը մեծ շուքով էր տոնվում: Նախապես մաքրում և կարգի էին բերում բնակարաններն ու հագուստը. կարում էին նոր շորեր կամ կարկատում հները և պարտադիր լողանում, ամեն կերպ աշխատում էին պարտքերը մարել և, եթե որևէ մեկի հետ գժտված էին, հաշտվել՝ փոխանակելով «էվել, պակաս հալալ էրա» և «հալալ էղնի» դարձվածքները: Այս բոլորի իմաստնն այն էր, որ առաջիկա տարին լինեն մաքուր և ապրեն հաշտ ու համերաշխ, բարեկեցիկ կյանքով: Այս բոլորից հետո գնում էին եկեղեցի՝ սուրբ հաղորդություն ընդունելու և մեղքերին թողություն խնդրելու: Դեկտեմբերի 25-ից մինչև հունվարի 5-ը գյումրեցիները մեծ ջերմեռանդությամբ Քրիստոսի ծննդյան պասն էին պահում, ի դեպ, Նոր տարվա համար պատրաստվող բոլոր ուտելիքները պասուց կերակուրներ էին: Եփում էին լոբի, սիսեռ, բակլա, ոսպ, կարտոֆիլ և չորացրած ու թթու դրած կանաչեղեն: Մեծ քանակությամբ օգտագործում էին ընդեղեն, չրեր, չամիչ, փշատ, խուրմա, կոզինախ և այլն: Երեխաների, աղջիկների ու նորահարսերի համար պատրաստում էին տափակ կոնֆետներ. շաքարը շաղախում էին օսլայի հետ, տարբեր չափերի քառանկյունաձև տեսք էին տալիս, փաթաթում գունավոր թղթերով, ծայրերն ամրացնում, վրան կպցնում ծաղիկների, կենդանիների և աղջիկների նկարներ: Գյուղացիներն այդ կոնֆետներն անվանում էին *սուրաթով* (դիմանկարով) *կոնֆետ*:[1]

Նոր տարվա առիթով անպայման թարմ հաց էին թխում, գաթա և կարկանդակներ:[2] Հատկապես կարևոր էին ծիսական *տարի* կոչվող գաթան ու *քիսա* կամ *վասիլ* կոչվող կարկանդակները: *Տարի* գաթան մեծ, կլոր թխվածք էր, որի մեջ որևէ նշան, հիմնականում մանրադրամ էին դնում և ամսի չորսին հանդիսավոր կտրում՝ բաժին հանելով տան անդամներից յուրաքանչյուրին: Ում բաժնից դուրս գար դրամը, համարվում էր, որ այդ տարվա մեջ նա հաջողակ ու երջանիկ կլինի: Բացի այդ, տան անդամների համար մեկական քիշմիշով ու ընկույզով զարդարված կարկանդակ էին պատրաստում և նայում, թե եփվելու ընթացքում ինչ տեսք կընդունի այն՝ եթե ուռչեր, ուրեմն տիրոջը հաջողություն էր սպասում, եթե «սմքեր»՝ անհաջողություն, աղքատություն, եթե ընկներ թոնրի մեջ՝ կուտ գնար, ապա կարծում էին, թե մարդ կմահանա:

Սովորաբար դեկտեմբերի 31-ի գիշերը չէին նստում՝ սպասելով ժամը 12-ին. հավատում էին, որ այդ ժամին աղբյուրի ջուրը մեկ ժամի չափ ոսկի ու արծաթ է դառնում: Երիտասարդները, որոնք հավատում էին դրան և

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 2, էջ 104:*
[2] *Նույն տեղում, էջ 101-102:*

գնում էին ջուր բերելու, հետ չէին նայում, որպեսզի սատանաները իրենց չբռնեն: Բերած ջուրը լցնում էին իրենց տան բոլոր ամանները, եթե անասուն ունեին, նաև նրանց ջրամանները՝ այն հավատով, որ դա առատություն կբերի իրենց ընտանիքներին: Գուշակություններ էին անում նաև հաջորդ օրը, որը կոչվում էր *բախտիորձուկ*: Երիտասարդները վաղ առավոտյան մեկական կտոր հաց էին դնում կտուրի վրա և նայում, թե ագռավները ո՞ր կողմ են տանելու հացը՝ հավատալով, որ հենց այդ կողմից է գալու իր փեսացուն կամ հարսնացուն: Ուրիշները բանալիով էին գուշակություն անում. բանալին դնում էին փողոցում և լուռ սպասում անցորդների ու նրանց խոսակցություններից հանգում եզրակացությունների:

Հունվարի 1-ին արթնանում էին շատ վաղ՝ հավատալով, որ վաղ արթնացողը մեծ բախտի կտիրանա: Առաջինը տան ամենատարիքով կինն էր դուռը բացում և դեմքը արևելք դարձնելով՝ ասում. «Դովլա՛թ, սա՞րն էս, ձո՞րն էս, արի՛ տուն»: Այնուհետև տատերն ու պապերը գնում էին եկեղեցի՝ ժամերգության, և նրանց վերադառնալուց հետո նոր ընտանիքի բոլոր անդամները սեղան էին նստում: Տան մեծերի բարեմաղթանքից հետո բոլորը միմյանց շնորհավորում էին, այնուհետև գնում ազգականների ու հարևանների տները՝ շնորհավորելու:Սովորաբար երիտասարդներն էին գնում տարիքով հարազատների տները՝որպես հարգանքի նշան:

Քրիստոսի ծնունդը. Գյումրեցիները Ծննդյան տոնը ավելի շուքով են տոնել, քան Նոր տարին: Նրանք, ովքեր չէին հասցրել հաղորդվել նոր տարուն, հունվարի 5-ի *խթման* (ճրագալույց) պատարագին անպայման հաղորդվում էին: Տուն վերադառնալով՝ նրանք ներս էին մտնում, «Շնորհավոր Ծնունդ և աստվածհայտնություն» ասելով՝ նշխարք բաժանում տան անդամներին, որով վերջիններս հաղորդակից էին դառնում սուրբ օրվա պատարագի խորհրդին (շնորհքին): Ապա ամբողջ ընտանիքով հավաքվում էին սեղանի շուրջը և բացում պասը՝ *թաթախվում*: Գյումրեցիները հունվարի 5-ի երեկոն անվանում էին թաթախման գիշեր: Ծննդյան տոնի սեղանը, որը բացվում էր քուրսու վրա, շատ առատ էր լինում, սակայն առանց մսեղենի, քանի որ նավակատիք էր: Սեղանին անպայման պիտի լիներ բրնձով *ջհեզով* փլավ, չորացրած կանաչ լոբի պաստեղով կամ ձվով, ձուկ՝ խաշած կամ տապակած: Թաթախմանը, ինչպես Նոր տարուն, տան մեծն էր առաջինը բաժակ վերցնում և շնորհավորում՝ «Շնորհավոր Ծնունդ և Մկրտություն», ի պատասխան ստանալով՝ «Օրհնյալ է ծնունդը Քրիստոսի»:

Պատարագից հետո տանտիկիններն անպատճառ ամանները լվանում էին և այդ ջրով լվացվում՝ հավատալով, որ հակառակ դեպքում «հավկուրություն կստանան»: Նույն օրը ցերեկը ջուր չէին խմում, որ փող գտնեն, իսկ խմողը, անպայման փողի կորուստ կունենար: Հունվարի 5-ի երեկոյան 8-12 տարեկան տղաները 2-3 հոգով շրջում էին տնետուն «Ավետիս» երգելով. «Այսօր տոն է ծննդյան, ավետիս, Տյառն մերո և հայտնության, ավետիս, այսօր արևն արդարության, ավետիս, երևեցավ ի մեջ մարդկան, ավետիս»: Ավետիս ասողներին տանտիկինները փող, ձու, տարբեր ուտելիքներ էին տալիս, դրանցով նրանք հաջորդ օրը քեֆ էին անում:[1]

Հունվարի 6-ից սկսվում էր Ծննդյան տոնակատարությունը, որը տևում էր 4-5 օր: Բոլորի սեղանները այդ օրերին բաց էր լինում, և ինչպես նոր տարուն, սկսում էին այցելությունները միմյանց տուն: Փողոցում իրար հանդիպելիս ծանոթ-անծանոթ իրար շնորհավորում էին՝«Շնորհավոր Ծնունդ և Մկրտություն», «Օրհնյալ է մկրտությունը Քրիստոսի»: Առավոտյան եկեղեցում մեծ հանդիսավորությամբ կատարվում էր մկրտության արարողությունը, որի ժամանակ խաչը գցվում էր ջուրը, այսինքն՝ խաչը թաթախվում էր ջրի մեջ՝ ի նշան

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 2, էջ 113:*

Քրիստոսի մկրտության: Այդ օրվա համար նախապես քավոր էր ընտրվում, որը նախապես եկեղեցուն որոշակի գումար էր տալիս՝ խաչին քավոր կանգնելու իրավունք ձեռք բերելու համար: Պատարագի ավարտից հետո յուրաքանչյուրը փորձում էր այդ օրհնած ջրից տուն տանել: Այդ ջրից տան անդամները քսում էին աչքերին, որ չկուրանան, իսկ մնացածը ցողում էին հացի ամբարները, կարասները, սենյակները, որ տարին հաջող, անփորձ ու *բարաքյաթով* լինի:

Շիրակում և Ալեք-Պոլում գտնում էին, որ Ջրօրհնեքից հետո օրը մի գարու հատիկի չափ երկարում է. սովորաբար ասում էին. «Պզտիկ գոլն ընկավ»:

Օխտն անվան տոնը. Ծնունդից մեկ շաբաթ հետո կատարվում է օխտն անվան տոնը: Այդ օրը Հովհաննես, Մկրտիչ, Կարապետ, Մարտիրոս, Մարգարե, Առաքյալ և Հայրապետ անուն ունեցողների անվանակոչության օրն էր: Բարեկամները գնում էին հիշյալ անունները կրող հարազատների կամ ընկերների տոնը շնորհավորելու:

Սուրբ Սարգիս. Ծննդյան տոնից մոտ երեք շաբաթ հետո գալիս է Սբ Սարգսի տոնը, որին նախորդում է մեկշաբաթյա պասը: Սուրբ Սարգսի պասի ընթացքում լվացք չէին անում, չէին լողանում, մի խոսքով, օճառ չէին օգտագործում, որ սրբի ձին չսայթաքի և հաջողությամբ տեղ հասնի: Երիտասարդ աղջիկները, բացի պասից, նաև *միաժում* ծոմ էին պահում, ողջ ցերեկը ոչինչ չէին ուտում և խմում, միայն երեկոյան հաց ու պասուց կերակուր էին ուտում: Ուրբաթ երեկոյան չամուսնացած երիտասարդներն աղի բլիթ էին ուտում ու ծարավ քնում՝ այն հավատով, որ երազում տեսնեն, թե ով է իրենց ջուր տալու. ում տեսնում էին՝ գուշակում էին, որ նա է լինելու իր զուգընկերը: Եթե ջրի ամանը ոսկուց լիներ, հարստության նշան էր, եթե արծաթից՝ միջակի, իսկ եթե պղնձից կամ կավից՝ աղքատի: Հավատում էին նաև, որ եթե ամանի միջի ջուրը լիքը լիներ՝ երկար կապրեն, եթե կիսատ՝ կարճ: Բացի այդ, սովորույթի համաձայն, փոխինդով սինի էին դնում տան ամենամաքուր և ամենախաղաղ անկյունում, առաջը մոմ վառում, եթե Սուրբ գիրք ունեին՝ դնում էին կողքին, աղոթում և գնում քնելու: Ալեքպոլցիները հավատում էին, որ եթե արդար են, Սուրբ Սարգիսը գիշերը անաղմուկ գալիս է, անցնում՝ փոխինդի վրա թողնելով նիզակի կամ ձիու պայտի հետքը: Առավոտյան վաղ արթնանալով՝ սրբատարոփ ստուգում էին սինին և խիստ վշտանում, երբ դրոշմ չէր լինում, մտածում էին, որ իրենք մեղքեր շատ են գործել, իսկ եթե լինում էր, դա մեծ ուրախություն էր պատճառում նրանց:

Շաբաթ առավոտյան այդ փոխինդով խաշիլ էին եփում, կանեփով, քիշմիշով աղանձ պատրաստում: Աղջիկները վաղ առավոտյան մեկական պատառ հաց կամ փոխինդից գնդիկ էին դնում բակի մի անկյունում կամ կտուրին և սպասում, թե թռչունները ուր կտանեն դրված պատառը, որ գուշակեն, թե որ կողմից է գալու իրենց փեսացուն: Պատահում էր, որ շունն էր տանում, որը խիստ վշտացնում էր աղջկան, քանի որ վերջինս համոզված էր, որ իրեն դժբախտ ամուսնություն է սպասում՝ «շան բաժին է լինելու»: Եթե հացը դեպի գերեզմաններն էին տանում,մտածում էին, որ մահվան նշան է:

Տյառնընդառաջ կամ տերընդեզ.

Փետրվարի 13-ին տոնում էին Տերընդեզի տոնը, որը նվիրված էր նորապսակներին: Այդ օրը՝ երեկոյան, եկեղեցում կատարում էին Տյառնընդառաջի նախատոնակը, և երբ մոմերը վառվում էին՝ հետևում, թե կրակի բոցը ո՛ր կողմն էր թեքվելու՝ գուշակելով այդ տարվա բերքի առատությունը: Ժամերգությունից հետո ներկաները վառվող մոմ էին տանում տուն, որ իրենց խարույկների խոտը վառեն: Մոմը ամբողջությամբ չէին վառում, թողնում էին կիսատ և վառում էին կարկուտի ժամանակ, որ այն դադարի: Այդ մոմից մի քանի կաթիլ կա-

թեցնում էին գլխարկների մեջ, որ կայծակից պաշտպանվեն:

Կրակը վառելու պատվավոր իրավունքը նորափեսայինն էր: Կրակը վառում էին այդ տարի ամուսնացած կամ նշանված աղջկա բակում: Եթե հարսը *հերանց* տանն էր, առավոտյան սկեսուրը նրան *փայ* էր ուղարկում՝ աղանձ, ընկուզեղեն, մրգեր և այլ քաղցրեղեն, իսկ երեկոյան ժամերգությունից հետո ազգական կանանց հետ այցելում նրանց տուն: Հենց նա էր հարսին ուղեկցում կրակի մոտ: Կրակի շուրջն առաջինը երեք անգամ պտտվում էին նորապսակները, ընդ որում, հարսի գիրկը տալիս էին նորածին տղա երեխա, որ առաջնեկը տղա լիներ: Այնուհետև պտտվում ու թռչում էին մյուսները. ծննդկանը երեխայի հետ պտտվում էր, որ քառասունքից դուրս գա, չբեր կանայք թռչում էին՝ հագուստի փեշերը այրելով, որ երեխա ունենան, տանտիկինները՝ որ տունը չարքերից ազատեն: Բոլորից շատ ուրախանում էին երեխաները, որոնք թռչելով բացականչում էին. «Տերընդեզ, դարմանը կես»:

Խարույկի ծխի ուղղությամբ գուշակում էին, թե հացի բերքն ինչպիսին է լինելու. եթե ծուխը հարավ կամ արևելք էր թեքվում, ուրեմն առատ տարի էր լինելու, իսկ եթե հյուսիս կամ արևմուտք՝ վատ: Մեծահասակ կանայք խարույկից մնացած մոխիրը լցնում էին կճուճները, որ կերակուրները անպակաս լինեն, թափում էին տան երդիկից ներս՝ ասելով. «Կատուն ներս, մուկը՝ դուրս», որպեսզի մկները վերանան, լցնում էին հավանոցի երդիկից ներս՝ ասելով. «Մեր հավերը գըռթան էղնին, մեր կովերն էլ՝ ճըռթան», մնացածը, եթե գոմ ունեին, լցնում էին այնտեղ, որ անասունները չհիվանդանան և շատ կաթ տան: Շիրակում և Ալեքպոլում Տերընդեզին ասում էին. «Մենծ գոլն ընկավ»:

Մարտի 1-ին տանտիկինները քուրսու մինդարներն ու ջեջիմները դուրս էին հանում, խփում պատերին և կանչում. «Մարտը՝ ներս, շվոտը՝ դուրս», որով տանից դուրս էին քշում չար ոգուն (շվոտին), որը ձմռան ընթացքում պահ էր մտել տան անկյունում:

Բարեկենդան. Սա այն նշանավոր տոներից էր, որն ալեքպոլցիները նշում էին մեծ շուքով: Այն տևում էր երկու շաբաթ, որի ընթացքում քաղաքի ողջ բնակչությունը քեֆ էր անում: Ամեն կողմից լսվում էին նվագի ու երգի ձայները: Մի քանի ընտանիքներ հավաքվում էին ամենաընդարձակ սենյակ ունեցողի տանը և մինչև լույս երգում ու պարում: Բարեկենդանին պատրաստում էին ամենայուղոտ,մսեղենով համեղ կերակուրներ, թխվածքներ, որ *ուժ ու ղվաթ* հավաքեն գալիք պասի համար: Բարեկենդանի երկրորդ շաբաթը Բուն բարեկենդանն էր, որի ժամանակ դադարեցվում էին աշխատանքներն ու դասերը: Դպրոցներում կազմակերպում էին ցերեկույթներ: Հրավիրվում էին նաև ծնողները, իսկ թատրոններում ներկայացումներ էին անցկացվում տեղի դերասանների ուժերով:

Բարեկենդանի երկրորդ շաբաթվա հինգշաբթի օրը Վարդանանց տոնն էր նշվում: Այդ օրը եկեղեցում պատարագ էր մատուցվում, երգում էին Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակավոր» երգը՝ նվիրված Վարդան Մամիկոնյանին: Այդ օրը Ալեքպոլում համարվում էր ազգային մեծ տոն, ուստի բոլորը երգում էին Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու, Մ.Նալբանդյանի բառերով գրված հայրենասիրական երգեր: Հինգշաբթի գնում էին Վարդան, Վահան, Գարեգին, Արտակ, Հմայակ, Եղիշե, Ղևոնդ անուններով բարեկամների տները՝ շնորհավորելու նրանց տոնը: Այդպիսով, ողջ շաբաթն անցնում էր կերուխումով, երգ ու պարով, զվարճություններով, հումորով ու սրամտություններով: Վերջին օրը՝ երեկոյան, կաթնապուր ու մածուն էին ուտում, ապա ձու՝ ասելով. «Բերաններս փակում ենք սպիտակ ձվով, Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու»:[1]

[1] *Գ. Աղանյան, ԴԱՆ, Լենինական, 1999, տետր 1:*

Մեծ պաս. Մեծ պասի առաջին երկուշաբթի օրը տոնական բնույթ էր կրում: Այդ օրը նշանված աղջկա սկեսրանք նվերներով ու կաղինի մեծ պաշարով գնում էին հարսի տուն՝ կաղին խաղալու և պասը շնորհավորելու: Հարսնացուի մայրն այդ օրը եփում էր պասուց կերակուրներ և հատկապես *պոչով ապուր*, որը ճաշակելուց հետո սկսվում էր խաղը: Խաղացողը բռով վերցնում էր կաղինը և բուռը փակած հարցնում խաղընկերոջը՝ «ջուխտ է, թե՞ թաք», և պատասխանն ստանալուց հետո հաշվում էին բռի մեջ եղած կաղինների քանակը: Եթե ճիշտ էր գուշակել, կաղինը տրվում էր խաղընկերոջը, իսկ եթե ոչ՝ մնում էր նրան:

Սովորության համաձայն՝ քուրսու տան առաստաղից կախում էին *ախոլոճը*՝ կարտոֆիլի կամ սոխի գլուխ՝ վրան ամրացված 7 փետուր, որոնցից մեկը յուրաքանչյուր շաբաթվա վերջում հանում էին: Այն հատկապես երեխաներին վախեցնելու համար էին կախում, որ պասը չխախտեն: Չնայած երբեմն, մեծերից գաղտնի, մայրերն իրենց զավակներին կերակրում էին յուղով կամ պանրով: Ընդհանրապես ընդունված էր կիրակի օրերին՝ մինչև սերմը գետնին գցելը, աղանձ ուտել, որովհետև հավատում էին, թե ցանքից հետո ուտելու դեպքում սերմի հատիկները կչորանան:

Մեծ պասի ընթացքում օրը երեք անգամ ժամերգություն էր կատարվում և ծեր կանայք ու տղամարդիկ պարտադիր մասնակցում էին արարողությանը՝ աղոթելով իրենց և հարազատների առողջության ու հաջողության համար: Պասի առաջին շաբաթ օրը կոչվում էր *թալալոցի օր*: Այդ օրը նորածին երեխա ունեցող կանայք չէին աշխատում, որ երեխաները չթալկանան՝ ուշագնաց չլինեն: Հավատում էին, որ տոնը չպահողների երեխաները կարող են հիվանդանալ ընկնավորությամբ:

Միջունք (քառսուն մանուկ). Մեծ պասի չորրորդ շաբաթը *միջունք* էր կամ «Քառսուն մանուկ»: Այդ օրը նշանված տղաների տանից հարսին *միջնափայ* և ընծաներ էին տանում, իսկ երիտասարդ հարսներն ու աղջիկները հավաքվում էին մեկի տանն ու «Քառասուն մանուկ» կատարում. նրանք պետք է քառասուն անգամ ծունր դնեին և վեր կենային. մի գործողություն, որ բոլորին չէր հաջողվում: Երբ մեծահասակներն ու երեխաները քնում էին, նրանցից ամենափորձառուն ու նախաձեռնողը, համրիչը ձեռքին, հայտարարում էր ծնրադրման արարողության սկիզբը՝ ամեն մի ծնրադրումից հետո համրիչից մի հատիկ գցելով, և այդպես՝ 1600 անգամ: Այդ ընթացքում խմբով, երգեցիկ ձայնով արտասանում էին. «Քառսուն մանուկը լճին, թագն ու պսակը ճտին, ինչ որ տվիր բաղնեպանին, անոր կեսն ալ ինձի տուր», կամ «Քառսուն մանուկ, քառսուն կուս, քառսուն մանկան բարեխոս, լիճկե-լիճկե, լիճկեցավ, քառսուն մանուկ թմմեցավ: Տո՛ւր ինձ թագ, տո՛ւր ինձ պսակ, առնիմ էրթամ ժամի դուռ»: Ծնրադրման արարողությունը շատ դժվար և հոգնեցուցիչ էր, սակայն ոչ ոք չէր ցանկանում առաջինն ինքը կիսատ թողնել՝ մեծ մեղք համարելով: Վերջապես հոգնած, ցավոտ ծնկներով անկարող շարժվելու, հավաքվում էին ընթրիքի սեղանի շուրջը, կատակելով ու սրախոսելով անցկացնում էին մինչև լույս:

Գրիգոր Լուսավորիչ. Մեծ պասի հինգերորդ շաբաթ օրը տոնվում էր Գրիգոր Լուսավորչի տոնը: Այդ կիրակին ևս հանդիսավոր պատարագ էր մատուցվում, իսկ երեկոյան ալեքպոլցիները գնում էին՝ Գրիգորների տոնը շնորհավորելու:

Ծաղկազարդ կամ Ծառզարդար. Մեծ պասի վեցերորդ շաբաթը Ծառզարդարի տոնն էր: Այդ կիրակի պատարագ էր մատուցվում, եկեղեցում օրհնում էին ուռենու ճյուղերը, որոնք ժամավորները տանում էին տները և գցում խնոցու մեջ, որ առատ կաթ ունենան, կամ ամբարի մեջ՝ ալյուրը անպակաս մնալու նպատակով, կախում էին պատից՝ որպես հաջողության խորհրդանիշ: Ծառզարդարին հատիկ էին անում՝ ցորենը խաշում, հետը խառնում անուշեղեն և բաժանում երեխաներին:

Հատիկի իմաստն այն էր, որ դրանով նպաստում էին անձրևի առաջացմանը, ցանված սերմի թրջվելուն և արդյունքում՝ բերքի առատությանը: Այդ օրը 8-10 տարեկան երեխաները երգելով ճիճեռնակ էին խաղում՝ շրջելով հարևանների ու բարեկամների տներն ու արտասանելով. «Ճեռ-ճեռ ճիճեռնակ, Ասսու հալալ պիպեռնակ, Հընկերս ընկավ ծովը, Ծովեն յելավ ծիրանը, Խունկ առեք, մոմ վառեք, տասերկու պատարագ էրեք: Ով օր տա, շեն մնա, Ով օր չտա, սև հավին ռ...ին դեմ մնա»: Տանտիկինը հատիկ կամ ձու էր տալիս նրանց, որը ուրախ-ուրախ ճաշակում էին:[1]

Քրիստոսի հարությունը կամ Սուրբ Զատիկ. Զատկի համար ևս բնակարանը՝ սենյակները, նախասենյակը, խոհանոցը, մառանը շատ մանրակրկիտ մաքրում էին՝ թոզ էին առնում, փայլեցնում էին ամանեղենն ու սպասքը, շարում թարեքներին: Լվանում էին անկողինները, հագուստները, երեխաների համար կարմիր կտորից նոր շորեր կարում, իրենք էլ բաղնիք գնում և զատիկը մաքրված դիմավորում: Զատիկին ևս հաղորդվում էին մեղքերի համար:

Տոնակատարություններն սկսվում էին Ավագ հինգշաբթի օրվանից: Երեկոյան սկսվում էր ժամերգությունը, որը տևում էր մինչև լույս և կոչվում էր *խավարում:* Այդ օրը գլուխ չէին լվանում, որ չգժվեն, օճառ չէին գործածում, որ կսկիծ չտեսնեն, տան անդամների թվաքանակով կամ յոթ ձու էին խաշում և պահում, որ շաբաթ օրն ուտեն՝ ատամնացավ չունենալու համար: Եկեղեցում օրհնած յուղը քսում էին աչքերին, ճակատին, կամ անասունների հիվանդ տեղերին, որ լավանան, մի փոքր էլ գցում էին յուղի կարասները, որ առատ յուղ ունենան:

Ավագ հինգշաբթի գիշերը դարբինները լուռ՝ *անժմի*, գնում էին խանութները՝ երկաթ գողանում և լուռ, առանց խոսելու դրանից պատրաստում մատանիներ, ապարանջաններ, վզնոց-դողեր (*վզի թաքո*), ուրբաթարուրներ, որոնք առավոտյան վաճառում էին եկեղեցու առաջ (այստեղից էլ ուրբաթախոս բառը):[2] Այդ *անժմիները* մայրերը կախում էին երեխաների օրորոցից, կարում էին տղա երեխաների հագուստին, ապարանջաններով զարդարում հարսների ու աղջիկների թևերը, որ չարքերից ազատվեն: Հետևյալ օրը դարբինները չէին աշխատում, որ չկրկնեն հրեա դարբինների մեղքը, և չհամարվեն Քրիստոսին մեխողներ:[3]

Ուրբաթ օրը կանայք կար ու կարկատան էին անում կամ ասեղներով բարձերն ու մինդարները ծակծկում, որ «Հուդի աչքերը հանեն»: Ուրբաթ երեկոյան եկեղեցիների բեմը փակող վարագույրները բացում էին: Այդ արարողությանը, որ կոչվում էր *դռնբացեք*, մայրերը անպայման իրենց աղջիկներին տանում էին մասնակցելու, որ *բախտը բացվի*:

Շաբաթ օրը *թաթախման* օրն էր, ինչպես Ծնունդի տոնին: Երեկոյան 10-12 տարեկան տղաները գնում էին մոտիկ հարևանների տներն ու *դանելյա* կարդում (Դանիել մարգարեի մասին): Այդ օրը երեկոյան ժամերգությունից հետո ձու էին ուտում և պասը բացում կամ *թաթախվում*: Տոնական սեղանների զարդը գույնզգույն ներկած ձվերն էին, որոնք կռվեցնում էին՝ մեծ ուրախություն պատճառելով հատկապես երեխաներին: Զվախաղի մի քանի եղանակներ կային, որոնք բոլորն էլ սիրված ու տարածված էին քաղաքում: Այդ օրը միս ուտել չէր կարելի, քանի որ կիրակին հասարակական մատաղի՝ *ախառի* օրն էր, որը նվիրված էր հին ու նոր հանգուցյալների հիշատակին: Շաբաթ երեկոյան թաղի բնակիչները միանում և մի կով կամ եզ էին մատաղ անում, որը ողջ գիշեր եփելուց հետո՝ վաղ առավոտյան, բաժանում էին բոլոր մասնակիցներին: Ով այդ օրը մատաղի մսով չբացեր բերանը, նա ողջ տարին միս ուտելու իրավունք չուներ:

[1] *Հ. Գյոլեցյան, տետր 2, էջ 134:*

[2] *Գ. Աղանյան, Երկաթը և երկաթագործական առարկաները հայ ժողովրդի հավատալիքներում, ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 7, Գյումրի, 2004, էջ 67-68:*

[3] *Նույնը:*

Երկուշաբթի գերեզմաններն այցելելու և օրհնելու օրն էր: Քահանաները հերթով այցելում էին բոլոր ննջեցյալներին և «հոգւոցն հանգուցելոց» կարդում:

Ալեքսանդրապոլում Զատիկի ավագ շաբաթվա օրերը անվանում էին հետևյալ կերպ՝ Ավագ երկուշաբթի և երեքշաբթի, Չիք-չորեքշաբթի, Ավագ հինգշաբթի կամ Խավարման օր, Հուդի ուրբաթ, Զատկի շաբաթ, Ախառի կիրակի:[1]

Համբարձում. Զատկից 40 օր հետո գալիս է Համբարձումը, որը երիտասարդ աղջիկների ու հարսների տոնն էր: Նախորդ օրը թաղի հարսներն ու աղջիկները մեծահասակ կանանցից որևէ մեկի ուղեկցությամբ գնում էին դաշտ՝ ծաղիկ հավաքելու, ողջ ճանապարհին երգելով, ծիծաղելով ու ուրախանալով: Ծաղիկներն այնուհետև փունջ-փունջ կապում էին, շարում սալաների մեջ ու դնում հով տեղ, որ չթառամի: Գիշերը ժամը 12-ին տարիքավոր կնոջ հետ աղջիկները գնում էին ջուր գողանալու: Յոթ աղբյուրից կամ ջրհորից լուռ ու անձայն վերցնում էին ջուրը, փարչի բերանը փակում ամենագեղեցիկ ծաղկեփնջով ու դնում աստղերի տակ, որ կիրակի օրը՝ Հոգեգալըստին, վիճակ հանեն: Հավատում էին, որ եթե խոսեն, ջուրն իր կախարդական ուժը կկորցնի, և վիճակահանությունը ճիշտ չի լինի:

Համբարձման հինգշաբթի օրն աղջիկները վերցնում էին ծաղիկներով լի սալաներն ու երգելով.

«Ծաղիկըմ ունիմ ալա է,
Զան գյուլում, ջա՛ն, ջա՛ն,
Ալա չէ, ալվալա է,
Զան ծաղիկ ջա՛ն, ջա՛ն,
Ախպերս ուզեց չտվի,
Զան գյուլում, ջա՛ն, ջա՛ն,
Ասի յարի ղրկած է,
Զան ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն» շրջում էին թաղի տները, մեկական փունջ տալիս, փոխարենը ստանում ձու, յուղ, շաքար, բրինձ: Այնուհետև հավաքվում էին մեկի տանն ու ուտելիքը եփում, ուտում և ուրախանում: Ծաղիկը *ծախելիս* հետները տանում էին *հարսին,* որը նախապես ընտրվում էր հասակակիցների խմբից և անպայման պետք է առաջնեկ լիներ: Նրան հագցնում էին երկար շորեր, գլխին *թանթանա* էին դնում և դեմքը ծածկում երկար քողով՝ նորահարսի տեսք ստանալու համար: *Հարսին,* որը խոսելու իրավունք չուներ, ձեռքից բռնած՝ տնետուն էին տանում, և նա էր տալիս ծաղկեփունջն ու ստացված մթերքը պահում իր մոտ:

Համբարձման հաջորդ կիրակին վիճակ հանելու օրն էր: Թաղի կանայք՝ ահել ու ջահել, աղջիկների հետ հավաքվում էին որևէ մեկի պարտեզը և վիճակ հանում: *Հարսին,* վիճակի փարչը ձեռքին, նստեցնում էին մեջտեղը, գլուխը ծածկում հաստ, անթափանց քողով, որը հասնում էր մինչև գետին: Մասնակիցները փարչի մեջ նախօրոք լցնում էին իրենց նշանը՝ մատանի, կոճակ, բանալի, օղակ և այլն, որը ճանաչում էին միայն տերերը: Վիճակահանությունն սկսում էին՝ մանիներ երգելով: Յուրաքանչյուր մանիից հետո հարսը փարչի միջից հանում էր մի նշան, հանձնում ղեկավարին, որը, բարձր բռնելով նշանը, հանձնում էր տիրոջը: Վիճակահանությունը բավականին երկար էր տևում, քանի որ հաճախ ներկաները նշաններ էին գցած լինում նաև իրենց հարազատների համար: Վիճակահանությունն ավարտվում էր, երբ նշանները վերջանում էին: Հանդեսը վերջանալուց հետո ջուրը և փարչը փակող ծաղկեփունջը թափում էին «ոտից, ձեռից հեռու» տեղ:

Վարդավառ կամ Վարդևոր. Վարդավառը ևս Ալեքսանդրապոլում տոնվում էր մեծ հանդիսավորությամբ: Վարդավառը մատաղի օր էր, որովհետև այդ օրը բոլոր նրանք, որոնք մատաղ էին խոստացած լինում, անպայման այն կատարում էին: Շաբաթ օրը մատաղացու գառներն ու ոչխարները տանում էին եկեղեցու բակը, քահանային օրհնել տալիս, որ կիրակի վաղ առավոտյան մորթեն ու եփեն: Սովորա-

[1] *Գ. Աղանյան, ԴԱՆ, Լենինական, 1986:*

բար մատաղ անողն իր տուն էր հրավիրում բոլոր հարազատներին, ընկերներին ու մտերիմներին՝ մատաղ ուտելու, սակայն մատաղը բաժանվում էր նաև հարևաններին ու ցանկացողներին: Վարդևորին շրջակա գյուղերից և հատկապես Ախալքալակի գավառից ուխտավորներ էին գալիս Ալեքսանդրապոլ՝«Սուրբ Աստվածածին» կամ «Յոթվերք» եկեղեցի, իսկ ալեքպոլցիները գնում էին Ղալթախչի Սբ Հովհաննես:

Հնուց եկող սովորության համաձայն՝ վարդևորի կիրակի օրը միմյանց վրա ջուր էին ցողում՝ չնայելով հագուստին ու սեռին: Ջրելուն հիմնականում մասնակցում էին պատանիներն ու երեխաները, որոնք միմյանց ջրելուց մեծ հաճույք ու բավականություն էին ստանում: Իրար ջրելը տևում էր մի քանի ժամ, որի ընթացքում թրջվում էին նաև պատահական անցորդները, որոնք երբեք չէին վիրավորվում դրա համար:

Երկուշաբթի օրը մեռելոց էր՝ բոլորը գնում էին գերեզմանոց, խունկ ծխում և մոմ վառում, երբեմն նաև քահանա էին հրավիրում, գերեզմաններն օրհնել տալիս: Ալեքպոլցին սովորություն չուներ գերեզմանոց ծաղիկ տանելու կամ գերեզմանի վրա սեղան բաց անելու: Դրա փոխարեն փող էին տալիս գերեզմանոցում հանդիպած մուրացկաններին՝ իրենց հանգուցյալի հոգու հանգստի համար:

Վարդևորի երեքշաբթին զբոսանքի (*սեյրանի*) օր էր: Երիտասարդ հարսներն ու աղջիկները, որոնք տանից դուրս գալու առիթ գրեթե չունեին, այդ օրը իրենց մեծերի ուղեկցությամբ զուգված ու զարդարված, ուտելիքներով ծանրաբեռնված, գնում էին քաղաքից դուրս՝ բացօթյա զբոսանքի: Ալեքպոլցիների սիրած զբոսանքի վայրերն էին Ձիթողցոնց, Դրմփենց, «Արփաչայի քյանարի» բոստանները: Ամբողջ օրը ծառերի տակ նստած՝ ուտում, խմում էին, վայելում բնության գեղեցկությունը, զրուցում հանդիպած ծանոթ-ազգականների հետ, նոր տեղեկություններով հարստացած ու թարմացած՝ վերադառնում: Այսպիսի զբոսանքների ժամանակ էլ հաճախ երիտասարդներն իրար տեսնում էին, հավանում ու սիրահարվում:

Աստվածածին կամ Խաղողօրհնեք. Աստվածածնա տոնին նախորդող շաբաթը պաս էին պահում, այն խախտելը մեծ մեղք էր համարվում: Այս տոնին ևս մատաղ շատ էին անում, որը նվիրվում էր Մարիամ Աստվածածնին, ուստի գառներին տանում էին հիմնականում «Սբ Աստվածածին» եկեղեցում օրհնել տալու: Հենց այդտեղ էլ մորթում էին մատաղացուն, կենդանու գլուխը, ոտքերն ու մորթին տալիս ժամկոչին, եկեղեցու բակում եփում մատաղը, բաժանում աղքատներին ու ցանկացողներին, նոր հետո՝ իրենք ուտում: Ալեքպոլցիները մեծ ջերմեռանդությամբ էին մոտենում մատաղին՝ գտնելով, որ այն ոչ միայն թողություն է տալիս մեղքերին, այլև հաջողության ու առողջության գրավական է, ուստի, եթե որևէ մեկը մատաղ չէր արել, ամոթ չէր համարվում դրանից օգտվելը:

Կեսօրին բոլորը շտապում էին եկեղեցի, որտեղ մեծ հանդիսավորությամբ պատարագ էր մատուցվում ու կատարվում խաղողը օրհնելու ծեսը: Օրհնված խաղողը նշխարքի նման մի քանի հատիկ բաժանվում էր ժամավորներին, որոնք էլ դրանք տանում էին տուն՝ տնեցիների պասը բացելու: Աստվածածնա տոնի երկուշաբթին նույնպես մեռելոց էր, իսկ երեքշաբթին՝ զբոսանքի օր, որն անցկացնում էին ինչպես վարդավառին:

Երբ երաշտ էր լինում, ժողովուրդը աղոթելով, իսկ կանայք՝ արտասվելով, Աստվածածնա նկարը առջևից բռնած, քահանաների ու տիրացուների առաջնորդությամբ շրջում էին քաղաքի փողոցներով ու դուրս գալիս դաշտ, որ Աստված խղճա ու «անձրև պարգևի»: Աստվածածնա սրբապատկերը, շրջակա գյուղերից և մոտիկ բնակավայրերից բացի, տանում էին նաև Կարս ու Ախալքալակ՝ նույն նպատակով: Երաշտի դեպքում այլ ծես էլ էին կատարում: Տարիքավոր կանանց պատվերով 10-12 տարե-

կան աղջիկներն ավելի վրա հագցնում էին աղջըկա հին շրջազգեստ, կոթին գլխաշոր կապում և երկու թևերից բռնելով՝ խմբով շրջում էին տնետուն՝ երգելով.

Նուրին-նուրին էկել է,
Ափղա բուրին բերել է,
Շիլա շապիկ հագել է,
Կարմիր գոտիկ կապել է:
Եղ բերեք, պորտին քսեք,
Ջուր բերեք, գխուն լցրեք,
Մեր Նուրինի փայը բերեք,
Ուտենք, խմենք, քեֆ անենք:

Տանտիկինները դույլով ջուր էին բերում, լցնում Նուրինի և երեխաների վրա, ձու, բրինձ, յուղ տալիս: Երեխաները ուրախ-ուրախ երգելով, թրջված, առնում էին իրենց բաժիններն ու գնում: Ըստ ալեքպոլցիների՝ այս ծիսակատարությունը ևս անձրևաբեր էր:

Սուրբ խաչ կամ Ուլնոց. Սուրբ խաչի տոնը կատարվում էր սեպտեմբերի կեսին: Այս տոնի նախորդ շաբաթը ևս պաս էր, որը բացվում էր շաբաթ օրը, իսկ կիրակի օրը *քյաշքյա* էին պատրաստում և ուլ կարմրացնում թոնրի մեջ, որի պատճառով էլ տոնը ալեքպոլցիների շրջանում առավել հայտնի էր *ուլնոց* կամ *ուլոց* անուններով: *Ուլնոցի* ծիսական կերակուրի պատրաստությունը տեսնում էին շաբաթ օրը: Մաշկված ու մաքրված ուլը կախում էին թոնիրում՝ տակը նախապես դնելով ձավարեղենով լի կաթսան: Ողջ գիշեր ուլը թողնվում էր թոնրի մեջ, հալվող ճարպը ներծծվում էր տակը դրված ձավարի մեջ և ստացվում էր *քյաշքյան*: Առավոտյան միսը մասնատում էին ու *քյաշքյայի* հետ բաժանում հարևաններին:

Վաղ առավոտյան՝ *քյաշքյան* ուտելուց հետո, ճանապարհվում էին գերեզմանոց՝ հետները վերցնելով մրգեր, հատկապես խաղող ու ձմերուկ, խմորեղեն, կաթնասեր, կանաչեղեն, պանիր և, անշուշտ, խորոված ուլը: Ուղղակի տապանաքարերի վրա սփռոցներ էին գցում ու շարում ուտելեղենները:[1] Այդ օրը ուրախության օր էր և ոչ թե սգի ու ողբի, ուստի քահանաների կողմից գերեզմաններն օրհնելուց հետո սկսվում էին խնջույքները: «Հին կամ նոր մեռել» ունեցողների տուն այցելելիս տանում էին որևէ քաղցր բան, հիմնականում շաքար կամ ավանդական քաղցրավենիք, հատկապես Գյումրվա շաքարլոխում: Մինչև գերեզման գնալն էլ սեղանին դրվում էին քաղցրավենիք ու մրգեր:[2] Սուրբ խաչը վերջին մեռելոցն էր, որովհետև դրանից հետո՝ մինչև Զատիկ, այլևս գերեզմանոց գնալու սովորություն չկար:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդրապոլի հավատացյալ բնակչության ծիսական կյանքի կարևոր ու անբաժան մասն էին կազմում ուխտագնացությունները: Համաձայն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ «Ուխտագնացությունը երկրից դեպի Աստված հոգևոր ճամբորդություն է՝ միջնորդավորված սրբավայրերով: Այն կապված է սրբացած տեղի գաղափարի և դեպի այդ սրբավայրը ձգտելու մարդկային բնական զգացման հետ: Ուխտագնացությունների միջոցով քրիստոնյան խորհրդական ու աղոթական հայեցողությամբ հաղորդվում է անցյալի սրբազան ժառանգությանը և դրանով իսկ կապ հաստատում ապագայի հետ, քանզի առանց անցյալի հետ կենդանի շփման, անիմաստ է ապագայի հետ շփում ստեղծելու փորձը: Ուխտագնացությունը հայ մարդու անհատական կամ հավաքական կյանքի հոգևոր դաստիարակման լավագույն միջոցառումներից է, որը դեպի հոգևոր վերածնունդ տանող ճանապարհն է»:[3]

Ուխտավայրերը. Պատմական Շիրակը Հայոց աշխարհի այն գավառներից է, որտեղ, սկսած քրիստոնեության արշալույսից մինչև մեր օրերը, հիմնվել ու գործել են բազմաթիվ երևելի տաճարներ և ուխտավայրեր, որոնք ի-

[1] *Լ. Աթանեսյան, էջ 129, նկ. 5:*

[2] *Գ. Աղանյան, ԴԱՆ, Լենինական, 1986:*

[3] *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի, Քրիստոնեական, Վանաձոր, 2001, էջ 102:*

ռենց նշանակությամբ դուրս են եկել գավառի սոսկական տարածքից՝ ստանալով համահայկական, ազգային-եկեղեցական նշանակություն: Դրանց թվում հատկապես հայտնի էին և այսօր էլ նշանավոր են Հացիկ (նախկին՝ Թոփառլու) գյուղի սրբավայրն իր Ծակքարով, Սառնաղբյուր գյուղն իր սրբավայրերով ու բուժիչ ջրով[1], ինչպես նաև Գյումրու Սբ Աստվածածին կամ Յոթվերք եկեղեցին՝ Սարիղամիշի «Յոթ վերք» սրբապատկերով: Դրանց նկատմամբ ժողովրդի վերաբերմունքի մասին ժամանակակիցները նշում են. «Աստվածածնի մատաղ շատ էին անում թե՛ ալեքպոլցիները և թե՛ շրջակա գյուղերից, Ախալքալակից եկող ուխտավորները: Վարդևորին շրջակա գյուղերից, հատկապես Ախալքալակից և նրա շրջաններից գալիս էին Գյումրի, Աստվածածին ուխտի, Գյումրիից էլ գնում էին Ղալթախչի՝ Սուրբ Օհաննես, Թոփառլի գյուղի մոտ»:[2]

Շիրակում պաշտելի և հարգի սրբավայրերի շարքում իրենց ուրույն տեղն ունեն Թուխ մանուկները, որոնք ընդունված է համարել տեղական նշանակություն ունեցող ուխտատեղիներ: Հետաքրքիր է, որ պատմագավառի թուխմանուկներն ունեն ոչ միայն տեղական ծագում,այլև, այսպես ասած, *բերովի* են, այսինքն՝ 1830-ական թթ. ներգաղթած արևմտահայերն իրենց հետ բերել էին պատմական հայրենիքի Թուխ մանուկի մասին որոշակի հուշեր կամ էլ կոնկրետ սրբագործված առարկաներ ու Թուխ մանուկ կոչվող Ավետարաններ: Ալ. Մխիթարյանցը հիշատակում է նման դեպքերի մասին. «Օսկե կող ու կարմիր Ավետարանները տերտերներուն էրազ կուգան թե՝ մեզի մեր տեղը-մեր օթևանը տարեք, թե չէ աչքերդ կը հանենք»: Կամ՝ «...սատանա Սարգսենց Թուխմանուկը ջահել տղի պես է ու ամեն օր կերթա Բասեն, իրան օթևանը հանդիպի կուգա»:[3]

Շիրակում առկա բազմաթիվ հնագույն հետքեր ունեցող սրբատեղիներ իրենց տեսքով, դիրքով և ժողովրդական ուխտագնացության մինչ օրս պահպանված սովորույթներով հար և նման են հայագիտության մեջ հանդիպող Թուխմանուկների նկարագրությանը:[4] Դրանք Հոռոմի, Լեռնակերտի, Աղինի, Գյումրու, Արթիկի, Լուսաղբյուրի, Ջրառատի, Մեծ Սեպասարի և այլ վայրերի սրբավայրերն են:

Ալեքպոլցիների և ընդհանրապես շիրակցիների համար ոչ պակաս կարևոր ուխտատեղիներ էին համարվում նաև Տան սրբերը, որոնք հիմնականում պահպանվում էին ձեռագիր Ավետարաններում: Սրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել «Ղալիջվա Ավետարանը» (ներկայիս՝ Վահրամաբերդ գյուղում), «Դհառլվա Ավետարանը» (ներկայիս՝ Գետքում), Բաջողլվա (ներկայիս՝ Հայկավան) «Բայո մամի» կամ «Ղլիջ Ավետարանը», «Աղինի կարմիր Ավետարանը», ինչպես նաև Ախալցխայի Ծուղրուտ գյուղի հռչակավոր մագաղաթյա Ավետարանը, որին ուխտի էին գնում Կարինից Ալեքսանդրապոլ գաղթած վերաբնակները:[5] Տան սրբերին այցի էին գնում հիմնականում երազով և հիվանդների ապաքինման ակնկալիքով:[6]

Բացի տեղական սրբատեղիներից, ուխտի էին գնում նաև Հայաստանի այլ նշանավոր վանքեր ու եկեղեցիներ, ի մասնավորի՝ Մշո Սբ Կարապետ (մինչև XXդ. սկիզբ), Սբ Էջմիածին, Կոշի Սբ Գևորգ, Ծաղկեվանք, Թալինի Կարմրավոր և այլն: Հատուկ ուխտագնացություն էր իրականացվում Սուրբ երկիր՝ Երուսաղեմ, Բեթղեհեմ և Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի հետ կապված այլ վայրեր:

---

[1] *Սառնաղբյուրի քարանձավը, որի ընդերքից բխում է բուժիչ ջուր, համաձայն ժողովրդական պատկերացումների, կապվում է սբ Գրիգոր Լուսավորչի անվան հետ:*

[2] *Հ. Գյոլեցյան, տետր 2, էջ 155:*

[3] *Աղ. Մխիթարեանց, Փշրանք... էջ 162-165:*

[4] *Թուխ մանուկների մասին ավելի մանրամասն տե՛ս. «Թուխ մանուկ», նստաշրջանի նյութեր, Եր., 2001; Հ. Մարության, «Տան սուրբ» երևույթը. Ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները, Հայոց սրբերն ու սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Եր., 2001, էջ 337-346:*

[5] *Կ.Բազեյան,ԴԱՆ, Ախալցխա, Լենինական, 1986:*

[6] *Սմբատ աբեղա Պողոսյան, «Տան սրբերը Շիրակում», ՇՊՄԺ յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 157-158:*

Ուխտավորները. Ըստ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ «Ուխտավորը հավատքով և իմաստությամբ առլեցուն այն անձն է, որը քաջ գիտակցում է իր անկատարելությունն ու մեղանչականությունը և պահանջ է զգում Աստծու և սրբությունների հետ հաղորդակցվելով ոչ միայն հագեցնել իր հոգեկան ծարավը, իմաստավորել իր կյանքը, այլև զորություն ստանալ Սուրբ վայրով՝ դիմակայելու գալիք փորձություններին»:[1] Սա նշանակում է, որ ուխտ անել ու գնալ կարող էին բոլորը, անկախ սեռից ու տարիքից:

Ելնելով մեր կողմից հավաքված դաշտային ազգագրական նյութերից[2] ու ձեռագիր աղբյուրներում առկա տեղեկություններից՝ ուխտագնացությունը՝ որպես ժողովրդական քրիստոնեության դրսևորման ձև, կարելի է դասակարգել հետևյալ սկզբունքով. ա) անհատական բ) ընտանեկան, գ) ազգակցական-դրացիական մեծ խմբերով:

Անհատական ուխտագնացությունը տարածված էր XIXդ. և XX դարասկզբին: Անհատական ուխտի գնում էին գերազանցապես տղամարդիկ և Մշո Սբ Կարապետ կամ Սուրբ երկիր (Երուսաղեմ):Ըստ ժողովրդական պատկերացման՝ «Սուրբ Կարապետ» մեծ մասամբ գնում էին ուևևորները, որովհետև գնալ-գալը, որ տևում էր մի քանի օր, ժամանակի (գործից կտրվելու) և դրամի հետ էր կապված: Սուրբ Կարապետի ուխտ մեծ մասամբ գնում էին երիտասարդները: Կնոջ գնալն արգելված էր, որովհետև, ըստ ավանդության, «կինարմատ» է գլխատել տվել Հովհաննես Մկրտչին և գլուխը սկուտեղին դրած՝ պարել: Սուրբ Կարապետ ուխտ գնալը մեծ իրադարձություն էր ալեքպոլցիների համար: Ամեն մայր մեծ երջանկություն էր համարում այդ ուխտագնացությանը մասնակցելը և «երանի (էրնակ) էր տալիս այն օրվան, երբ իր տղան կամ տղաները կարժանանան այդ փառքին»:[3]

Ընտանեկան ուխտագնացությանը մասնակցում էին ամուսիններով կամ զավակների հետ: Ալեքպոլցիների ավանդական կենցաղում ընտանեկան ուխտագնացությունները պայմանավորված էին տվյալ ընտանիքում առկա կոնկրետ ուխտի հետ՝ անզավակություն, փափագելի տղա երեխայի ծնունդ, երեխայի պաշտպանություն, հիվանդությունից ապաքինում և այլն, որին ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև: Առավել ընդունված էին ազգակցական-դրացիական խմբերով հանդիսավոր ուխտագնացությունները, որոնք խիստ մարդաշատ էին, տոնական և ընդգծված հասարակական բնույթ էին կրում:

Ուխտագնացության ժամանակն ու նպատակները. Չնայած այն բանին, որ ուխտի ու սրբավայր գնալու վերաբերյալ հայոց եկեղեցին կոնկրետ օրեր չի սահմանել, ժողովուրդն ուներ իր հաստատագրված ու անխախտ կատարվող ուխտագնացության օրերն ու հատկապես տոները: Ինչպես վկայում են ձեռագիր աղբյուրները, ավանդաբար (XIXդ.) «տարվա մեջ նշանավոր օրեր էին ուխտագնացության օրերը: Էջմիածնի ուխտագնացությունը կատարվում էր Վարագա խաչին, բայց այնքան էլ հանդիսավոր չէր: Գրավիչ էր միայն գնացող ընտանիքների համար: Երուսաղեմ էլ ուխտավորներ էին գնում: Նրանք գնում էին այն հաշվով, որ Զատկի կիրակին այնտեղ գտնվեն, «լուս գերեզմանին արժանանալու, գլխադրի, գերեզմանը համբուրելու, հաջի-մղդսի դառնալու»: Սրանց ուխտագնացությունը տևում էր վեց ամիս: Լենինականցիք (նկատի ունի ալեքպոլցիները-Կ. Բ., Գ. Ա.) ուխտ էին գնում Մշո Սբ Կարապետ և Էջմիածին: Այն բարի ժամանակներում՝ 60-70-ական թթ. (նկատի ունի 1860-70-ական թթ.-Կ.Բ., Գ.Ա.), երբ հայերի ու թուրքերի միջև թշնամություն չկար,

[1] *Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի, Քրիստոնեական, էջ 102:*

[2] *Օգտագործվել են 2011թ.-ին Շիրակի մարզի Ոսկեհասկ, Հացիկ, Այգաբաց և Ազատան գյուղերում հեղինակների հավաքած դաշտային նյութերը և Գյումրիում անցկացված սոցհարցումների արդյունքները:*

[3] *Հ. Գյոլեցյան, տետր 2, էջ 151-153:*

դեպի Տաճկաստան երթևեկությունն ազատ էր թե՛ առևտրի, թե՛ ուխտագնացության համար: Ռուսահայերը շատ էին սիրում Մշու սուլթան սբ Կարապետին, քյանդրբազների մուրազատվին: Հաշտարխանից, Ղզլարից, Մոզդոկից, Նոր Նախիջևանից մեծ ընտանիքներով գալիս էին Լենինական, վոր լենինականցիների հետ միասին սահմանն անցնեն, գնան սբ Կարապետ»:[1] Ն.Նիկողոսյանի վկայությամբ, «Նշանավորն այն էր, որ ժողովրդի աչքում Երուսաղեմ գնացող հաջիները լավ համարում չունեին, նրանց մասին ասում էին, որ խղճերն այնտեղ են թողել, հավատներն ուրացել»:[2] Իսկ Հ.Գյոլեցյանի վկայությամբ. «Գնում էին ոչ այնքան բարեպաշտությունից, որքան սնապարծությունից և նոր վայրեր տեսնելու հետաքրքրասիրությունից»:[3] Երուսաղեմ հաճախ ուխտի գնացած որոշ ընտանիքների տոհմանունը կամ զբաղմունքն ու արհեստը ցույց տվող ազգանունները փոխարինվում էին՝ դառնալով Մահտեսյան կամ Մուղդուսյան (*մահտեսի, մուղդուսի, հաջի* եզրերը միևնույն նշանակությունն ունեին և Սուրբ երկիր գնացած ուխտավորների պատվանուններ էին համարվում):

Համբարձումից 40 օր հետո՝ մինչև Վարդևոր (Վարդավառ), սկսվում էր Սուրբ Կարապետի պասը, որը պահում էին մեծ մասամբ պառավ կանայք, ջահել աղջիկները, որոնք մուրազ ունեին, և այն տղամարդիկ, որոնք սուրբ Կարապետ ուխտ էին գնալու: Այս պասը պարտադիր չէր մյուս պասերի նման, բացի վերջին շաբաթվանից: Սուրբ Կարապետի պասը պահում էին չոր՝ մինչև Վարդավառ պասը չէին ուտում և թաց՝ շաբաթ և կիրակի օրերը պասն ուտում էին: Սուրբ Կարապետի պասը պահում էին մեկ, երկու, երեք, հինգ և յոթ տարի, նայած պահողի խոստմանը: Ժողովրդի մեջ հռչակված, հրաշագործ, մուրազատու սուրբ էր համարվում սուրբ Կարապետը: Այն ժամանակի լարախաղացներն իրենց ճարպկությունը վերագրում էին Մշու սբ Կարապետի տված շնորհին: Երբ երդվում էին «սուրբ Կարապետ, ապա ճշմարտությունը կասկածելի չէր»:[4]Սուրբ Կարապետը երաժիշտների, լարախաղացների ու թատերական ներկայացումների հետ կապված անձանց հովանավոր պատրոն-փիրն էր, և նրա անվամբ երդվելը ինքնին մեծ պատասխանատվություն էր, իսկ երդմնազանցությունը հավասար էր հոգևոր «մահվան»:

Մշո սբ Կարապետի՝ որպես համահայկական սրբատեղիի մասին ավելի մանրամասը ներկայացնում է Ալ.Մխիթարյացը. «Սուրբ Կարապետ. այս տոնը, ըստ օրացույցի, անխափան կատարվում է հունվարի 15-ին, բայց այստեղ դնելն իւր առանձին պատճառն ունի: Համբարձմանից մինչի Վարդավառ, ամբողջ եօթ շաբաթ, շատերն առանց լուծելու ինչպէս մեծ պասը, (ոմանք էլ շաբաթ կիրակի լուծում են) Սուրբ Կարապետի՝ կամ «Օխտն անուան պաս են պահում եօթ տարի շարունակ և անընդհատ: Եօթ տարին լրացնելուց յետոյ, գնում են Մշու կամ Տարօնոյ Գլակայ կամ Իննակնեան վանքը «Մշու սուլթան» - Յովհաննու Մկրտչի «մարմառ գերեզմանին» ուխտ ու երկրպագութիւն, որ մուրազները տայ և սրտերի խորհուրդներն ու խնդրուածքները կատարէ: Շատերը նպատակ են դնում գերեզմանի վերայ խնդրել, որ իրանց «օխտ գոմշի ոյժ տայ, ոմանք լարախաղացութիւն են խնդրում,ոմանք սազ ածել ու բանաստեղծական տաղանդ, ոմանք իրանց ցաւերին փարատութիւն, ոմանք էլ այլ և այլ շնորհքներ: Իսկ անզավակ ծնողները, գօտիները դնում են գերեզմանաքարի վերայ, ջերմեռանդ աղոթում, ու անծանոթ մէկին հրաւիրում, որ գօտին մէջքը կապէ, այն նպատակով, որ զաւակ ծնանելիս՝ քաւորը նա լինի:Այդ ճանապարհով զաւակ ստացողները և միամօր զաւակատէրերը, զաւակները ծնած օրից ուխտում են իրանց զաւակների գլխի մազերը այնքան ժամանակ չը խուզել, մինչև որ նրանք գնան սբ Կարապետի գերեզմանին

[1] *Ն. Նիկողոսյան, էջ 7269:*
[2] *Նույն տեղում, էջ 7269-7270:*
[3] *Հ. Գյոլեցյան, տետր 2, էջ 154:*
[4] *Նույնը:*

ուխտ անեն, ապա այնտեղ գերեզմանի վերայ վեր են անել տալիս, այդ մազերից բարակ պարան են ոլորում ու կապում այն աւելի վերայ, որով աւելում են վանքն ու գերեզմանի շուրջը սրբում-իստակում: Շատերն էլ խնդրում են, որ իրանց զաւակներին խելք ու շնորհք տայ, որպէսզի իրանց մահուանից յետոյ՝ օճաղները ծխացնեն ու վառ պահեն»:[1] Հատկանշական է նաև, որ ալեքպոլցի մայրերը հիվանդ կամ անհանգիստ երեխաներին (միայն տղաների մասին է խոսքը) քնեցնելիս կամ հանգստացնելիս օրորոցային երգի բանաձևում հիշատակում էին այս հռչակավոր սրբի անունը և զորություն էին թախանձում նրանից. «Մշո սուլթան սուրբ Կարապետ, պահապան իմ բալայիս»:[2]

Ծառզարդարին (Ծաղկազարդ) և հատկապես Համբարձմանը ալեքպոլցիները ուխտի էին գնում Արայի լեռան ստորոտին գտնվող Ծաղկեվանք ու մասնակցում ժողովրդական տոնախմբություններին:

Ինչպես վերը նշվեց, Աստվածածնին այլ տարածաշրջաններից գալիս էին Ալեքսանդրապոլ, իսկ քաղաքացիները գնում էին Ղալթախչի (Սպիտակի նախկին վարչական շրջանի Հարթագյուղի մոտ)՝ Սբ Հովհաննես: Ուխտավորների հոսքը դեպի բավական բարձր և դժվարամատչելի լեռնագագաթի վրա կառուցված մատուռ սկսվում էր առավոտ ծեգին, իսկ ցերեկը կատարվում էր մատաղի արարողությունը: Սբ Հովհաննես գալիս էին մուրազով, այստեղ էին բերում տարբեր հիվանդություններ, հատկապես ընկնավորություն ունեցող երեխաներին, որոնց ծնողները շալակած բարձրացնում էին «զորավոր» սրբի օթևանը: Մեր կողմից հավաքված դաշտային ազգագրական նյութերում հանդիպում են վերը նշված հիվանդությամբ տառապող երեխաներին սբ Հովհաննես ուխտի տանելու բազմաթիվ դեպքեր: Օրինակ՝ Պարգևուհի Բարբարյանն իր որդուն՝ Սարգսին, որը մանկուց տառապում էր ընկնավորությամբ (հարևանները Քյադո Սաքո էին կոչում նրան) յոթ տարի շարունակ շալակած ու ոտաբոբիկ քաղաքից տարել է Ղալթախչիի սբ Հովհաննես՝ իր հետ տանելով նվերներ այնտեղ գուշակություններ անող քյադակներին: Բանասաց Ազնիվ Բարբարյանի խոսքերով, իր եղբայրը արդյունքում բուժվել է, իսկ ինքը երազ է տեսել և իր բնակարանի մի անկյունում սբ Հովհաննեսին նվիրված «օթևան» է պատրաստել, որտեղ գալիս էին մոմ վառելու դրկիցները:[3] Սբ Հովհաննես բերում էին նաև յոթ տարի մուրազով ծամերը չկտրած տղա երեխաներին, որոնց ծամկտրության ծեսը կատարվում էր հենց մատուռի դռանը:[4]

Ալեքպոլցիները և շիրակցիները հոգեկան ծանր խանգարումներով տառապողներին («կապի խելառներին») հիմնականում ուխտ էին տանում Կոշի Սբ Գևորգ և հավատում էին, որ վիշապասպան այս սուրբը իր նիզակով կըխոցի հիվանդի ներսում բույն դրած դևերին ու չարքերին, ազատելով նրանց հոգեկան և մարմնական տառապանքներից:[5]

Ուխտագնացության նկարագիրը. Ուխտագնացության ձևերն ու եղանակները տարբեր էին՝ պայմանավորված դրա անհատական, ընտանեկան կամ համայնական բնույթով: Անհատական ու ընտանեկան ուխտագնացությունը, կապված լինելով մասնավոր նպատակով արված ուխտի ու կոնկրետ սրբավայրի հետ, պահանջում էր խիստ կանոններ (գնալ ոտաբոբիկ, լուռ, առանց հետ նայելու և այլն), որոնց պահպանումը պարտադիր էր ուխտն ընդունելի լինելու առումով: Ազգակցական-դրացիական մեծ խմբերով ուխտագնացությունը, մինչդեռ, կապված լինելով ժողովրդական տարեցույցային տոների հետ, ուրախ ու զվարթ բնույթ ուներ և ուղեկցվում էր զվարճանքներով՝ երգ ու պարով, խաղերով, հացկերույթով: Ահա ինչպես է նկարագրում Ն. Նիկողոսյանը XIX դարավերջին Մշո սուրբ Կարա-

[1] *Ալ. Մխիթարեանց, Փշրանք…, էջ 272:*
[2] *Գ. Աղանյան, ԴԱՆ, Լենինական, 1986:*
[3] *Գ. Աղանյան, ԴԱՆ, Լենինական, 1986:*
[4] *Նույնը:*
[5] *Նույնը:*

պետ ուխտագնացությունը. «Վարդավառից երկու շաբաթ առաջ ուխտավորներն իրենց ազգականների հետ հավաքվում էին Արփաչայի ափը: Հավաքվում էին նաև շատ հանդիսատեսներ: Առավոտը վաղ գետի ափին վրաններ էին խփում և սկսում էին քեֆ-ուրախություն: Ամեն կողմից լսվում էր զուռնի ու դհոլի զիլ ձայնը, սազանդարների քաղցր նվագը, երգ, պար, բացականչություններ խառնվում էին իրար: Այդ ամենը տեսնողի համար մի առանձին հրապույր էր ներկայացնում, և մարդիկ ցանկանում էին, ինչ էլ որ լինի, իրանք էլ մի օր ուխտ գնան:

Կես օր լինելուն պես ուխտավորների առաջնորդները-ղլավուզները կարգադրում էին ձիերը նստել: Իրանք կարմիր դրոշակները թևերին զցած անցնում էին գետը, հետները տանելով ուխտավորներին: Օդը թնդում էր «մնաք բարով-գնաք բարով.-բարի ճանապարհ» ասողների ձայնից: Այս ուխտավորների մեջ լինում էին նաև հետևակներ, որոնք տանում էին հետներն իրենց 7-8 տարեկան արու զավակներին: Նրանք երեխայի ծնվելուց առաջ խոստացել էին ոտքով ուխտ տանել անդրանիկ զավակին: Խոստացած երեխայի մազերը չէին կտրում, հյուսում էին, վոր գերեզմանի վրա խուզեն, տղան մնացական լինի»:[1]

Նշված տոների ժամանակ սրբավայրերում այնքան մեծ թվով ուխտավորներ էին հավաքվում, որ մարդկանց բազմությունը տարածվում էր սրբավայրի բոլոր չորս կողմերում: Ուխտագնացության մասնակիցները, իրենց ցանկությունները, նպատակներն ի կատար ածելու միտումով, թաշկինակներ կամ հագուստի կտորներ էին կապում մոտակա սրբազան ծառերից, լվացվում տեղի բուժիչ աղբյուրի ջրով, դիմում գուշակների օգնությանը: Նման մարդկանց մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Հ.Գյոլեցյանը: Ղալթախչիում լինում էին նաև *քյադակներ* (երևի հեթանոսական ժամանակներից մնացած ծիսակատարության մնացորդներ): *Քյադակները* (մեծ մասամբ կանայք) իրենց դիմող այցելուի համար գուշակում էին ապագան: *Քյադակներն* իրենց համարում էին սրբի *դուլը* (ծառան), և իբր սրբի թելադրանքն էին բարձրաձայն հաղորդում իրենց դիմողին: Իհարկե, առանց խաչհամբուրի (վարձի) ոչ ոք չէր դիմում քյադակին: *Քյադակը* գուշակում էր ուշագնաց վիճակում: Ժողովուրդը հավատում էր *քյադակներին*, ամեն կերպ սիրաշահում էր նրանց, որպեսզի նրանց աղեն՝ սուրբը, չբարկանա և չպատժի:[2]

Նկարագրելով ուխտագնացության կարևոր բաղադրիչներից մեկը կազմող մատաղի արարողությունը՝ Հ. Գյոլեցյանը գրում է. «Եկեղեցու երկու բակում էլ մայում էին ոչխարները և գառները, որոնց բերել էին օշնած (օրհնած) աղ տալու: Մատաղացուներին երեք անգամ պտտեցնում էին եկեղեցու շուրջը, որ մատաղը համով և ընդունելի լինի: Ուխտավորները եկեղեցու բակում մորթում էին գառը կամ ոչխարը, գլուխը, ոտներն ու մորթին տալիս էին ժամկոչին, հենց եկեղեցու բակում մատաղը եփում, բաժանում աղքատներին և մատաղ ուզողներին և ապա վերջում էլ իրենք ուտում:

Գյումրեցին մեծ ջերմեռանդությամբ էր մոտենում մատաղին: Ըստ նրա՝ մատաղը մեղքերին թողություն էր տալիս, հաջողության և առողջության գրավական է, և այդ պատճառով, եթե իրենք մատաղ չէին արել, բոլորովին անհարմար չէին համարում ուրիշից մատաղ ուզելը»:[3] Ալեքպոլցի ուխտավորները վերադարձին բերում էին նվերներ՝ թաշկինակ, գլխաշոր, մանր-մունր զարդարանքներ և գազպին (մանանա), որ նստում էր ծառերի տերևներին, կանաչ, քաղցրահամ ու բաժանում էին մոտիկ բարեկամներին, հարազատներին, հարևաններին:[4] Ուխտից վերադարձողներին հարևանները դիմավորում էին «Մուրազդ ի կատար» և «Ուխտդ ընդունելի էղնի» խոսքերով:[5]

---

[1] *Ն. Նիկողոսյան, էջ 7270:*

[2] *Հ. Գյոլեցյան, տետր 2, էջ 155-156:*

[3] *Նույն տեղում, էջ 161-162:*

[4] *Նույն տեղում, էջ 151-153:*

[5] *Կ. Բազեյան, ԴԱՆ, 2011:*

ՎԵՐՋԱԲԱՆ

Մենագրության մեջ օգտագործվել են քաղաքի ազգագրությանը վերաբերող բազմաթիվ նոր, արխիվային նյութեր, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Գրքում քաղաքի կենցաղամշակութային համալիրի բոլոր ոլորտներն ու երևույթները չեն, որ ընդգրկվել են: Ալեքսանդրապոլյան բազմաթիվ մշակութային տարրեր ու համակարգեր ներկայացված են ընդհանուր գծերով՝ առանց մանրամասների, մի քանիսն ուղղակի բացակայում են, քանի որ դեռ շատ աշխատանք կա կատարելու նոր նյութերի հայտնաբերման ու ուսումնասիրության ուղղությամբ: Հետագայում աշխատությունը կլրացվի՝ ընդգրկելով քաղաքային մշակույթի բացակայող ոլորտները, ազգագրական հետաքրքիր նկարագրություններ, բանահյուսական տիպական նմուշներ:

Աշխատանքն ունի ավելի նկարագրական, քան խորը վերլուծական բնույթ և ուղղված է հասարակության ամենալայն շրջանակներին: Աշխատության մեջ ներկայացված մի շարք երևույթների ու իրողությունների վերաբերյալ հեղինակների գիտական հետազոտությունները տարբեր տարիներին հրատարակվել են առանձին գիտական հոդվածներով:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԲԱ- Ազգագրության բաժնի արխիվ
ԲԲԱ- Բանահյուսության բաժնի արխիվ
ԳԱԱ - Գիտությունների ազգային ակադեմիա
ԴԱՆ - Դաշտային ազգագրական նյութեր
ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ
ՀԱԲ - «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշար
ՀԱԻ - Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՊԹ - Հայաստանի պատմության թանգարան
ՇՀՀԿ- Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՇՊՄԺ - Շիրակի պատմամշակութային ժառանգությունը
ՊԲՀ - Պատմաբանասիրական հանդես
ՊԻ- Պատմության ինստիտուտ
СМОМПК - Сборник материалов для описания местностей и племен Кавказа

АЛЕКСАНДРАПОЛЬ. ЭТНОГРАФИЧЕСКИЕ ЭСКИЗЫ

Монография посвящена анализу этнографической картины города Александраполя. Выбор города неслучаен, поскольку со второй половины XIX в. это поселение в Восточной Армении, имеющее уникальный культурно-бытовой комплекс, несет в себе множество этнокультурных ценностей городов Западной Армении: Карина, Карса, Баязета, и представлял, и продолжает представлять своеобразный синтез восточно - и западноармянских культур. Культурно-бытовой ансамбль города, который является наилучшим примером смешения традиционно армянских и пришедших извне интернациональных урбанистических ценностей и элементов, рассматривается в ряду городов, адаптированных к ранним урбанистическим проявлениям.

Известно, что город это открытая культурная система, быстро адаптируемая к новым веяниям. Это относится и к Александраполю. Городская культура, наряду с многочисленными элементами традиционных культурно-бытовых комплексов, довольно быстро воспринимала и новаторски выражала и отражала явления, пришедшие извне, придавая им новое качество. Это проявлялось, в частности, в местном говоре и повседневной жизни. Однако новые ценности с трудом пробивали себе дорогу, что было обусловлено этническим и конфессиональным многообразием городского населения: рядом с преобладающим армянским населением проживали турки, греки, русские, боша (армянские цыгане). Основатели города- западноармянские ремесленники и торговцы, которые являлись носителями армянской традиционной городской культуры, на новом культурном поприще - в Восточной Армении, пытались, отрицая местные обычаи, создать привычную и родную им городскую культуру.

Несмотря на все это, новое проникло в Александраполь и заняло устойчивое место в быту населения. Этот процесс имел здесь очень интересные проявления, поскольку протекал в условиях противостояния старое-новое, город-село, своё-чужое. Это и явилось причиной того, что в конце XIX и начале XXвв. в городе, хотя и чётко разграничивались, но рядом сосуществовали старые традиции - в быту ремесленников и новоевропейские- в среде богатых торговцев. В Александраполе сосуществовали местные (восточно - и западноармянские), русские и западноевропейские многочисленные культурные традиции, которые проявлялись в культуре градостроительства, в ремёслах и торговле, а особенно ярко, в социально-нормативной и гуманитарной сферах жизни городского населения. Многие этнокультурные явления, свойственные Алек-

сандраполю, единственны в своём роде и являются результатом тех процессов урбанизации, которые протекали здесь в XIX и в начале XX вв.

Следует отметить, что комплексное изучение этнографии Александраполя, требует нового научного подхода. Название работы в своё время предложил наш учитель, известный армянский учёный-этнограф Ю. Мкртумян, поэтому мы руководствовались предложенной им “теорией культуры” и соответствующей ей типологией. Данная монография посвящена его памяти.

В первой главе, названной “Культура первичного производства Александраполя”, представлены основные хозяйственные занятия: сельское хозяйство, ремесла и торговля. Во второй главе– “Культура жизнеобеспечения Александраполя”, исследованы особенности градостроительства, городские жилища и их интерьер, традиционные пища и костюм. Третья глава посвящена социально-нормативной культуре города, в которой особое место отведено цехам и органам городского самоуправления, семье и семейным обрядам. Не обойдены вниманием и такие характерные для Александраполя культурные явления, как досуг, сплетни, уличные драки и др. В четвертой главе представлены некоторые важные составные гуманитарной культуры Александраполя. Это, в частности, национальные церковные праздники, городская празднично-обрядовая жизнь, а также особенности народной медицины.

ALEKSANDRAPOL: ETHNOGRAPHICAL SKETCHES

The monograph is devoted to the analysis of the ethnographic picture in Alexandrapol town. The choice of the town is not accidental as since the second half of the XIXth century it was the settlement of a unique complex in Eastern Armenia and bears numerous ethnocultural values of such towns as Karin, Kars, Bayazet and has presented and presents the synthesis- mixture of Eastern and Westren Armenian cultures. The complex of the town, as the best succesful example of mixture of both Armenian traditional and outside international urbanized values and elements, is observed in the series of the towns that have been adapted to the manifestations of early urbanization.

It is common knowledge that the town is an open system and is adapted to the new one. This one also refers to Alexandarpol- Gyumri town. Next to the numerous traditional elements of its household complex the urban culture gets, perceives and newly expresses the outside phenomena giving them new qualities; they were noticeable in local dialect and life. But here the values of new nature entered with difficulties that was conditioned by the urban population's ethnic and confessional diversity as among the majority of Armenians there were Turks, Greek, Russian, Armenian- gipsies. Being the bearers of Armenian traditional urban culture, Western-Armenian craftsmen and tradesmen, who had founded the town, were trying to create a new urban native environment in a new cultural field denying the local customs.

The new one could enter Alexandrapol and have a stable place in population's household life. That process had many interesting manifestations as it was being carried out in the conditions of old and new, urban and rural, close and foreign conflicts. That is why at the end of the XIX and the beginning of the XX centuries new and the traditional were side by side in the town: old-traditional (in the environment of craftsmen) and new- European (in the environment of rich tradesmen) were next to each other. In Alexandrapol numerous manifestations of local (Eastern- Armenian and Western-Armenian), Russian and Western European cultures were together that are presented in trade and art and more in socionormative and liberal cultures of the town. Ethnocultural phenomena typical to Alexandrapol are unique in their own way and are the result of the activities of urbanization that occurred in the course of the XIX and the beginning of the XXth centuries.

It is worth mentioning the fact that the complex ethnographic study of Alexandrapol needed a new scientific approach. As the title of the work had been prompted by our teacher, devoted and great

scholar Yu. Mkrtumyan of the Armenain ethnography, we take into account 'culture theory' and corresponding classifications suggested by him, and dedicate the monograph to his memorial.

In the first chapter of the book entitled /Primary Industrial Culture in Alexandrapol/ is devoted to the study of the main economic occupations of the town: agriculture, trades and art. The second chapter entitled /Life support culture in Alexandrapol/ touches upon the peculiarities of urban apartment and its interior, traditional food and clothes complex. The third chapter is devoted to the town's socio-normative culture where craftsmanship, governance structure, family and the series of domestic rites have their specific place.

We have not ignored such cultural phenomena typical to Alexandrapol dwellers as entertainment, gossip, communal contests. Some important components of liberal culture especially national holidays belonging to the church, urban ritual life as well as the methods of traditional medicine are presented in the fourth chapter.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբյուրներ

1. Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ա.Ս.Հայրապետյանի, Երևան, 2001:
2. Աղանյան Գ., ԴԱՆ, Լենինական-Գյումրի, 1981-2007:
3. Բազեյան Կ., ԴԱՆ, Լենինական-Գյումրի 1983, 1986, 1997:
4. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, հ. Ա, Երևան, 1971:
5. ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 208:
6. ՀԱԱ, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 14-I մաս:
7. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, գործ 4/99, Հ. Գյոլեցյան, Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), տետրեր 1-2, 1976,1980:
8. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, Ն. Նիկողոսյան, Լենինական, FF II:
9. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, Հր. Մկրտչյանի հավաքածու, FFVI: 4094-4833, FFXI: 0001-2048, FFXI: 7253-7830:
10. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, FF I, Խայաթ Զահրիյան, Հիշողություններ հին Գյումրիից:
11. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, FF VI, տետր 4, Պ.Բարսեղյան, Պոլոզ Մուկուչ (բնութագիր), Երևան, 1969:
12. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ պարարվեստի բաժնի արխիվ, Ժ. Խաչատրյանի ֆոնդ:
13. ՀՀ ԳԱԱ ՊԻ արխիվ, գործ 103, Թամրազյան Ս., Հիշողություններ XIX դարի Ալեքսանդրապոլի անցյալից մինչև մեր օրերը (1938թ.):
14. ՀՀ ԳԱԱ ՊԻ արխիվ, գործ 103, Ն.Նիկողոսյան, Գյումրի-Լենինականի անցյալը (1935թ.):
15. ՀՊԹ արխիվ, գործ 176 (ա), Ատրպետ, Ինչ ժառանգեցինք, անտիպ ձեռագիր:
16. Ղևոնդ, Պատմություն, թարգմ. և ծանոթ. Ա.Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982:
17. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թիվ 1886:
18. Մաշտոցի անվան Մատենադարան, Շախաթունյանի արխիվ, թղթ. 63, վավ. 28:
19. «Մշակ»,1876, №№ 2; 6; 1877, №№ 32; 42; 53; 68; 75; 80:1878, № № 46; 70: 1880, № 125; 1882, № 46:
20. Սոցհարցման արդյունքներ, թղթապանակ 2007թ., ՇՀՀԿ արխիվ:
21. Սոցհարցման արդյունքներ, թղթապանակ 2011թ., ՇՀՀԿ արխիվ:
22. Военный сборник, т.XI, отд.II, СПБ, 1894.
23. Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, СПБ,1853.
24. Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Арнении после присоединения к России (1830-1870), Ер.,1993.
25. Кавказский календарь на 1852г., Тифлис, 1851.
26. Кавказский календарь на 1855г., Тифлис, 1854.
27. Кавказский календарь на 1866г., Тифлис, 1865.
28. Обозрение Российских владений за Кавказом, ч. II, СПБ, 1836.
29. Сборник статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, составил и издавал Н. Воронов, т. I , отд. I, Тифлис, 1869.

30. Сборник статистических сведений о Кавказе, т. I, отд. III,
31. СМОМПК, вып. XI, 1891.

Գրականություն

32. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, 1952:
33. Աբրահամյան Վ., Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դ. սկիզբ), Երևան, 1971:
34. Աթանեսյան Լ., Գյումրեցի նկարիչներ. Գևորգ Բրուտյան, ՇՊՄԺ յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007:
35. Ալիշան Ղ., Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազար, 1881:
36. Աղաբեկյան Հ., Հացի պատրաստման արարողակարգը Ալեքսանդրապոլում. հացի պաշտամունք, ՇՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996:
37. Աղաբեկյան Հ., Ակնարկ ալեքսանդրապոլցու կերակրացանկից, ՇՊՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998:
38. Աղանյան Գյուտ քհն., Կանոն ոսկերիչ արհեստավորաց, «Լումա» գրական հանդես, գիրք Ա, Թիֆլիս, 1898:
39. Աղանյան Գ., XIXդ. և XXդ. սկզբի ռուսական տեղեկատու-վիճակագրական ժողովածուները որպես Ալեքսանդրապոլ քաղաքի և նրա բնակչության տնտեսական զբաղմունքների ուսումնասիրության աղբյուր, Հայաստանի բնակչության տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությունը, զեկուցումների թեզիսներ, Եր., 1985:
40. Աղանյան Գ., Պայտի հետ կապված արհեստները երկաթագործության համակարգում, Հանրապետական գիտական նստաշրջան, 1986-1988թթ. ազգաբանական և բանագիտական հետազոտությունների արդյունքները, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1990:
41. Աղանյան Գ.,Երկաթագործական արհեստները հայոց մեջ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999:
42. Աղանյան Գ., Հայկական զինագործությունը XIX դ.- XX դ. սկզբին (ըստ Կարնո և Ախալցխայի նյութերի), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ., III, Գյումրի, 2000:
43. Աղանյան Գ., Երկաթագործական արհեստները հովանավորող պատրոն-փիրերի համակարգը, ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 38-39:
44. Աղանյան Գ., Մեկ անգամ ևս հայ համքարությունների հարցի շուրջ, ՇՊՄԺ հանրապետական հինգերորդ գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002:
45. Աղանյան Գ., Երկաթը և երկաթագործական առարկաները հայ ժողովրդի հավատալիքներում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.VII, Գյումրի, 2004:
46. Աղանյան Գ., Ավանդական արհեստների փոխակերպումները Ալեքսանդրապոլ-Լենինական-նում (XIXդ. երկրորդ կես-XXդ. առաջին կես), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի, 2006, էջ 48:
47. Աղանյան Գ., Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության զարգացման հիմնական միտումները (XIX դարավերջ-XX դարասկիզբ), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ., X, Գյումրի, 2007:

48. Աղանյան Գ., Ալեքսանդրապոլի էսնաֆությունները XIXդ. (համքարական ծիսակարգ), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XI, Գյումրի, 2008:
49. Աղանյան Գ., Լոթիության դրսևորումները Ալեքսանդրապոլում, Հայ ժողովրդական մշակույթ XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., 2014:
50. Աճառյան Հ., Արմատական բառարան, հ.1, Եր., 1971:
51. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. I, Եր., 1958:
52. Ասլանյան Ա., Ախալցխայի համքարությունը, «Մշակ», 1891, № 6:
53. Ավագյան Ն., Հայկական ժողովրդական տարազը (XIXդ.-XXդ.սկիզբ), Եր., 1983:
54. Ավետիսյան Խ., Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանի ներկա տարածքում 1828-1914թթ., ՊԲՀ, 1978, № 3:
55. Արմեն Մ., Հեղնար աղբյուր, Եր., 1961:
56. Բազեյան Կ., Ասեղնագործությունը և ժանեկագործությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I , Գյումրի,1998:
57. Բազեյան Կ., Կանանց արհեստները հայոց մեջ XIXդ. և դրանց կապը համքարությունների հետ, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001:
58. Բազեյան Կ., Ալեքսանդրապոլի ժանեկագործական մշակույթը, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.VI, Գյումրի, 2003:
59. Բազեյան Կ., Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղը Մ.Արմենի «Հեղնար աղբյուր» վիպակում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.VIII, Գյումրի, 2005:
60. Բազեյան Կ., Ալեքսանդրապոլի թաղային կռիվների մասին, ՇՊՄԺ յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007:
61. Բազեյան Կ., Ասեկոսեների և բամբասանքի կենցաղավարումը Գյումրիում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.X, Գյումրի, 2007:
62. Բազեյան Կ., Աղանյան Գ., Ռուսական մշակութային ազդեցության մի քանի դրսևորումներ Ալեքսանդրապոլի կենցաղում, Մշակութային երկխոսություն. Հայ-ռուսական մշակութային կապեր (պատմություն և արդիականություն), Միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2008:
63. Բազեյան Կ., Ալեքսանդրապոլի ավանդական ուտեստն ու հացկերույթը, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.XI, Գյումրի, 2008:
64. Բազեյան Կ., Դերձակությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում (XIXդ. վերջ-XXդ. սկիզբ), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.XII, Գյումրի, 2009:
65. Բազեյան Կ., Աղանյան Գ., Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները գյումրեցիների տոնածիսական վարքում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIV, Գյումրի, 2011:
66. Բազեյան Կ., Աղանյան Գ., Ալեքսանդրապոլը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին (ըստ «Մշակ»-ի տեղեկությունների), ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.XVI, Գյումրի, 2013:
67. Գեղամեանց Յ., Ախալցխայից մինչև Անի, «Փորձ», Տփխիս, 1880, №4:
68. Գէորգ-Մեսրոպ, Աշխարհագրութիւն Պատմական Հայաստանի, Կ. Պոլիս, 1924:
69. Գրիգորյան Վ., Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «Կտրիճվորաց եղբայրությունների» մասին, ՊԲՀ, 1963, № 2:

70. Եղիազարյանց Ս., Արհեստների ճիւղերը Կարինում XIXդ. առաջին երեք տասնամյակում, «Մշակ», 1891, № 65:
71. Երիցեանց Աղ., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա., Թիֆլիս, 1894:
72. Էլիզէ Ռէկլիւ, Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավազան, ՈՒրմիա լիճ եւ Առաջաւոր Ասիա, Վաղարշապատ, 1890:
73. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1, Երևան,1969:
74. Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ.4, Երևան, 1975:
75. Լալայան Ե., Ջավախք, Երկեր, հ.I, Երևան 1983:
76. Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984:
77. Խաչատրյան Ժ., Ջավախքի ժողովրդական պարերը, ՀԱԲ, հ. 7, Եր. 1975:
78. Խաչատրյան Ռ., Բամբասանքն իբրև բանահյուսության տեսակ, ՇՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996:
79. Խաչիկյան Լ., Երզնկայում 1280թ. կազմակերպված «Եղբայրությունը», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկատու», Եր. 1951, № 12:
80. Խաչիկյան Լ., Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6:
81. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005:
82. Կոզմոյան Կ., Լենինական, Երևան, 1957:
83. Կոզմոյան Կ., Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում. 1920-1970, Երևան, 1977:
84. Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931թթ.), Երևան, 1932:
85. Կրպե, Կարս քաղաքը, Մոսկուա, 1893:
86. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1801-1879թթ.), Երևան, 1959:
87. Հայրապետյան Ա., Էթնոժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերը Ալեքսանդրապոլի գավառում (1840-50-ական թթ.), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. VI, Գյումրի, 2003:
88. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի, Քրիստոնեական, Վանաձոր, 2001:
89. Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ. հ. V., Երևան, 1974:
90. Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005:
91. Հարությունյան Հ., Երաժշտական կյանքը, Գյումրի. քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2009:
92. Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975:
93. Հարությունյան Վ., Գյումրի-Ալեքսանդրապոլը XIX դարում, «Բանվոր», Լենինական, 1978, 14 դեկտեմբերի, № 297:
94. Ղլտճյան Ա, Համառոտ պատմութիւն Ալեքսանդրապօլի Հայոց Հոգեւոր Վիճակային դպրոցի (1840-1912), Ալեքսանդրապոլ, 1912:
95. Մաթևոսյան Ս., Գյումրու ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985:
96. Մառանկոզյան Խ., Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, № 65:

97. Մատինեանց Կ., Ալեքսանդրապոլի վաճառականները «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1874, 2 փետրվարի, թիվ 5:
98. Մարության Հ., «Տան սուրբ» երևույթը. Ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները, Հայոց սրբերն ու սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Երևան, 2001:
99. Մինասյան Ա., Շիրակի և Ջավախքի հայոց ժողովրդական բժշկությունը (պատմազգագրական ուսումնասիրություն), Ատենախոսության սեղմագիր, Երևան 1995:
100. Մխիթարեանց Ալ.,Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 28 ապրիլի, №15:
101. Մխիթարեանց Աղ., Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 1, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901:
102. Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2010:
103. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, Երևան, 1979:
104. Նորյան Մ.,Աբովյանը և Գյումրին, «Բանվոր», Լենինական, 1978, 15 մայիս, № 62:
105. Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Ուսումնասիրություն և փաստաթղթեր, Եր., 1958:
106. Պտույտ Ալեքսանդրապոլի շրջակայքում,«Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1869, № 21:
107. Պողոսյան Սմբատ աբեղա, «Տան սրբերը Շիրակում», ՇՊՄԺ յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007:
108. Պողոսյան Ս., Ներքնազեգստը հայոց տարազի համակարգում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական հինգերորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000:
109. Պողոս պատրիարք Աղրիանուպոլսեցի, Խրատի թանգարան, Ս. Էջմիածին, 2004:
110. Սարգսյան Հ., Ալեքսանդրապոլի գավառի էթնոաշխարհագրական բնութագիրը XIX դարի վերջերին, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998:
111. Սեղբոսյան Կ., Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, ՀԱԲ, պրակ 6, Երևան, 1974:
112. Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրեալ ի Պօղոս վարդապետ Պետրոսեան, «Արարատ», Էջմիածին, 1870, թիւ Գ:
113. Акопян М.,Сельская община в Восточной Армении во второй половине XIX- начале XX вв., Ереван, 1988.
114. Аганян Г., К.Базеян, Городская община Александрополя и эснафства, South-West Georgia (History, Archeaology, Etnology) II, International science Conference, Tbilisi, 2012, с. 190-193.
115. Аганян Г., К.Базеян, Городское самоуправление и органы власти Александрополя по архивным материалам, South-West Georgia (History, Archeaology, Etnology) III, International science Conference, Tbilisi, 2013, с. 102-105.
116. Акопян Т. Х., Развитие Еревана после присоединения Восточной Армении к России, Сборник документов, 1801-1917гг., Ер., 1978.
117. Анчабадзе Ю., Волкова Н., Старый Тифлис. Город и горожане в XIX веке, М., 1990.
118. Аствацатурян Э., История оружейного и серебрянного производства на Кавказе в XIX- начале XX в., Дагестан и Закавказье, ч.ч. 1- 2., М., 1977.

119. Базеян К., Особенности интерьера городского жилища Александрополя, Археология, этнография и фольклористика Кавказа, Материалы международной научной конференции, Махачкала, 2007.
120. Базеян К., Некоторые формы взаимопомощи в Александрополе (начало XX века), Международная научная конференция «Археология, этнология, фольклористика Кавказа», Сборник кратких содержаний докладов, Тбилиси, 2010.
121. Варданян Л., Традиции мужских возрастных групп у армян в конце XIX-начале XX вв. (Историко-этнографическое исследование), ՀԱԲ, պր.12, Եր.1981.
122. Волкова Н.Г., Джавахишвили Г.Н., Бытовая культура Грузии XIX-XX веков; традиции и инновации, М., 1982.
123. Григулевич Н., Этническая экология питания, М., 1996.
124. Гришашвили И., Литературная богема старого Тбилиси, Тбилиси, 1977.
125. Даль Вл., Толковый словарь живаго великорусского языка, т. IV, С-Пб., 1882.
126. Культура жизнеобеспечения и этнос, под. ред. Э.Маркаряна и Ю.Мкртумяна, Ереван, 1983.
127. Муравьев А. Н., Грузия и Армения, ч.2, СПб, 1848.
128. Переваленко В. Поездка в Александрополь.«Закавказский Вестник», Тифлис,1853,22января,№ 4.
129. Пиралов А., Краткий очерк кустарных промыслов Кавказа, СПБ, 1913.
130. Потто В., Материалы к истории персидской войны 1826-1828гг., 1825-й год, Кавказский сборник, т. XXI, Тифлис, 1900.
131. Руцевич В., Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края, Кавказский календарь на 1852 год, Тифлис, 1851, отд. III.
132. Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XXв., Этнодемографическое исследование, Ереван, 2002.
133. Токарев С. А., К методике этнографического изучения материальной культуры, «Советская этнография», М.,1974, №4.
134. Халпахчян О., Армяно-русские культурные отношения и их отрожение в архитектуре, Ер., 1957.
135. Эсадзе С., Историческая записка об управлении Кавказом, т. II, Тифлис, 1907.
136. Яралов Ю. С., Города Армении, М., 1950.
137. Aghanyan G., Memorials to the Russo-Ottoman War of 1877 – 1878 in Gyumri /Armenia/, Balkanistic Forum (1-2-3/ 2014), Published of the Bulgarian Science fond of the ministry of Education and Science, Blahoevgrad, 2014, p. 89-94.

ԼԱՈՒՐԱ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ.
Կյանքն ու գործը

Աշխատանքում առաջին անգամ համապարփակ ներկայացվում են հայ գրաֆիկայի ներկայացուցիչ Գևորգ Բրուտյանի կյանքն ու ստեղծագործությունը Ալեքսանդրապոլ-Լենինական քաղաքային մշակույթի համապատկերում: Աշխատությունը նախատեսված է հայ կերպարվեստի պատմության խնդիրներով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն հասարակության համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Գրաֆիկական արվեստը մարդկությանը հայտնի է դեռևս քարանձավային պատկերագրումից (Լա-Մարտ քարանձավը՝ Ֆրանսիայում, Ալտամիրան՝ Իսպանիայում, ժայռապատկերները՝ Ամուր և Սիր Դարյա գետերի ափին, ինչպես նաև Սևանի ավազանը՝ Հայկական լեռնաշխարհում):

Կերպարվեստի այս տեսակը տեսողական արվեստի «քերականությունն» է՝ տարաբնույթ պատկերագրմամբ և կայացման տեխնոլոգիաներով: Այն ունի լայն աշխարհագրություն և եղել ու մնում է գեղարվեստական հաղորդակցության անփոխարինելի միջոց:

20-րդ դարի առաջին կեսին հայ արվեստագետների շրջանում գրաֆիկայով զբաղվող նկարիչները սակավաթիվ էին: Բավական երկար ժամանակ կերպարվեստի այս տեսակը հիմնականում ներկայացնում էին արտերկրի հայ նկարիչները՝ Է. Շահին, Ժանսեմ, Գարզու, Վ. Խոջաբեկյան և այլք: Բացառապես գրաֆիկայով զբաղվում էին հատուկենտ նկարիչներ՝ Վ. Խոջաբեկյանը Թիֆլիսում և Գ. Բրուտյանը Ալեքսանդրապոլում:

Գրաֆիկան՝ որպես կերպարվեստի տեսակ, զարգացում ապրեց խորհրդային տարիներին՝ առավելապես Հայրենական մեծ պատերազմի օրերին, իսկ մեր օրերում այն կերպարվեստի ամենակիրառական և պահանջված տեսակն է:

*****

1920թ.-ից հայկական գրաֆիկական արվեստը մուտք է գործում մի նոր ժամանակաշրջան: Խորհրդային դպրոցի զարգացող կերպարվեստը ներկայացնող գրաֆիկական ժանրի նկարիչները (Գևորգ Բրուտյան, Արարատ Ղարիբյան, Գաբրիել Գյուրջյան, Ահարոն Խուդավերդյան և ուրիշներ) իրենց ստեղծագործություններում մոտ կանգնեցին Հայաստան երկրի բնությանը, մարդուն և ժամանակակից հայ իրականությանը:

1910-1950-ական թվականներին Հայաստանի գրաֆիկայի ավագ սերնդի ներկայացուցիչը Գևորգ Բրուտյանն է: Նա առաջադեմ արվեստագետ էր՝ համոզված ու հետևողականորեն իրատես, միշտ կապված իր ժամանակին: Գ.Բրուտյանը ստեղծագործական չափազանց լայն հետաքրքրությունների տեր նկարիչ էր. պատկերել է հեղափոխական իրադարձությունների, ապա՝ Հայրենական մեծ պատերազմի դրվագներ, հարազատ վայրերի բնապատկերներ, ազգագրական կերպարատիպեր ու հանդերձներ:

Գ. Բրուտյանի ստեղծագործությունները քիչ են լուսաբանված և արժանի են լուրջ ուշա-

դրության: Արվեստում մեծ ճանաչման արժանանալու համար պարտադիր չէ միայն լինել հանճարեղ գործի հեղինակ: Պակաս կարևոր չէ այն քաղաքացիական, հասարակական գործունեությունը, որ ծավալում է արվեստագետը իր ժամանակի և մշակույթի համար: Այս առումով անգնահատելի են Գ.Բրուտյանի ներդրումները ազգային մշակույթում:

Նկարիչն անցել է կյանքի բեղմնավոր ուղի, ստեղծագործական գեղեցիկ ճանապարհ և իբրև մշակույթի երախտավոր՝ ունի անգնահատելի վաստակ մեր արվեստում:

Գ.Բրուտյանը ծնվել է 1888թ., Ալեքսանդրապոլում՝ երաժիշտ և ազգագրագետ Արշակ Բրուտյանի ընտանիքում: Ընդհանուր կրթությունն ստացել է տեղում, իսկ մասնագիտականը՝ Թիֆլիսում՝ Օսկար Շմերլինգի նկարչական դպրոցում:

1908-1910թթ. Գ.Բրուտյանն աշխատանքի է անցնում Թիֆլիսի օրիորդաց դպրոցում՝ որպես նկարչության ուսուցիչ, և միաժամանակ զբաղվում ստեղծագործությամբ: 1910թ.-ից նա արդեն Ալեքսանդրապոլում էր և իր նման երկու նվիրյալների հետ 1913թ. կազմակերպում է գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքների առաջին ցուցադրությունը, որն այդ ժամանակների համար մեծ համարձակություն էր: Այդ տարիներին Ալեքսանդրապոլում ապրում և ստեղծագործում էին Յու. Վերժբիցկայան, Ի.Մոլևան, Հ. Պատկանյանը, Ե. Նազարյանը, և շատ հավանական է, որ հենց նրանցից երկուսն էլ եղել են անդրանիկ ցուցահանդեսի մասնակիցները: Ցուցադրությունը գոհունակությամբ է ընդունվում քաղաքի արվեստասեր հասարակության կողմից:

Բայց դա արվեստագետի առաջին քայլն էր, առաջին խիզախումը: Դրան հետևելու էին իսկական սխրագործություններ, որոնք մեր արվեստի պատմության մեջ ուրույն տեղ էին ապահովելու բազմաստեղծ նկարչին: Նա հայ առաջին նկարիչներից էր, որ 1910-ական թվականների կեսերից կապվում է հեղափոխական շրջանների հետ, աշխատակցում հեղափոխական մամուլին:

1913թ.-ին կազմակերպված ցուցադրանքում նկարչի ներկայացրած աշխատանքները որոշ հոռետեսական, նույնիսկ խորհրդապաշտական երփնագիր ունեին: Դրա վկայությունը հենց նկարների թեմաներն են՝ «Հիվանդ ընկերոջ մոտ», «Հուղարկավորություն», «Ճակատագրական հարսնացուն» և այլն:

Համագործակցելով հեղափոխական շրջանների հետ և խորապես գիտակցելով իր քաղաքացիական պարտքը կյանքում ու արվեստում՝ Բրուտյանն արագ և վճռական բեկում է մըտցնում իր ստեղծագործական հետաքրքրությունների, գեղագիտական հայացքների, թեմատիկայի, նույնիսկ կատարողական ձևերի ու տեխնիկայի մեջ:

Գ.Բրուտյան նկարչի կայացման ուղին ընթացել է դժվար ժամանակներում, դժվար միջավայրում: XX դարի սկզբին Ալեքսանդրապոլը հայտնվել էր հեղափոխության շեմին: Բնակվելով Ալեքսանդրապոլում՝ արվեստագետը ակտիվորեն մասնակցում է քաղաքի հասարակական կյանքին: Տեղի հեղափոխական կոմիտեի պատվերով 1920թ. նկարիչը պատրաստում է հեղկոմի կնիքն ու շտամպը, պարբերաբար մասնակցում հայկական և ռուսական թերթերի հրատարակմանը:

Սոցիալ-դեմոկրատների կողմից հրատարակվող “Наши дни” լրագրում, սկսած 1916թ.-ից, տպագրում է իր կենցաղային նկարներն ու ծաղրանկարները: 1920թ. մասնակցում է Մայիսյան ապստամբությանը, որը հետագայում հարուստ նյութ էր դառնալու նրա գրաֆիկաների համար:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո Բրուտյանն սկսում է ակտիվ մասնակցել քաղաքի հասարակական–մշակութային կյանքին: 1921թ. հունվարից նշանակվում է Հայկական հեռագրական գործակալության Ալեքսանդրապոլի բաժանմունքի բաժնի վարիչ և զինվորական «Մահ կամ ազատություն» N17 զրահագնացքի ակումբի վարիչ, «Կրասնի նաբատ», «Շիրակի ռանչպար» և «Բանվոր» թերթերում հանդես է գալիս օրվա հրատապ թեմաներին վերաբերող բազմաթիվ գրչանկարներով ու ծաղրանկարներով, նկարում է մեծաթիվ պաստառներ (պլակատ), որոնք բազմացվում ու զանգվածաբար տարածվում են քաղաքում ու շրջաններում: Այդ ժամանակաշրջանի ստեղծագործությունից հատկանշական են 1922թ. վիմագրական տեխնիկայով

կատարված պաստառը և «Մենք ենք տերը» լինոփորագրությունը (1923թ.), որոնք ցույց են տալիս նկարչի ակտիվ վերաբերմունքը նոր կարգերի նկատմամբ:

1921թվականից Բրուտյանը աշխատանքի է անցնում Ալեքսանդրապոլի նկարչական դպրոցում, սկզբում որպես դասատու, ապա տնօրեն՝ մինչև 1928թ.: 1937թ.-ից նա եղել է նաև Հայաստանի նկարիչների առաջին ասոցիացիայի նախագահը:

Նկարիչը մինչև 1937թ. ապրել է Լենինականում: Քաղաքային կոմիտեի հանձնարարությամբ ֆաբրիկաներում ու գործարաններում կազմակերպել է կերպարվեստի ինքնագործ խմբեր, ցուցահանդեսներ: Բրուտյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև Լենինականում կերպարվեստի թանգարանի հիմնադրման, Պիոներների տան ու Երկաթուղայինների ակումբի գեղարվեստական խմբակների ձևավորման ու գործունեության մեջ:

Ճանաչված նկարչին են հանձնարարվում ժողովրդական նշանավոր տոների առթիվ քաղաքային հրապարակի և բեմահարթակի գեղարվեստական ձևավորման աշխատանքները, որոնք նա կատարում է արհեստավարժությամբ և ամենայն բարեխղճությամբ, և որի համար մի քանի անգամ պարգևատրվում է:

Բացի գրաֆիկական ստեղծագործություններից, Բրուտյանը միաժամանակ աշխատում է գունանկարչության, թատերական նկարչության և քանդակագործության բնագավառներում: Նրան են հանձնարարվում նաև նախկին Սպայի տան և Ա.Մռավյանի (այժմ՝ Վ.Աճեմյանի) անվան պետթատրոնի մի շարք բեմադրությունների նկարչական ձևավորումները:

1937թ. Գ.Բրուտյանը մեկնում է Երևան, որտեղ շարունակում է իր բեղմնավոր ստեղծագործական աշխատանքը, հիմնականում նկարազարդում է մանկական գրքեր ու դասագրքեր, աշխատակցում «Հոկտեմբերիկ» ամսագրին: 1950թ. ամսագրի 20-ամյակի առիթով նկարիչը պարգևատրվում է ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով:

1939թ.-ից մինչև 1941 թ.-ի հուլիսը Գ.Բրուտյանն աշխատում է Ռ.Մելիքյանի անվան գիտահետազոտական բաժնում որպես նկարիչ: Իսկ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ակտիվորեն մասնակցում է կազմակերպված շեֆական տարբեր աշխատանքներին և ցուցահանդեսներին: Պարգևատրվում է “За доблестный труд в Великой Отечественной Войне 1941-45гг.” մեդալով:

1942թ. մինչև կյանքի ավարտը Գ. Բրուտյանը ժողստեղծագործության տան մշտական խորհրդականն էր:

Նկարիչը վախճանվել է 1952թ. Երևանում:

«ՀԻՆ ԳՅՈՒՄՐԻ» ՇԱՐՔԸ

Գ. Բրուտյանի ստեղծագործական աշխատանքներն ընթանում են հիմնականում լինոփորագրության և գրչանկարչության բնագավառում: 20-ական թվականների հայ գրաֆիկների շարքում Գ. Բրուտյանը միակն էր, որ համառորեն և հետևողականորեն աշխատում էր լինոլեումի վրա՝ հաստոցային գրաֆիկայի այդ տեսակի մեջ մշակելով գեղարվեստական լեզու և ինքնօրինակ ձևեր:

Գ. Բրուտյանը իր ժամանակի առաջադեմ արվեստագետներից էր,համոզված իրապաշտ, միշտ կապված իր ժամանակին: Նա իր շրջապատի իրադարձությունների ճշմարիտ մեկնաբանն էր, ստեղծագործական չափազանց լայն հետաքրքրությունների տեր մի նկարիչ, որը պատկերել է և՛ հեղափոխական իրադարձությունները, և՛ անհետացող հին Գյումրին, և՛ խորհրդային շինարարությունն ու Մեծ հայրենականը:

Գ. Բրուտյանի ստեղծագործությունների զգալի մասը գրչանկար է. դրանց մեջ ուրույն տեղ ունի «Հին Գյումրի» շարքը, որտեղ նկարիչը ճշմարտացիությամբ պատկերել է հին Գյումրին իր ողջ էությամբ ու հմայքով:

Շարքը ճանապարհորդություն է դեպի կորուսյալ անցյալ: Այն հիշողությունների թատրոն է: Իհարկե, ասվածից չպետք է եզրակացնել, թե նրա ստեղծագործությունը որակվում է որպես լոկ անցյալի ազգագրական, փաստական անհույզ պատկերագրում: Նկարիչը ներկայացրել է այդ կյանքի գեղարվեստական նըկարագրությունը. ճիշտ է, երբեմն հումորով, երբեմն քննադատորեն, անգամ ծաղրով: Սակայն նրան հազիվ է հաջողվել թաքցնել իր սերն ու համակրանքը այդ բարի, խոսքաշեն ու «դարդիման» մարդկանց նկատմամբ: «Հին Գյումրի» շարքը վերհուշ է (նկարել է 1937թ.՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո, և հավանաբար հումորի ու ծաղրի առկայությունը նկարներում թելադրված է ժամանակի պահանջով), հաճելի, աչք շոյող պատկերներ՝ կոմպոզիցիոն հետաքրքիր լուծումներով ու հյութեղ կոլորիտով: Արվեստագետը պատկերել է մի անհետացող աշխարհ, որն իր հետ տարել է շատերի մանկությունը: Նկարներից պարզ երևում է զգայական թրթիռը, որ ունենում է մարդ, երբ խոսքը իր սիրելի քաղաքի մասին է, այն թախծոտ խնդությունը, որը համակում է մանկությունը վերհիշող մարդուն: Կերպարվեստում տեղական «դիալեկտ» համարվող այս ժանրին դիմել են նաև Վ. Խոջաբեկյանը, Հ. Շամշինյանը, շատ ավելի ուշ՝ Հ. Անանիկյանը և այլք:

Գ. Բրուտյանը հին Գյումրին դարձնում է իր ստեղծագործության գլխավոր թեմաներից մեկը: Բայց նրա մեկնաբանությունները եղերական հիշողություններ կամ տխուր մտորումներ չեն առաջացնում: Բրուտյանը քաղաքի մասին պատմում է գեղեցիկի լեզվով, ներդաշնակ հնարքներով ու հումորով՝ հիանալով «բնօրինակ» կենցաղային միջավայրով, որը նրան քաջ ծանոթ էր:

«Հին Գյումրի» շարքում նկարիչն անդրադարձել է նաև սնոտիապաշտությանը, հեքիմությանը, կրոնական նախապաշարումներին («Խոստովանություն», «Հեքիմի մոտ», «Աղջկատես», «Ծեծ», «Քաղաքի փողոցներից մեկում» և այլն):

Բրուտյան նկարչի ավանդը հայկական արվեստում կարևոր է ոչ միայն հին Գյումրու կյանքը հարազատորեն, ազգագրական ճըշգըրտությամբ և գեղարվեստական պատկերավորությամբ կերպավորելու, այլև գծանկարի՝ գրաֆիկական այդ տեսակի ավանդույթը ամրապնդելու առումով:

Գյումրին իր անդարդ, ուրախ «լոթիներով», փողոցային տոնակատարություններով, աղմըկոտ իրադարձություններով անսպառ նյութ էր գեղարվեստական բազմաբնույթ մարմնավորումների համար:

«Հին Գյումրի» շարքը կենցաղային ժանրի տեսարաններ են՝ հարսանեկան, թաղման, տոնակատարության, խրախճանքի, փողոցի ու շուկայի: Չնայած նկարները պարզ են, ինչ-որ տեղ պարզունակ, բայց կան նրբորեն ընկալված և վարպետորեն պատկերված կերպարներ, որոնք հատկորոշ են արհեստավարժ մակարդակի հասած արվեստագետին: Իր ստեղծագործություններում Գ. Բրուտյանը փորձել է հմտորեն լուծել շարժման խնդիրը՝ մարդկանց պատկերելով բարդ իրավիճակներում. «Լոթիների քեֆը փողոցում», «Ծեծը»: «Լոթիներ» կոչվող այս խավը առիթ էր փնտրում տուրուդմփոց սարքելու, անմեղ մարդկանց ծաղր ու ծանակի ենթարկելու հատկապես տոներին և կիրակի օրերին: Նրանք՝ ընկերովի, կառքերով, օղու ու գինու մեծ պաշարով, զուռնաչիների ուղեկցությամբ գինովցած թափառում էին փողոցներում: Նկարիչը նրանց պատկերել է իրենց բնական տարերքի մեջ՝ հարբած վիճակում, օրորվելիս: Նկարն իրոք լոթիների անհոգ կյանքին բնորոշ մի պատկեր է: Անչափ տիպական են դեմքերն ու հագուստները՝ «արխալուղով, գլխներին շապխա, երկարաթև չերքեզկիով, արծաթից մեծ «թոխայավոր» գոտիով, երկարաճիտ, անկրունկ կոշիկներով ու դաշույնով»[1]: Նմանօրինակ մանրամասները պատկերին հաղորդում են ճշմարտացիություն՝ պահպանելով ազգային կենցաղային կոլորիտը, օժանդակելով բովանդակության հարստությանը:

Գյումրեցին միշտ աչքի է ընկել իր պատվասիրությամբ ու ավանդապահությամբ, որոնք երբեմն կարող էին վերածվել ցուցամոլության: Նրանք կարող էին արարողության վերածել անգամ բաղնիք կամ վարսավիրանոց գնալը: Կանայք հաճախ իրենց հարստությունն ու գերազանցությունը ցուցադրելու համար բաղնիք էին գնում ոսկեկար շքեղ զգեստներով ու թանկագին զարդերով: «Բաղնիսի ճանապարհին» նկարում Գ.Բրուտյանը ծաղրում է քաղքենիությունն ու ցուցամոլությունը: Երկու հաստամարմին կանայք ծառաների ուղեկցությամբ գնում են բաղնիք: Առջևից գնացող փոքրամարմին ծառան, հագուստի կապոցի ու եդակների ծանրության տակ կքած, հազիվ է քարշ տալիս ոտքերը: Նկարիչը, դիմելով կերպարների հակադրության, փորձել է ուժեղացնել դրության կոմիզմը: Նկարն արված է մեծ դիտողականությամբ,կերպարների հաջող տիպականացմամբ:Ինքնահավան, սեփական արժանապատվության գերագնահատումով տառապող այս կանայք, իրենց գերազանցությունն ի ցույց դրած, ընդամենը բաղնիք են գնում: Ինչպիսի՜ խորաթափանցություն ու բարքերի ինչպիսի՜ իմացություն, ինչպիսի՜ հմտություն պետք է ունենար նկարիչը՝ տեղական կենցաղային այսպիսի հյութեղ ժանրային պատկերներ ստեղծելու համար:

Գյումրու քաղաքային կենցաղի բնորոշ կողմերից էր բամբասանքը: «Պառավ կանանց բամբասանքը» պատկերում նկարչի վերաբերմունքը համարյա հասցված է չափազանցության: Բակերից մեկում՝ պատի տակ, հավաքվել են բամբասասեր կանայք և հավանաբար «լվանում են աղջիկների ու ջահել հարսների ոսկորները»: Ոմանք էլ թաքուն ականջ են դընում: Հաջողված են հատկապես կիսադեմով կանանց պատկերները, նրանց բնութագրական քթերը, դիմախաղը: Կանանցից մեկը հավանաբար վատ լսողության պատճառով ճիգեր է գործադրում տեղեկատվության կորուստ չունենալու համար:

Անթաքույց է նկարչի վերաբերմունքը հասարակական այս չարիքի նկատմամբ: Բացահայտ է, որ բամբասանքը այս կանանց ամենօրյա զբաղմունքն է: Նրանք նստած են անբրոնազբոս, յուրաքանչյուրն իր դերին համապատասխան:

Ծաղրանկարներ համարվող այս աշխատանքները իրենց բնույթով ավելի մոտ են շարժին: Նկարիչն ընդամենը փորձ է արել ներկայացնելու անցյալի մնացուկ համարվող սովորույթները, սակայն,այսուհանդերձ,նրա խառնվածքը թույլ չի տվել խայթող ծաղր դրսևորել. նա բավարարվել է չափավոր հումորով: Նկարիչը իր նկարներում մեծ ուշադրություն է դարձնում ոչ միայն գործող անձանց հոգեվիճակին, այլև ձեռքերի շարժումներին, որոնք ավելի արտահայտչականություն են հաղորդում

[1] *Գ. Մեղրոսյան, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում: Պատմազգագրական ուսումնասիրություն, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Եր., 1974, հ. 6, էջ 32:*

նկարների բովանդակությանը: Բրուտյանը միայն աչքերի ու բերանի շարժումների, գծերի աննշան տատանումների միջոցով կարողացել է վերարտադրել տարբեր նկարագրի տեր մարդկանց կերպարներն ու նույնիսկ տրամադրությունները: Իհարկե, պատկերներում նկատելի են մարմնաձևերի համաչափությունների և հեռանկարի անճշտություններ, սակայն դրանք նվազ կարևոր են թվում արարողություններն ու ծեսերն այդպես անմիջականորեն, անկեղծորեն, դիտողունակ հայացքով և ճըշմարտացիորեն ընկալելու ու պարզ միջոցներով պատկերելու շնորհիվ:

Գյումրեցիների կենցաղի ուշագրավ պատկերացումներ են՝ կապված թաղման արարողության հետ. հանգուցյալի մահից հետո մի «քառսունք» սուգը շարունակվում էր, հարազատները չէին սափրվում, չէին լողանում, կանայք մնում էին սև հագուստների մեջ: Քառասունքին հաջորդող հարազատների սգահանի արարողության նկարագրությունն է Բրուտյանի «Սգահան» պատկերում: Երբեմն «սգահանը» ուղեկցվում էր զուռնաչիների նվագակցությամբ. սկզբում նվագում էին տխուր մեղեդիներ, որոնք աստիճանաբար փոխարինվում էին ուրախ երգերով: Ամբողջ ծիսակատարության ժամանակ ուտում, խմում, մաղթանքներ էին անում:

Գյումրու թաղման ծիսակարգը պատկերող հետաքրքիր դրվագներ են նաև «Մեռնողի երկրորդ օրը», «Գերեզմանոցում» բազմաֆիգուր կոմպոզիցիաները: Երկրորդ պատկերում գերեզմանաքարերի կողքին նստած անգործ մարդկանց մի ստվար խումբ կա, որն անհամբերությամբ սպասում է թաղման ծիսակատարության ավարտին, որպեսզի օգտվի «հանգուցյալի փայաբաժնից»: Կերուխումն ուղեկցվում է հիշատակի հարգման ճառերով: Շիրմաքարից շիրմաքար էին անցնում տերտերն ու նվագածուները՝ հանգուցյալներին մաղթելով «բախտավոր գնացք»:

Գյումրու կենցաղին ու բարքերին քաջածանոթ նկարչի համար, որը ծնվել ու մեծացել էր այդ միջավայրում, դժվար չէր ստեղծել հետաքրքրաշարժ, կենսական արտահայտչականությամբ օժտված ինքնատիպ կերպարներ ու բնութագրեր:

Կարծում ենք՝ Գ.Բրուտյանի «Հին Գյումրի» շարքը արժեքավոր է նաև այն տեսակետից, որ ունի ճանաչողական կարևոր նշանակություն և կարող է սկզբնաղբյուր հանդիսանալ ազգագրական ուսումնասիրությունների համար:

1. Բաղնիքի ճամփին

2. Բամբասանք



3. Սգահան

4. Մեռնողի երկրորդ օրը (Էգնահող)

5. Գերեզմանոցում



6. Լոթիների պարը փողոցում

ՄԱՅԻՍՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻ ԳՐՉԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

1920-ական թվականներին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպության առավել ուժեղ թևը Ալեքսանդրապոլի կազմակերպությունն էր, որն ակտիվ գործունեություն էր ծավալում ոչ միայն բանվորների, այլ նաև զինվորների շրջանում: Այդ հեղափոխական շարժման գործուն մասնակիցն էր նաև Բրուտյանը:Նա պարբերաբար հանդես էր գալիս սուր ծաղրանկարներով ընդդեմ դաշնակների, Անտանտի զավթողական պլանների, տեղի հարուստների: Նա նկարում էր պլակատներ, ինքն էլ բազմացնում և տարածում էր ազգաբնակչության շրջանում:

Բրուտյան նկարիչը, որ խորապես ապրում էր հայրենիքի բախտով, չէր կարող անտարբերությամբ անցնել այնպիսի մի իրադարձության կողքից, ինչպիսին Ալեքպոլում Մայիսյան ապստամբությունն էր, որը խթանում է նրկարչի ստեղծագործական թափը: Եվ այդ օրերին, հասարակական գործունեությանը զուգահեռ, նա մեծ եռանդով ու ինքնամոռաց զբաղվել է նաև նկարչությամբ:

1920թ. մայիսը բուռն իրադարձություններով լի ամիս եղավ ալեքսանդրապոլցիների կյանքում: Մայիսի 5-ի վաղ առավոտյան երկաթուղու և քաղաքի մյուս ձեռնարկությունների բանվորները դադարեցրին աշխատանքը և փողոց դուրս ելան հեղափոխական կարգախոսներով: Ցուցարարների և դաշնակցականների միջև քաղաքի մի շարք փողոցներում ընդհարումներ տեղի ունեցան, որոնք երբեմն վերածվում էին ձեռնամարտի:

Մայիսմեկյան այդ ցույցը ղեկավարում էին դեպոյի բանվորները: Նկարիչը անձամբ մասնակցել է թե՛ ցույցերին, թե՛ ապստամբությանը և խորությամբ ապրել այդ օրերի շիկացած զգացողությունները: Տրամաբանական է, որ հասարակական ակտիվ գործիչն ու նկարիչը չէր կարող այդ իրադարձությունները չարտահայտել իր գրչանկարներում:

Մայիսյան իրադարձություններին են նվիրված նրա՝ այդ օրերի մի շարք պատկերագրությունները, որոնցից են՝ «Մայիսյան ապստամբությունը Ալեքսանդրապոլում», «Ապստամբությունն ամրոցում», «Առաջին ուրախ գիշերն Ալեքսանդրապոլում», «Ապստամբության ցույց Ալեքպոլի ամրոցում», «Ամրոցի գրավումը» և այլն:*:

Աշխատանքները բազմաֆիգուր են: Բոլորն էլ համարյա կառուցված են նույն սկզբունքով: Պատկերներում կան կրկնվող դեպքեր ու դեմքեր: Այսպես՝ դրոշակակիր ցուցարարը կրկընվում է բոլոր տարբերակներում, համարյա առանց փոփոխության: Նույնը կարելի է ասել վազող հրացանակիր զինվորների վերաբերյալ: Սակայն նրան հաջողվել է ստեղծել բանվորական ցույցերի հաջողված զանգվածային տեսարաններ, պայքարի նույն տրամադրությամբ համակված ապստամբների հախուռն շարժումը դեպի ամրոցի մուտք:

Մայիսյան դեպքերը Ալեքսանդրապոլի տարեգրության, նրա պատմության անքակտելի մասն են: Եվ դրանցով ոգևորված նկարիչը, իր դավանած գաղափարներին հավատարիմ, դրանց գեղարվեստական լուծումներ տվեց, որոնք արվեստի փայլատակումներ չեն, իհարկե, սակայն շատ բան են պատմում այդ օրերի մասին:

---

* *Բնօրինակները պահպանվում են Շիրակի երկրագիտական թանգարանում*

7. Հաղթանակի երթ

8. Առաջին ուրախ օրը Ալեքպոլում



9. «Վարդան զորավար» զրահագնացքը

10. Ապստամբություն ամրոցում

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՀԱՎԻՐՔՆԵՐԸ

Գ.Բրուտյանի ստեղծագործական ժառանգության մեջ քիչ չեն նաև պատերազմական իրադարձությունների գեղարվեստական պատկերումները:

Նրա մի շարք աշխատանքներ արծարծում են թուրք զավթիչների կողմից Ալեքսանդրապոլի ռազմակալման շրջանին: 1934թ. Գ. Բրուտյանն ստեղծում է «Պատերազմի արհավիրքը» շարքի գործերը (թուղթ, տուշ), որոնք* պատերազմի ահավոր հետևանքների վավերագրեր են՝ արված ականատեսի անմիջական տպավորությունների ազդեցության տակ: Նա տեսել էր հարյուրավոր մահեր, հազարավոր անապաստան փախստականների, որոնք համաճարակների ու հիվանդությունների զոհ դարձան՝ զրկված նույնիսկ ամենանվազ օգնությունից ու խնամքից: Եվ նկարիչն այս ամենը մոռացության մատնել չէր կարող, որովհետև ցավին անհաղորդ մնալ արվեստագետն իրավունք չունի:

Բրուտյանի նման ազնիվ ստեղծագործողի հավատը բանականության հանդեպ խարխլվեց՝ տեսնելով այն դաժանությունն ու բրոնությունը, որ՝ որպես հետևանք, պարտադրում էր պատերազմի աբսուրդ տրամաբանությունը: Բռնությունը, թալանը, տանջանքը փաստեցին, որ մարդու մեջ ննջող կենդանական բընազդը այնուամենայնիվ իշխում է նրա բանականությանը:

«Պատերազմի արհավիրքները» վերտառությամբ շարքի «Դիակի մոտ» աշխատանքը համր վշտի տեսարան է: Այս ահասարսուռ դրրամատիկական պահը զարմացնում է իր հուզականությամբ: Հերոսամարտի անանուն զոհերի պատմությունն ուժեղ ազդեցություն է թողնում դիտողի վրա:

Անհանգստության վիճակ կա աշխատանքում: Հետևի պլանում դիակներ փոխադրող մարդիկ են, հեծյալներ, և այս ամենը գիշերային մթության մեջ: Ամբողջ տեսարանի վրա իշխում է վշտամորմոք ծեր կնոջ ուրվապատկերը:

«Դիակի մոտ» կոմպոզիցիայում գաղթական կանանցից մեկը սպանվածների մեջ գտել է որդու դին և ողբում է նրա վրա: Սգավոր մայրը պատկերված է սևազգեստ, շարժման մեջ, այնպիսի բնական արտահայտությամբ, որ կարծես լսելի են նրա ողբաձայն լացը, անեծքի կանչը, սրտամռունչ բողոքը, ցասումը, անօգնական հառաչանքը, որոնք, թվում է, աղեկտուր հնչում են կենդանի շնչից զուրկ այս ամայի տարածության մեջ՝ մնալով անարձագանք: Անշուշտ, տեսարանը չափազանց դրամատիկ է, ցնցող և հուզիչ:

Շարքի մեկ այլ աշխատանքում երկու գաղթական կանայք են՝ լուսնի աղոտ լույսի տակ միմյանց հպված ու վշտոտ: Կանանցից մեկը հուսակոտոր, ահավոր կորստից համբացած, գրկել է հավանաբար արդեն որբ մնացած մանուկներին: Նրան սարսափեցնում է անհայտությունը: Թեև կնոջը շրջապատում են ինչ-որ մարդիկ, հնարավոր է հարազատներ, բայց նա իր ողբերգության մեջ միայնակ է, լքված ու անօգնական՝ անհայտության մշուշի մեջ:

«Ալեքսանդրապոլի շրջակայքում» աշխատանքում նկարիչը փորձում է ոչ միայն մեկնել պատերազմի արհավիրքները, այլև լուծել մեկ այլ խնդիր՝ գրաֆիկական սուղ միջոցներով ընկալելի և վերարտադրելի դարձնել տվյալ

---

* *Բնօրինակները պահպանվում են Շիրակի երկրագիտական թանգարանի պահոցներում:*

պահի տրամադրությունը։ Պատկերում ավերված հուշարձանի մոտ նստածի դեմքը չի երևվում, բայց, անկասկած, նա անմխիթար վշտի մեջ է։ Կոմպոզիցիայի նման մեկնաբանության Գ.Բրուտյանը հավանաբար հանդիպել էր ռուս նկարիչներ Ի.Կրամսկոյի և Վ.Պերովի աշխատանքներում։ Ենթադրելի է՝ այդ մարդը գիշերային սառը քարի վրա նստել է մինչև լուսաբաց՝ տառապելով մտածմունքներից։ Նրան տանջում է անձնական վիշտը։ Խոհերի ծանրությունը նրան կռացրել է, համարյա երկտակել։ Պատկերի դրամատիզմը խտացված է նաև բնության նկարագրությամբ՝ քամուց քշվող ամպի քուլաներ, ծառեր՝ թեքված կատարներով։

«Պատերազմի արհավիրք» շարքից «Ալեքսանդրապոլի շրջակայքում» նկարում ռազմի դաշտ է. մեռելային ամայություն, անթաղ դիակներ, երկնքից կախված ծանր ամպ. մահվան շունչն է թևածում դաշտում։ Բռնի մահվան մեկնաբանման նոր հայեցակետ է ներկայացրել նկարիչը։ Սա դրամատիկ բացառություն չէ, այլ աներևակայելի անարդարության ու դաժանության հոգեցունց վիճակ, որն ապրում են սոցիալական արդարության հույսը դեռևս փայփայող մարդիկ։

«Պատերազմի արհավիրքները» գրաֆիկական շարքի ստեղծագործություններին բնորոշ գիծն այն է, որ Բրուտյանն իր մտահղացումները մարմնավորում է կենդանի, կոնկրետ կերպարներում՝ չհորինելով և չկրկնօրինակելով դրանք ու չդիմելով դասականների պատրաստի օրինակներին, օգտագործում է շրջապատող կենդանի միջավայրը, իրական դեպքեր և իրադարձություններ։ Նկարիչն ընտրել է այդպիսի թեմաներ՝ սփոփելու իր խռովահույզ հոգին։ Կերպարվեստի լեզվով փորձել է մարմնավորել իրեն հուզող հարցերը՝ բարձրաձայն աղաղակելով իր ժողովրդի նկատմամբ գործած անարդարությունների մասին։

11. Զոհվածի դիակի մոտ

12. Ալեքպոլի շրջակայքում

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԼԵՆԻՆԱԿԱՆ» ՇԱՐՔԸ

Հարազատ քաղաքի հետ հոգևոր մտերմիկ կապը պայմանավորել է Գ.Բրուտյանի տարբեր ժամանակների անդրադարձումները քաղաքային կենցաղի երևույթներին վերաբերող թեմաներին: Դրանցից են խորհրդային Լենինականի առօրյան նկարագրող գրաֆիկական ստեղծագործությունները:

1920-30-ական թվականներին նկարիչն ստեղծում է քաղաքի վերակառուցման, շինարարական եռուն աշխատանքներն արտացոլող լինոփորագրությունների «Սոցիալիստական Լենինական» շարքը:*

Այդ տարիներին էր, որ քաղաքում սկսեց տրոփել մշակութային կյանքի զարկերակը, սկզբում՝ թույլ, հետո՝ ավելի համարձակ ու տեսանելի: Գ.Բրուտյանն առաջին նկարիչներից էր, որ եռանդուն մասնակցություն ունեցավ գեղարվեստին վերաբերող քաղաքային բոլոր ձեռնարկումներին: 1923-ից մինչև 1940 թվականները նրա գործուն մասնակցությամբ Լենինականում կազմակերպվեցին նկարիչների աշխատանքների չորս ցուցադրություններ:

Նա ներկայացնում է «Մենք ենք տերը» (1923թ.), «Բանվորները զինաթափում են ցարական ժանդարմներին» (1928), «Պատերազմի արհավիրքները» (1934) լինոփորագրությունները: Իսկ 1940 թվականին նա արդեն ցուցադրում է իր «Հին Գյումրի» և «Սոցիալիստական Լենինական» շարքերը:

Գ.Բրուտյանի «Սոցիալիստական Լենինական» շարքը բարի հիշողություններ է արթնացնում քաղաքի՝ արդեն վաղուց անցյալի գիրկն անցած ու մոռացված վայրերի մասին: Այդ աշխատանքներում դիտողի աչքի առջև հառնում են շատ սիրելի ու հարազատ վայրեր, տեսարաններ, որոնք կարծես հետ են բերում անցած մանկության և երիտասարդության անկրկնելի պահերը:

Հիմա, երբ քաղաքը թոթափում է 88-ի Աղետի ծանր ու դաժան հետևանքները, արդեն անդարձ կորած քաղաքային հին պատկերները, որ կան նկարչի գործերում, ավելի են արժևորվում՝ լցնելով քաղաքի տարեգրության անցյալ էջերը: Այս շարքի հաջողված պատկերները («Կուլտուրայի և հանգստի պուրակում», «Լենինի անվան պուրակում», «Գորկա. Լենինական» և այլն) արարված են շատ իրատեսորեն՝ հաճախ նույնիսկ հասցված լուսանկարի աստիճանի. Օրինակ՝ «Թատրոնի շենքը», «Զրուցատեղի» (1946) աշխատանքներում իսպառ բացակայում է հույզը, ընդամենը ներկայացված են ճարտարապետական արժեք ունեցող կառույցներ:

Քիչ այլ է պատկերը «Գորկա» աշխատանքում: Նկարիչը պատկերել է քաղաքի ամենասիրելի վայրերից մեկը՝ կենտրոնական այգին, որը զվարճանքի ու հանգստի վայր էր հատկապես կիրակի օրերին: Բրուտյանը ճշգրտորեն վերարտադրել է այգու կենտրոնական արահետը, որը ձգվում է դեպի խորքը: Ծառերի թույլ լուսավորված սաղարթների ստվերում՝ նստարանի վրա, հանգստացող զույգ է: Նկարիչը փորձել է պատկերին հաղորդել քնարական տրամադրություն: Բայց դա նրան մասամբ է հաջողվել: Պատկերը զերծ չէ նաև այլ թերություններից. հեռանկարչական առումով մարդիկ անհամապատասխան չափերի մեջ են: Թերևս այս շարքի բնության տեսարաններում նկարչին քիչ թե շատ հաջողվել է հուզական տրամադրություն ստեղծել:

Այս ամենով հանդերձ՝ նկարչի «Սոցիալիստական Լենինական» շարքը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում՝ վերարտադրելով 30-ական թվականների Լենինականն իր բնակիչներով, նրանց կենցաղով ու ապրելակերպով:

---

* *Բնօրինակները պահպանվում են Շիրակի երկրագիտական թանգարանի պահոցներում:*

13. Զրուցատեղի

14. Թատրոնի շենքը

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԸ ՆԿԱՐՉԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1941թ. սովետական ժողովրդի խաղաղ ստեղծագործական կյանքն ընդհատվեց հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակմամբ: Չնայած ստեղծված դժվար պայմաններին՝ հայ կերպարվեստն ապրում է աննախադեպ վերելք: Համակված հայրենասիրության զգացումով՝ հայ նկարիչներն իրենց աշխատանքները նվիրում էին ռազմաճակատի և թիկունքի իրադարձություններին: Ի հայտ են գալիս նկարիչներ, որոնց ստեղծագործությունները թե՛ Հայրենական մեծ պատերազմի և թե՛ հետագա տարիներին նշանակալի դեր խաղացին հայ արվեստում:

Պատերազմը չէր կարող էական փոփոխություններ չմտցնել հայ նկարիչների թեմատիկայում: Հատկապես այդ օրերին ակնհայտ դարձավ, թե ինչպիսի հսկայական քարոզչական ուժով է օժտված արվեստը: Հայրենական պատերազմի տարիները շրջադարձային էին հատկապես հայկական գրաֆիկայի զարգացման բնագավառում: Մասնավորաբար ակտիվանում են երգիծական գրաֆիկան և մատիտանկարը: Երգիծական գրաֆիկային զուգահեռ՝ մեծանում է նաև պաստառի դերը: Ընդարձակվում է նաև հայ կերպարվեստի թեմաների շրջանակը. Ի հայտ են գալիս նոր ժանրեր, մասնավորապես մարտական նկարի ժանրը, որ մինչ պատերազմը գոյություն չուներ: Այս տարիներին ստեղծվել են ոչ քիչ գծանկարներ, փորագրություններ, օֆորտներ՝ մարտերի զանազան դրվագների պատկերմամբ: Նկարիչներից շատերն մարտադաշտերում էին: Պատերազմը նրանց համար երևակայության արդյունք չէր, այլ դաժան ու հերոսական իրականություն: Կային նկարիչներ էլ, որ մնացին թիկունքում, բայց մեկ օր անգամ չդադարեցրին իրենց հայրենանվեր ստեղծագործական աշխատանքը: Գ. Բրուտյանը նրանցից էր: Պատերազմի տարիների նրա մարտական թեմաներով պաստառներն ու լինոփորագրությունները հայրենասիրական ուղղվածությամբ պատասխանում էին այն խնդիրներին, որոնք ծառացել էին մեր ժողովրդի առջև ծանրագույն փորձության ահեղ օրերին:

Նկարիչը պատերազմի անմիջական մասնակիցը չի եղել, նրա բազմաթիվ փորագրանկարների սյուժեները հիմնականում վերցված են ռուսական մամուլից կամ նկարչի երևակայության արդյունք են: Այնուհանդերձ այդ իրողությունը չի նվազեցնում Գ.Բրուտյանի լինոգրաֆիաների հուզական ազդեցությունը: Հավանաբար նկարչին հետաքրքրել է այդ աշխատանքների ոչ այնքան որակական կողմը, որքան անհրաժեշտությունը:

Հայրենական մեծ պատերազմի թեմայով Գ. Բրուտյանն ստեղծել է ավելի քան 50 լինոգրաֆյուրաներ, որոնք այժմ գտնվում են Երևանի և Գյումրու թանգարաններում, Հայաստանի ազգային պատկերասրահում:

Գ. Բրուտյանի գործերում իրենց արտացոլումն են գտել հայրենասեր քաղաքացու մտորումները, զգացմունքները և ապրումները վրտանգված հայրենիքի համար, բացահայտվել են այն զայրույթն ու ներքին խռովքը, որ նկարիչն ապրել է ոճրագործ զավթիչների հանդեպ:

Սիրո և ատելության, վշտի ու զայրույթի իրարամերժ զգացմունքների դրսևորումներ են նկարչի «Գրոհ», «Հարձակում», «Պարտիզանների հարձակումը գերմանական շտաբի վրա»,«Գիշերային մարտ» պատկերները: Բրուտյանի այս և այլ գործերում ժողովրդի հերոսական կերպարն է՝ ներկայացված նրա որդիների ու դուստրերի անօրինակ սխրանքներով: Ահա «Պարտիզանուհի Տանյայի մահապատիժը» ստեղծագործությունը: Տանյան իրական կերպար է. մերձմոսկովյան գյուղակներից մեկում ապրող աղջնակի սխրանքը ստեղծագործական ներշնչանքի աղբյուր է դարձել շատ նկարիչների, նաև Բրուտյանի համար: Նրա արարքը լինոգրաֆիայի էպիկական կառուցվածքի հիմքն է: Պարտիզանուհու կերպարն ընկալվում է որպես նրան ծնած ժողովրդի հա-

վերժության ու անպարտելիության խորհրդանիշ:

Չնայած այն հանգամանքին, որ նկարիչը անձամբ չի մասնակցել մարտերին, դա չի խանգարել, որ նա իր քաղաքացիական վերաբերմունքն արտահայտի հայրենիքի նկատմամբ: Բայց նաև այդ է պատճառը, որ նկարները ստացվել են պարզունակ, ինչ-որ առումով նաև անհամոզիչ: Արվեստագետն աշխատել է վերարտադրել միայն իրադարձությունների արտաքին կողմը՝ աշխատելով հնարավորինս հավատարիմ մնալ բնօրինակին: Աշխատանքներում բացակայում է նկարչի ստեղծագործական վերաբերմունքը նույնիսկ գործողություն պատկերող սյուժետային ստեղծագործություններում: Այս ամենը նրա «Հայրենական պատերազմ» շարքի գործերը դարձնում է միօրինակ և միապաղաղ: Դրանք ավելի շատ փաստագրություն են, պատմական իրադարձությունների արձագանք, քան գեղարվեստական արժեքներ:

Ընդհանրապես Հայրենական պատերազմի տարիներին Գ.Բրուտյանի ստեղծած գործերից քչերն են դիմանում գեղարվեստական լուրջ փորձության. դրանք հետապնդել են զուտ հրապարակախոսական նպատակ՝ ազդել դիտողի ոչ այնքան գեղագիտական ճաշակի, որքան քաղաքացիական պարտքի զգացողության ամրապնդման վրա: Սովորաբար այդ պատկերներն ուղեկցվում էին ագիտկոչերով:

Այդօրինակ աշխատանքներից է «Պարտիզանուհի Տանյայի մահապատիժը» բազմաֆիգուր կոմպոզիցիան: Տանյան պատկերված է կախաղան բարձրանալու պահին՝ առանց կեղծ, արհեստական պաթոսի: Հավաքվածները վշտից քարացել են: Կանանցից մեկն ատելությամբ լի հայացքը ուղղել է գերմանացի սպայի կողմը: Նրանց հայացքները խաչաձևվել են: Դա բռնության ու ցավի բախումն է, ցավի, որը ծնում է ատելություն ու մինչև հաղթանակ պայքարելու կամք:

Կոմպոզիցիան ավելի շատ քարոզչական նշանակություն ունի: Այդ ահեղ օրերին ծնված նմանօրինակ աշխատանքները կարևորվում էին առաջին հերթին նրանով, որ նաև նպաստում էին բորբոքելու թշնամու հանդեպ ատելության կրակը, օգնում էին պահպանելու հավատը հաղթանակի նկատմամբ և անհանդուրժողականություն սերմանելու ոսոխի նկատմամբ:

«Պարտիզանները դատում են դավաճանին» աշխատանքում հեղինակը դավաճանին ներկայացրել է ժողովրդի դատին: Հավաքվածներից մեկը, որն իր հայկական փափախով առանձնանում է մնացածներից (հավանաբար նկարիչը նման միամիտ եղանակով փորձել է ընդգծել հայերի մասնակցությունը սրբազան պատերազմին), վրդովված բարձրացրել է ձեռքը և ուղղել իր դատավճռին սպասող անարգ դավաճանի կողմը՝ մեղադրանքի և պարսավանքի խոսքերով դատապարտելով նրա արարքը: Նրանց հայացքները հատվել են: Այդ ժեստով նկարիչը փորձել է դրամատիզմ հաղորդել դրությանը, բայց դա նրան մասամբ է հաջողվել: Կոմպոզիցիայի մյուս մասնակիցները կարծես անհաղորդ են շրջապատում կատարվածին, բացակայում են շարժումը գործողության կենսունակությունն ու ռիթմը:

Անհամեմատելի ակտիվություն կա «Դեպի մարտ» փորանկարում: Զինվորները պատկերված են մարտի ամենաթեժ պահին: Պայթած նռնակների ծխի սև քուլաները կարծես ծածկել են երկինքը: Կյանքի ու մահվան բախումն է: Համազարկերի ցոլքերից լուսավորված ռազմադաշտում թեժ մարտ է:

Հայրենական պատերազմի թեմայով արված մեծաքանակ աշխատանքները Գ.Բրուտյանի ստեղծագործական ժառանգության բավականին ստվար հատվածն են: Նրանք թեև շատ հաճախ գեղարվեստականության նկատելի պակաս ունեն, այնուամենայնիվ որոշակի դեր անշուշտ խաղացել են ֆաշիստների դեմ անհաշտ պայքարի տարիներին՝ նպաստելով թիկունքի մարդկանց հայրենասիրական դաստիարակության, նրանց բարոյահոգեբանական բարձր որակների ձևավորման ու ամրակայման կարևորագույն գործին և հետևաբար իրենց արժանի տեղն ունեն հայ կերպարվեստի 20-րդ դարի առաջին կեսի պատմության մեջ:

15. Դեպի մահ



16. Պարտիզանուհի Տանյայի մահապատիժը



17. Պարտիզանները դատում են դավաճանին

18. Պարտիզանների հարձակումը գերմանական շտաբի վրա

19. Հարձակում

20. Գրոհ

Գ.ԲՐՈՒՏՅԱՆԸ ԴԻՄԱՆԿԱՐԻՉ

Գ.Բրուտյանի բազմաբնույթ ստեղծագործությունների մի ստվար մասը դիմանկարներ են: Այս ժանրին նա անդրադարձել է իր ստեղծագործական կյանքի համարյա բոլոր փուլերում՝ նկարելով թե՛ գիտության ու մշակույթի երախտավորների, թե՛ քաղաքական գործիչների ու հասարակ մարդկանց: Բնականաբար, ժամանակը նկարչին շատ հաճախ թելադրել է իր պահանջը. այստեղից էլ՝ Վ.Լենինի, Ի.Ստալինի, Կ.Բուդյոնու, Կ.Վորոշիլովի և երկրի քաղաքական ու ռազմական այլ խոշոր գործիչների դիմանկարների զգալի քանակը: Բայց և այնպես քիչ չեն նաև ժամանակի մշակութային գործիչների ու գիտնականների դիմանկարները: Գործերից շատերը չեն պահպանվել, մեր պատկերացումները հեղինակի դիմանկարների շարքի մասին ամբողջական չեն, սակայն ձեռքի տակ եղած նյութը* այնուամենայնիվ հնարավորություն է տալիս արձանագրելու, որ դիմանկարը Բրուտյան նկարչի համար հաջողված ժանր է:

Նկարիչն առանձնահատուկ ակնածանքով ու սիրով է անդրադարձել հոր՝ ժամանակի ճանաչված մտավորականներից մեկի՝ Արշակ Բրուտյանի կերպարին: Հոր դիմանկարում նկարիչն աշխատել է բացահայտել նրա՝ իբրև հայտնի անձնավորության, անհատական հոգեբանական նկարագիրը: Բրուտյանը հատուկ ուշադրություն է նվիրել նրա աչքերի արտահայտությանը՝ այն դարձնելով խոսուն ու կենդանի: Խորունկ հայացքի մեջ կարելի է կարդալ ներհուն, երազող անձի էությունը: Նրա շատ համակրելի դիմագծերը, բարեկիրթ տեսքը, փառահեղ մորուքն ու բեղերը կերպարին հաղորդում են պատկառազդու տպավորություն: Ի դեպ, երաժիշտ, ազգագրագետ Արշակ Բրուտյանը զբաղվել է նաև նկարչությամբ: Նրան են պատկանում Գյումրու Յոթվերք եկեղեցու առագաստների նկարազարդումները:

«Վորոշիլովը ձիու վրա» աշխատանքում նկարիչը փորձել է պատկերել խորհրդային շքրջանի պանծալի զորավարին: Նկարիչը զորավարին պատկերել է ձիու վրա՝ հպարտ, հաղթական՝ ընդգծելով նրա բնավորության կամային գծերը: Բայց աշխատանքը հեռու է լրիվ դիմանկար լինելուց: Այն պարզապես Հայրենական պատերազմի մոտիվներով արված գործ է, որը կարելի է ընկալել նաև որպես դիմանկար: Նկարչի ստեղծած դիմանկարների պատկերասրահում տեղ են գտել նաև երևելի մտավորականներ Գ.Լևոնյանի, Խ.Աբովյանի, երգահան Պ.Չայկովսկու, սիրված աշուղ Շերամի դիմանկարները:

Պ.Չայկովսկու դիմանկարից մեզ է նայում բարեհամբույր, խոհուն հայացքով կոմպոզիտորը, որի ինքնությունն ավելի ընդգծելու համար նկարիչը դիմանկարի ֆոնի վրա պատկերել է նրա «Եվգենի Օնեգին» և «Պիկովայա դամա» օպերաները խորհրդանշող պատկերներ: Ճիշտ է, Բրուտյանը դիմել է նկարչական պարզունակ հնարքների (հատկապես կոստյումի վրայի նոտաները և այլն), բայց դա ընդամենը երգահանի կերպարի ամբողջացման փորձ է, որ ոչնչով չի խանգարել վերջինիս բնավորության ու էության բացահայտմանը: Պատկերն աչքի է ընկնում դիպուկ նմանողությամբ, կենսական ուժով, խորը արտահայտված բնավորությամբ: Ցայտունորեն շեշտված է խոհերով տարված մտավորական մարդու հուզախռիվ ներաշխարհը:

Բրուտյանի՝ մեր ձեռքի տակ եղած դիմանկարներից ամենաուշագրավը Ավդալենց Թաթոսի դիմանկարն է: Վերջինս նշանավոր վառարանագործ էր և մարդկանց իրենց մասնագիտությամբ անվանելու գյումրեցիների ընդգծված սովորության համաձայն՝ կրում էր նաև «Պեչնիկ Թաթոս» մականունը:

Նկարը գտնվել է նրա որդու տանը և հետաքրքրական է մասնավորաբար այն առումով, որ Գ.Բրուտյանի՝ յուղաներկով արված հազվագյուտ աշխատանքներից է:Դիմանկարն անմիջապես հուշում է Ավդալենց Թաթոսի՝ գա-

---

* *Ներկայացված դիմանկարների բնօրինակների վերատպությունները հեղինակին տրամադրել է Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանը:*

վառային արհեստավորական խավին պատկանելու մասին: Նկարից մեզ է նայում աչքերի կենսահաստատ արտահայտությամբ, առույգ արտաքինով, բարեկեցիկ կյանքով ապրած մի տղամարդ: Այս կերպարը բավականաչափ հարազատ ու բնորոշ է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի Ալեքսանդրապոլի արհեստավորական դասին: Դիմանկարն արված է բնորդից ստացած անմիջական տպավորությամբ, նրանում պատվասեր գյումրեցին է՝ տոհմիկ տարազով: Արհեստավոր այս մարդը պատկերված է փաստագրականի սահմաններից դուրս չեկող ճշգրտությամբ: Դիմանկարն ավելի շատ ազգագրական է, քան հոգեբանական: Սա մեռնող աշխարհի վերջին մոհիկաններից է: Պեչնիկ Թաթոսը գյումրեցուն բնորոշ կենսափիլիսոփայական մտածելակերպի արտահայտիչն է: Նրա դեմքին կա պատվասիրության, թախծի ու կորուստների դառնության զգացողություն: Հիմա՝ մերօրյա անդեմ ժամանակներում, որքա՜ն հարազատ ու մտերմիկ է թվում արդեն կորուսյալ դարձած աշխարհի այս վերջին մոհիկանը:

Գ.Բրուտյանն իր բեղուն ստեղծագործական կյանքի ընթացքում զբաղվել է նաև գրքերի նկարազարդմամբ: Նա պատկերազարդել է Ավ. Իսահակյանի «Ռազմակոչ» և Հ. Շիրազի «Իմ ընկեր Լորիկը» բանաստեղծությունները,«Բոստանչի Ավագի բահը» մանկական պատմվածքը: Զբաղվել է նաև տարազներով: Նրան է պատկանում «Հայկական տարազներ» ալբոմը:

Նկատելի է Բրուտյան նկարչի որոշակի ավանդը Գյումրու արվեստում: Այն կարևոր է ոչ միայն հին և նոր քաղաքի կյանքը հարազատորեն, ազգագրական ճշգրտությամբ ու գեղարվեստական պատկերավորությամբ կերպավորելու, այլև գծանկարի՝ գրաֆիկայի այդ տեսակի ավանդույթն ամրապնդելու առումով:



21. Արշակ Բրուտյան

22. Պեչնիկ Թաթոս

23. Խորեն քահանա Աբգարյան

24. Գևորգ Բրուտյան

ՏԱՐԱԶԸ Գ.ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Ալեքսանդրապոլում մեծ ճանաչում ու համարում ունեցող նկարիչը համագործակցում էր գրեթե բոլոր գեղարվեստական խմբակների, ժողստեղծագործության տների (Սկյանի պալատ, Սպայի տուն), տիկնիկային և դրամատիկական թատրոնների ստեղծագործական հանրույթների հետ: Նրան էին վստահում ներկայացումների բեմահարթակների և տարազների ձևավորումները: Ցավոք, Գյումրու Աճեմյանի անվան դրամատիկ և Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոններում Բրուտյանի բեմանկարչությունից ոչինչ չի պահպանվել, բայց ժամանակակիցները (Հ. Սահակյան, Ա. Աբրահամյան, Շ. Սարգսյան, Յու. Վերժբիցկայա) վկայում են, որ դրանք բարձրաճաշակ ու գունագեղ աշխատանքներ էին, առանձին շուք ու հմայք էին հաղորդում բեմադրություններին և նպաստում նրանց գաղափարական բովանդակության բացահայտմանն ու հարստացմանը:

Եթե նյութի բացակայության պատճառով անհնար է խոսել արվեստագետի բեմանկարչության մասին, ապա նույնը չի կարելի ասել բեմական հագուստների, նաև ազգային տարազների ձևավորման առումով:

Գ.Բրուտյանի՝ տարազի ձևավորման բնագավառում կատարածի ուսումնասիրությունից պարզվում է, որ այն երկարատև պատմազգագրական որոնումների, գրականության մեջ եղած վկայությունների հանրագումարի արդյունք է: Անդրադարձել է սոցիալական գրեթե բոլոր շերտերին, պատմական տարբեր փուլերին, անգամ տարբեր գավառների ու քաղաքների մարդկանց, հեթանոսական, քրիստոնեական բնորոշ տարազներին (Կիլիկիա, Վասպուրական, Թիֆլիս, Ալեքսանդրապոլ, Սյունիք, Արցախ) և այլն:

Բրուտյանը պատշաճ տեղեկություններ է հաղորդել նաև հայ հոգևոր-ծիսական և առօրյա տարազների, զինվորականների հագուստի, զենքերի, զարդերի մասին: Տարազանկարչությանը Բրուտյանը նվիրել է իր կյանքի վերջին տասնամյակը: Վերջերս՝ 2007թ., «Հայկական տարազ» խորագրով լույս տեսավ պատմաբան Վարդան Բդոյանի հեղինակած ալբոմը՝ Գ. Բրուտյանի ձևավորած տարազների գունազարդ պատկերներով, որն ամբողջական ու ամփոփ պատկերացում է տալիս այս բնագավառում նկարչի անզուգական աշխատանքի մասին, հետևաբար մենք կսահմանափակվենք ալբոմի հեղինակի հետևյալ գնահատականով.

«Գեղագիտական և պատմական տեսակետից ազգային տարազի բեմականացումը կիրառական արվեստի կարևոր հարցերից մեկն է: Բրուտյանի գործն անգնահատելի է թե՛ ազգագրական-ճանաչողական, թե՛ գեղարվեստական առումով: Այն մեծ արժեք է ներկայացնում նաև գործնական տեսակետից՝ որպես անսպառ նյութ հագուստի մոդելավորմամբ զբաղվողների համար»:

Թեև Գ.Բրուտյանը հիմնականում զբաղվել է գրաֆիկայով, սակայն գեղանկարչության բնագավառում արված աշխատանքները (դիմանկարները), մասնավորապես տարազանկարչությունը վկայում են նրա բարձր ճաշակի, հարուստ ներկապնակի և հստակ ու հագեցած գունային ընկալման մասին: Նույնիսկ կարելի է ասել, որ տարազի գույների ընտրությունը կապված է սոցիալական կոնկրետ խմբերի պատկանելության հետ: Բարձրաստիճան անձանց (զորավար, իշխան) տարազները ավելի գունագեղ են, ունեն համեմատաբար հարուստ գունաշար:

Արքունական տարազներում գերիշխում են դեղինը, ոսկին, կարմիրն ու կապույտը, առավելապես տաք, հնչեղ գույները, իսկ չունևոր դասի տարազներում՝ ախրոմատիկը՝ սևը, հատկապես մուգ կապույտն ու շագանակագույնը: Ավելի ժլատ միջոցներով են արված հասարակ մարդկանց (քաղաքացիներ, գեղջուկներ) տարազները, եթե անգամ նախատեսված են հատուկ օրերի համար:



ГЕВОРГ БРУТЯН: Жизнь и творчество

Видным представителем поколения художников Армении 1910-1950 гг. является график Г. Брутян.

Г. Брутян был убежденным реалистом, тесно связанным со своим временем и действительностью. Он был художником широких творческих интересов, отображающий как революционный период, так и эпизоды Великой Отечественной войны, изображающий красоты родных мест, его жителей, народные торжества.

Заслуги в искусстве не означают только наличие масштабных работ. Наиболее важной является общественная деятельность художника, его вклад в популяризацию национального искусства.

Как художник Г. Брутян состоялся в тяжелых условиях неспокойного времени - город Александраполь стоял на пороге революции. Художник втянулся в политическую жизнь: он начал сотрудничать с революционной прессой. С 1920-х годов Г. Брутян является инициатором формирования художественной жизни города. Произведения Г. Брутяна этого периода относятся к области графики и линографии, причем он был одним из художников, кто упорно и последовательно работал с линолиумом, разработал в станковой графике свой собственный язык, индивидуальный метод работы.

В его графических работах особое место занимает цикл “Старый Гюмри”, где Г. Брутян изображает старый Гюмри, со всей правдивостью и обаянием.Цикл “Гюмри” – напоминание о жизни многострадальных и добрых людей. Художник отобразил эту жизнь в творческом представлении. Правда, где-то с добрым юмором, где-то критически, но с любовью и обожанием, поскольку речь идет и о его любимом городе, о его детских годах.

Цикл “Старый Гюмри” – это картины бытового жанра: свадьбы, празднества и похороны, картинки рынка и улиц. Хорошо знакомому с бытом и традициями Гюмри, родившимуся и выросшему в этой среде Брутяну нетрудно было создать увлекательные, выразительные образы и характеры.

Глубоко переживающий за судьбу своей Родины, Г. Брутян не мог не встретить с энтузиазмом Майское восстание, став его активным участником. Он периодически выступал с карикатурами на местных богачей, высмеивал захватнические планы Антанты. Рисовал плакаты и самолично распространял их среди населения.

В эти годы он создал работы “Майское восстание в Алекполе”, “Взятие крепости”, “Восстание в крепости Алекпол” , “Красный Вардан”– отобразив в своих работах судьбоносную страницу в истории города.

Естественно, что Г. Брутян жил и дышал каждым днем города, и не мог не обращаться к героическим страницам Александраполя вновь и вновь. Цикл “Ужасы войны” Г. Брутян рисует во время оккупации Алекполя турками. Он был одним из первых армянских художников, который отобразил ужасные картины этих дней. Вера Брутяна в человеческий разум была поколеблена жестокостью и насилием, которыми была обусловлена абсурдная логика войны. Отличительной чертой цикла “Ужасы войны” является то, что свои представления Брутян воплотил в конкретные живые образы, используя реальную живую действительность, не выдумывая ее и не прибегая к готовым образам классиков.

Начавшаяся в 1941 году Великая Отечественная война внесла ощутимые изменения в тематику творчества Г.Брутяна. Несмотря на тяжелые времена, искусство Армении переживает подъем: активизируется сатирическая графика, возрастает роль плаката и батальной тематики. На эти темы Г. Брутян создает более 50-ти линогравюр, которые в настоящее время хранятся в музеях Еревана и Гюмри, в фондах Национальной художественной галереи.

В работах Г. Брутяна нашли отражение чувства и мысли, переживания истинного патриота за Родину, находящуюся в опасности. Работы созданные в период Великой Отечественной войны в основном несли агитационный характер – они способствовали поднятию национального духа, порождали ненависть к врагам.

Значительной частью работ Г. Брутяна являются портреты. К жанру портрета художник обращается во все периоды своей творческой деятельности. Он изображал ученых, работников искусства, многих политических деятелей. В национальной галерее имеют место также портреты интеллигенции, современников художника: Г.Леонова, Х.Абовяна, композитора П.Чайковкого и ашуга Шерама.

В работе “Авдаленц Татос” изображен уважаемый гюмриец, в традиционной одежде. Ремесленник изображен с реалистичной точностью: он последний из могикан уходящей эпохи.

Значителен вклад художника Г. Брутяна в развитии армянского искусства. Его заслуга не только в том, что он с этнографичной точностью и художественной образностью изобразил жизнь старого и нового Гюмри, но и в том, что он утвердил традиции рисунка, как вида графики.

GEVORG BRUTYAN: Life and work

One of the representatives of older generation of Armenian graphics in 1910 -1950 is G. Brutyan. He was a progressive, consistent, realistic artist, corrected with the time and events.

His creative interests were rather large. He depicted Revolution events, fragments from the World War II native sceneries and folk types and garments.

To have a great merit in art it is not necessary to be an author of the genius works. It is more important to have political, public activity for the culture.

Brutyan rose as an artist in difficult conditions. Alexandrapol was close to revolution and the artist was in political life and in 1920 he took part in the May Strike.

In 1920 Brutyan began to format cultural life of the city. His works were mainly in linographia and pen painting. In the 20-ies he was the only one among Armenian graphic artists who consistently worked on linoleum, working out his own artistic language.

The series of "Old Gyumri" has a significant place among his art. There he described humorous and kind people of Gyumri. It is the scenes of everyday life – wedding, funeral, feast, streets and markets. It was not difficult for the artist to create such lively pictures as he was born in Gyumri and grew up in those surroundings.

Brutyan, who was an active participant of the May Strike, met its victory happily. He made cartoons on "dashnaks", Antanta plans and local rich men. He drew wallpapers, pen graphic pictures like "The May Strike in Alekpol", "Strike in the Castle of the Alekpol", "Red Vardan".

The May Strike was the inseparable part of the history of the city and Brutyan, who lived through each day of the city, could do nothing but reflect that heroic page of the city. "Disasters of the War" series was painted by Brutyan when Turkish aggressors invaded Alekpol. He saw death, epidemics. The important feature of this series "Disasters of the War" is that he depicted concrete characters.

In 1941 Germany invaded the USSR, in spite of difficult conditions, Armenian art was rising then. In Brutyan's art it was activated satiric graphics and painting posters about the War. Pictures, painted during the years of the World War II, had agitative natures, to keep strong the spirit of the people and grow hate towards the enemy.

A great part of Brutyan's art is portraits, which were painted during his lifetime. He depicted scientists, people of art and politics (V. Lenin, I. Stalin, K. Budonni, K. Voroshilov).

Among the portraits of the persons are G. Levonyan, Kh. Abovyan, P. Chaykovski, Sheram.

In "Tatos of the Avdals" picture is respectable man of Gyumri in his national garment. The artist depicted this craftsman precisely documental. The portrait is more ethnographic than physiologic. He was the last Mohican of the dying world.

Brutyan's contribution is great in Armenian art. It is important not only describing the life of the Old and New Gyumri, but also conforming the tradition of the graphic art.

ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐԵԹՎԵՐ

1888թ. - Գևորգ Բրուտյանը ծնվել է Ալեքսանդրապոլում՝ երաժիշտ-ազգագրագետ Արշակ Բրուտյանի ընտանիքում: Ընդհանուր մասնագիտական կրթությունն ստացել է Ալեքսանդրապոլում, իսկ մասնագիտականը՝ Թիֆլիսում՝ Օ. Շմերլինգի նկարչական դպրոցում:

1908-1910թթ. - Գ. Բրուտյանը աշխատանքի է անցնում Թիֆլիսի օրիորդաց դպրոցում՝ որպես նկարչության դասատու և միաժամանակ զբաղվում ստեղծագործությամբ:

1910թ.-ից Գ. Բրուտյանն Ալեքսանդրապոլում էր:

1913թ. - Գ.Բրուտյանը կազմակերպում է գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքների ցուցահանդես, որն այդ ժամանակների համար մեծ խիզախում էր: Այն գոհունակությամբ է ընդունվում Ալեքսանդրապոլի արվեստասեր հասարակության կողմից:

1916 թ.-ից սոցիալ-դեմոկրատների կողմից հրատարակվող «Наши дни» լրագրում Գ. Բրուտյանը տպագրում է իր կենցաղային նկարներն ու ծաղրանկարները:

1920թ. - նա մասնակցում է Մայիսյան ապստամբությանը, որը հետո հարուստ նյութ էր դառնալու նրա գրչանկարների համար:

1921թ.-ից Գ.Բրուտյանն աշխատում է Ալեքսանդրապոլի նորաստեղծ նկարչական դպրոցում, նախ՝ որպես դասատու, ապա՝ տնօրեն, մինչև 1928թ.: Նա եղել է նաև Հայաստանում նկարիչների ասոցիացիայի առաջին նախագահը:

1937թ. - Գ. Բրուտյանը փոխադրվում է Երևան:

1939-1941թթ. - Գ. Բրուտյանն աշխատում է Ռ. Մելիքյանի ստուդիայում իբրև նկարիչ:

1952թ. - Գ. Բրուտյանը մահանում է երկարատև ծանր հիվանդությունից հետո:

Օգտագործված գրականություն

1. Գ. Բրուտյան. Կատալոգ, Երևան, 1942, 1955:
2. Մ. Սարգսյան. Սովետական Հայաստանի գրաֆիկան. Երևան, 1961:
3. Վ. Բդոյան, Գևորգ Բրուտյան. Հայկական տարազ, Երևան, 2007:
4. Կ. Սեղբոսյան, Ազգագրություն և բանահյուսություն, հ. 6, Երևան, 1974:

Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Բաղնիքի ճամփին (գրչանկար)
2. Բամբասանք (գրչանկար)
3. Սգահան (գրչանկար)
4. Մեռնողի երկրորդ օրը (Էգնահող) (գրչանկար)
5. Գերեզմանոցում (գրչանկար)
6. Լոթիների պարը փողոցում (գրչանկար)
7. Հաղթանակի երթ (գրչանկար)
8. Առաջին ուրախ օրը Ալեքպոլում (գրչանկար)
9. «Վարդան զորավար» զրահագնացքը (գրչանկար)
10. Ապստամբություն ամրոցում (գրչանկար)
11. Զոհվածի դիակի մոտ (գրչանկար)
12. Ալեքպոլի շրջակայքում (գրչանկար)
13. Զրուցատեղի (գրչանկար)
14. Թատրոնի շենքը (գրչանկար)
15. Դեպի մահ (լինոգրաֆիա)
16. Պարտիզանուհի Տանյայի մահապատիժը (լինոգրաֆիա)
17. Պարտիզանները դատում են դավաճանին (լինոգրաֆիա)
18. Պարտիզանների հարձակումը գերմանական շտաբի վրա (լինոգրաֆիա)
19. Հարձակում (լինոգրաֆիա)
20. Գրոհ (լինոգրաֆիա)
21. Արշակ Բրուտյան (յուղաներկ)
22. Պեչնիկ Թաթոս (յուղաներկ)
23. Խորեն քահանա Աբգարյան (յուղաներկ)
24. Գևորգ Բրուտյան (գրչանկար)
25. Տարազը (ջրաներկ)

Հ ա վ ե լ վ ա ծ

1. Հեքիմի մոտ (գրչանկար)
2. «Բուֆետ կայարանում». տեսարան Ալեքպոլից (գրչանկար)
3. Խոստովանություն (գրչանկար)
4. Ծեծ (գրչանկար)
5. Հարսնատես (գրչանկար)
6. Ալեքպոլի փողոցներից մեկում (գրչանկար)
7. Մունետիկ (գրչանկար)
8. Գրոհ (գրչանկար)
9. Ամրոցի գրավումը (գրչանկար)
10. Ժուկովը ձիու վրա (լինոգրաֆիա)
11. Հերոսի գերեզմանի մոտ (լինոգրաֆիա)
12. Տանկիստներ (լինոգրաֆիա)
13. Տանկիստը (լինոգրաֆիա)
14. Օդամարտ (լինոգրաֆիա)
15. Վրեժ թշնամուց (լինոգրաֆիա)
16. Վրեժ թշնամուց (լինոգրաֆիա)
17. Վրեժ թշնամուց (լինոգրաֆիա)
18. Պարտիզանը (լինոգրաֆիա)
19. Գիշերային մարտ (լինոգրաֆիա)
20. Օդաչու (լինոգրաֆիա)
21. Ռմբակոծություն (լինոգրաֆիա)
22. Ալեքպոլի շրջակայքում (գրչանկար)
23. Բնանկար Ալեքպոլից (գրչանկար)
24. Երևանի հրապարակը (գրչանկար)
25. Տեսարան Երևանից (գրչանկար)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ԲԱԶԵՅԱՆ, ԳՐԻԳՈՐ ԱՂԱՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ

(պատմազգագրական ուսումնասիրություն)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……7
Կումայրի - Գյումրին Ալեքսանդրապոլ քաղաք դառնալու ճանապարհին……8
Պատմական ակնարկ……9
Քաղաքի բնակչության ձևավորումը և ներէթնիկ կազմը……11

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ……15
Արհեստներ……23

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ……31
Բնակարան և բնակարանի ներսույթ……34
Հագուստ……40
Ուտեստ……45

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ
Քաղաքային համայնքը, ինքնակառավարման մարմինները……51
Ալեքպոլյան էսնաֆությունների կառուցվածքը, համքարական ծիսակարգ……54
Քաղաքային ինքնակառավարման մարմինների բարեփոխումները……58
Ալեքպոլյան ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը……60
Համայնական և դրացիական հարաբերություններ……73

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ
Տոներ……92
Ուխտագնացություն……100
ՎԵՐՋԱԲԱՆ……106
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ……107
Ամփոփում (ռուսերեն)……108
Ամփոփում (անգլերեն)……109
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……112

Լ Ա Ռ Ի Ր Ա Ա Թ Ա Ն Ե Ս Յ Ա Ն

ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ. Կյանքն ու գործը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....121

«Հին Գյումրի» շարքը……...…….....124

Մայիսյան իրադարձությունների արտացոլումը Գ. Բրուտյանի գրչանկարներում.....……130

Պատերազմի արհավիրքները …….....…….....133

«Սոցիալիստական Լենինական» շարքը …….....136

Մեծ հայրենականը նկարչի ստեղծագործություններում …….....138

Գ. Բրուտյանը դիմանկարիչ …...…….....….....144

Տարազը Գ. Բրուտյանի արվեստում …….....…….....146

Ամփոփում (ռուսերեն) …….....150

Ամփոփում (անգլերեն) …….....152

Կարևոր տարեթվեր …….....153

Օգտագործված գրականություն …….....153

Գ. Բրուտյանի ստեղծագործությունների ցուցակ…….....154

Հավելված …….....155